



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



Է Օ Ժ Է Ն — Ս Ի Ի

ԹԱՓԱՌԱԿԱՆ ՀՐԵԱՅ



ԹԱՐԳՄԱՆԵԱՅ Ի ԳԱՂՂԻԱԿԱՆԷ

ՊԱՐԱՊԵՏ Ս. ԻԻԹԻՃԵԱՆ



ՀԱՏՈՐ Գ.



Կ. ՊՕԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՑ

- 1867 -

6004/2 m

1865-1866

REPORT OF THE

COMMISSIONERS OF THE

LAND OFFICE



OF THE

STATE OF NEW YORK

1865

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՄԱՍՆ ԵՕԹՆԵՐՈՐԴ

ԿԱՐՃԱԶԳԵՍՏ ՃԻՉՈՒԻԹ ՄԸ



ԳՆՈՒԹ ԱՌԱՋԻՆ

ՍՈՒՏ ԲԱՐԵԿԱՄ

Գիշերն արդէն վրայ եկեր էր նսեմաստուեր
եւ ցուրտ : Երկինքը՝ որ մինչեւ արեւուն մտած
ժամանակ սլարդ էր , հետ զհետէ կը ծածկուէր
գորշ եւ կապոյտ ամպերով . թանձր ձիւն մը դալ
սկսեր էր , զոր ժամանակ ժամանակ բռնաշունչ
հովը գետնէն վերցընելով կը մրրկէր եւ այս կամ
այն կողմ կը քշէր : Տոքթոր Պալէնիէի կառքին
լապտերներն աղօտ լոյս մը կարձակէին կառքին
մէջ՝ ուր Ատրիէն օրիորդը բժշկին հետ միայնակ
նստած էին :

Ատրիէնի չքնաղ դէմքը՝ մոխրագոյն կաստորէ
փոքրիկ փեղոյրին մէջ շրջանակուած եւ լապտե-
րայ ցոլմունքէն կէս մը լուսաւորուած՝ յատկ եւ
սպիտակ կը նկարուէր կառքին ներսի կողմը սլա-
տող թխորակ բեհեզին վրայ : Քաղցր եւ կրնանք
ըսել հեշտալի հոտ մը՝ որ միշտ կը բուրէ ազնի-



ճաշակի տէր կանանց զգեստներէն, կառքին
 մէջ ծաւալած էր: Օրիորդին դիրքը բժշկին
 քով նստած՝ լի էր շնորհալի վայելչութեամբ: Կապոյտ
 շուխայէ շրջազգեստին մէջ սեղմուած
 գեղեցիկ եւ նուրբ մէջքն՝ իր ճապուկ ծածա-
 նումն ետեւի կակուղ յենարանին վրայ կը տը-
 պաւորէր: Փոքրիկ օտքերը՝ զորա իրարու վրայ
 դրեր եւ քիչ մ'ալ երկնցուցեր էր, գորգի տեղ
 փռուած արջու թաւամաղ մորթին վրայ կը
 հանդէտին: Իր գմայլելի մերկ ձախովը՝ շքեղա-
 պէս ասդնեգործեալ թաշկինակ մը բռնած՝ իր
 արտօսրաթուրմ աչքը մերթ ընդ մերթ կը սրբէր
 'ի մեծ դարմանս Պ. Պալէնիէի:

Այն, կարտասուէր աղնիւ օրիորդը, վասն
 զի Սէն-Տիգրիէի ապարան քին մէջ անցած անհա-
 ճոյ անցքերուն դժնդակ ազդեցութիւնը կը կը-
 րէր այս միջոցին: Չինքը մինչեւ այն ժամանակ
 զօրացընող ու անընկճելի բռնող ջգային եւ հրա-
 տենդ աշխուժին՝ ախրազգամ լքում մը կը յա-
 ջորդէր: Վասն զի Ատրիէն՝ որչափ եւ իր անկա-
 խութեանը մէջ անվեհեր, արհամարհանացը մէջ
 խրոխտ, հեղնութեանցը մէջ անողոքելի եւ
 հակառակութեան մը դէմ վտարանջութեամբը
 յանդուգն էր, խորին դիւրազգացութիւն մ'ալ
 օւնէր, զոր միշտ կը ծածկէր իր հօրաքեռն եւ
 անոր մարդոցն առջեւ: Իր յանձնապաստանու-
 թեան հակառակ՝ Բարտօլիլ օրիորդն աշխարհիս
 ամենէն փափկասիրտ եւ քնքուշ անձերէն մէկն
 էր: Վերջապէս ճշմարիտ կին մ'էր, բայց միան-

զամայն՝ իրրեւ կին՝ գիտէր ինքզինք բռնել ու
կառավարել՝ երբոր անանէր որ իր կողմանէ ակա-
րու թեան ամենափոքր նշան մը կրնար իր թշնա-
միներն ու բախապընել կամ խրոխտապընել :

Քանի մը վայրկեանէ՝ ի վեր կար թը կերթար .
Ատրիէն լռիկ իր արտու թը սրբելով՝ ի մեծ դար-
մանս բժշկին՝ դեռ խօսք մ'արտասանած չէր .

« Ի՞նչ է այդ , սիրելի Ատրիէն օրիորդս , ը-
սաւ Պ . Պալէնիէ սառւղիւ դարմանալով անոր
փղձկելուն վրայ , ի՞նչ է այդ . . . դուք որ քիչ
մ'առաջ այնչափ քաջասիրտ էիք . . . հիմա կու-
լնք : — Այո , պատասխանեց Ատրիէն այլայլեալ
ձայնիւ , կուլամ . . . ձեր առջեւ . . . բարե-
կամիս առջեւ . . . բայց հօրաքրոս առջեւ . . .
ն՛ , ոչ երբէք : — Այսու ամենայնիւ . . . այն եր-
կար խօսակցութեան մէջ . . . ձեր կծու երդի-
ծաբանութիւնները . . . — Ի՛նչ . . . կը կար-
ծես թէ այն տեսակ հեղնական բանակախիւներու
մէջ վայելու յօժարութիւնն ունիմ : Հաւատա-
ցէք , սիրելի Տոքթորս , որ վերջին աստիճան ան-
հաճոյ են ինձ այն երդիծական մրցո՞ւմները , բայց
հօրաքրոջս եւ իր բարեկամաց առջեւ ինքզինքս
պաշտպանելու հարկն ակամայ յանձն ատնուլ
կուտայ ինձ : Քաջասիրտութեանս վրայ կը խօ-
սիք . . . այն ալ , շիտակն ըսելով , չէ թէ հա-
րամտութեան ցոյց մ'ընելու վրայ կը կայանար .
այլ մանաւանդ դապիլ եւ ծածկելու հօրաքրոջս
ինձ հետ այնպէս ամարդի կոչութեամբ վար-
ուելէն զգացած դառն կակիծս . . . այնպիսի ան-

ձանց առջեւ , գորս կատեմ , կարհամարհեմ . . .
եւ՝ որ վերջադէս գէշութիւն մ'ըրած չեմ անոնց .
եւ՝ որ ուրիշ բան չեմ ուզեր , բայց եթէ առանձին
աղատ եւ իսաղաղ ապրիլ եւ բոլորաբար երջանիկ
անձինք տեսնել : — Ի՞նչ պիտի ընէք , կը նա-
խանձին ձեր երջանկութեան վրայ , եւ ձեր ձե-
ռօք այլոց գտած երջանկութիւնն ալ չինք քա-
ջեր . . . — Նախանձող ու չքաշողը հօրա-
քոյրս է , գոչեց Ատրիէն խռովեալ սրաւ , հօրա-
քոյրս՝ որուն կեանքը երկարատեւ դայթակողու-
թիւն մ'եղած է , եւ հիմա գարշելի կերպով զիս
կամբաստանէ , որպէս զի չզիանար թէ ես բաւա-
կան վեհօրտութիւն ու պատուասիրութիւն ու-
նիմ այնպիսի անձ մ'ընտրելու համար՝ որով կա-
րենամ բարձրագլուխ պարծիլ . . . , Գլտէ
Աստուած , որ եթէ մէկը սիրելու ըլլամ , չեմ պա-
հեր , կըսեմ , եւ փառք կը համարիմ ինձ . վասն
զի սէրը , ինչպէս որ ես կը հասկընամ , աշխարհի
ամենէն գեղեցիկ ու փառաւոր բանն է . . . »
Յետոյ Ատրիէն յարեց առաւել եւս դառնու-
թեամբ . « Ի՞նչ օղուտ ունին հապա պատիւն ու
անկեղծութիւնը՝ երբոր մարդս չեն պահպաներ
ախպիսի կասկածներէ՝ որք առաւել անմիտ են
քան թէ նողկալի : »

Այս ըսելով Քարաօվիլ օրիորդը դարձեալ
թաշկինակն աչքին տարաւ :

« Է՛ , ալ բաւական է , սիրելիդ իմ Ատրիէն ,
քսաւ Պ . Պաշէնիէ գորովալից կարեկցութեան
ձայնով մը , սիրտդ հանդարտեցու , անոնք ան-

ցան . . . ես ձեր անձնուէր բարեկամն եմ . . . »
Սւ այս խօսքն ըսած ժամանակ բժիշկն իր սա-
տանայական նենգամտութեան հակառակ կար-
մըրեցաւ :

« Գիտեմ, բարեկամս էք, ըսաւ Ատրիէն, երբէք Հայիտի մոռնամ որ այսօր իմ կողմս բռնել-
նուդ համար հօրաքոյրս թշնամի ըրիք ձեզ, վա-
սըն զի գիտեմ որ զօրաւոր է . . . եւ, շատ զօ-
րաւոր է գէշութեան համար . . . — Այդ մա-
տին, ըսաւ Տոքթորը կատարեալ անհողութիւն
կեղծելով, մեք բժիշկ ենք, շատ ատելութիւննե-
րէ ազատ ենք . . . — Ա՛հ, սիրելի Պ. Պալէ-
նիէ, Սէն-Տիգիէ տիկինն ու իր բարեկամները նե-
րել չեն գիտեր » : Այս խօսքն ըսելով ազջիկը
դողդողաց : « Ուստի վատութեան նենգութեան
եւ չարութեան դէմ ունեցած բնածին ատելու-
թիւնս ու նողկանքս է որ զիս այսպէս համարձակ
անոր հետ աւրուելու ստիպեց . . . բայց ինչ որ
ալ ըլլար . . . մինչեւ անգամ եթէ մեռնիրս գիտ-
նայի, Հայիտի վարանէի . . . եւ սակայն, յաւել-
ցուց շնորհալից ժպիտով մը՝ որ իր Հքնադ դէմ-
քին զմայլելի անուշութիւն մը կուտար, կեան-
քը կը սիրեմ . . . եւ եթէ յանցանք մ'ունիմ,
այս է որ կեանքս Հափիէ դուրս պայծառ, Հափիէ
դուրս գեղեցիկ, Հափիէ դուրս ներդաշնակաւոր
ընել կուզեմ. բայց գիտէք որ իմ այս թերութիւն-
ներս յօժարութեամբ կը կրեմ . . . — Լաւ,
լաւ, հիմա սիրտս աւելի հանդիսէ, ըսաւ Տոք-
թորը զօւարթութեամբ, ահա կը ժպտիք . . . »

բայց բարի նշան է : — Եստ անդամ որտի հան-
դարտութեան ու խելօքութեան նշան է . . . եւ
ասկայն հօրաքնոս ըրած սպաննալիքներէն եւ-
տեւ պէտք է որ ժողովմ . . . բայց ի՞նչ կրնայ
ընել : Ի՞նչ կը նշանակէր այն տեսակ մ'ընտանե-
կան խորհրդածողութիւն : Արդեօք լրջաբար կը կար-
ծէ թէ Պ . Տէ'րինեիկի եւ Պ . Թրիքօի պէս մար-
դոց կարծիքը կամ խորհուրդն ինձ աղղեցու-
թիւն կրնան ընել . . . : Ետքն ալ բուն միջոց-
ներու խօսք մ'ըրաւ : — Ի՞նչ կրնան ըլլալ այն
միջոցները . . . զիտէք դուք . . . — Ե՞ս կը
կարծեմ թէ խօսքը մէջերնիս , իշխանութիւն ձեզ
վախընկու համար միայն ըսաւ այն խօսքը . . .
եւ կը շուսայ որ համոզողական միջոցներով կը ըր-
նայ իր նպատակին համար . . . : Գէշն այն է որ
ինքզինք եկեղեցւոյ մայր կարծելով ձեզ դարձի
բերել կերաղէ , ըսաւ Տօքթօրը հարամիտ խորա-
մանդութեամբ որպէս զի ամեն կերպով օրիորդն
սպաննոյցնէ . բայց ալ ատենց վրայ չխորհինք . . .
պէտք է որ ձեր գեղեցիկ աչքերն իրենց դմայլե-
լի պայծառութեամբը վաղելով հրապուրեն ու
թողեն պաշտօնեայն դոր հիմա տեսնելու կեր-
թանք . . . — Իրաւունք ունիք , սիրելի Տօք-
թօրս . . . պէտք է միշտ զգուշանալ տրամու-
թենէ , վասն զի եթէ ուրիշ վնաս մ'ալ չունենայ
դոնէ սլոց վիշտը մտքընել կուտայ քեզ . . .
բայց տեսէք անդամ մը որ ձեր բարեկամութե-
նէն օգուտ քաղել կուզեմ' առանց ձեզնէ ակըն-
կարծա հասկըցընելու : — Բարեբաղդաբար խօ-

ապիցելու ժամանակ ունինք, վասն զի մեր քա-
ղաքապետին բնակարանը ձեր տունէն շատ հե-
ռի է: — Ահա այս է դործը. երկու խօսքով հաս-
կըցընեմ, ըսաւ Ատրիէն: Արդէն ըսի ձեզ թէ ինչ
պատճառաւ այն բարի դործաւորին պաշտպա-
նութիւնն ընել կուզեմ. այս առաւօտ խեղճը ե-
կաւ տագնապելով իմացուց թէ իր շինած քանի
մ'երգերուն պատճառաւ (վասն զի բանաստեղծ
ալ է) կասկածելի ըլլալով բանտ դրուելու վտան-
դի մէջ է. թէ ինքը յանցանք չունի, եւ եթէ
բանտարկուելու ըլլայ, իր ընտանիքը՝ որ իր ձեռքը
կընային անօթի պիտի մեռնին. այս պատճառաւ
կաղաչէր ինձ որ երաշխաւորութիւն մը տամ
իրեն համար, որպէս զի ազատ թող տրուելով
երթայ աշխատի: Ես ալ նախարարին հետ ձեր
ունեցած մտերմութիւնը միտքս բերելով խօսք
տուի. բայց արդէն խեղճ տղուն ետեւէն ինկած
էին որ բռնեն տանին, ուստի խորհեցայ տանօ
մէջ պահել զայն, եւ գիտէք թէ հօրաքոյրս ինչ
տեսակ մեկնութիւններ տուաւ այս դործին: Հի-
մա՛ ըսէք ինձ, սիրելի Տօքթօրս, արդեօք նախա-
բարը՝ ձեր յանձնարարութեան շնորհիւ կընդու-
նի՞ խնդիրս եւ երաշխաւորութեամբ ազատու-
թիւն կը շնորհէ այս արհեստաւորին: — Անտա-
րակոյս . . . ամենեւին դժուարութիւն մը չկայ,
մանաւանդ երբոր դուք ձեր գողարիկ ճարտար-
խօսութեամբ հասկըցընէք եղելութիւնը . . .
— Կիտէք արդեօք, սիրելի Պ. Պալէնիէ, ինչո՞ւ
համար աղաչեցի ձեզ որ սիս նախարարին քով

տանիք , զիս՝ որ դեռահասակ աղջիկ մ'եմ եւ թե-
րեւս խնդիրս ալ տարօրինակ թուեցաւ ձեզ : — Ան-
շուշտ ձեր պաշտպանած անձին համար աւելի
ստիպողական կերպիւ միջնորդելու մտօք :
— Այո . . . միանգամայն եւ յայտներեւ ընթաց-
քով մը ցրելու այն դրպարտութիւնները՝ զորս
անշուշտ հօրաքոյրս տարածել պիտի ջանայ , եւ
արդէն , ինչպէս որ տեսաք , ստիկանութեան
տեսչին տեղեկագրին մէջ ալ արձանագրել տը-
ւաւ . . . այս պատճառաւ լաւագոյն համարե-
ցայ՝ անկեղծաբար եւ յայտնապէս բարձրաստի-
ճան մարդու մը զիմել . . . Նզելութիւնը կը
պատմեմ անոր եւ նա ալ կը հաւատայ ինձ , վասն
զի ճշմարտութիւնն [այնպիսի ձայն մ'ունի՝ որ
լսողը չխաբուիր : — Այդ ամենն ալ մեծ խոհա-
կանութեամբ մտածելի էք , սիրելիք իմ օրիորդ
Ատրիէն . զուք՝ ինչպէս որ կըսեն , մէկ քարով
երկուք պիտի դարնէք , կամ մանաւանդ՝ մէկ բա-
րի դորձով մը երկու արդար իրաւունք ձեռք
պիտի բերէք . . . վասնզաւոր դրաւարտութիւն-
ներ կանխաւ պիտի ցրէք եւ առաքինի երիտա-
տարդի մ'ալ աղատութիւն շնորհել սաք : — Եստ
աղէկ , ըսաւ Ատրիէն ծիծաղելով , այդ երջան-
կաւէտ ակնկալութեամբ ահա զուարթութիւնս
նորէն կուգայ : — Անոց մէջ ամեն բան մտքի
տեսութեան եղանակէն կախում ունի , ըսաւ
Տօքթորը փիլիսոփայաբար : »

Ատրիէն այն աստիճան անտեղեակ էր սահ-
մանադրական եւ վարչական ատորոգելեաց , եւ

Տոքթորին վրայ ալ այն աստիճան կոյր վատահո-
թիւն ունէր, որ անոր ըսածին վրայ բնաւ չկաս-
կածելով՝ ուրախութեամբ ըսաւ. « Ա՛հ, ինչ եր-
ջանկոթ թիւն, նախարարը տեսնելէս ետեւ Սիւսն
մարաջտիտին աղջիկներն առնելու դացած ժա-
մանակս պիտի կրնամ քաջաչելել դորձաւորին
խեղճ մայրը, որ թերեւս այս վայրկենիս դասն
մտտաանջութեան մէջ է դաւակը տուն դարձած
չըլլալուն համար: — Այո, պիտի ունենաք այդ
բերկրութիւնը, ըսաւ Պ. Պալէնիէ ժպտելով,
վասն զի հիմա այնչափ պիտի թախանձենք եւ
այնպիսի վարպետ ձեւեր պիտի բանեցընենք, որ
բարեմտիւ մայրը որդւոյն բանտարկութիւնը չի-
մացած՝ ազատութիւնը պիտի լսէ ձեզնէ: — Ա՛ր-
չափ բարեարտութիւն եւ նրչափ մեծ բարեկա-
մութիւն է այս բրածնիդ, սիրելի Տոքթորս, ըսաւ
Ատրիէն, յիրաւի, եթէ այսչափ ծանր պատճառ-
ներ չըլլային, ձեր թանկատի մամանակը կոր-
ուցընել տալուն վրայ պիտի ամաչէի, բայց եւ
կը ճանչեմ ձեր սիրտը: — Դ՛մ խորին անձնուի-
րութիւնս ու անկեղծ բարեկամութիւնս վորձով
ձեզ ցուցընելէ դատ ուրիշ վախաք չունիմ » ը-
սաւ Տոքթորն ընչախոտ մը քաջելով. միանդա-
մայն սրտատանջ աչքով մը կառքին դռնակէն
դուրս նայեցաւ, վասն զի այն միջոցին կառքն
Օտէնի հրապարակէն կանցնէր. եւ թէպէտ
թանձր ձիւն մը կը տեղար, բայց եւ այնպէս
թատրոնին լուսադարդ ճակատը կը տեսնուէր.
Ատրիէն ալ նոյն վայրկենին գլուխն այն կողմը

դարձունելով կրնար զարմանալ թէ ինչ բան ունէին Օտէոնի հրապարակին կողմերը. Աւստի վարպետութեամբ մ'անոր ուշադրութիւնը խոստորեցընելու համար Տոքթորն յանկարծ գոչեց. «Ա՛հ, քիչ մնաց որ կը մոռնայի . . . — Ի՞նչ ունիք, Պարոն Պալէնիէ, ըսաւ Ատրիէն մէկէն 'ի մէկ անոր դառնալով: — Մեր խնդրանայ յաջողութեան համար խիստ կարեւոր բան մը կայ որ մըտքէս պիտի ելնէր: — Ի՞նչ է » հարցուց օրիորդն անհանդատութեամբ:

Պ. Պալէնիէ խորամանկ կերպով մը ժպտեցաւ:

« Ամեն մարդ, ըսաւ մէկ մէկ տկարութիւն կունենան, քայց մեր նախարարն ուրիշներէն աւելի է. իր տիադոսին համար ծաղրելի նախանձախնդրութիւն մ'ունենալով՝ մէկէն 'ի մէկ անհաճոյ տպաւորութիւն մը կ'զղայ . . . եթէ Պարոն Նեւեռը ըսելով զինքը չողջունէք: — Այդ մասին հոգ մի ընէք, սիրելի պարոն Պալէնիէս, ըսաւ Ատրիէն նայնպէս ժպտելով, եթէ կուզէք Վեհեմոյն Տէր ալ կըսեմ, որ կարծեմ թէ նայնպէս գործածական տիադոս մ'է: — Ոչ, հիմա գործածական չէ . . . քայց դարձեալ աւելի լաւ կըլլայ գործածել, եւ եթէ կրնաք՝ մէկ երկու անգամ ալ Ռեյնոլդսէն Տէր ըսել, մեր գործն աւելի շուտով եւ դիւրաւ կը քալէ: — Անհոգ եղիք, որովհետեւ ինչպէս որ սոսիսն աշխատեալ կան, այնպէս ալ սոսիսն նախորդներ կը գտնուին, եւ ես Պ. Ժուրտէնը միտքս բերելով՝ ձեր քաղաքագէտին ան-

յադ անափառութիւնը գոհ կընենք . — Ես բոլորովին ձեզ կը յանձնեմ այդ գործը եւ վստահ եմ որ խիստ աղէկ կը կատարէք » ըսաւ բժիշկն ուրախութեամբ տեսնելով որ կառքն Օտէոնի հրապարակէն Բանթէոնի թաղը տանող մութ փողոցներուն մէջ մտած էր , եւ աւելցուց . « Բայց այս պարտագայիտ մէջ մեր բարեկամ նախարարին վատասիրութիւնը մեղադրելու չեմ համարձակիր , որովհետեւ այն վատասիրութիւնը մեզ օգտակար կրնայ ըլլալ : — Այդ փոքրիկ խորամանկութիւնն անմեղ բան մ'է , ըսաւ Քարտովիլ օրիորդը , եւ յայանի կըսեմ թէ բնաւ խղճմտանքիա չի դալչիր . . . » Յետոյ դէպ 'ի կառքին դռնակը ծռելով ըսաւ . « Տէր Աստուած , այս ի՞նչ մութ փողոցներ են . . . այս ի՞նչ հող . . . ի՞նչ ձիւն է . . . որ թաղին մէջ ենք արդեօք . . . — Ի՞նչ կըսէք , ապերախտ բնակիչ , չէք տեսներ որ հոս խանութներ չկան եւ հետեւաբար ձեր սիրելի Ծօպուռ-Սէն-Ժերմէն թաղին մէջ ենք : — Այո՛ , բայց կը կարծէի թէ արդէն շատոնց հեռացած էինք այն թաղէն : — Ես ալ այնպէս կը կարծէի » ըսաւ բժիշկը դէպ 'ի կառքին դռնակը ծռելով որպէս թէ հասկընալու համար թէ ուր հասեր էին . « Բայց դեռ այն թաղին մէջ ենք . խեղճ կառավարս երեսին դարձող ձիւնէն չկրնալով լաւ տեսնել թերեւս քիչ մ'առաջ սխալած ըլլայ , բայց հիմա լաւ ճանրու մէջ ենք . . . այո՛ . . . կը ճանչեմ , Սէն-Վիյեօմ փողոցին մէջ ենք , որ փակագծով ըսեմ՝ դուարթ փողոց մը չէ , մնաց

չարասիրտ հետաքրքրութիւն :

Ասկէ կը հասկըցուի որ Տաքթոր Պալէնիէ որ-
չաւի որ Պ. Տ'էկրինելիի դիտաւորութեանց ծառա-
ցելու յօժարաւորութէր, իրմէ ծածկուած բանն
խմանալու ալ մեծ վատիաք ունէր. ուստի իր վա-
րանմանը յաղթելով եւ մանաւանդ պատահու-
թիւնն ալ յարմար եւ ասիպողական դանելով՝
վայրկեան մը լռութենէ ետեւ ըսաւ Աարիէնի .
« Բան մը պիտի հարցընեմ ձեզ, որ թերեւս խիստ
անպատեհ ըլլայ. եթէ ձեզ այնպէս թուի . . .
պատասխան մի տաք . . . » — Հարցուցէք,
կադաչեմ : — Պահ մ'առաջ . . . սասիկանու-
թեան տեսչին դալը ձեր հօրաքննն իմաց չարը-
ռուած, կարծեմ թէ շահերու խօսք մ'ըրիք,
դոր մինչեւ ցայսօր ձեզնէ ծածկած են ե-
ղեր . . . » — Այո ստոյգ է : — Ձեր այն խօս-
քը, ըսաւ Պ. Պալէնիէ ծանր ծանր շեշտելով,
այնպէս երեւցաւ ինձ թէ ազդու տպաւո-
րութիւն մ'ըրաւ իշխանուհւոյն վրայ . . .
— Այնչափ ազդու, յարկեց Աարիէնի, որ արդէն
ունեցած կասկածներս սառուցութեան դարձան :
— Սիրելի բարեկամուհի, ըսաւ նորէն Պ. Պա-
լէնիէ շողոքորթ կերպով մը, հարկ չէ ըսել ձեզ
թէ այդ պարագան յիշելա՛ պէտք եղած ժամանակ
իմ ծառայութիւնս ձեզ մատուցանելու համար
է. ապա թէ ոչ, եթէ ատկէց աւելի բան մ'ինձ
խմայընելնուդ մէջ ամենաւտաք անպատեհու-
թիւն մը կը տեսնէք, ենթադրեցէք թէ բան մը
չհարցուցի ձեզ. »

Ատրիէն լուրջ եւ մտախոհ կերպով քանի մը
վայրկեան լուռ կենալէ ետեւ պատասխանեց .
« Այս դորժին վերաբերեալ այնպիսի բաներ կան՝
որ ես չեմ գիտեր . . . կան ալ՝ որ կրնամ խմա-
ցընել . . . վերջապէս կան ալ որ պէտք չէ
ըսեմ ձեզ . . . բայց դուք , սիրելի Տօքթորս ,
այնչափ բարեկամութիւն ցոյց կուտաք ինձ այ-
սօր . որ բերկրութիւն կը համարիմ ինձ՝ վատա-
հաւթեան նոր ապացոյց մը ապա ձեզ : — Եթէ
այդ պէս է , չեմ ուզեր որ բան մ'խմացընէք ինձ ,
ըսաւ Տօքթորը սրանեալ եւ դիւրազգամ դէմ-
քով մը , վասն զի տեսակ մը վարձաարութիւն
ընդունած պիտի երևւիմ . . . մինչդեռ ձեզ
ժառայելէ դդացած բերկրութեամբս հաղարա-
պատիկ վարձաարուած կը համարիմ զիս : — Մը-
տիկ բրէք . . . ըսաւ Ատրիէն՝ առանց Պ . Պալէ-
նիէի վատուկ խղճահարութեանց ու շարիր երևե-
նալու . դօրաւոր պատճառներ ունիմ հաւատա-
լու թէ քիչ կամ շատ մօտ ժամանակէ մ'ետեւ
ամբաւ ժառանգութիւն մը կայ բաժնուելիք մեր
ընտանեաց անդամներուն մէջ . . . որոյ ամենը
չեմ ձանչեր . . . վասն զի Նանթի հրովարտակին
եւ առնուելէն ետեւ՝ մեր ազգատոհմին անդամ-
ներն օտար երկիրներ ցրուեր եւ խիստ տարբեր
վիճակներու մէջ ինկեր են : — Նոչ կըսէք , դո-
չեց Տօքթորը վերջին աստիճանի հետաքրքրու-
թեամբ . այդ ժառանգութիւնն ո՞ւր է , որմէ կու-
գայ եւ որմը ձեռք է : — Չեմ գիտեր . . . — Չեր
իրաւունքն ի՞նչպէս պիտի հաստատէք : — Բիչ



ժամանակէն պիտի հասկընամ . — Ո՞վ պիտի հասկըցընէ ձեզ : — Չեմ կրնար ըսել : — Ո՞վ իմացուց ձեզ թէ այդպիսի ժառանգութիւն մը կայ : — Այդ ալ չեմ կրնար ըսել . . . ըսաւ Ատրիէն այնպիսի տխուր քաղցրութեամբ մը՝ որ իր սովորական աշխոյժ խօսակցութեան հակառակ էր . այս բանը գաղտնիք մ'է . . . տարօրինակ գաղտնիք մը . . . եւ իմ երեւակայութեանս բորբոքման վայրկեաններուն մէջ՝ ուր տեսած էք զիս երբեմն . . . այս գաղտնեաց կարգէ գուրս պարագաներուն վրայ կը խորհէի . . . այն . . . եւ այն ժամանակ մեծամեծ եւ գեղեցիկ խորհրդածութիւններ կը ծնէին մտացս մէջ . . . »

Այս ըսելէ ետեւ Ատրիէն խորին մտածութեան մէջ ընկղմելով լռեց :

Պ . Պալէնիէ չուզեց ընդմիջել անոր մտածութիւնը : Վասն զի նախ՝ Քարտովիլ օրիորդը չէր նշմարեր կառքին որ կողմ երթալը , երկրորդ՝ Տոքթորը ժամանակ կը գտնէր օրիորդէն լսած բաներուն վրայ խորհրդածելու : Իր սովորական նրբամտութեամբը կ'զգար որ Տ'Էկրինեի արբային համար ժառանգութեան գործ մը կար այս խնդրոյն մէջ . ուստի միտքը գրուեալ որ առանց ժամանակ անցունելու գաղտնի տեղեկագիր մը շինէ այս գործին վրայ : Երկուքին մէկն է կըսէր ինքնիրեն . կամ Պ . Տ'Էկրինեի այս գործին մէջ Ուրիէն հրահանգացը համեմատ կը վարուէր , կամ իր մտաց աղգեցութեանը կը հետեւէր : Նթէ առաջինն էր , Տոքթորին գաղտնի տեղեկագիրն ի-

600424

բողոքիւն մը կը հաստատէր . իսկ եթէ երկրորդըն էր , ուրիշ դադանիք մը յայտնած կըլլար :

Քարտովիլ օրիորդն եւ Պ . Պալէնիէ բաւական ժամանակ խոր լռութեամբ անցուցին , գորկառքին անիւններուն շառաչիւնն անդամ չէր ընդմիջեր , վասն զի գետինը բաւական ձիւննը տած էր , եւ փողոցներն ալ հետ դհետէ կանամարդանային :

Տոքթորն իր նենգաւոր ճարտարմտութեան յանդգնութեան եւ իր օրսին ալ կոյր վատահութեան հակառակ՝ դեռ կատարելապէս ապահով չէր այս դաւադրութեան ելիցը վրայ . վաանգաւոր վայրկեանը կը մօտենար , եւ ինքն անզգոյշ կամ ձախող վարմունքով մ'Ատրիէնի մտայ մէջ ամենափոքր կաթկած մը ծագէր . Տոքթորին նիւթած բոլոր խորհուրդներն 'ի գերեւ կելնէին :

Օրիորդն արդէն այն տաժանելի աւուր արբաայուզութիւններէն յողնած ըլլալով , ժամանակ ժամանակ կը դողար , վասն զի ցուրտը քանի կերթար կը սաստկանար , եւ ինքն ալ Տոքթորին հետ երթալու անապարանօք շալ կամ վերարկու մ'առնուլ մտոցեր էր :

Բաւական ժամանակէ 'ի վեր կառքը երկայնու բարձր պատի մ'առջեւէ կանցնէր , որ ձիւններուն մէջէն սպիտակափայլ կը տեսնուէր խաւարամած երկնից ներքեւ . խոր եւ տխուր լռութիւն մը տիրած էր :

Կառքը կեցաւ . Սպասաւորը գնաց մեծ դուռ մը բաղխեց մասնաւոր կերպով մը , նախ

երկու անգամ իրարու ետեւէ , եւ բաւական երկար ժամանակէ մ' ետքն ալ մէկ անգամ :

Ատրիէն չնշմարեց այս պարագան , վասն զի բախմանց ձայնը շատ ամուր չէր . Տոքթորն ալ խակոյն խօսիլ սկսեր էր որպէս զի իր ձայնովը ծածկէ այս տեսակ մընչանական բախիւնը :

« Ահա վերջապէս հասանք , ըսաւ Ատրիէնին ուրախ դէմքով . Չանացէք որ զմայրելի ըլլաք , այսինքն ինչ որ էք միշտ : — Անհող եղիք , ձեռքէս եկածը պակաս չեմ թողուր , ըսաւ Ատրիէն ժպտելով . յետոյ ակամայ դող մ' զգալով աւելցուց . « Այս ի՞նչ սեւ ցուրտ է . . . շիտակը խօսելով , սիրելի Տոքթորս , երբոր իմ խեղճ դեռահասակ ազգականներս մեր առաքինի գործաւորին մօրը առնէն առնելով այս գիշեր իմ դեղեցիկ տաքուկ եւ լուսապայծառ դահլիճս դառնամ , ուրախ պիտի ըլլամ , վասն զի զիտէք թէ որչափ անախորժ են ինձ ցուրտն ու մութը : — Ատոր տարակոյս չկայ , ըսաւ Տոքթորը փառաքուչ կերպով մը , դեղեցիկ ծաղիկները միշտ լոյս եւ ջերմութիւն կուղեն որ բացուին , »

Երբոր բժիշկն ու քարասփիլ օրիորդն այս խօսքերը կընէին իրարու հետ , մեծ դուռն իր ծխնիններուն վրայ ճանչելով բացուեր եւ կանքք բակը մտեր էր : Նախ Տոքթորը վար իջնելով իր թեւը ներկայացուց Ատրիէնի :

ԳԼՈՒԽ Բ .

ՊԱՇՏՈՆԻ ՄԸ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ

Կառքը փոքրիկ եւ ճիւղով ծածկուած բեմի մ'առջեւ կանգնեցաւ , որ քանի մ'ոտք բարձրութիւն ունէր , եւ ուսկէց միակ կանգնողով լուսաւորեալ դաւիթ մը կը մտնուէր : Ատրիէն բեմին սահուն աստիճաններէն վեր ելնելու համար Տօքթորին թեւին կրթնեցաւ :

« Ա՛ , ինչպէս կը դողաս . . . ըսաւ բժիշկը : — Այո՛ . . . ըսաւ օրիորդը , կծու ցուրտ մը կ'զգամ . անապարանքէս մոռցայ շալ մ'առնուլ . . . : Բայց ի՛նչ տխուր երեւոյթ մ'ունի այս տունը , յաւելցուց աստիճաններէն վեր ելած ժամանակ : — Ասոր նախարարին փոքր ապարանքը կըսեն , դարբիրը , ուր մեր քաղաքագէտը կառանձնանայ արտաքին շշուկներէ հեռու , ըսաւ Պ . Պալէնիէ ժպտելով : Հրամեցէք ներս : »

Եւ մեծ ու ամայի դաւիթի մը դուռը հրելով բացաւ :

« Իրաւունք ունին ըսելու , յարեց Պ . Պալէնիէ սրտին խռովութիւնը զուարթ երեւոյթով մը ծածկելու ջանալով . « Տէրութեան պաշտօնէի տուն . . . ետքէն մեծցողի տուն . . . ոչ մէկ սպասաւոր մը կայ նախասենեակին մէջ . բայց

բարեբաղդարար , յաւելցուց սենեակի մը դուռը
բանալով .

« Պալատին մէջ մեծցած ըլլալով , անոր ա-
մեն պտոյաները գիտեմ : »

Քարտօվիլ օրիորդը դահլիճ մը մտաւ , որուն
որմերը թաւիշանկար կանանչ թուղթով պատած
էին . եւ կարասիներն ալ Ռեթրէխթի դեղին թաւի-
շով ծածկուած մահոնէ՝ հասարակ աթոռներ ու
բազմոցներ էին : Քեռիներ լաւ յղկուած ու փայ-
լուն էր : Այս կանդեղ մը կախուած էր սովորա-
կանէն աւելի բարձր , եւ խիստ աղօտ լոյս մը
կարծակէր : Ատրիէն այս դահլիճը նախարարի մը
բնակութեան համար չափազանց անշուք գտնե-
լով , որչափ եւ կասկած մը չունէր , չկրցաւ դար-
մանքը դսպել , եւ դրանը սեմին մէջ կանդ ա-
ռաւ : Պ . Պալէնիէ՝ որ իր թեւը տուած էր օրի-
որդին , հասկըցաւ անոր զարմացման պատճառը
եւ ժպտելով ըսաւ .

« Այս բնակարանը խիստ գծուծ կը թուի
վսեմափայլի մը համար , այնպէս չէ : Բայց եթէ
գիտնայիք սահմանադրական խնայողութեան ինչ
ըլլալը . . . : Մնաց որ , հիմա բարձրապատիւ
նախարար մը պիտի տեսնէք , որուն կերպարան-
քըն ալ իր կարասիներուն պէս . . . գծուծ է :
Բայց հաճեցէք վայրկեան մը զիս հոս սպասել ,
որպէս զի երթամ նախարարը տեսնեմ եւ ձեր
գալն իրեն իմացընեմ : Հիմա շուտով կը վերա-
դառնամ : »

Եւ մեղմով մ'իր թեւն Ատրիէնի թեւին մէջ
Չէն հանելով , զոր օրիորդն ակամայ սեղմած էր ,
գնաց կողմնական փոքրիկ գուռ մը բացաւ ու
գուռս ելնելով աներեւոյթ եղաւ : Ատրիէն մինակ
մնաց :

Թէ եւ չէր կրնար օրիորդն իր զգացած տալա-
ւորութեան պատճառը մեկնել , այսու ամենայնիւ
այն մեծ պաղ մերկ եւ անվարադոյր պատուհան-
ներով սենեակը տխուր ալգեցութիւն մ'ըրաւ իր
վրայ . յետոյ քիչ քիչ կարասիներուն վրայ ալ
անտուր նշաններ տեսնելով՝ զորս 'ի սկզբան չէր
նշմարած , անբացատրելի արտատանջութեան
մը մէջ ինկաւ :

Ուստի մարած վառարանին քով երթալով՝
զարմացմամբ տեսաւ որ անոր գուռը վրայէն եր-
կաթէ վանդակով մը պատած էր եւ չէր կրնար
բնաւ բացուիլ . ունելին եւ բաճն ալ երկաթէ օ-
գակներով կապուած էին : Այս արտառոց տեսա-
րանին վրայ բաւական զարմանալով՝ պատին կըր-
թընած թիկնաթռոններէն մէկը դէպ 'ի իրեն քա-
շել ուղեց . բայց աթոռը տեղէն չխախտեցաւ :

Ատրիէն տեսաւ այն ժամանակ որ աթոռնե-
րուն յենարաններն երկաթէ փոքրիկ ճանկերով
պատին դամուած էին :

Չկրնալով ծիծաղը բանել , ըսաւ ինքնիրեն .
« Արդեօք վատահոութիւն չունի՞ն տերութեան
նախարարին վրայ , որ աթոռները պատին դամեր
են » :

Ատրիէն այս դուարձաբանութիւնը գրեթէ

բանի ըրաւ՝ իր սրտատանջ անձկութիւնը զսպե-
լու համար, որ հետ զհետէ կաւելնար. վասն զի
ամենախորին եւ ամենատխուր լոռութիւն մը կը
տիրէր այն քնակարանին մէջ. ուր գործառնու-
թեանց մեծ կեդրոնի մը յատուկ եղած շարժմանց
եւ գործունէութեանց նշան մը քնաւ չէր տեսնու-
ուեր. այլ միայն ժամանակ ժամանակ գործը
փշած բռնաշունչ հովին մանչիւնը կը լսէր օրիոր-
դը: Քառորդէ մ'աւելի անցաւ եւ Պ. Պալէնիէ
երեւան չէր ելներ:

Արթիէն՝ սրտատանջ անհամբերութեամբ
ուզեց մէկը կանչել որպէս զի թէ Պ. Պալէնիէի
եւ թէ նախարարին վրայ տեղեկութիւն մ'առ-
նաւ. ուստի աչքը վեր առաւ որ հնչակի մը չուան
տեսնէ հայելիին քովերը. բայց չկրցաւ գտնել
միայն տեսաւ որ մինչեւ այն ժամանակ հայելի
կարծածը թանազի մեծ թերթ մ'էր խիստ փայ-
լուն: Քիչ մ'աւելի մտանալով պղինձ աշտանա-
կի մը զարնուեցաւ, որ ժամացոյցին պէս վառա-
րանին վրայի մարմարին փակած էր:

Երբեմն մարդուս միտքն այնպիսի արամադ-
րութեան մէջ կը դանուի, որ ամենաչնչին բա-
ները զարհուրելի մեծութիւն մը կ'ստանան:
Արդ, այն անշարժ աշտանակը, որմին գամուած
աթոռները, թանազէ հայելին, խոր լոռութիւ-
նը, Պ. Պալէնիէի երկար ու շանալն այնպիսի գէշ
սպաւորութիւն մ'ըրին Արթիէնի վրայ որ սրտին
մէջ սարսուռ մ'զգալ սկսաւ:

Սակայն բժիշկին վրայ ալ այնպիսի բացար-

ձակ վատահուժիւն մ'ունէր , որ իր վախկոտութեան համար ինքզինք մեղադրեց , եւ ըսաւ ինքնիրեն թէ երկիւղ պատճառող բաներն իրական կարեւորութիւն մը չունէին , եւ անխելքութիւն էր այսպիսի չնչին բաներու վրայ հող ընել : Իսկ Պ . Պալէնիէի այսչափ ուշանալուն պատճառն անշուշտ այս պիտի ըլլայ , որ նախարարը կարեւոր զբաղմունք մ'ունեցած ըլլալու է , եւ անոր լմննալուն կ'սպասէ , որպէս զի կարենայ մեզ ընդունիլ :

Այսու ամենայնիւ , որչափ որ օրիորդն այս կերպով ինքզինք սրտապնդել կը ջանար , երկիւղը դարձեալ վրան տիրելով այնպիսի բան մ'ընելու համար ձակեցաւ , որ երբէք չէր ըներ՝ եթէ այսպիսի կարգէ դուրս պարագայի մը մէջ չգըտնուէր . կամաց կամաց բժշկին դուրս ելած փոքրիկ դրանը քով գնաց եւ ականջ դրաւ : Շնչառութիւնը դադրեցուց , մտիկ ըրաւ , բայց բան մը չլսեց :

Յանկարծ մեծ դղրդիւն մը լսեց գըլխուն վրայ , որ ծանր բանի մ'իյնալուն կը նմանէր . միանգամայն կարծես թէ խղդուկ հեծութեան ձայն մ'ալ եկաւ ականջին :

Խուճապելով աչքը վեր վերցուց եւ տեսաւ որ քանի մը չորցած ներկի կեղեւանք կը թափէին , որք անշուշտ ձեղունին ցնցմամբը բլրդեր էին :

Ալ չկրնալով երկիւղին դիմանալ , Ատրիէն դէպ 'ի մեծ դուռը վազեց , ու սկէց բժշկին հետ

Ներս մտած էին , որպէս զի մէկը կանչէ . բայց
ասպշելով տեսաւ որ դուրսէն կղպուած էր , թէ
եւ բանալիով կղպելու ձայն մը չէր լսած : Սար-
աափն հետ զհետէ աւելնալով՝ վազեց դէպ այն
դուռը՝ ուսկից բժիշկը դուրս ելեր էր , բայց այն
ալ դուրսէն գոցուած էր : Այսու ամենայնիւ իր
վրայ տիրել սկսող զարհուրանաց տակաւին յաղ-
թել ուղելով՝ Ատրիէն իր քաջասրտութիւնն օգ-
նութեան կոչեց եւ պատճառաբանելով ինքզինք
համոզել ուղեց :

« Միալած ըլլալու եմ , ըսաւ . արդարեւ իյ-
նալու ձայն մը լսեցի , բայց հեծութեան ձայնը
երեւակայութեանս մէկ պատրանքն ըլլալու է :
Հազար պատճառ կայ հաւատալու թէ ինկողն իր
մ'է եւ ոչ մարդ : Բայց այս դուռներուն գոց ըլ-
լալն ի՞նչ է : Թերեւս իմ հոս ըլլալս չգիտնալով
կարծեր են թէ այս սենեկին մէջ մարդ չկայ :

Այս խօսքերն ըսած ժամանակ Ատրիէն անձ-
կութեամբ բոլորտիքը նայելով ամուր ձայնով
մ'ըսաւ . « Տկարամտութիւն պէտք չէ . վիճակիս
վրայ ինքզինքս խաբխրելով թմրեցընելու հարկ
չկայ . ընդհակառակն՝ պէտք է դէմ յանդիման
նկատել զայն : Յայտնի կերեւի որ տէրութեան
պաշտօնէի մը բնակարանն չէ այս . . . հազար
փաստ կայ որ կը հաստատէ զայս հիմա . . .
ուրեմն Պ . Պալէնիէ զիս խաբեց . . . բայց ի՞նչ
նպատակաւ . ինչո՞ւ համար զիս հոս բերաւ . եւ
ուր եմ : »

Այս երկու հարցումներն ալ միապէս ան-

լուծելի երևեցան Ատրիէնի, եւ միայն հաստատուեցաւ որ Պ. Պալէնիէի նենդութեանը զոհ եղած էր ինքը. բայց միւս կողմանէ, այն մարդուն վրայ ունեցած մտերմական վստահութիւնը միտքը բերելով, իր անկեղծ եւ ազնուախոհ սիրտըն այն աստիճան սոսկում կ'զգար այս ստուգութենէն, որ տակաւին չէր ուզեր հաւատալ. Ուստի դառնութեամբ ըսաւ ինքիրեն. «Տեսինչպէս տկարամտութիւնն ու երկիւղը շատ անգամ անարդար ու նողկալի ենթադրութեանց մէջ կը ձգեն մարդը. այո՛, այսպիսի դժոխային նենդութեան մը հաւատալ ներելի չէ մինչեւ որ մարդ յայտնի ապացոյցներով ստուգութեան վերջին ծայրը չհասնի. շիմա մէկը կանչենք, դործը բռնորովին կը յայտնուի. »

Յետոյ միտքը բերելով որ հնչակ չկար, ըսաւ. « Հող չէ, ձեռքով կը դարնենք, հարկաւ մէկը կուգայ. » եւ իր փոքրիկ ու փափուկ կրօնաւիտիւր քանի մ'անգամ դրանը դարկաւ. Նլած թաւ ու խուլ թնդիւնէն կրնար հասկցուիլ որ դուռը շատ հաստ էր. Ամենեւին պատասխանող մը չեղաւ. Օրիորդը վազեց միւս դրան քով, դարկաւ, կանչեց, բայց դարձեալ խոր լռութիւն դտաւ, որ մերթ մերթ դուրսի հովին մոնչմամբը միայն կ'ընդմիջէր.

« Թէպէտ շատ երկչոտ չեմ, ըսաւ Ատրիէն ցնցուելով, բայց չեմ գիտեր թէ հոս տիրող սաստիկ ցուրտէն է որ ակամայ կը դողամ. ինքզինքըս տկարամտութենէ պաշտուանել կուզեմ,

բայց եւ այնպէս կը թուի ինձ որ իմ տեղս ով որ
ալ ըլլայ՝ այս բաները խիստ տարօրինակ եւ դար-
հուրելի կերեւին իրեն :

Յանկարծ պոռալու ձայներ կամ մանա-
ւանդ ոռնալու նման վայրագ եւ սոսկալի դոչիւն-
ներ լսուեցան իր վրայի սենեակէն , եւ քիչ մ'ետ-
քըն սլ թանձր ուժգին եւ ցնցողական տրտի-
մամբ մը ձեղունը սարսեցաւ , որպէս թէ քանի
մը մարդիկ իրարու հետ կատաղաբար կը կրո-
ուէին :

Ատրիէն ահաբեկ ըլլալով դոչեց , դէմքը
մեռելի պէս դեղնեցաւ , ապշութեմէն վայր-
կեան մ'անշարժ մ'նաց , յետոյ վանդակա-
փեղկերով դոցուած պատուհաններէն մէկուն
քով վազեց , եւ ուժով մը հրելով բացաւ : Բայց
բռնաշունչ ձիւնախառն հով մ'օրիորդին երեսին
դարնելով սենեակին մէջ լցուեցաւ եւ կանդեղին
լոյսը շարժելով փողփողեցնելէ ետեւ մարեց :

Այսպէս խոր մ'թութեան մէջ ընկղմած , եւ
ձեռքովը պատուհանին վանդակաձողերը բռն-
ած , Քարաօվիլ օրիորդն իր երկիւղն այսչափ
երկար դասելէ ետեւ՝ ալ չկրնալով դիմանալ ,
օգնութիւն կանչելու վրայ էր , յանկարծ անա-
կրնկալ տեսարան մ'աչքին հանդիպելով այն աս-
տիճան դինքը սարսափեցուց որ լեզուն կապուե-
ցաւ մ'նաց : Իր գտնուած յարկին դէմ դուգահե-
ռական կերպով ուրիշ յարկ մը կար : Այս երկու
յարկին մէջ տեղը գրաւող աղջամղջին մ'թու-
թեան մէջ լայն եւ լուսաւոր պատուհանի մ'ան-

վարագոյր ապակիներուն ետեւ ճերմակ ածգոյն
եւ կմախքի պէս նիհար երեսով մէկը տեսաւ , որ
ետեւէն պատանքի պէս կտաւ մը քարչ բերելով
անդադար կերթեւեկէր՝ անսովոր բայց անընդ-
հատ շարժմամբ :

Ատրիէն մութին մէջ փայլող պատուհա-
նին աչքը տնկած՝ կարծես թէ այն սգատեսիլ ե-
րեւոյթէն թովեցաւ մնաց . բայց յետոյ իր սար-
աափը վերջին աստիճանի հասնելով՝ ամենայն զօ-
րութեամբ օգնութիւն կանչեց՝ առանց վանդա-
կամատերը թողլու՝ որոց փաթթուած էր : Քանի
մը վայրկեանէ ետեւ , մինչդեռ ինքը տակաւին
օգնութիւն կը կանչէր , երկու յաղթահասակ
կանայք լաութեամբ սենեակը մտան : Ատրիէն
պատուհանին փաթթուած ըլլալով չկրցաւ դա-
նոնք նշմարել :

Այս երկու կանայք , որ քառսունէն քառ-
սունեւհինգ տարեկան կային եւ այրական հուժ-
կու կազմուածք մ'ունէին , ստորին կարգի ըս-
պատուհեաց պէս գծուծ զգեստներ հագած էին ,
եւ հաստ կտաւէ գոգնոցներ ունէին , որ վերի
ծայրէն իրենց պարանոցն անցած էր եւ մինչեւ
ոտքերնին կը հասնէր : Մէկը կանդեղ մը բռնած
էր ձեռքը . երեսը լայն կարմիր եւ փայլուն էր ,
քիթը մեծ եւ պալարալից , աչքերը մանր եւ
կանանչ , մազերը խժուժի կը նմանէին իր ազ-
տոտ ճերմակ գտակին ներքեւ խառնիխուռն
փաթթուած : Միւսը՝ գեղին չոր եւ ոսկրոտ էր ,
գլուխը սեւ սուգի գտակ մը գրած էր , որ հողա-

դոյն ցանոտ եւ ծաղկի բիծերով ու երկու հասա-
յօնքերով դժնէապէս տգեղացած դէմքը շրջա-
նակաձեւ կը պատէր . քանի մը աղերեկ մազի
թելեր ալ իր վերի շուրթը ծածկած էին :

Այս կիներն ալ ձեռքը մոխրագոյն հասա կտա-
ւէ տարօրինակ զգեստ մը բռնած էր կէս մը պար-
զուած :

Երկուքն ալ լռիկ մնջիկ փոքր դռնէն ներս
մտած էին այն միջոցին՝ ուր Ատրիէն վանդակա-
մատերը բռնած օգնութիւն կը պոռար :

Կիներն ակնարկութեամբ մ'իրարու ցոյց
տուին օրիորդը , եւ երբոր մէկը ձեռքի կանդե-
ղը վառարանին վրայ կը դնէր , միւսը (սուգի գը-
տակ հագնողը) պատուհանին մօտենալով իր
խոշոր ու ոսկրալից ձեռքը Քարտօլիլ օրիորդին
ուսին վրայ դրաւ : Աղջիկը մէկէն 'ի մէկ ետեւը
դառնալով երբոր այն չարաշուք դէմքը տեսաւ՝
նորէն դարհուրելով պոռաց :

Երբոր վախին առաջին ազդեցութիւնն ան-
ցաւ , Ատրիէն գրեթէ սիրտ առաւ , վասն զի որ-
չափ եւ դժոխադէմ էր այն կիներ , կրնար գոնէ
երկու խօսք ընել հետը . ուստի այլայլեալ ձայ-
նիւ մը գոչեց . « Ո՛ւր է Պ . Պալէնիէ , »

Երկու կանայքն իրարու երեսնայեցան , հա-
մամիտ ակնարկ մ'ըրին եւ պատասխան չտուին :

« Չեզ կը հարցընեմ , տիկին , գոչեց նորէն
Ատրիէն , ո՛ւր է Պ . Պալէնիէ՝ որ զիս հոս բերաւ .
կուզեմ հիմա զինքը տեսնել : — Գնաց , ըսաւ
խոշոր կիներ : — Գնաց մի՛ , գոչեց Ատրիէն , զիս

հոս ձգելով դնաց . . . Տէր Աստուած , ի՞նչ կը նշանակէ այս : »

Յետոյ վայրկեան մը խորհելով՝ ըսաւ .

« Գացէք կառք մը բերէք ինձ , »

Երկու կանայքն ուսերնին թոթովելով իրարու երես նայեցան :

« Կաղաչեմ ձեզ , տիկին , ըսաւ նորէն Ատրիէն մեղմ ձայնիւ , գացէք կառք մը բերէք ինձ . որովհետեւ Պ . Պալէնիէ առանց ինձ գացեր է . ես ալ պիտի երթամ :

— Շուտ ըրէք , տիկին , շուտ ըրէք , ըսաւ մեծ կինը (որուն անունը Լա-Թօմաս էր)՝ Ատրիէնի ըսածը հասկընալ ձեւացընելով , ժամանակն եկած է , պէտք է որ դաք պառկիք : — Պառկիմ մի՛ , դոչեց Քարաօլիլ օրիորդը սոսկալով . Տէր Աստուած , հիմա խելքիս կուգայ . . . » Յետոյ երկու կանանց դառնալով . « ի՞նչ տուն է այս . հէր եմ . պատասխան տուէք : — Գուք այնպիսի տան մը մէջ էք , ըսաւ Լա-Թօմաս խիստ ձայնով , ուր պատուհանէն դուրս պոռալ չըլլար , ինչպէս որ քիչ մ'առաջ կընէիք : — Եւ ուր կանգնեղները մարել ալ չըլլար , ինչպէս որ ըրիք , յարեց միւս կինը որ Թէրօլէզ կը կոչուէր , ապա թէ ոչ կը սրգոզինք : »

Ատրիէն դողէն ու սարսափէն խօսք մը չի կրնալով արտասանել , երկու սոսկալի կանանց մէկուն եւ միւսին երեսը կը նայէր ապշուած եամբ . ի դուր միտքը կը յօգնեցընէր այս բաները հասկընալու համար : Յետոյ կարծելով որ դուշակեց ,

մէկէն 'ի մէկ պոռայ . « Հասկըցայ , այս տեղ
սխալմունք կայ . . . չեմ գիտեր ինչպէս , բայց
վերջապէս սխալմունք կայ . . . դուք զիս ու-
րիշի մը տեղ կը դնէք : Գիտէ՞ք ես ո՞վ եմ . իմ ա-
նունս Ատրիէն-Քարաօվիլ է , ուստի կը տես-
նէք . . . որ ես հոսկէց դուրս ելնելու ազատ
եմ , եւ ոչ ոք կարող է զիս բռնութեամբ հոս
պահել , ուրեմն կը հրամայեմ ձեզ որ երթաք
կառք մը բերէք . եթէ այս թաղին մէջ կառք չի
դանուիր , մարդ մը տուէք ինձ որ առջեւս իյնայ
ու զիս տունս տանի Պապիլոն փողոցը Սէն-Տի-
գիէի ապարանքը : Ես այն անձն ալ ձեզ ալ ա-
ռատապէս կը վարձատրեմ : — Դեռ շատ խօսք
պիտի ընէք , ըսաւ Լա-Թօմաս , այդ խօսքերը մեզ
ընելնիդ անօգուտ է : — Զգոյշ կեցիք , ըսաւ
Ատրիէն ամեն միջոց բանեցընել ուղելով , եթէ
զիս բռնութեամբ հոս վար դնէք . . . վերջը
գէշ կըլլայ . . . դուք չէք գիտեր ինչ վտանգի
մէջ կը ձգէք ինքզինքնիդ : — Պառկելու պիտի
դա՞ք , այո , կամ ոչ , ըսաւ Թերօլէզ անհամբերու
դաժան դէմքով : — Մտիկ բրէք , տիկին , ըսաւ
նորէն Ատրիէն շտապով , թող տուէք որ ասկից
դուրս ելնեմ երթամ , երկու հազարական ֆրանք
կուտամ ձեզ . . . բաւական չէ . տասն . . .
քսան հազար . . . վերջապէս ինչ որ ուզէք :
Ես հարուստ եմ . . . բաւական է որ դուրս ել-
նեմ . . . Տէր Ատուած . . . դուրս ելնեմ . . .
հոս կենալ չեմ ուզեր . . . կը վախնամ ես հոս ,
գոչեց դժբաղդ օրիորդը սրտակտուր ձայնիւ :

— Բասն հաղար Ֆրանք . . . է՛, ի՞նչ կըսես
լա-թօմաս : — Թող տուր , ժէրվէզ , ասոնց ա-
մենուն ալ բերնին խօսքն այդ է : — Ուրեմն քա-
նի որ իրաւունք աղաչանք սպառնալիք ընդու-
նայն են , ըսաւ Ատրիէն իր յուսահատ վիճակին
մէջ բոլոր ուժը վրան ժողվելով , ահա բացորոշ
կերպով կըսեմ ձեզ թէ ես անպատճառ դուրս
պիտի ելնեմ հոսկեց , հիմա : Նայինք ո՞վ կրնայ
ինձ դէմ բռնութիւն բանեցընելու յանդգնիլ :
Այս ըսելով Ատրիէն քայլափոխ մ'ըրաւ դէպ 'ի
դուռը :

Այս միջոցին նորէն լսուեցան այն վայրագ ու
խեղդուկ աղաղակները՝ որ քիչ մ'առաջ այն
աստիճան զարհուրեցուցեր էին Ատրիէն . բայց
այս անգամ ոռնալու ձայներուն հետ արօրիւն
չկար :

« Ո՛հ , ի՞նչ է այս աղաղակը , ըսաւ Ատրիէն
կանգ առնելով , եւ վախէն երկու կանանց քով
դնաց . « Կը լսէք . . . այս աղաղակները . . . »
Տէր Աստուած , ի՞նչ տեսակ տուն է այս , ուր այս-
պիտի ձայներ կը լսուին : Ասկէց դատ՝ ի՞նչ է
այն , յաւելցուց խելայեղեալի պէս դիմացի յար-
կը ցուցընելով , որուն մէկ պատուհանը մութին
մէջ կը փայլէր , եւ պատուհանին ետեւն ալ ձեր-
մակ դէմք մ'անդադար կերթեւեկէր : « Կը տես-
նէք . . . ի՞նչ է այն : — Ի՞նչ պիտի ըլլայ , ըսաւ
լա-թօմաս , ձեզ պէս խելօք չկեցող անձինք են :
— Ի՞նչ կըսէք , դոչեց Քարտուիլի օրիորդը ձեռ-
քերն իրար կցելով սարսափահար . բայց , Տէր

Աստուած , ի՞նչ տեսակ տուն է այս , ի՞նչ կընեն
այս անձանց : — Ինչ որ ձեզ ալ պիտի ընեն եթէ
խելօք չկենաք եւ հնազանդելով չգաք ու չպառ-
կիք , պատասխանեց Ֆէրվէզ : — Այո՛ , այս կը
հագցընեն անոնց , ըսաւ Լա-Թօմաս թեւին տա-
կը բռնած կապոյտ կտաւէ հագուստը ցուցընե-
լով . այո՛ , կաշկանդիչ բաճկոն կը հագցընեն ան-
ոնց : — Ո՛հ , դոչեց Ատրիէն երկու ձեռքը
երեսը ծածկելով :

Սոսկալի յայանութիւն մ'իբ միտքը լուսա-
ւորեր էր : Վերջապէս հիմա ամեն բան կը հաս-
կընար : Յերեկուան բուռն սրտայուզութիւննե-
րէն ետեւ այս վերջին հարուածը դժնդակ ազ-
դեցութիւն մ'ըրաւ վրան : Օրիորդին վրայ մա-
րելիք եկաւ , ձեռքերը վար ինկան , դէմքը զար-
հուրելի կերպով դեղնեցաւ , բոլոր մարմնովը
դողայ եւ հազիւ ծունկի վրայ իյնալով եւ շուար-
եալ աչօք այն բաճկոնը ցուցընելով՝ նուազեալ
ձայնիւ ըսաւ . « Ո՛հ , ո՛չ . . . Աստուծոյ սի-
րուն . . . այդ բանը մի՛ ընէք . . . տիկին . . .
կընեմ . . . ինչ որ . . . կուզէք . . . կընեմ . . . »

Յետոյ բոլորովին ոյժը կտրելով մարեցաւ ,
եւ եթէ այն երկու կանայք չվազէին ու թեւեր-
նուն մէջ չառնէին , դետինը պիտի իյնար :

« Մարիլը վնաս չունի . . . ըսաւ Լա-Թօ-
մաս . վերցընենք իբ անկողնին վրայ տանինք .
հոն զգեստները կը հանենք ու կը պառկեցը-
նենք , կը լմննայ կերթայ : — Գու դրկէ տար , ը-
սաւ Ֆէրվէզ , ես ալ կանդեղն առնում : »

Լա Թօմաս՝ մեծ եւ ուժեղ , դրկեց վերցուց
օրիորդը , եւ քնացած տղու մը պէս թեւերուն վը-
րայ առած՝ ընկերին առաջնորդութեամբը քովի
սենեակը տարաւ , ուսկից Պ . Պալէնիէ դուրս ե-
լեր գացեր էր :

Այս սենեակը որչափ եւ խիստ մաքուր էր՝
սառնային մերկութիւն մ' ունէր . որմերը կանա-
չորակ թղթով պատած էին . երկաթէ փոքրիկ ու
խիստ ցած մահճակալ մը կար՝ սնարի կողմը սե-
ղանածեւ . վառարանին մէջ կրակարան մը դրուած
եւ երկաթէ վանդակով պատած էր , որպէս զի
մարդ չկրնայ մօտենալ . որմին կցուած սեղան մը
կար , եւ անոր առջեւ ալ դետնին դամուած ա-
թոռ մը . մահոնէ գդրոց մ' եւ յարդաշէն թիկնա-
թոռ մը . ասոնք էին սենեկին կարասիները : Պա-
տուհանը վարագոյր չունէր , եւ ներսի կողմէն
երկաթէ վանդակով գոցուած էր , որպէս զի ա-
պակիները կտարել կարելի չըլլայ . Ահա այս գը-
ծուծ սենեակը՝ որ տխուր հակապատկեր մը կը
ձեւայընէր Պապիլոն փողոցին զմայլելի փոքրիկ
պալատին քով , Ատրիէն բերուեցաւ : Լա-Թօ-
մաս՝ Ժէրվէզի օգնութեամբ անկողնին վրայ նըս-
տոյց զգայազիրկ օրիորդը , եւ կանդեղն ալ սնա-
րի սեղանախտակին վրայ դրուեցաւ :

Մինչդեռ պահնորդուհիներէն մէկն օրիորդը
կը բռնէր , միւսն անոր չուխայէ շրջազգեստին
ճարմանդները քակելով կը հանէր , խեղճ աղջիկը
կուրծ քին վրայ ծռած էր նուաղեալ : Թէպէտ եւ
մարած էր , երկու խոշոր կայլակներ ծանր ծանր

այսերն 'ի վար կը սահէին կիջնէին գոց աչքերէն ,
որոց երկար ու սեւ արտեւանունքը դեղին ու
փայլուն այտերուն հովանի կուտային : Ինկած ժա-
մանակ դեղագանգուր մազերը քակուելով ոսկե-
գոյն մետաքսէ կոհակներու պէս իր փողոսկրեայ
պարանոցն ու լանջը կողողէին : Երբոր սնդոյէ նեղ
բաճկոնակը կը քակէին , որուն կակղութիւնը
թարմութիւնն ու սպիտակութիւնը չէին կրնար
հաւասարիլ այն կուսական բարեձեւ դիւրաթեք
եւ չքնաղ իրանին , որ բարակ ասղնենկարին ու
շղարշին ներքեւ նուրբ վարդագոյն կճեայ արձա-
նինման բոլորածեւ կը տեսնուէր , սարսափելի
Մեգերային* խոշոր կարմիր կոշտ ու ճեղքրտած
ձեռքերն օրիորդին մերկ ուսերուն ու թեւերուն
դպածին պէս , աղջիկն առանց բոլորովին ուշաբե-
րելու՝ ակամայ ցնցուեցաւ այն կարծր ու բիրտ շո-
շափումէն :

« Ի՛նչ փոքրիկ ոտքեր ունի » ըսաւ պահ-
նորդուհին , որ ղգեստներն հանելէ ետեւ ծունկ
չոքեր Սարիէնի կոշիկները կը հանէր . « երկու-
քը մէկէն ափիս մէջ կրնան սղմիլ : »

Եւ արդարեւ տղու ոտքի պէս կարմրորակ
ողորկ եւ տեղ տեղ կապուտակագոյն բարակ ե-
րակներով երանդեալ փոքրիկ ոտք մը տեսնուե-
ցաւ , ինչպէս նաեւ վարդագոյն ծունգով ու կո-

* Հին հեթանոսաց դժոխային դիցուհիներ
ուն մէկուն անունն է : Ս,յս դիցուհիները կատա-
ղիք կը կոչուէին , եւ մեղաւորները տանջելու
պաշտօն ունէին .

ճով սրունք մը , այն աստիճան վայելչաձեւ ու
մաքուր , որ հին Անահաթի սրունքէն տարբերու-
թիւն չունէր :

« Մազերն ալ նրչափ երկայն են , ըսաւ Նա-
թօմաս , երկայն եւ կակուղ , նայէ անդամ մը ,
քալած ժամանակը վրան պիտի կոխէ . . . մեզք
որ գլխուն վրայ սառոյց դնելու համար պիտի
կտրուին այս աղւոր մազերը : »

Այս ըսելով Նաթօմաս այն գեղեցիկ մազերը
կրցածին չափ Սարիէնի գլխուն ետեւը պլորեց
կապեց :

Աւանդ , Ժօրժէթի Տլօրինի կամ Հէպէի քըն-
քուչ եւ ճերմակ ձեռքերը չէին , որք այնչափ
սիրով ու պարծանօք իրենց չքնադագեղ տիրու-
հին կը հագուեցնէին :

Ուստի , երբոր օրիորդը կրկին անգամ Մե-
դերային կոչա ձեռքին շօշափումն զգաց , Չղա-
յին ցնցումն աւելի յաճախ եւ ուժղին կերպիւ-
նորոգեցաւ : Սրդեօք տեսակ մը վանողական բը-
նազդ մը էր որ օրիորդն իր զգայազրկութեան
մէջ մազնիսարար կ'զգար , կամ թէ գիշերուան
ցուրտէն էր . . . վերջապէս Սարիէն նորէն դող-
դողաց եւ քիչ քիչ ուշաբերեցաւ . . . :

Անհնար է նկարագրել իր սարսափը սոսկու-
մբն ու ամօթիւսած դայրոյթը , երբոր իր արտաս-
ուաթուրմ երեսը ծածկող մազերուն խոպոպի-
ներն երկու ձեռօքը բանալով եւ ուշն ալ բոլո-
րովին վրայ դալով ինքզինք կիսամերկ տեսաւ
երկու գժնեայ կատաղիներուն մէջ : Սարիէն ա-

մօթէն ու սոսկումէն պոռաց . յետոյ այն երկու
կանանց նայուածքէն ինքզինք պահպանելու
համար՝ մտքի արագութեամբ անկողնին անարի
սեղանատախտակին վրայ դրուած կանդեղը զար-
կաւ կործանեց , որ գետինն իյնալով խորտակե-
ցաւ ու մարեցաւ :

Այն ժամանակ խոր մութի մէջ մնալով՝ տա-
րաբաղդ աղջիկը վերմականերուն մէջ վաթթուե-
ցաւ եւ աղեկտուր հեկեկանօք սկսաւ հեծել :

Պահնորդուհիներն Սարիէնի պոռալն ու կան-
դեղը կործանելը մոլեգին յիմարութեան նշան մը
համարեցան :

« Նորէն սկսաք կանդեղները մարել ու կո-
տրրտել , հա՛ . . . կերեւի թէ ձեր խելքին մոլու-
թիւնն ալ այդ է » գոչեց Նաթօմաս մութին մէջ
խարխափելով . « Շատ աղէկ . . . ես ձեզ կան-
խաւ ալ իմացուցի . . . զսպական բաճկոնն այս
դիշեր հագցունելու է ձեզ , ինչպէս նա վերի
խելազար կնոջ հագցուցած ենք : — Այո՛ , հագ-
ցունելու է , ըսաւ միւսը . ուստի դուն , Նաթօ-
մաս , ամուր մը բռնէ զինքը , ես երթամ ճրագ
մը բերեմ . . . ետքը երկուքս մէկ ըլլալով
բաճկոնը կը հագցնենք : — Շուտ ըրէ՛ , շուտ . . .
վասն զի իր քաղցրադէմ երեւոյթին հետ . . .
կերեւի թէ կատաղութիւնն ալ ունի . . . եւ գի-
շերը չպիտի կրնանք մինակ թողուլ . . . »

Տխուր եւ կսկծալի հակապատկեր :

Առաւօտուն Սարիէն ազատ դուարթ եւ եր-

Չանիկ ելեր էր պերճութեան եւ արուեստից ամեն հրաշալեաց մէջ, երեք դեղանի աղջկանց փափուկ եւ փութաջան խնամքներէն շրջապատեալ . . . իր աղնուասիրտ եւ քիչ մ'ալ արտառոց բնաւորութեամբ՝ փառաւոր եւ զմայլելի բայց եւ միանգամայն անակնկալ ընդունելութիւն մը պատրաստած էր երիտասարդ Հնդիկ իշխանադնի մը, որ իր ազգականն էր . . . Տակօպէտի բերած երկու որբերուն համար վեհանձնական որոշում մ'ըրած էր . . . : Մէն-Տիզիէի տիկնոջ հետ ըրած խօսակցութեան ժամանակ՝ հետ դհեատէ խորխտ կամ դիւրադգած, տխուր կամ դրուարթ, հեզնիչ կամ լուրջ, անկեղծ եւ քաջասիրտ երեւցեր էր . . . : Վերջապէս այս անիծեալ տունը գալուն նպատակն ալ՝ պարկեշտ եւ աշխատասէր արհեստաւորի մը համար շնորհ խնդրել էր . . . :

Իրիկունան . . . Քարտօլիլ օրիորդը վատ դաւաճանութեամբ երկու անարդ յիմարապահներու ձեռքը մատնուած, իր քնքուշ անդամներն անգթաբար կաշկանդուած կը տեսնէր խելագարներու նողկալի հադուստին մէջ՝ որ զսպական բաճկոն կը կոչուի :

.
Քարտօլիլ օրիորդը սոսկալի դիշեր մ'անցուց երկու Մեգերաներուն հետ :

Հետեւեալ առաւօտուն, ժամ իննին, նրչափ մեծ եղաւ օրիորդին դարմանքը՝ երբոր Տօքթոր Պալէնիէ սենեակին դռնէն ներս մտաւ սուաջ-

ուան արէս ծիծաղկոտ բարեկամական եւ գործ-
վալիր դէմքով :

« Է՛, սիրելի զաւակս, ըսէ նայինք, այս գի-
շեր ի՞նչպէս անցուցիք, ըսաւ քաղցր եւ սիրա-
լիր ձայնիւ :

ԳԼՈՒԽ Գ .

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ

Քարտովիլ օրիորդին պահապանուհիներն՝
անոր աղաչանաց եւ մանաւանդ խելօք կենալու
խոստմանց զիջանելով՝ զսպական բաճկոնը քա-
նի մը ժամ եաքը հաներ էին . ուստի առաւօ-
տուն ինքնիրեն ելեր եւ առանց արդելքի հազ-
ուեր էր :

Ատրիէն անկողնին եզրը նստած էր : Երեսին
չափազանց դեղնութիւնը, դէմքին խոր այլայ-
լութիւնը, աչքերուն հրատապ տենդի մը նուաղ
բոցով փայլիլը, ժամանակ ժամանակ ջղային
ցնցմամբ թոթովին արդէն ցոյց կուտային թէ
այն սարսափելի գիշերն ինչ դժնդակ ազդեցու-
թիւն մ'ըրեր էր այս գիւրադգած եւ ջղոտ կաղ-
մուածքին վրայ : Երբոր մէկէն 'ի մէկ տեսաւ
Տօքթոր Պալէնիէն, որ ակնարկով մը պահնոր-
դուհիները սենեակէն դուրս հանեց, Քարտովիլ
օրիորդը քար կտրեցաւ մնաց : Գլխու պտոյտ
դալ սկսաւ վրան այս մարդուն լրբութիւնը մը-

տածելով . . . որ իր դէմն ելնելու կը համարօ
ձակէր . . . :

Բայց երբոր բժիշկը քաղցրիկ ձայնով մ'եւ
սիրալիր կարեկցութեան եղանակաւ երկրորդ
անգամ հարցուց . « Է՛, խեղճ զաւակս . . . ը-
սէք նայինք , այս գիշեր ի՞նչպէս անցու-
ցիք . . . » Ատրիէն խկոյն ձեռքն իր բոցակէզ
ձակտին տարաւ ինքնիրեն հարցնելու կերպով թէ
արդեօք երանդ էր տեսածը : Յետոյ բժշկին նայե-
լով շրթունքը կէս մը բացուեցան . . . բայց
այնպէս սաստիկ դողալ սկսաւ որ անհնար եղաւ
իրեն բառ մ'արտասանել . . . : Բարկութիւնը
դղուանքը եւ մանաւանդ այն սրտակէզ վրէժ-
խընդրութեան կիրքը՝ դոր վստահութեան դէմ
եղած վատ դաւաճանութիւնը կազդէ ազնիւ
սիրտերու , այն աստիճան վրդովեցին օրիորդը ,
որ ապշած ու ճնշուած չկրցաւ լռութիւնը խը-
զել :

« Գիտե՛մ . . . գիտե՛մ . . . ըսաւ Տօքթո-
րը ախրութեամբ գլուխն երեքցընելով , ինձ
դէմ բարկացած էք . . . այնպէս չէ՛ , լաւ . . .
սիրելի զաւակս , ես գիտէի որ այսպէս պիտի
ըլլար . . . »

Այս լրբենի կեղծաւորութեամբ դրուցուած
խօսքերն օրիորդը վեր ցատկեցուցին : Ատրիէն
տաքի վրայ ելաւ , դեղնած այտերը կարմրեցան ,
խոշոր սեւ աչքերը բոցավառեցան , դեղեցիկ
գլուխը խրոխտաբար բարձրացաւ , վերի շուրթն
արհամարհոտ դառն ժպիտով մը թեթեւ կերպիւ

բացուեցաւ, յետոյ լուռ բայց դայրադին՝ Պ. Պալէ-
նիէի առջեւէն անցաւ դէպ'ի դուռը գնաց արադ
եւ վստահ քայլերով : Բայց դուռը՝ որ վանդակէ
փոքրիկ պատուհան մ'ալ ունէր, դուրսէն ամուր
մը փակուած էր : Ատրիէն դէպ'ի Տոքթորը դառ-
նալով՝ ձեռքովը դուռը ցուցուց եւ իշխանական
ձայնով մ'ըսաւ . « Բացէք նայիմ սա դուռը :

— Օ'ն, սիրելի Ատրիէն օրիորդս, ըսաւ բը-
ժիշկը, հանդարտեցէք . . . եւ բարեկամաբար
խօսակցինք . . . դուք դիտէք որ . . . ետ ձեր
բարեկամն եմ . . . » Եւ ծանր ծանր ընչա-
խոտ մը քաշեց :

« « Ըսել է թէ . . . պարոն, ըսաւ Ատրիէն
բարկութենէն ձայնը դողդողալով, այսօր ալ
հոսկէց դուրս չսլիտի ելնեմ . — Աւանդ, ոչ . . .
այդպիսի գլխու բորբոքմամբ ի՞նչպէս կարելի
է . . . : Եթէ դիտնայիք՝ սրչափ երեսնիդ կար-
մըրած . . . աչքերնիդ կրակ կտրած է . . .
ձեր բազկերակն անշուշտ ութսուն կը նետէ մէկ
վայրկենի մէջ . . . կաղաչեմ, սիրելի դաւակս,
ձեր վիճակն աւելի մի ծանրացընէք այդ ցաւա-
լի յուզմամբ . . . »

Ատրիէն վայրկեան մը բժշկին երեսը նայելէ
ետեւ՝ ծանրաքայլ գնաց անկողնին եզրը նստաւ :

« Աղէկն այդ է, ըսաւ Պ. Պալէնիէ, հան-
դարտ եղիք . . . եւ ահա կրկին անգամ կը սեմ
ձեզ թէ բարեկամաբար խօսակցինք, — Իրա-
ւունք ունիք, պարոն, պատասխանեց Ատրիէն
կտրուկ ձայնիւ եւ կատաբեալ հանդարտու-

Թեամբ , բարեկամարար խօսակցինք . . . դուք
զիս խենթի տեղ դնել կուզէք . . . այնպէս չէ :
— Կուզեմ , սիրելի զաւակս , որ հիմա սրչափ
ատելութիւն ունիք ինձ , որ մ'այնչափ երախտա-
գիտութիւն ունենաք . . . այդ ատելութիւնը
նախատեսած էի ես . . . բայց այնպիսի պար-
տականութիւններ կան , որք որչափ եւ դժպիսի
ըլլան՝ կատարելու կը հարկադրինք , ըսաւ Պ .
Պալէնիէ հառաչանօք եւ այնպիսի բնական հա-
մոզմամբ որ Ստրիէն չկրցաւ դարմանքը դսպել :
Յետոյ դառն ժպիտով մ'ըսաւ . — Ա՛, ուրեմն . . .
այս ամենն իմ օգտիս համար են եղեր . . . : Ան-
շուշտ , սիրելի օրիորդս , միթէ ձեզ օգտակար ըլ-
լալէ դատ ուրիշ նպատակ ունեցած եմ երբէք :
— Չեմ գիտեր , պարոն , թէ սրն առաւել նող-
կալի է , ձեր ըրած վատ մատնութի՞ւնը թէ
այդ անամօթ լրքութիւնը . . . : — Մատնու-
թիւն մի՛ , ըսաւ Պ . Պալէնիէ դժգոհութեամբ
մ'ուսերը թոթվելով . բայց մտածեցէք անգամ
մը , սիրելի զաւակս . . . եթէ ես խղճի մտօք
եւ անկեղծութեամբ ձեր օգտին աշխատած չըլ-
լայի , կրնայի՞ այս առաւօտ հոս դալ եւ ձեր բար-
կութեան առջեւ նեաուիլ , դոր յառաջուց գի-
տէի . . . : — Այս հիւանդատունն իմս է , եւ
եւ ալ այս տան գլխաւոր բժիշկն եմ . . . բայց
ուրիշ երկու բժիշկ ալ կան , որք իմ աչկերսս
են եւ փոխանորդաբար իմ պաշտօնս կը վարեն . . .
կրնայի զանոնք դրկել որ դան ձեզ նային . . . :
Սակայն ես չուզեցի այնպէս ընել . . . վասն գի

ես ձեր բարքը բնաւորութիւնը ձեր անցեալ
կեանքը գիտնալով, եւ մանաւանդ մասնաւոր
սէր մ'ունենալով ձեր վրայ, ամենէն լաւ եւ պատ-
շաճ կերպով կրնամ ձեզ դարմանել :

Ստրիէն՝ Պ . Պալէնիէի այս խօսքերն առանց
ընդմիջելու մտիկ ընելէ ետեւ՝ երեսը նայեցաւ ու
ըսաւ . « Պարոն . . . գիտ խենթի կարգ անցու-
նելու համար . . . սրչափ ստակ կուտան ձեզ .
— Օրինորդ . . . գոչեց Պ . Պալէնիէ՝ ակամայ վի-
րաւորուելով : — Ես հարուստ եմ . . . գիտէք . . .
յարեց Ստրիէն կծու արհամարհանօք, ես կըրկ-
նապատիկը կուտամ . . . — Օ՛ն, ուրեմն,
պարոն, յանուն բարեկամութեան, ինչպէս որ
կըսէք . . . ձեր ծառայութեան գինն աւելցնել-
լու առիթը շնորհեցէք ինձ : — Ձեր պահնորդ ու-
հիներն ալ իրենց այս գիշերուան տեղեկագրու-
թեան մէջ իմացուցին ինձ թէ նոյն առաջարկու-
թիւնն անոնց ալ ըրած էք, ըսաւ Պ . Պալէնիէ իր
սովորական պաղարիւնութիւնը նորէն գտնելով :
— Ներեցէք . . . պարոն . . . ես անոնց անչ-
չափ վարձք միայն խոստացայ, սրչափ կը վայլէ
տալ խեղճ անկիրթ կանանց՝ որք չքաւորութե-
նէ ստիպեալ այսպիսի անհաճոյ պաշտօն մը յանձն
առած են . . . Բայց ձեզ պէս կրթեալ մարդու
մը, բազմահմուտ մարդու մը, խելացի մարդու
մը աւելի կը վճարուի . . . մասնութեան գի-
ները մէկ չեն ըլլար . . . ուստի այն թշուառ
կանանց առաջարկած գումարիս փոքրկութեա-
նը վրայ մի հիմնէք ձեր մերժումը . . . օ՛ն, ը-

տէք նայինք որչափ կուզէք : — Ձեր պահնորդուհիներն իրենց տեղեկագրութեան մէջ կիմացընեն թէ սպառնալիք ալ ըրեր էք անոնց , ըսաւ նորէն Պ . Պալէնիէ պաղ կերպով . արդեօք ինձ ալ սպառնալիք չունի՞ք ընելու : Նայեցէք , սիրելի դաւակտ , հաւատացէք ինձ , կաշառատըւաւթեան փորձերն եւ վրէժխնդրութեան սպառնալիքը շուտով լմնցուցէք . . . յետոյ դարձեալ ներկայ իսկական վիճակը պիտի դտնէք : — Ա՛, սպառնալիքս անօգնու է , գոչեց Քարտովիլ օրիորդը չկրնալով այլ եւս դսպել իր դայրոյթը . ա՛ , կը կարծէք , պարոն , թէ ասկէ գուրս ելնելէս ետեւ , վասն զի այս արդելափակութիւնը հարկաւ վերջ մը պիտի ունենայ , ձեր նենգաժէտ դաւաճանութիւնը բարձրաձայն չի պիտի՞ հռչակեմ : Ար կարծէք թէ Սէն-Տիդիէ տիկնոջ հետ ձեր ունեցած վատ դաւակցութիւնն աշխարհի արհամարհանացն ու զղուանացը չպիտի՞ ներկայացընեմ . . . : Ար կարծէք թէ ինձ եղած սոսկալի բռնութեանց վրայ լնու պիտի կենամ : Բայց որչափ եւ խենթ ըլլամ , գիտեմ որ օրէնքներ կան , պարոն , ինձ համար հրապարակաւ հատուցում եւ ձեզ ու ձերայնոց համար ալ ամօթ նախատինք եւ պատիժ պիտի պահանջեմ . . . : Վասն զի մեր մէջ . . . այսուհետեւ մահու չափ ատելութիւն . . . մահու չափ թշնամութիւն պիտի տիրէ . . . զոր յառաջ տանելու համար բոլոր ուժս , բոլոր խելքս եւ բոլոր . . . : — Ներեցէք որ ձեր խօսքն ընդմիջեմ , սիրելի Ատրիէն

օրիորդս , ըսաւ Տոքթորը վերջին ծայր հանդարտ
եւ սիրալիր կերպով , այդպիսի յիմարական յոյսե-
րը շատ վնասակար են ձեր բժշկութեան , վասն
զի ձեր երեւակայութիւնը միշտ բորբոքման վի-
ճակի մէջ կը պահեն . ուստի գործը բացո-
րոշ կերպով յայտնենք , որպէս զի դուք ալ ձեր
կացութիւնը լաւ հասկընաք : 1 . Անհնար է որ
դուք ասկէց դուրս ելնէք : 2 . Գուրսի հետ հա-
ղորդակցութիւն չէք կրնար ունենալ : 3 . Այս
տունն այնպիսի մարդիկ միայն կրնան մտնել , ո-
րոց վրայ ես կատարեալ վստահութիւն ունիմ :
4 . Ձեր սպառնալիքէն ու վրէժխնդրութենէն բը-
նաւ երկիւղ չունիմ , վասն զի ամեն պարագա-
ներն ու իրաւունքները նպաստաւոր են ինձ :
— Ամեն իրաւունք մի՛ , զիս հոս փակելու
— Անշուշտ այս բանը չէինք կրնար ընել եթէ խել
մ'իրարմէ ծանր պատճառներ չըլլային . — Ա՛ ,
պատճառներ կան , — Գժբաղդարար շատ :
— Կրնանք արդեօք իմանալ այն պատճառները :
— Աւանդ , խիստ իրաւացի ալ են , եւ եթէ օր մը
դատաստանի դիմէք , ինչպէս որ քիչ մ'առաջ
կ'սպառնայիք , այն ժամանակ մեք ալ կը պար-
տաւորինք յայտնել ձեր ապրելու եղանակին տա-
րօրինակութիւնը , ձեր սպասուհիներն անսովոր
կերպիւ զգեստաւորելու մոլութիւնը , Հնդիկ
իշխանազնին պատմութիւնը , որուն արքայա-
վայել հիւրընկալութիւն մ'ընել կուզէք , ման-
չու պէս մինակ ապրելու կամքերնիդ , որ տա-
սընեւութ տարու աղջկան մը համար չլսուած

բան է , ձեր ննջելու սենեակին մէջ պահուած
մարդուն դէպքը , վերջապէս ձեր երէկուան հար-
ցախորձին ատենագրութիւնը , զոր յատուկ պաշ-
տօն ունեցող անձ մը հաւատարմութեամբ ար-
ձանագրեց : — Ի՞նչպէս . . . երէկ . . . դոչեց
Ատրիէն զասմամբ եւ միանգամայն զարմանօք :
— Այո՛ , երէկ , որպէս զի եթէ ձեր վրայ ունե-
ցած խնամքնիս օր մը չճանչելու ըլլաք , ձեռ-
քերնիս փաստ ունենանք . ասոր համար ձեր ամեն
պատասխաններն արձանագրել տուինք քովի
սենեկին դրանը վարագուրին ետեւ կեցած մար-
դու մը ձեռօք . . . եւ յիրաւի , եթէ օր մը ,
խելքերնիդ հանդարտելով , այն արձանագրու-
թիւնը պաղարիւնութեամբ կարդաք , ձեր վրայ
այս որոշումն ընելու հարկադրեալ ըլլալնուս վը-
րայ չպիտի զարմանաք : — Շարունակեցէք խօս-
քերնիդ , պարո՛ն , ըսաւ Ատրիէն արհամարհա-
նօք : — Այս յիշած իրողութիւններս ճշմարիտ
եւ ծանուցեալ ըլլալով , պէտք է հասկընաք , սի-
րելի՛ Ատրիէն օրիորդս , որ ձեզ սիրողներուն պա-
տասխանատուութիւնն ապահովեալ է . վասն զի
ձեր մտաւորական խանդարման դարման տանե-
լու հարկադրեցանք . արդարեւ առ այժմ մաս-
նաւոր խենթութիւններ միայն կը տեսնուին ձեր
վրայ , բայց եթէ առաջքը չառնուի՝ ձեր ապա-
ռան վտանգի մէջ կիշնայ . . . Արդ՝ ըստ իմ
կարծեաց՝ ձեր հիւանդութիւնը կրնայ արմատէն
քժշկիլ բարոյական եւ ֆիզիքական դարմանա-
տարութեամբ մը , որուն առաջին պայմանն է

ձեզ այն արտառոց տեղէն եւ ընկերներէն հեռա-
ցընել, որք ձեր երեւակայութիւնը վաճառաւոր
կերպիւ կը բորբոքեն. իսկ հոս միայնութեան
մէջ ապրելով, պարզ եւ առանձին կենաց բարե-
րար հանդարտութիւնը, իմ փութ աջան եւ կըր-
նամ ըսել հայրական խնամքս քիչ քիչ կատարե-
լապէս ձեզ կը բժշկեն. — Ուրեմն, ըսաւ Ատ-
րիէն դառն ծիծաղով, աղնուական անկախու-
թեան մը սէրը, առատաձեռնութիւնը, գեղեց-
կին պաշտօն տանիլը, պժգալի եւ վատ բաներէ
զարշուժը, ասոնք են եղեր իմ հիւանդութիւն-
ներս՝ որոցմէ զիս բժշկել կուզէք. կը վախնամ
որ այս ախտերս անբուժելի ըլլան, պարոն, վա-
սըն զի արդէն երկար ժամանակէ 'ի վեր հօրա-
քոյրս այդ պարկեշտ բժշկութիւնը փորձած է :
— Այդպէս թող ըլլայ. թ երեւս մեք ալ չյաջո-
ղինք, բայց գոնէ փորձ մ'ըրած կրլլանք : Ահա՛
ինչպէս որ կը տեսնէք՝ խել մը ծանրակշիռ իրո-
ղութիւններ կան որք մեր այս ձեռնարկութեան
առիթ տուին, եւ այն ալ ընտանեկան ժողովոյ
մը որոշմամբ, որ զիս բոլորովին կապահովէ ձեր
սպառնալիքէն . . . վասն զի վերջապէս այս
կուզէի հասկըցընել, իմ տարիքս եւ յարգի վի-
ճակս ունեցող մարդ մը թեթեւամտութեամբ չի
վարուիր այսպիսի պարագայից մէջ, ուրեմն քիչ
մ'առաջ ըսածս կրնաք հիմա հասկընալ. մէկ
խօսքով, յոյս մի ընէք որ կատարելապէս չբժըշ-
կուած կրնաք դուրս ելնել ասկէց, եւ քաջ հա-
մօզուեցէք որ ձեր սպառնալիքէն բնաւ երկիւղ

չունիմ . . . : Այս կէտը հասաատուելէ ետեւ ,
հիմա ձեր ներկայ վիճակին վրայ խօսինք այն
արտագին կարեկցութեամբ զոր կ'զգամ ձեր վը-
րայ : — Կը տեսնեմ , տարոն , որ զիս խենթի տեղ
կը գնէք եւ հետս խելացիի պէս կը խօսիք :
— Դուք խենթ մի' , Աստուած չընէ , սիրելի զա-
ւակս . . . դեռ այն վիճակը հասած չէք . . . եւ
կը յուսամ որ իմ խնամօքս երբէք չէք ալ հաս-
նիր : Ասոր համար պէտք է շուտով առաջքն առ-
նելու աշխատիլ . եւ հաւատացէք ինձ որ ուշա-
ցընելու չգար . . . : Դուք ապշած ու այլայլած
դէմքով երեսս կը նայիք . . . ըսէք նայիմ , սի-
րելի զաւակս , ի՞նչ շահ կրնամ ունենալ ձեզ հետ
այսպէս խօսելէ : Միթէ ձեր հօրաքեռ ատելու-
թեանը նպաստելու համար է . բայց ի՞նչ նպա-
տակաւ . ձեր հօրաքոյրն ինչ օգուտ կամ վնաս
կրնայ ընել ինձ . երէկ ինչ կարծիք որ ունէի վը-
րան՝ այսօր ալ այս ժամուս ալ նոյն կարծիքն ու-
նիմ : Միթէ ձեզ հետ ալ նոր լեզուով մը կը խօ-
սիմ այսօր : Միթէ երէկ ալ քանի մ'անգամ ձեր
երեւակայութեան վտանգաւոր բորբոքմանը ,
ձեր արտառոց բաղձանքներուն վրայ չխօսեցնայ
ձեզ : Բայց ձեզ հոս բերելու համար վարպետու-
թիւն բանեցուցի : Է՛հ , անշուշտ . ձեր ինձ ա-
ռաջարկած պատեհ առիթէն օգուտ քաղեցի .
այս ալ ստոյգ է , սիրելի խեղճ աղջիկս . . .
վասն զի դուք երբէք կամովին հոս չէիք գար .
եւ վերջապէս , եթէ ոչ այսօր , գոնէ վաղը կ'ամ
միւս օր պատրուակ մը դռնել հարկ պիտի ըլլար

ձեզ հոս բերելու համար . . . եւ ի՞նչ պահեմ
ձեզնէ, ինքնիրենս ըսի թէ ամեն բանէ առաջ
այս օրիորդին օգուտը պէտք է . . . ուստի մեք
մեր պարտքը կատարենք, վերջն ինչ կուզէ թող
ըլլայ : »

Քանի որ Պ. Պալէնիէ այս խօսքերը կը սէր,
Ատրիէնի գէմքը՝ որ մինչեւ այն ժամանակ մերթ
զայրու թով եւ մերթ արհամարհանօք կը տպա-
ւորէր, սկսաւ անձկութեան եւ սոսկման նշան-
ներ ցոյց տալ . . . : Երբոր կը լսէր այս մար-
դուն այնպէս բնական անկեղծ համոզեալ եւ մա-
նաւանդ արդար եւ բանաւոր երեւութով խօսքե-
րը, սարսափ կուգար վրան . . . : Այսպիսի ձե-
ւերով հագուած անազորուն մատնութիւն մը
հազարապատիկ առաւել կը զարհուրեցընէր զին-
քը՝ քան թէ Սէն-Տիզիէ տիկնոջ անկեղծ եւ ան-
պատրուակ ատելութիւնը . . . : Վերջապէս
այս յանդուգն կեղծաւորութիւնն այնչափ ան-
հեթեթ կը թուէր իրեն, որ գրեթէ անհնարին կը
համարէր : Ատրիէն իր զգացմունքը ծածկելու
արուեստին այնչափ անհմուտ էր, որ բժիշկը՝ իբ-
րեւ ճարտար դիմագնին՝ դիւրաւ նշմարեց իր
խօսքերուն աղդեցութիւնը :

Օ՛ն, ըսաւ ինքնիրեն, արդէն մեծ քայլ մ'ա-
ռինք, արհամարհանքն ու բարկութիւնը եր-
կիւղի դարձաւ . . . քիչ մ'ետքն ալ կասկածի
պիտի փոխուի . . . վերջապէս հոսկէց դուրս չի
պիտի ելնեմ մինչեւ որ սիրալիր խանդաղատա-
նօք ինձ չըսէ . « Ասողաչեմ, սիրելի Պ. Պալէնիէ,

այցելու թիւննիդ մի ուշացընէք : »

Ուստի բժիշկը նորէն խօսիլ սկսաւ այնպիսի տխուր եւ յուզեալ ձայնով, որ կարծես թէ սրբալին խորէն կը բղխէր : « Ար տեսնեմ որ . . . իմ վրաս անվատահու թիւն մ'ունիք . . . իմ բոլոր ըսածներս սառլ թիւն խաբէու թիւն կեղծաւորութիւն եւ ատելու թիւն են, այնպէս չէ : Ձեզ ատեմ ես . . . ինչո՞ւ համար արդեօք . . . դարմանալի՞ բան . . . ի՞նչ ըրած էք դուք ինձ . կամ մանաւանդ, կարելի է որ այս պատճառն առաւել յարմարագոյն դատիք ինձ պէս մարդու մը, յաւելցուց Պ . Պալէնիէ դառնութեամբ, — կամ մանաւանդ՝ ի՞նչ շահ կրնամ ունենալ ձեզ ատելով : Ի՞նչպէս կրնաք դուք . . . դուք որ ձեր ազնիւ յօժարութեանց չափազանցութեամբն այդ ցաւալի վիճակին մէջ ինկած էք . . . դուք որ գրեթէ ձեր բնածին ձրից հիւանդութեամբն զգածեալ էք, ի՞նչպէս կրնաք պազութեամբ եւ վճռողաբար ամբաստանել պարկեշտ մարդ մը՝ որ մինչեւ ցայսօր սիրոյ փորձեր միայն առած է ձեզ . . . ամբաստանել ամենէն վատ ամենէն ժանտ եւ ամենէն քսամենի եղեռնագործութեամբ . . . : Այո՛, եղեռնագործութիւն կըսեմ, վասն զի այդ անխիղճ մատնութիւնը՝ որով զիս կամբաստանէք՝ ուրիշ անուան արժանի չէ : Այդ ըրածնիդ գէշ բան է, սիրելի դաւակա . . . շատ գէշ բան . . . առով կը հասկցուի որ անկախ միտք մ'ալ փոքրոզի մտքերու չափ անարդարութիւն ու աններողութիւն կրնայ ցուցընել : »

Այս խօսքն ըսած ժամանակ Պ. Պալէնիէ
ձեռքն իր խոնաւ աչացը տարաւ : Անհնար է նը-
կարագրել Տօքթորին խօսուածքը նայուածքն
ու շարժուածքը : Աշխարհիս ամենէն վարպետ
եւ փորձ փաստարանը , ամենէն մեծ կատակեր-
գակը չէր կրնար այս տեսարանը Տօքթորէն աւե-
լի ճարտարութեամբ եւ ոչ իսկ անոր պէս լաւ
կերպով ներկայացընել . . . վասն զի Պ. Պալէ-
նիէ՝ աչքին առջեւ ի տեսարանէն ակամայ զգած-
ուելով ինքն ալ կէս մը համոզուած էր իր ըսած-
ներուն : Մէկ խօսքով, իր ըրած դաւաճանութեան
նրչափ սոսկալի բան ըլլալը կ'զգար , բայց դիտէր
նաեւ որ Ատրիէն չէր կրնար դիւրաւ հաւատալ իր
այս ըրածին . որովհետեւ այն աստիճան քստմը-
նելի մեքենայութիւններ կրնան ըլլալ , որ ար-
դարախոհ եւ մաքուր հոգիները չեն կրնար եր-
բէք զանոնք հնարաւոր համարիլ : Եթէ վստա-
խոհ միտք մ'ակամայ իր նայուածքը շարութեան
անդունդն իջեցընէ , խորութեան մինչեւ մէկ
աստիճանն հասնելէ ետեւ՝ գլուխը կը դառնայ եւ
ալ չկրնար բան մը տեսնել : Ասկէ դատ , ամենէն
չար մարդիկ անգամ այնպիսի օրեր ժամեր կամ
վայրկեաններ ունին , ուր մարդոց սրտին մէջ Աս-
տուծոյ դրած բարի զգացումն ակամայ կարծըն-
նայ : Ատրիէնի պէս սիրուն աղջկան մը դառն
վիճակն անհնար էր որ Տօքթորին սրտին մէջ կա-
րեկցութիւն չարթնցընէր : Երկար ժամանակէ 'ի
վեր անոր վրայ համակրութիւն ունեցող երեւնա-
լու պարտականութիւնը , միանգամայն օրիորդին

իր վրայ ունեցած զմայլելի վատահուժիւնը քաղ-
ցրր ու սիրելի սովորոյթ մ' եղած էին բժշկին . . .
բայց համակրուժիւն եւ սովորոյթ պէտք էր գոհ-
ւէին անողոքելի հարկի մը . . . :

Տ'էկրինելի մարքիզն ոգւով չափ կը սիրէր իր
մայրը, բայց երբոր մայրը մեռած ժամանակ՝ զինքը
կը կանչէր, Տ'էկրինելի՝ առանց հոգեվարք մօրը
վերջին բաղձանքը կատարելու՝ ձգեր դայեր էր :

Այսպիսի օրինակներ աչքին առջեւ կեցած
ժամանակ՝ Պ . Պալէնիէ կրնար Ատրիէնին խնայել
իր ընկերացած ուխտին անդամներն իրենն էին .
բայց թերեւս ինք առաւել անոնցն էր՝ քան թէ
անոնք իրենը . որովհետեւ երկարժամանակեաց
մեղսակցութիւնն անեղ եւ անքակտելի կապեր
կը կազմէ :

Երբոր Պ . Պալէնիէ այնպէս եռանդադին
ջերմութեամբ Քարտովիլ օրիորդին հետ ըրած
խօսակցութիւնն աւարտելու վրայ էր, դրան
փոքրիկ պատուհանը դուրսէն փակող տախտակը
կամացուկ մը սահեցաւ վար իջաւ իր շրջանակին
մէջ, եւ երկու աչք ուշադրութեամբ սենեակէն
ներս նայեցան : Պ . Պալէնիէ չնչմարեց զայս :

Ատրիէն չէր կրնար աչքը Տոքթորէն դատել, որ
կարծես թէ՛ զայն կախարդեր էր : Մուռնջ, ընկճեալ,
տարտամ սարսափէ մը բռնուած, այս մարդուն
խաւարապատ սրտին խորոցը մէջ թափանցելու
անկարող, անոր սրտաշարժ եւ վշտալի ձայնին
կէս սուտ եւ կէս իրաւ անկեղծութենէն ակամայ
սիրտը շարժած . . . խեղճ աղջիկը վայրկեան մը

տարակուսեցաւ : Առաջին անգամ մտքէն անցաւ
թէ Պ. Պալէնիէ ահագին սխալ մը կը գործէր . . .
բայց թերեւս բարեմտութեամբ էր . . . : Միւս
կողմանէ , գիշերը կրած տագնապը , ներկայ վի-
ճակին վտանգները , վրան եկած տենդային յուզ-
մունքն օրիորդին մտացը մէջ շփոթութիւն ու
վարանում կը ձգէին . քանի որ բժշկին երեսը կը
նայէր , զարմանքն ու ապշութիւնը կաւելնար .
յետոյ տկարամտութիւն մը չընելու համար , ո-
րուն դժնդակ հետեւանքն ընդ աղօտ կը նշմա-
րէր , իր բոլոր կարողութիւնը վրան ամփոփելով
գոչեց . « Ոչ , ոչ , պարոն . . . չեմ ուզեր . . .
չեմ կրնար հաւատալ . . . ձեզ պէս գիտնական
ու փորձառու մարդն այսպիսի սխալ մը չգործեր :
— Սխալ մի՛ . . . ըսաւ Պ. Պալէնիէ ծանր եւ
տխուր ծայնով մը , սխալ մի՛ . . . թող տուէք
ուրեմն որ ձեր ինձ շնորհած գիտնականութեան
ու փորձառութեան անուամբ խօսիմ ձեզ հետ .
քանի մը վայրկեան մտիկ ըրէք զիս , սիրելի զա-
ւակս , եւ այնուհետեւ վճիռը ձեզ կը թողում :
— Վճիռն ինձ կը թողնուք , ըսաւ օրիորդն ապ-
շելով . ուրեմն զիս համոզել կուզէք թէ . . . »
Յետոյ իր խօսքն ընդմիջելով , ջղային ծիծաղով
մ'աւելցուց . « Արդարեւ ձեր յաղթութիւնը պը-
սակելու համար այս միայն կը մնար , որ իմ իսկ
բերնովս խոստովանիլ տաք զիս թէ խելագար
եմ . . . թէ իմ տեղս հոս է . . . թէ կը պար-
տաւորիմ ձեզ . . . » — Շնորհակալ ըլլալ . . .
այն , պիտի ըլլաք , ինչպէս որ խօսակցութեանս

սկիզբէն ըսի ձեզ : Ուրեմն մտիկ ըրէք զիս . ըսելիք խօսքերս դառն եւ կծու պիտի ըլլան . բայց այնպիսի վէրքեր կան՝ որք հրով ու երկաթով միայն կրնան բուժիլ : Ուստի երդում կուտամ ձեզ , սիրելի զաւակս , մտածեցէք , ձեր անցեալ կենաց վրայ անկողմնակալ նայուածք մը ձգեցէք , ձեր մտքին վկայութեանն ուշ դրէք , եւ դուք ինքնին պիտի վախնաք : Յիշեցէք ձեր մտաց կարգէ դուրս գրդուման վայրկեանները , որոց միջոցին ինքզինքնիդ երկրէս փոխադրուած կը կարծէիք , ինչպէս որ խոստովանեցաք . . . եւ մանաւանդ կաղաչեմ որ դեռ ժամանակը չանցած , քանի որ միտքերնիդ իր զգաստութիւնը պահած է , ձեր անցուցած կեանքը բաղդատէք . ձեր հասակն ունեցող ուրիշ աղջկանց կենցաղավարութեան հետ : Միթէ կայ աղջիկ մը որ ձեզ պէս կեանք վարէ , ձեզ պէս խորհի . ուրիշ բան է եթէ դուք ինքզինքնիդ այն աստիճան գերազանց ճանչէք ուրիշ կիներէն , որ այն գերազանցութեան անուշով կարենաք ձեր ասորիինակ կենցաղն ու սովորութիւններն ընդունիլ տալ : — Այդպիսի յիմարական սնափառութիւն մ'երբէք ունեցած չըլլալս դուք ալ քաջ գիտէք , պարոն , ըսաւ Ատրիէն սրտադողն հետ զհետէ աւելնալով : — Ուրեմն , սիրելի խեղճ զաւակս , ի՞նչ բանի տանք ձեր այն սրտառոց եւ անհասկանալի կենցաղավարութիւնը : Արնաք դուք զձեզ համոզել թէ ըրածնիդ խոհական մարդու գործ է : Ա՛հ , զաւակս , զգոյշ կեցիք , այն ըրած .

նիդ առ այժմ թեթեւ ու զմայլելի տարօրինա-
 կութիւններ, բանաստեղծական արտակերպո-
 նութիւններ, քաղցր ու տարտամ երազներ են,
 բայց զառիւպարն անդիմադրելի եւ վտանգաւոր
 է: Չգոյշ կեցիք . . . զգոյշ կեցիք . . . ձեր
 խելքին առողջ շնորհալի եւ ուշիմ մասը դեռ զօ-
 րաւոր ըլլալով՝ ձեր տարօրինակութեանց վրայ իր
 դրոշմը կը տպէ: Բայց դուք չէք գիտեր թէ ձեր
 խելքին աստացեալ մասն ինչ զարհուրելի ուժգ-
 նութեամբ կածի եւ քիչ ժամանակէն միւս ա-
 ռողջ մասը խեղդել կ'սպառնայ: Այն ժամանակ
 տեսնուելիքը՝ չէ թէ շնորհալի տարօրինակու-
 թիւններ են, այլ ծաղրաշարժ փրոշն եւ գարշե-
 լի յիմարութիւններ: — Ա՛հ, վրաս սարսափ կու-
 գայ, ըսաւ խեղճ աղջիկը դողահար ձեռքերն
 հրակէզ ձակտին տանելով: — Այն ժամանակ,
 շարունակեց Պ. Պալէնիէ այլայլեալ ձայնիւ, ի-
 մացականութեան վերջին նշոյլները կը մարին .
 այն ժամանակ . . . խենթութիւնը . . . որով-
 հետեւ հարկ է այս սոսկալի բառն արտասանել . . .
 խենթութիւնը՝ վրայ կելնէ, մերթ մոլեգին ու
 վայրագ կատաղութեամբ կը պոռթկայ: — Ա՛յրի
 կնոջ պէս . . . » մրմռաց Սարիէն, եւ հրացայտ ու
 անթարթ աչօք մատը դէպ'ի ձեղունը վերցուց:
 « Մերթ ալ, ըսաւ բժիշկն իր խօսքերուն աղե-
 տալի հետեւանքէն ինք ալ վախնալով բայց իր
 կացութեան չարաշուք հարկէն բռնադատեալ,
 մերթ ալ՝ խենթութիւնն ապուշ եւ գաղանական
 ձեւ մը կառնու, այնպէս որ թշուառ աստացե-

Կրիսթ
 Խաչիկ

լոյն վրայ մարդկութեան նշան չմնար, այլ միայն
անասնական բնադդուամբ: Անոնց պէս անյադա-
բար կուտէ, եւ ետքն ալ անոնց պէս անդադար
կերթեւեկէ իր խցիկին մէջ՝ ուր զինքը փակելու
կը հարկադրին: Ահա այսպէս կանցունէ իր կեան-
քը . . . բոլոր . . . : — Նա դիմացի կնոջ պէս՝
ըսաւ Ատրիէն շուարեալ աչօք եւ ձեռքը ծանր
ծանր դէպ ՚ի դիմացի շէնքին պատուհանն երկըն-
ցընելով:

« Ո՛հ, այն . . . դռչեց Պ. Պալէնիէ, այդ
կանայք ալ, խեղճ աղջիկ, ձեզ պէս դեռահա-
սակ գեղեցիկ ու հանճարեղ էին . բայց, աւանդ,
անոնք ալ ձեզ պէս խելագարութեան վտանգա-
ւոր սերմն իրենց վրայ կը կրէին, որ ժամանակին
չջնջուելով աճեցաւ . . . աճեցաւ եւ անոնց մը-
տաւորական կարողութիւնն ՚ի սպառ խեղդեց :
— Ո՛հ, Աստուծոյ սիրուն . . . կաղաչեմ, դռ-
չեց Քարտովիլ օրիորդը սարսափահար, Աստուծոյ
սիրուն . . . այդպիսի խօսքեր մի՛ ընէք ինձ . . . :
Կը վախնամ . . . դուրս հանեցէք զիս այս տե-
ղէն . . . կաղաչեմ, դուրս հանեցէք, դռչեց ա-
ղեկտուր ձայնիւ, ասպա թէ ոչ՝ խելքս իրաւ պիտի
թռցընեմ . . . : »

Յետոյ իր վրայ եկած ահագին անձկութեան
դէմ մաքառելով՝ յարեց . « Բայց ոչ, սէ, ոչ . . .
մի՛ յուսաք, ես չեմ խենթեմար . բոլոր խելքս
վրաս է : Միթէ այդ խօսքերուն հաւտալու չափ
կոյր կը կարծէք զիս . . . ստոյգ է որ ուրիշ
կանանց պէս կեանք չեմ վարեր . ուրիշ կանանց

պէս չեմ խորհիր . բայց ի՞նչ կեղնէ ասկէց . թող
ուրիշներուն համանիմ . . . Միթէ սիրտս չմը է .
միթէ նախանձոտ ու անձնամոլ եմ . Քաղափար-
ներս նորանշան են , այո՛ , կը խոստովանիմ . բայց
վերջապէս , Պ . Պալէնիէ , դուք ալ քաջ գի-
տէք . . . որ անոնց նպատակն ազնիւ ու վսեմ
է . . . » Այս միջոցին Սարիէնի ձայնն ողորմ
ու աղերսագին եղանակ մ'առաւ , եւ աչքէն ալ
յորդ արտառք կը հոսէր . « Կենացս մէջ չարու-
թիւն մը գործած չեմ . եթէ պակասութիւններ
ըրած եմ՝ առատաստութեանս արդասիքն են .
միթէ մէկն իր շուրջը դանուողները երջանիկ
տեսնելու փափաքելով խենթ եղած կըլլայ . . .
ասկէց դատ՝ խենթ մ'իր խենթ ըլլալը կրնայ ըզ-
գալ . իսկ ես կ'զգամ որ չեմ . եւ հիմա ալ միթէ
ես խենթ եմ , որ գիշերուան երկու կանանց վը-
րայ այնչափ սարսափելի խօսքեր կընէք ինձ . . .
այս բանը դուք ինձմէ աղէկ պէտք է գիտնաք . . .
բայց այն ժամանակ , յաւելցուց Քարտովիլ օրի-
որդն յուսահատական ձայնիւ , ուրիշ ընելիք բան
մը պէտք է ըլլայ . եթէ դուք զիս կը սիրէք , ին-
չո՞ւ համար այսչափ ատեն սպասեցիք . չէի՞ք
կրնար աւելի առաջ գլծալ իմ վրայ . Առաւել սոս-
կալին այս է որ չեմ գիտեր թէ ձեր խօսքին կըր-
նամ հաւատալ , վասն զի դուցէ որոգայթ մ'ըլ-
լայ . . . բայց ոչ . . . ոչ . . . ճշմարիտ ըլլա-
լու է , վասն զի կը տեսնեմ որ կուլաք , յաւել-
ցուց Պ . Պալէնիէի երեսը նայելով , որ իր աներես
լրբութեանն ու ասպառում խստաստութեանն

հակառակ չէր կրնար արտառքը բռնել՝ երբոր
օրիորդին տրուած այս անանուէն չարչարանքը կը
տեսնէր . « Չեր այդ լացն խմվրայ է . . . բայց ,
տէր Աստուած , ուրեմն ընելիք բան մը կայ ,
այնպէս չէ . . . սէ , ինչ որ կուզէք կը կատա-
րեմ . . . սէ , ինչ որ կուզէք . . . միայն թէ այն
դիչերուան կանանց պէս չըլլամ . բայց եթէ ժա-
մանակն անցած է . . . սէ . ոչ , անցած չէ , այնպէս
չէ , սիրելի Պ . Պալէնիէ : Ո՛հ , հիմա ներում կը
խնդրեմ այն խօսքերուս համար որ ներս մտած
ժամանակնիդ ըսի ձեզ . . . : Ո՛հ , այն ժամա-
նակը . . . չէի դիտեր . . . »

Այս հակիրճ , հառաչանօք ընդհատեալ եւ
տեսակ մը տենդային խելայեղութեամբ արտա-
սանեալ խօսքերուն քանի մը վայրկեան լռու-
թիւն յաջորդեց : Նոյն միջոցին բժշկին սիրտն
ելած ըլլալով՝ արտառքը սրբեց : Ալ դիմանալու
կարողութիւնը չէր մնացած .

Ատրիէն՝ որ երեսը ձեռացը մէջ առնելով
ծածկեր էր , յանկարծ գլուխը վեր առաւ . դէմ-
քըն առաւել հանդարտ էր՝ թէ եւ ինք Չղային
սարսուռով մը յուզեալ . « Պարոն Պալէնիէ , ըսաւ
սրտաչարժ ծանրութեամբ . չեմ դիտեր ինչ ըսի
ձեզ քիչ մ'առաջ . երկիւղը կարծեմ դառանցել
կուտար դիս , հիմա խելքս վրաս ժողովեցի՝ Մտիկ
ըրէք դիս . ես ձեր ձեռքն եմ , դիտեմ , եւ ազա-
տելու ճար չկայ . . . այն ալ դիտեմ . դուք ոխե-
րիմ թշնամի՞ մ'էք ինձ . . . բարեկամ մ'էք , չեմ
դիտեր , արդեօք կը վախնամք ստուգիւ որ այս

վայրկենիս իմ վրայ տեսնուած տարօրինակու-
թիւնը խենթութեան կը դառնայ ետքը . կամ
թէ դժոխային մեքենայութեան մը դաւակից
էք . . . դուք միայն գիտէք . . . : Արդ ես
որչափ եւ քաջասիրտ եմ, յաղթուած ըլլալս կը
խոստովանիմ, եւ ինչ որ ինձմէ կուզուի . . . կը
հասկընամք . . . կանխաւ կը խոստանամ կատա-
րել . . . խօսք կուտամ ձեզ, եւ գիտէք որ իմ
խօսքս անկեղծ է . . . Ուրեմն զիս հոս վար դը-
նելու պատճառ եւ շահ չմնար ձեզ . . . : Իսկ
եթէ, ընդհակառակն, խղճի մտօք կը հաւատաք
որ իմ խելքս վտանգի մէջ է, եւ ես ալ կը խոս-
տովանիմ որ դուք իմ մտացօ մէջ տարտամ բայց
սարսափելի կասկածներ դարթուցիք . . . այն
ժամանակ, ըսէք ինձ, եւ ես կը հաւատամ ձեր
խօսքին . . . ես հոս միայնակ ձեր ձեռքն եմ,
ոչ բարեկամներ ունիմ քովս եւ ոչ խորհրդա-
տուներ . . . ուստի կուրաբար ինքզինքս ձեզ
կը յանձնեմ . . . արդեօք աղատչի՞ս կաղերսեմ
թէ դահճիս . . . չեմ գիտեր . . . բայց կըսեմ
ձեզ . . . « Ահա իմ ապագաս . . . ահա կեան-
քըս . . . առէք . . . ես կարողութիւն չունիմ
զայն ձեր ձեռքէն կորզելու . . . »

Այս աղեկատուր համբերատարութեան եւ
յուսահատ վստահութեան խօսքերը վերջին հար-
ուած մը տուին Պ. Պալէնիէի տատամսութեանը:

Արդէն սիրան այս տեսարանէն յուզուած,
առանց իր ընելիքին հետեւանքը մտածելու՝ Չա-
նայ գոնէ օրիորդը քաջալերել այն անիրաւ եւ

անուշիկ կատկածներուն վրայ զոր անոր մտաց մէջ
ձգեր էր : Պ . Պալէնիի խղճին մէջ արթնցած
դիզջն ու գուլթը դէմքին վրայ կը տեսնուէր . . .
այո , յայտնի կը տեսնուէր . . . : Երբոր Քար-
աօվիլ օրիորդին կը մօտենար որ ձեռքը բռնէ ,
դրանը պատուհանին ետեւէն սուր եւ կտրուկ
ձայն մը լսուեցաւ որ այս միակ խօսքն արտա-
սանեց . « Պարոն Պալէնիէ . . . : — Ռօտէն . . .
ըսաւ Տոքթորը դարհուրած . զիս կը լրտեսէ եւ
դէր : — Ո՞վ է ձեզ կանչողը . . . հարցուց աղջի-
կը Պ . Պալէնիէի : — Մէկը՝ որուն հետ ժամագիր
եղած էի այս առաւօտ . . . Սուրբ-Մարիամայ
վանքն երթալու համար որ այս տանը մօտ է , ըս-
տաւ բժիշկը վարանմամբ : — Հիմա ի՞նչ պատաս-
խան պիտի տաք ինձ , ըսաւ Ատրիէն տագնապա-
գին անձկու թեամբ :

Վայրկեան մը խոր լռութենէ եւ գլուխը մէկ
մը դէպ 'ի դրան պատուհանը դարձունելէ ետեւ՝
Տոքթորը խռովեալ ձայնով մ'ըսաւ . « Ես նոյն
եմ . . . ինչ որ միշտ եղայ . . . ձեզ բարեկամ . . .
եւ անկարող ձեզ խաբելու : »

Ատրիէնի երեսը մահուան դեղնութիւն պա-
տեց : Յետոյ ձեռքը Պ . Պալէնիէի երկնցուց ու
ըսաւ՝ ձայնն անխռով պահելու ջանալով . « Եր-
նորհակալ եմ . . . քաջութեամբ կը համբերեմ . . .
բայց շատ երկար պիտի տեւէ արդեօք : — Թե-
րեւս մէկ ամսոյ չափ . . . : Առանձնութիւնը . . .
խորհրդածութիւնը , յարմար կերակուրներ , եւ
իմ անձնուէր ինսամբս . . . անհող եղիք , ինչ

որ ձեր վիճակին հետ կրնայ համաձայնիլ . . . կը ներուլի ձեզ . ամեն փոյթ եւ ջանք 'ի գործ պիտի դրուին ձեզ հնեղացընելու եւ գոհ ընելու համար . եթէ այս սենեակէն չէք ախորժիր , ուրիշ մը կը արուլի ձեզ . . . — Այս կամ այն սենեակը . . . հոգ չէ , պատասխանեց Ատրիէն սրտաբեկ տըխրութեամբ : — Օ'ն , քաջ եղիք . . . յուսահատելու բան չկայ : — Թերեւս . . . կը շողոքորթէք զիս , ըսաւ Ատրիէն դառն ժպիտով . յետոյ յաւելցուց . « Ուրեմն մի ուշանաք , սիրելի Պարոն Պալէնիէ , շուտ եկէք , իմ բոլոր յոյսս հիմա ձեր վրայ է : »

Եւ գլուխը կուրծքին վրայ ծռեցաւ , ձեռքերը ծունդերուն վրայ ինկան , եւ անկողնին եզրը նստած մ'նայ տժգոյն ! անշարժ եւ ընկճեալ :

« Խեղճ , ըսաւ ինքնիրեն Պ . Պալէնիէի երթալէն ետեւ , թերեւս խեղճ . . . »

Այս միջանկեալ անցքին վրայ երկարօրէն խօսիլ ուղեցինք . անցք մը՝ որ կարծուածէն պակաս վիպասանական է :

Շահասիրութիւնը , վրէժխնդրութիւնը , նենգածէտ մեքենայութիւնները շատ անգամ օգուտ քաղած են այն անխոհեմ դիւրութենէն , որով երբեմն մասնաւոր դարմանոցներու մէջ թռչակաւ անձինք կընդունուին իրենց ընտանեաց կամ բարեկամաց ձեռքէն :

Ետքի կը թողունք յայտնել մեր կարծիքը քաղաքական իշխանութեան կամ ստիկանու-

Թեան կողմանէ հսկող տեսչութիւն մը հաստա-
տելու հարկին վրայ, որուն պաշտօնն ըլլայ
կանոնաւորապէս եւ յաճախ աչքէ անցունել խե-
ղադար դարմանող հաստատութիւնները . . .
ինչպէս նաեւ ուրիշ ոչ նուազ կարեւոր հաստա-
տութիւններ՝ որք հսկողութենէ ազատ են . . .
տեսակ մը կանանց վանքերն ըսել կուզենք, ո-
րոց վրայ քիչ մ'ետքք պիտի խօսինք :



ՄԱՍՆ ՈՒԹԵՐՈՐԴ

Խ Ո Ս Տ Ո Վ Ա Ն Ա Հ Ա Յ Ր

ԳԼՈՒԽ ԱՌԱԶԻՆ

ՆԱԽԱԶԳԱՑՈՒՄ

Նրբոր վերոյիշեալ անոթքը կանոնէր Տոբժոր Պալէնիէի հիւանդանոցին մէջ, որեթէ նոյն ժամուն ուրիշ տեսարաններ կային Պրիզ-Միշ փողոցը Ֆրանսոաղ Պօտուէնի տունը :

Սէն-Մէրիի եկեղեցւոյն ժամացոյցն առաւօտեան եօթներորդ ժամը նոր զարկեր էր . օդն ամպոտ ու մթին էր . եղեանն ու չոր ձիւնը Տալոպէնի կնոջ ախուր սենեկին պատուհանները կը կոծէին :

Ֆրանսոաղ՝ դեռ իր որդւոյն բանտիւր չի դիտնալով, առջի իրիկունն ու գիշերուան մէկ մասը նստած՝ անոր դալուն սպասեր էր սրտատանջ . բայց յետոյ վերջապէս յողնութեան ու քունի չկրնալով դիմանալ, կէս գիշերէն դրեթէ երեք ժամ ետքը Ռօզի եւ Պլանչի անկողնին քով բարձի մը վրայ քնացեր էր : Առաւօտուն՝ լուս-

ցածին պէս՝ ելաւ կանգնեցաւ , եւ անմիջապէս
ձեղնայարկն ելնելով Ակրիքօլի խցիկը դնաց յու-
սալով որ թերեւս քանի մը ժամ առաջ եկած
ըլլայ :

Ռօզ եւ Պլանշ ալ ելեր ու հագուեր էին , եւ
այն տխուր ու ցուրտ սենեկին մէջ մինակ վա-
ցեր էին :

Ռասպա-ժօա , զոր Տակօպէս Փարիզ թողու-
ցեր էր , պաղած վառարանին քով տարածուեր
էր՝ երկայն ցուկը երկու թաթերուն մէջ ա-
ռած , եւ աչքն երկու որբերէն չէր դատեր :

Ասոնք այն դիշերը քիչ քնանալով Տակօ-
պէսի կնոջ անձկութիւնն ու մտառանջութիւնը
նշմարեր էին : Մերթ աեսեր էին որ խեղճ կինն
ինքնիրեն խօսելով սենեկին մէջ կը պարտէր ,
մերթ սանդղին կողմէն ամենաթեթեւ ձայն մը
լսելուն պէս ականջ կը դնէր , մերթ ալ կերթար
սենեկին մէկ անկիւնը դրուած խաչելութեան
առջեւ ծունր կը դնէր : Որբերը չէին գիտեր որ
այս պատուական կինն իր որդւոյն համար ջեր-
մեռանդութեամբ աղօթած ժամանակ իրենց
համար ալ կաղօթէր . վասն դի իրենց հողւոյն
վիճակին վրայ կը վախնար ու կը ցաւէր :

Առջի օրը , Տակօպէս Շարթը երթալու հա-
մար շտապով ճանրայ ելնելէ ետեւ , Յրանսօսող
երկու աղջկանց անկողնէ ելնելուն ներկայ գրա-
նուելով յորդորեր էր որ իրենց առաւօտեան ա-
ղօթքն ընեն . անոնք ալ միամտութեամբ պա-
տասխաներ էին թէ ամենեւին աղօթք չէին դի-

տեր , այլ իրենց միակ աղօթքն էր օգնութեան
կանչել իրենց մայրը՝ որ երկինքն էր : Նրբոր Յը-
րանաօաղ ցաւելով ու զարմանալով՝ դաւանանքի
դրոշմի եւ հաղորդութեան վրայ խօսք բացաւ ,
երկու քոյրերը զարմացմամբ աչուքնին մեծ մեծ
բացին եւ ըսածներէն բան մը չհասկըցան : Տա-
կօպէսի կինը՝ երկու աղջկանց կրօնի մասին տը-
գիտութիւնը տեսնելով՝ սարսափեցաւ անոնց
հոգւոյն ծանր վտանգին վրայ , մանաւանդ եր-
բոր հարցուց անոնցթէ՛ դ՛մնէ՛ մկրտութիւն առած
էին , եւ այս խորհրդին ինչ ըլլալը բացատրեց
անոնց . որբերը պատասխանեցին թէ՛ բնաւ տե-
ղեկութիւն չունէին այս բաներուն , վասն զի
Սիպերիոյ մէջ իրենց մօրն աքտորուած դիւղը՝
ուր իրենք ծնած էին՝ ոչ եկեղեցի կար , ոչ քա-
հանայ : Արդ , երբոր մէկն ինքզինք վայրկեան
մը Յրանաօաղի տեղը դնէ , դիւրաւ կրնայ երե-
ւակայել թէ՛ ինչ աստիճան տաղնապի մէջ ին-
կաւ խեղճ կինը . վասն զի իր աչքին , այս երկու
գեղեցիկ ու քաղցրաբարոյ աղջիկները՝ զորս
արդէն գորովանօք կը սիրէր՝ յաւիտենական
տանջանաց դատապարտեալ հէգ կոտապաշտներ
էին . ուստի չկրնալով արտառքը բռնել , ոչ ալ
սարսափը ծածկել , զանոնք թեւերուն մէջ գըր-
կեց՝ խոտանալով որ առանց ժամանակ անցու-
նելու՝ անանց հոգւոյն վրկութեանն սքաղի . մի-
անգամայն ցաւեցաւ ու սրտմտեցաւ թէ՛ ինչու
համար Տակօպէս անհողութիւն ըրեր ու դ՛մնէ
ճանբան զանոնք մկրտել չէր տուեր : Աւարդաւ

բեւ այս բանս հին սմբաճից գորականին մտքէն
չէր անցած :

Ճրանասօսող առջի օրը կիրակնօրեայ պատա-
րագին դացած ժամանակ երկու աղջիկներն հետը
տանելու չէր համարձակած , մտածելով որ սուրբ
պաշտամանց բնաւ ծանօթութիւնս չունենալնուն
համար՝ եկեղեցւոյն մէջ անոնց ներկայութիւնը՝
եթէ ոչ գայթակղական՝ դոնէ անօգուտ էր : Այ-
սու ամենայնիւ , իր ջերմեռանդ աղօթից մէջ
Աստուծոյ սղորմութիւնը հայցեր էր այս որբե-
րուն վրայ՝ որք իրենց հոգւոյն յուսահատական
վիճակը չէին դիտեր :

Արդ , Տակօպէսի կնոջ գուրա ելնելէն ետեւ՝
Ռօզ եւ Պլանշ մինակ մնացեր էին սենեկին մէջ :
Իրենց սգոյ լաթերն հագած էին միշտ , եւ իրենց
դեղեցիկ դէմքն առաւել խոկուն կերեւէր քան
թէ ախուր : Թէ եւ աղքատին կեանք վարելու
վարժուած էին , բայց եւ այնպէս երբոր Պրիդ-
Միշ փողոցը հասեր էին , իրենց երեւակայած
հրաշակերտ ու ոսկեղէն Փարիզն այժմեան բնա-
կած տան հետ բաղդատելով մէկէն՝ ի մէկ աղ-
ջեր մնացեր էին : Բայց շատ չանցած այս բնա-
կան դարմանքին տեղ ծանր եւ իրենց հասակէն
վեր լուրջ խորհրդածութիւններ ծագեր էին
մտքերնուն մէջ : Տակօպէսի ժրաջան եւ բարի
բնատանեաց աղքատութիւնը տեսնելով , որբերն
սկսեր էին մտածել , ոչ թէ տղայաբար , այլ իր-
բեւ չափահաս օրիորդներ : Իրենց ուղղախոն եւ
ուշիմ մտքով , ազնիւ սրտով եւ փափուկ ու

քաջ քնաւորութեամբ՝ քաննելու չորս ժամէ՝ ՚ի վեր
չատ գիտեր , շատ ալ խորհրդածեր էին :

« Քոյր իմ , ըսաւ Ռօզ Պլանչին երբոր Յրան-
սօազ սենեկէն դուրս ելաւ , Տակօպէսի խեղճ
կինը մեծ մտմտութեամբ մ'ուշի . նշմարեցիր այս գի-
շեր նրչափ իրար անցեր էր , նրչափ կուլար , նր-
չափ աղօթք կրնէր : — Իմ ալ քեզ պէս սիրտս
կը շարժէր անոր վշտակրութեան վրայ , քոյր
իմ , եւ կը հարցընէի ես ինձ թէ ինչ էր արդեօք
պատճառը . . . : — Մտքէս բան մը կանցնի ,
բայց չեմ ուզեր ըսել . . . թերեւս մեք ենք ա-
նոր սրտատանջութեան պատճառը : — Ինչու
համար , քոյր իմ , արդեօք աղօթք չգիտնալնու
եւ մեր մկրտութեամբ ըլլալուն կամ չըլլալուն ծա-
նօթ չըլլալնու համար : — Ստուգիւ այդ բանը
մեծ վիշտ պատճառեց իրեն , եւ իմ ալ սիրտս
շարժեցաւ , տեսնելով որ մեզ շատ կը սիրէ . . . :
Բայց չհասկըրայ թէ ինչէն սարսափելի վտանգի
մէջ ենք եղեր , ինչպէս որ կրտէր . . . : — Ես
ալ չկրցի հասկընալ , քոյր իմ : Մեք կը ջանանք
որ մօրերնու անհաճոյ ըլլալիք բան մը չընենք ,
որ միշտ կը տեսնէ ու կը լսէ մեզ . . . : Մեզ
սիրողները կը սիրենք , մէկուն դէմ ատելութիւն
չունինք . գլուխնուս ինչ որ գայ՝ համբերու-
թեամբ կը կրենք . . . ինչ յանցանք կամ գէ-
շութիւն կրնան դնել մեր վրայ : — Բայց ահա-
մայ եւ կամ չգիտնալով կրնանք դործել . . . :
— Մեք : — Այո . . . եւ ահա ասոր համար էր
որ կուսէի քեզ թէ դուցէ մեք ենք Տակօպէսի կը-

նոջ սրտատանջութեան պատճառը : — Ինչպէս չ
ըսէ նայիմ : — Մտիկ ըրէ , քոյր իմ . . . երէկ
Ֆրանսոսող տիկինը նա սեղանին վրայի հաստ կը
տաւէ պարկերը կարել ուղեց . . . : — Այո ,
տեսայ , եւ կէս ժամու չափ աշխատելէն ետեւ
տխրութեամբ ըսաւ մեզ թէ ալ չեմ կրնար շա-
րունակել . . . աչքս յատակ չտեսներ . . . գը-
րեթէ կուրցածի պէս եմ . . . : — Ուրեմն իր
ապրուստը ճարելու չկրնար աշխատիլ . . . :
— Աչ , Ակրիքօլ որդին կը նայի զինքը . . . եւ ինչ
բարի դուարթ ու անկեղծ սիրտ մ'ունի . . . նր-
չափ ուրախ է մօրը խնամ տանելուն համար . . . :
Յիրաւի մեր Գարբիէլ հրեշտակին եղբայրն է . . . :
Հիմա հասկըցնեմ քեզ թէ ինչո՞ւ համար Պ . Ակ-
րիքօլի աշխատութեանը վրայ կը խօսիմ . . . :
Մեր ծերունի Տակօպէնն ըսաւ մեզ թէ հոս հա-
սած ժամանակնիս քանի մը Ֆրանք միայն մնա-
ցեր էր քովը : — Զշմարտա է . . . : — Ինք ալ
կնոջը պէս ստակ վատըկելու անկարող է . խեղճ
ծերունի զինուոր մը ինչ կրնայ ընել : — Իրա-
ւունք ունիս . . . մեզ սիրելէ եւ իր զաւկընե-
րուն պէս խնամելէ դատ բան չգիտեր : — Ուրե-
մն հարկաւ Պ . Ակրիքօլի պիտի իյնայ իր հօրն
ապրուստն ալ հոգալ . . . որովհետեւ Գարբիէլ
խեղճ քահանայ մ'է որ բան մը չունի , եւ հե-
տեւարար չկրնար զինքը մեծցընողներուն օգ-
նութիւն մ'ընել . . . ուտի բոլոր ընտանիքն
ապրեցընելու հոգը Պ . Ակրիքօլի վրայ մնացած
է . . . : — Տարակոյս չկայ . . . իր մայրը . . .

իր հայրը . . . պահելու պարտական է , եւ սիրով ալ կը պահէ . . . : — Այո , քոյր իմ . . . բայց մեզ համար բնաւ պարտականութիւն չունի . . . : — Ինչ կըսես , Պլանչ : — Ըսել կուզեմ թէ մեզ ալ պահելու պիտի հարկադրի , որովհետեւ մեք ալ ապրելու միջոց մը չունինք : — Ճշմարիտ է , այդ բանը մտքէս չէր անցած . . . : — Ար տեսնես , քոյր իմ , թող Տակօպէս անդադար յեղ յեղէ թէ մեր հայրը դուքս է , Քաղղիոյ մարաջախատ է . . . եւ թէ այս միտալէն կրնանք մեծ բաներ յուսալ : Քանի որ մեր հայրը հոս չգաց , եւ քանի որ մեր յոյսերը կատարում չգտնեն , միշտ խեղճ որբեր մնալով բեռ պիտի ըլլանք այս առաքինի ընտանեաց՝ որ շատ երախտիք ունի մեր վրայ , եւ վերջապէս այն աստիճան նեղ վիճակի մէջ է որ . . . : — Ինչո՞ւ համար խօսքդ ընդմիջեցիր , քոյր իմ : — Անոր համար որ ըսելիքս դուցէ ուրիշներուն ծիծաղը շարժէ , բայց դու . . . կրնաս հասկընալ : Երէկ Տակօպէսի կինը մեր Ռապա-Ժօային ուտելը տեսնելով տրամութեամբ ըսաւ . « Աւանդ , տէր Աստուած , այս ալ մարդու մը չափ կուտէ . . . : » Այս խօսքն այն կերպով ըսաւ որ իմ լալս եկաւ . « ասկէց կրնաս հասկընալ թէ նրչափ աղքատ են . . . հիմա մեք ալ բեռ մ'եղանք ասոնց . . . : »

Եւ տխրութեամբ երկու քոյրերն իրարու երես նայեցան . իսկ Ռապա-Ժօա՝ անհող պատկած՝ կարծես թէ իր շատակերութեան վրայ եղած խօսքերը չլսել կը ձեւադրնէր :

« Քոյր իմ, կը հասկընամ ըսածդ . . . ըսաւ
Ռօզ վայրկեան մը լռութենէ ետեւ, ուրեմն
պէտք չէ որ մէկու մը բնու ըլլանք . . . : Մեք
դեռահասակ ենք եւ վատասիրտ չենք. մինչեւ որ
մեր վիճակը որոշուի, ինքզինքնիս դործաւորի
աղջկանց տեղ դնենք . . . միթէ մեր պապն ալ
արհեստաւոր չէր . . . բանելու դործ գտնենք
եւ մեր ապրուստը ճարենք . . . ի՞նչ գեղեցիկ
եւ փառաւոր բան է ապրուստ ճարելը : — Սի-
րելի փոքրիկ քոյրս, ըսաւ Պլանչ Ռօզին փաթ-
թուելով, ի՞նչ բարեբաղդութիւն է այս . . .
մտքէս անցածն ըսիր . . . համբուրէ զիս ուրե-
մն : — Ի՞նչ կըսես : — Նս ալ ճշդիւ այդպէս
մտածեր էի . . . այն . երբ երէկ Տակօպէտի կի-
նը կըսէր տրամութեամբ թէ աչքին տեսութիւ-
նը կորուսեր էր . . . քու խոշոր ու սրատես աչ-
քերուդ նայելով իմ աչուքներս յիշեցի եւ մըտ-
քէս ըսի . եթէ մեր ծերունի Տակօպէտին խեղճ
ծնող աչքերը տկարացած են, Սիմօնեան օրիորդ-
ներուն աչուքները քաջաւողջ են . . . անոնց
պակասը կրնան լցընել, յաւելցուց Պլանչ ժրպ-
տելով : — Սիմօնեան օրիորդները մոխրագոյն
կտաւէ հաստ պարկեր չկրնալ կարելու չափ ա-
պիկար չեն, յարեց Ռօզ ալ ժպտելով . թերեւս
քիչ մը մատներնին պիտի սկրդի, բայց հող չէ :
— Ար տեսնես ահա, որ ինչպէս միշտ՝ այս ան-
գամ ալ մի եւ նոյն կերպով մտածեր ենք . բայց
ես կուզէի որ քեզ մէկէն՝ ի մէկ դարմացքնելու
համար՝ երկուքս առանձին մնանք եւ այնպէս

միտքս յայտնեմ : — Այն , բայց բան մը կայ որ
ինձ դժուար կերեւի : — Ի՞նչ է : — Նախ եւ
առաջ Տակօպէս եւ իր կիներն անշուշտ պիտի ըսեն
մեզ թէ այսպիսի հաստ կտաւէ դժուծ պարկեր
կարել չ'լայլեր ձեզ . դուք Գաղղիոյ մարաշախ-
աի մ'աղջիկներ էք . եւ երբոր շատ ստիպենք ,
պիտի ըսեն թէ ձեզ համար բանելու գործ չի
կայ . . . եթէ կուզէք , գացէք փնտռեցէք :
Այն ժամանակ մի պիտի ափիքերան մ'նայ . Սի-
մօնեան օրիորդները . վասն զի մեր կրնանք երթալ
ու գործ փնտռել : — Ստոյգ է որ երբ Տակօ-
պէս միտքը բան մը դնէ . . . Օ՛ , բայց երբոր
զինքը շողոքորթենք . . . — Այն , կան բա-
նէր՝ որոց համար կարելի է , բայց կան բաներ
ալ որոց համար անողոքելի է . ինչպէս երբոր
ճանքան կաղաչէինք իրեն որ մեզ համար այն-
չափ չյոզնի . . . — Քոյր իմ , միտքս բան մ'ե-
կաւ , գոչեց Ռօզ , խիստ աղէկ բան մ'եկաւ :
— Ի՞նչ է , շուտով ըսէ նայիմ : — Ար յիշե՞
լա Մայէօ կոչուած գործաւոր աղջիկը՝ որ խիստ
քաղցրաբարոյ եւ հաճոյակատար կերեւի : — Օ՛ ,
այն , եւ միանգամայն շատ երկչոտ եւ դժու-
շաւոր . կարծես թէ երեսնիս նայած ժամա-
նակ կը վախնայ որ ձանձրութիւն մը տուած կըլ-
լայ : Երէկ , չգիտնալով որ ես զինքը կը դիտէի ,
այնպիսի քաղցր ու քարեսիրտ դէմքով քեզ կը
նայէր , եւ այնչափ կ'զմայլէր ու գոհ կըլլար , որ
սիրտս շարժելով աչքս արտառ քով լցուեցաւ :
— Ուրեմն անոր հարցընենք թէ բանելու գործ

ի՞նչպէս կը դանէ, վասն զի տարակոյս չկայ որ
ձեռքին վաստակովը կապրի: — Խրաւունք ու
նիս, ան կըսէ մեզ. եւ երբոր խմանանք, թող
Տակօպէս ուղածին չափ մեզ սրգողի, մեզ հա-
մար խորխտայ, մեք ալ իրեն պէս կը յամառինք
եւ մտիկ չենք ըներ: — Այդպէս է, կարուկ ըլ-
լանք, ցուցընենք իրեն թէ մեք ալ ինչպէս ինք
կըսէ՝ զօրականի արիւն ունինք երակներնու
մէջ: Ըսենք իրեն. « Սիրելի Տակօպէս, դու կը
կարծես թէ օր մը մեք հարուստ պիտի ըլլանք...
չատ աղէկ . . . այն ժամանակ առաւել բերկրու-
թեամբ կը յիշենք այս օրերը: — Ըսել է թէ մեր
ընելիքը որոշուեցաւ, այնպէս չէ, Ռօ՛ղ: Լա
Մայէօն տեսնելնու պէս՝ մեր այս խորհուրդն ա-
նոր յայտնենք եւ տեղեկութիւն խնդրենք. ան
բարեսիրտ աղջիկ մ'է, խնդիրնիս չմերժեր:
— Հայրերնիս ալ՝ երբոր դայ՝ տարակոյս չունիմ որ
չատ գոհ պիտի ըլլայ մեր այս քաջասրտութե-
նէն: — Եւ շատ ալ գովէ պիտի մեզ որ աշխար-
հիս մէջ մինակ եւ անտէրունչ մ'նացածի պէս
ինքզինքնիս պաճարել ուզեր ենք: »

Ռօղ այս խօսքը լսելուն պէս սարսուցաւ,
արամութեան եւ գրեթէ սարսափման ամպ մ'ան-
ցաւ զմայլելի երեսին վրայէն, եւ գոչեց. « Ռ՛հ,
քոյր իմ, ի՞նչ սոսկալի մտածութիւն
— Ի՞նչ կայ, քոյր իմ, ի՞նչ ունիս. ինձ ալ վախ
կը պատճառես — Երբոր կըսէիր թէ հայ-
րերնիս գոհ պիտի ըլլայ որ աշխարհիս մէջ մինակ
եւ անտէրունչ մ'նացածի պէս մեր կեանքը պա-

ճարեղ ուղեր ենք, սարսափելի բան մ'եկաւ միտ-
քըս . . . չեմ գիտեր թէ ինչո՞ւ համար . . .
տես, ինչպէս սիրտս կը դարնէ, կարծես թէ փոր-
ձանք մը պիտի դայ մեր գլխուն : — Յիրաւի,
խեղճ սիրտդ անչափ ուժգին կը դարնէ որ . . .
բայց ի՞նչ եկաւ միտքդ . . . դիս ալ դող հանե-
ցիր : — Նրբոր Նիբսիքայի մէջ բանտարկուե-
ցանք, գոնէ մեզ իրարմէ չբաժնեցին. ասկէց դատ-
բանտն ապաստանարան մ' էր . . . : — Այո՛,
խիտ տխուր ապաստանարան մ' էր, թէ եւ երկու-
քըս 'ի միասին էինք . . . : — Բայց եթէ, հոս
հասնելէ ետեւ, դիպուածով մը . . . դժբաղ-
դութեամբ մը . . . Տակօպէս էն բաժնուէինք, եթէ
անոք անտէրունչ երեսի վրայ թողուէինք այս
մեծ քաղաքիս մէջ : — Ա՛հ, քոյր իմ . . . գոցէ
այդ խօսքը . . . իրաւունք ունիս . . . սար-
սափելի բան է . . . սէ, տէր Աստուած, ի՞նչ
կըլլայ մեր վիճակը : »

Այս տխուր մտածութեան վրայ երկու աղ-
ջիկները վայրկեան մը լուռ եւ ընկճեալ մնացին :
Իրենց գեղեցիկ դէմքը՝ որ մինչեւ այն ժամանակ
ազնիւ յուսով մը զուարթացած էր, գեղնեցաւ
ու տխրեցաւ : Բաւական երկար լռութենէ մ'ե-
տեւ՝ Ռօզ գլուխը վեր առաւ, աչերն արտու-
քով թրջած էին :

« Ա՛հ, Տէր Աստուած, ըսաւ դողդոջ ճայ-
նիւ, ինչո՞ւ համար արդեօք այս մտածութիւնն
այսչափ կը տխրեցընէ մեզ, քոյր իմ . . . սիրտս
կը ճմլի որպէս թէ այս դժբաղդութիւնն օր մը

մեր գլխուն պիտի դար . . . : — Ես ալ քեզ պէս
մեծ վախ կ'զգամ . . . մէն , ի՞նչ պիտի ընենք ե-
թէ . . . երկուքնիս մէկէն այս անհուն քաղա-
քին մէջ կորսուինք : — Մտիկ ըրէ զիս , Պը-
լանչ . . . այդ գաղտնիարը մտքերնէս հեռացը-
նենք . . . միթէ հիմա հոս Տաղօպէտի տունը
չենք . . . բարի մարդոց մէջ . . . — Թերե-
ւըս , քոյր իմ , այս գաղտնիարին ներքեւ բարիք
մը կայ , յարեց Ռօզ խոկուն դէմքով : — Ի՞նչ
բարիք : — Այն բարիքը , որ հիմա այս աղքատիկ
բնակարանն հաճոյ կըլլայ մեզ , որովհետեւ ամեն
վտանգներէ ազատ ենք հոս . . . : Եւ երբ ա-
պահով ըլլանք որ մեր աշխատութեամբ մեկու
մը բեռ չենք ըլլար , անկէց աւելի ի՞նչ կուզենք
մինչեւ որ մեր հայրը գայ : — Իրաւունք ունիս .
բանի մը կարօտ չենք ըլլար . . . բայց ինչո՞ւ
համար այս գաղտնիարը մտքերնիս իյնալով մեզ
այսպէս կը վախցընէ ու կը ճնշէ : — Այո . . .
ինչո՞ւ համար արդեօք , բայց վերջապէս հոս բա-
րեկամ մարդոց մէջ չենք , որք մեր վրայ սէր ու-
նին . ի՞նչ հարկ կայ մտածելու թէ օր մը Փարիզի
մէջ անոք անտերունչ երեսի վրայ կրնանք մնալ :
Անհնար է որ այնպիսի դժբաղդութիւն մը պա-
տահի մեզ . . . այնպէս չէ , քոյր իմ : — Անհը-
նար . . . ըսաւ Ռօզ դողալով . եթէ Գերմանիոյ
այն դեղը չհասած՝ ուր խեղճ Ժօվիալ սպաննը-
ւեցաւ , ըսէին մեզ թէ վաղը պիտի բանտարկ-
ուիք . . . հիմակուան պէս պիտի պատասխա-
նէինք թէ անհնար է . . . միթէ Տաղօպէտ հոս

չէ, մեղ չի՞ պաշտպաներ, վախնալու ի՞նչ ու-
նինք Նւ սակայն կը յիշես, քոյր իմ,
որ երկու օր ետքը Նիքսիքայի մէջ բանտարկ-
ուեցանք . . . — Ո՛հ, դոցէ այդ խօսքը, քոյր
իմ . . . կը վախնամ : »

Նւ համակիր շարժմամբ մ'երկու որբերն ի-
րարու փաթ թուեցան եւ ակամայ երկիւղով մը
չորս կողմերնին կը նայէին : Զգացած սրտայու-
ղութիւննին արդարեւ խորին՝ կարգէ դուրս եւ
անբացատրելի էր, բայց միանգամայն սպառնա-
լից ալ էր՝ այն տխուր նախազգացութեանց պէս՝
որ ակամայ մարդը կը զարհուրեցընեն . . . այն
չարագուշակ նախատեսութեանց պէս՝ որ ապա-
գային դադանածածուկ խորոց վրայ շատ ան-
գամ աղետագոյժ փայլակ մը կարճակեն :

Տարօրինակ եւ անհասկանալի դուշակու-
թիւնք, որք երբեմն զգացուելնուն պէս կը մոռ-
ցուին, բայց, յետոյ, երբոր դէպքերը կուգան
զանոնք կարդարացընեն, այն ժամանակ իրենց
զարհուրելի ճշմարտութեամբ մարդուս յիշողու-
թեան մէջ երեւան կեցնեն :

Միմօն մարաշախտին աղջիկները դեռ այս
զարմանալի մտածութիւններէն ծագած տխու-
թեան մէջ ընկղմեալ էին, Տակօպէռի կինը՝ որդ-
ւոյն խցիկէն վար իջնելով՝ սենեակին դռնէն ներս
մտաւ՝ այլայլեալ եւ վշտահար դիմօք :



ԳԼՈՒԽ Բ .

ՆԱՄԱԿ

Երբոր Ֆրանսոսադ սենեակը մտաւ , դէմքն
այն աստիճան փոխուած էր , որ Ռօզ չկրնայով
ինքզինք բռնել՝ գոչեց . « Ա՛հ , տիկին . . . ի՞նչ
կայ : — Աւաղ , սիրելի օրիորդներս , ալ չեմ կրը-
նար ձեզնէ ծածկել . . . եւ սկսաւ խեղճ կլինը
լալ : Երէկուընէ 'ի վեր կեանքս կեանք չէ . . .
կ'սպասէի որ դաւակո գայ եւ հաց ուտենք , ինչ-
պէս որ սովորութիւն ունինք . . . բայց չեկաւ :
Այս բանը զիս մեծ տագնապի մէջ ձգած էր ,
զոր չուզեցի յայտնել ձեզ . . . աչքս միշտ
դուռն էր . . . վասն զի տասն տարիէ 'ի վեր
ամենեւին գիշեր մ'եղած չէր որ հոս չ'եկած
ու ձեռքս չհամբուրած՝ իր խուցն ելնէր ու
պառկէր . . . գիշերուան մէկ մասն այս դրան
քով նստած ականջ կը դնէի որ թերեւս ոտ-
քին ձայնը լսեմ . . . բայց 'ի դուր . . . : Վեր-
ջապէս առաւօտեան ժամն երեքին բարձի մը
վրայ իյնալով քնացայ : Հիմա ալ դացի նայելու ,
թէ պէտ տկար յուսով մը , թէ արդեօք առաւօ-
տուն կանուխ եկած է դաւակո . . . : — Եկած
չէր , տիկին . . . — Ոչ . . . » ըսաւ խեղճ
մայրն արտառքը սրբելով :

Աղջիկներուն սիրտը շարժելով իրարու երեւ

նայեցան . երկու քին ալ մտքէն մի եւ նոյն բանը
կանցնէր . եթէ Ակրիքօլ չգայ , այս ընտանիքն
ի՞նչպէս պիտի ապրի , եւ այն ժամանակ իրենք
ալ կրկնապէս ծանր բեռ մը չպիտի՞ ըլլան :

« Բայց , տիկին , ըսաւ Պլանչ , կարելի է որ
Պ . Ակրիքօլ ուշ ժամանակ գործ մ'ունենալով
չէ կրցած երէկ իրիկուն տուն դառնալ : — Ո՛հ ,
ոչ , ոչ , կէս գիշերին ալ ըլլայ՝ կուգար , վասն զի
գիտէ որ սրտատանջութեան մէջ կիյնամ . . .
ան , գլխուն փորձանք մ'եկած ըլլալու է . . .
թերեւս երկաթ ձեծած ժամանակ վիրաւորուած
է . . . չէք գիտեր ինչ եռանդով ու արիու-
թեամբ կաշխատի . . . : Ո՛հ , սիրելի՛ դաւա-
կըս . . . : Այս տաղնապս որպէս թէ բաւական
չէր , հիմա ալ վերի գործաւոր աղջկան համար
սիրտ հատցընելու է : — Ինչո՞ւ , տիկին . — Որդ-
ւոյս սենեակէն դուրս ելնելուս՝ աղջկան սենեա-
կը մտայ որպէս զի վիշտս անոր պատմեմ . . .
ինչու որ ան ալ գրեթէ իմ դաւակս է . . . իմ
աղջիկս է . . . բայց չկրցի՞ գտնել իր փոքրիկ
խուցին մէջ . . . : Դեռ նոր լուսնալ սկսեր էր
. . . անկողինն ալ բնաւ չէր աւրուած . . . : Այս
ժամանակ ո՞ւր գացած կրնայ ըլլալ այս աղ-
ջիկը՝ որ բնաւ դուրս չէր ելներ . . . »

Ռօզ եւ Պլանչ նոր մտատանջութեամբ
մ'իրարու երես նայեցան , որովհետեւ ըրած որո-
շումնին 'ի գործ դնելու համար յոյսերնին
Մայէօի վրայ դրած էին : Բարեբաղդաբար ի-
րենք ալ Ծրանսօաղ ալ շուտով քաջալերուեցան :]

վասն զի դուռն երկու անգամ կամացուկ մը դար-
նուելով՝ Մայէօի ձայնը լսուեցաւ :

« Կրնամ ներս մտնել , տիկին Ֆրանսուազ : »
Ռօզ եւ Պլանշ միահաղոյն վազեցին դուռը բա-
ցին :

Չիւնն ու եղեամն առջի իրիկունէն 'ի վեր
անդադար կը տեղար . ուստի գործաւոր աղջկան
չըջազգեստը, բամպակէ փոքրիկ շալն , ու սև
շղարչէ գտակը՝ որ իր դժգոյն ու սրտագրաւ
դէմքը շըջապատելով շագանակագոյն մազե-
րուն երկու հիւսքը երեւան կը հանէր , գրեթէ
Չուրի մէջ թաթխուած էին : Եր ճերմակ ու նի-
հար ձեռքերը ցուրտէն կապուտցած էին . միայն
թէ իր սովորաբար քաղցր եւ երկչոտ կապոյտ
աչաց փայլելէն կը հասկցուէր , որ այս տկար ու
վախկոտ արարածը ներկայ պարագայից ծանրու-
թենէն կարգէ դուրս դորութիւն մը քաղած էր :

« Ի՞նչէ այս , բարի Մայէօս , ուսկի՞ց կու-
դաս , ըսաւ Ֆրանսուազ . քիչ մ'առաջ վեր ելայ
նալելու թէ որդիս եկանձ էր , քու դուռդ բացի
եւ զարմանօք տեսայ որ հոն չէիր . այսչափ կա-
նուխ ուր գացեր էիր . — Ակրիքօլէն լուր կը բե-
րեմ քեզ : — Որդիէ՞ս , գոչեց Ֆրանսուազ դողա-
լով . ի՞նչ եկաւ գլխուն . տեսար զինքը . խօ-
սեցանք հետը . ուր է : — Չտեսայ , բայց ուր ըլլա-
լը գիտեմ : »

Մայէօ տեսնելով որ Ֆրանսուազի երեսին
գոյնը կը դեղնէր , յաւելցուց . « Մի վախնար ,
ողջ առողջ է , ամենեւին վաանդ մը չկայ իրեն

համար : — Օրհնեալ ես , Աստուած իմ , որ ինձ
պէս խեղճ մեղաւոր կնկան մը միշտ կողորմիս :
Նախընթաց օրն այրս ողջ առողջ ինձ դարձու-
ցիր , այսօր ալ տաղնապալիր գիշերէ մ'ետեւ
զաւկիս ողջ եւ անվտանգ ըլլալուն վրայ զիս
կապահովես : »

Այս խօսքերն ըսած ժամանակ Ֆրանսօազ
ծուներ դրաւ գետնին վրայ եւ երեսը խաչակրն-
քեց :

Ֆրանսօազի այս բարեպաշտական շարժման
պատճառաւ պահ մը լռութիւն տիրեց սենեկին
մէջ : Նոյն միջոցին Ռօզ եւ Պլանշ Մայէօի քով
գացին , եւ սրտաշարժ կարեկցութեամբ կամա-
ցուկ մ'ըսին անոր . « Այս սրչափ թրջեր էք .
արդեօք սրչափ ալ մտեր էք . զգոյշ կեցիք ,
եթէ հիւանդ պառկելու ըլլաք՝ ի՞նչ պիտի ընէք .
Քիչ մ'առաջ Հհամարձակեցանք Ֆրանսօազ տիկ-
նոջ միտքը ձգել որ վառարանը վառէ , բայց
հիմա կրնանք համարձակ ըսել : »

Մայէօ , որ իրեն ցոյց տրուած ամենա-
փոքր կարեկցութեան յարգն ուրիշներէ աւելի
կը ճանչէր , Սիմօն Մարաշախտի աղջկանց բա-
րեսրտութեանը , վրայ չզմայլեցաւ , եւ երախ-
տագէտ նայուած քով մը պատասխանեց . « Շը-
նորհակալ եմ ձեր բարեսրտութենէն , ազնիւ օրի-
որդներ , անհոգ եղիք , ես ցուրտի վարժուած
եմ . ասկէց զատ՝ սիրտս այն աստիճան անհան-
դիատ է , որ ցուրտը չեմ զգար : »

Ֆրանսօազ քանի մը վայրկեան ծուներկի վրայ

կենայէ ետեւ՝ ոտքի վրայ ելաւ ըսելով . « Ինչո՞ւ
համար որդիս այս գիշեր դուրսը կեցաւ , բարի
Մայէօս . քու խօսքիդ նայելով՝ ուր ըլլալը գի-
տես . շուտով պիտի գնայ . . . Ինչո՞ւ այսչափ կու-
շանայ : — Տիկին Ֆրանսօադ , հաւատացէք խօս-
քիս . Ակրիքօլ ողջ առողջ է , բայց պէտք է ը-
սեմ ձեզ թէ ժամանակ մը . . . : — Է՛ , ի՞նչ : — Բան
չ'կայ , տիկին , մի՛ վախնաք , սիրտերնիդ ա-
մուր բռնեցէք : — Ա՛հ , զաւակս , իմ երակնե-
քուս մէջ կաթիլ մ'արիւնն չէ մ'նացած : Ի՞նչ ե-
ղաւ որ . . . Ինչո՞ւ համար չպիտի տեսնեմ զայն :
— Աւանդ , տիկին , բանտարկուեցաւ : — Բան-
տարկուեցաւ մի՛ , գոչեցին Ռօզ եւ Պլանչ սար-
սափելով : — Տէր Աստուած , քու կամքդ թող
ըլլայ , ըսաւ Ֆրանսօադ , բայց աս ի՞նչ դժբաղ-
դութիւն էր եկաւ գլխուս . . . զաւակս բան-
տարկուի՞ . . . իմ բարի . . . պարկեշտ զաւակս .
եւ ի՞նչ պատճառաւ պիտի բանտարկուի . . .
սխալ չըլլայ : — Նախընթաց օրն , ըսաւ Մայէօ ,
անստորադիր նամակ մ'եկաւ ձեռքս , որով կի-
մացընէին ինձ թէ Ակրիքօլ ձերբակալ ըլլալու
փտանդի մէջ էր իր Աշխատաւորաց Նրդին պատ-
ճառաւ . ասոր վրայ խօսք ըրինք իրեն՝ հետ որ
Պապիլոն փողոցի հարուստ օրիորդին երթայ , որ
իրեն բարեկամութիւն մ'ընելու խօսք տուած
էր : Ակրիքօլ պիտի խնդրէր օրիորդէն՝ որ երաշ-
խաւոր ըլլայ իրեն համար որպէս զի չբանտարկ-
ուի : Ուստի երէկ առաւօտ օրիորդին տունն եր-
թալու զիտաւորութեամբ ասկէց դուրս ելաւ :

Ուրեմն այս բաները դու գիտէիր եւ ինձ բան մը չըսիր . . . ան ալ բան մը չըսաւ . . . ինչու համար կը պահէիք ինձմէ : — Որպէս զի պարապ տեղը սիրտերնիւ չվրդովէնք , տիկին Տրանսօազ , ինչու որ՝ օրիորդին ազնուարտութեանը վրայ վստահ ըլլալով կը յուսայի որ Ակրիքօլ շուտով կը դառնայ կուգայ : Երէկ իրիկուն՝ երբոր տեսայ որ չեկաւ , ըսի մտօքս թէ կարելի է որ երաշխաւորութեան համար պէտք եղած օրինական պայմաններուն կատարման համար ուշացաւ : Բայց ժամանակն անցաւ , Ակրիքօլ երեւան չեկաւ . գիշերն 'ի բուն նստայ սպասեցի : — Ճշմարիտ է , բարի Մայէօս , այս գիշեր չեք քնացած : — Սիրտս այն աստիճան տազնապի մէջ էր , որ այս առաւօտ , դեռ չուսցած՝ դուրս ելայ : Պատիլոն փողոցի օրիորդին հասցէն միտքս պահած ըլլալով հոն վազեցի : — Ա՛հ , շատ աղէկ ըրիր , այն օրիորդը բարեսիրտ եւ առատաձեռն երեւոյթ մ'ունի կրակը որդիս : »

Մայէօ տխրութեամբ գլուխը թոթվեց , աչքին արտառքով լցուեցաւ , եւ շարունակեց . « Պատիլոն փողոցը հասած ժամանակս դեռ մութ էր . սպասեցի որ աղէկ մը լուսնայ : — Խե՛ղճ աղջիկ , դու որ այնչափ երկչոտ ու տկար ես , ըսաւ Տրանսօազ սիրտը շարժելով , ինչպէս կրցար գիշեր ժամանակ այնչափ հեռու տեղ երթալ , մահաւանդ այս դէշ օդով . . . ան , յիրաւի դու ճշմարիտ աղջիկ մ'ես ինձ համար : — Միթէ Ակրիքօլ ալ եղբայր մը չէ ինձ համար , ըսաւ Մայէօ

վախն 'ի վախօր եւ թեթեւ մը կարմրելով . յետոյ
յարեց . « Երբոր աղէկ մը լուսցաւ , փոքր ապա-
րանին դրան զանգակը քաշեցի . աղւոր բայց
դժգոյն ու տխուր դէմքով աղջիկ մը դուռը բա-
ցաւ : — Օրիորդ , դժբաղդ եւ յուսահատ մօր մը
կողմէ կուգամ , ըսի մէկէն 'ի մէկ սիրտը գրաւե-
լու համար , վասն զի կերպարանքս դժուծ ըլլա-
լուն կը վախնայի որ դիս մուրացկան կարծելով
խկոյն կը ճանբէ . բայց տեսնելով ընդհակառակն
որ օրիորդը մարդասիրաբար դիս մտիկ կընէր ,
հարցուցի թէ արդեօք առջի օրը երիտասարդ
գործաւոր մ'եկան իր տիրուհիէն շնորհ մը խընդ-
րելու : — Ախանս , եկաւ , պատասխանեց աղջիկը ,
տիրուհիս ալ ընդունեց անոր խնդիրը եւ կատա-
րելու ետեւէ էր , բայց խմանալով որ երիտասար-
դին ետեւէն ինկեր բռնել կուզէին , պահել ար-
ւաւ դայն . դժբաղդարար պահուած տեղն իմաց-
ուելով երէկ իրիկուն ժամը շորսին բռնուեցաւ
ու բանտ տարուեցաւ : »

Արբերը թէպէտ այս խօսակցութեան չխառ-
նուեցան , բայց իրենց տխուր դէմքէն եւ տա-
տամտտնայուածքէն դիւրաւ կը հասկցուէր թէ
նրհախ սիրտերնին կը մորմօքէր Տակօպէտի կնոջ
վշտակրութեան վրայ :

« Բայց , սիրելի Մայէօս , գոչեց Տրանսօ-
ազ , պէտք էր որ այն աղնիս օրիորդը տեսնե-
լու ջանայիր եւ աղաչէիր որ զաւակս անպաշտ-
պան չթողու . այնպիսի հարուստ անձ մը հար-
կաւ դօրաւոր ալ ըլլալով իր պաշտպանութեամբ

բը կրնայ մեզ դառն փորձութենէ մը ազատել :
— Աւանդ, ըսաւ Մայէօ ցաւազին տրամութեամբ,
այդ յոյսն ալ 'ի դերեւ ելաւ : — Ինչո՞ւ համար,
ըսաւ Ֆրանսօսադ, որովհետեւ օրիորդն այնչափ
բարեւիրտ է, հարկաւ կողորմի մեզ երբոր իմա-
նայ թէ զաւակս մեր միակ նեցուկն է, եւ անոր
բանտարկութիւնն ուրիշ մարդու բանտարկու-
թեան չնմանիր, վասն զի մեր յեռին թշուառու-
թեանը պատճառ կըլլայ : — Այն օրիորդը, ը-
սաւ Մայէօ, դուռը բացող աղջկան լալով ինձ
պատմածին նայելով, երէկ իրիկուն հիւանդա-
նոց տարեր են . . . Աերեւի թէ խենթեցեր է :
— Խենթեցեր է մի, նհ, սարսափելի բան թէ
իրեն եւ թէ մեզ համար, վասն զի հիմա բնաւ
յոյս չմնաց . . . նհ . առանց որդւոյս ինչ պի-
տի ընենք, Աստուած իմ, ինչ պիտի ընենք : »
Եւ տարաբաղդ կիներ ձեռօքն երեսը ծածկեց :
Ֆրանսօսադի այս կսկծազին հառաչանքէն
ետեւ խոր լռութիւն տիրեց : Ռօղ եւ Պլանչ
չուարեալ աչօք իրարու երես նայեցան, որով
իրենց սրտին խոր վիշտը կը հասկցուէր, վասն
զի կը տեսնէին որ իրենց ներկայութեամբ այս
ընտանեաց տաղնապն առաւել եւս կը ծանրա-
նար : Մայէօ, չարաչար յոգնած, այնչափ մտա-
տանջութիւն ու տաղնապ կրած, թաց հան-
դերձներուն ներքեւ սարսռելով ակտուի մը վրայ
սրտաբեկ նստաւ եւ այս ընտանեաց յուսա-
հատական վիճակը կը մտածէր : Եւ արդարեւ
խիստ դառն վիճակ էր :

Արդ , քաղաքական խռովութեանց ժամանակ , կամ աշխատութեանց բռնի դադարման եւ կամ դրամատէրանց միաբանելուն եւ աշխատաւորաց վարձքն անխղճաբար նուազեցընելուն պատճառաւ աշխատաւորաց դատերուն մէջ յուզմունք ծագած ատեն , շատ անգամ առանց ստոյգ յանցանքի լոկ կասկածով կամ ամբաստանութեամբ բանտարկուող քաղմաթիւ գործաւորաց ընտանիք մի եւ նոյն ողբալի վիճակին մէջ կիցնան , ուր կը գտնուէր Տակօպէտի ընտանիքն Ակրիքօլի բանտարկութեամբը , թէ եւ ասոր պատճառը Ռօտէնի եւ իր ընկերակցաց դադանի մեքենայութիւններն էին , ինչպէս որ ետքը պիտի տեսնուի :

Կասկածով կամ ամբաստանութեամբ բանտարկութեան դալով , որ շատ անգամ պարկեշտ եւ աշխատասէր գործաւորաց կը պատահի , որք գրեթէ միշտ աշխատութեան անկանոնութենէն եւ վարձուց անբաւականութենէն ստիպեալ խօսք մէկ ընելու եւ աշխատութիւնները դադրեցընելու ցաւալի հարկին կը դիմեն , ըստ մեզ խիստ ցաւալի է տեսնել , որ օրէնքը՝ փոխանակ ամենուն համար միակերպ եւ հաւասար ըլլալու , նոյն բանը որ ոմանց կը շնորհէ՝ միւսներուն կը դրանայ , որովհետեւ առաջինները կրնան ստրկի գումար մը տալ :

Շատ պարագաներու մէջ հարուստը՝ երաշխաւոր տալով կանխակալ բանտարկութեան ճանճրոյթներէն ու անսպասեհութիւններէն կա-

դատի, սարկի դումար մը կը յանձնէ, որոշեալ
օրը դատաստանի ներկայանալու խօսք կուտայ,
եւ իր գործին, իր դուարձութեանցը կը դառ-
նայ, կամ ընտանեկան բերկրութեանց քաղց-
րութիւնները կը վայելէ :

«Ամեն ամբաստանեալ անմեղ կրնայ համար-
ուիլ : » Ասկէց աղէկ բան չկրնար ըլլալ, եւ այս
ներողամիտ սկզբունքը որչափ դովենք՝ քիչ է :
Բայց օրինաց այս տրամադրութենէն հարուստը
միայն կրնայ օգուտ քաղել : Կսկ աղքատը՝ ոչ մի-
այն չկրնար երաշխաւորութիւն տալ, վասն զի
իր հանապազօրեաց աշխատութենէն դատ ուրիշ
դրամագլուխ չունի, այլ եւ կանխակալ բանտար-
կութեան խստութիւններն առաւել մնասակար
ու աղետարելը են անոր :

Հարուստ մարդուն համար բանտարկու-
թիւնն ուրիշ բան չէ՝ եթէ ոչ հանգստութենէ
ու բարեկեցութենէ զրկում, ճանճրութիւն,
իր սիրելիներէն բաժանում . . . արդարեւ այս
ալ ցաւալի բան է, որովհետեւ որ եւ է միշտ գը-
թութեան արժանի է . իր զաւկրներէն բաժնը-
ուած թէ հարուստին եւ թէ աղքատին արտաւ-
քը միասլէս դառն են :

Բայց հարուստ մարդուն իր տունէն բացա-
կայ գտնուելովն ընտանիքն անօթի չեն մնար,
ցուրտէն չեն նեղիր, ոչ ալ չքաւորութենէ ու
նքթութենէ պատճառեալ անբուժելի հիւան-
դութեանց ենթակայ կըլլան :

Ընդհակառակն՝ արհեստաւորին բանտար-

կութիւնն իր ընտանեաց թշուառութեան յու-
տահատութեան եւ երբեմն մահուան իսկ պատ-
ճառ կըլլայ: Չքաւոր ըլլալուն՝ չկրնար երաշխա-
ւորութիւն տալ եւ կը բանտարկուի:

Եթէ, ինչպէս որ յաճախ կը պատահի, ան-
կար հայր մը կամ մայր մը, հիւանդ կին մը կամ
օրոցի մէջ դաւակ մ'ունի, երեւակայելու է թէ
ի՞նչ կըլլայ այն հէք ընտանեաց վիճակը: Մար-
դուն առած աւուրչէքն հազիւ իր ընտանեաց
աւուր պարէնին կը բաւէր. երբոր յանկարծ այս
միակ միջոցն երեք կամ չորս ամիս պակսի, ի՞նչ
ընէ տարաբաղդ ընտանիքը, որո՞ւ դիմէ. ի՞նչ
կըլլան այն անկար ծերունիները, վատառողջ
կանայքն ու մանր տղայք՝ որք իրենց օրական
հացը վաստկելու կարող չեն: Եթէ դիպուածով
տանը մէջ քանի մը կտաւեղէն կամ հազուա-
դասութի, գրաւատունը կը տանին, քանի մը
Ֆրանք փոխ կառնուն, եւ անով թերեւս շա-
բաթ մը կապրին. բայց ետքը՝: Եւ եթէ այս
անհրաժեշտ ու սոսկալի թշուառութեան վրայ
ձմռան խատութիւնն ալ աւելնայ: Այն ժամա-
նակ, բանտարկեալ արհեստաւորն՝ անքուն ան-
ցուցած երկարատեւ գիշերներուն մէջ իր երե-
ւակայութեան առջեւ կը բերէ իր սիրելիները
դեղնած, ծիւրած, ծնդած, անօթութենէ մա-
շած, մերկ ու կիսամեռ քիչ մը խոտի վրայ պատ-
կած եւ սերտիւ իրարու քով սեղմուած որպէս դի
իրենց սառ կտրած անդամները քիչ մը տաքնանու
Յետոյ, եթէ արհեստաւորն անպարտ ար-

ճակուելով իր աղքատիկ բնակարանը դառնայ ,
աւեր եւ սուգ կը դանէ հոն : Ասկէց զատ , եր-
կար ժամանակ գործէն հեռու մնացած ըլլալով ,
իր յարաբերութիւնները կտրուած կըլլան , եւ
հորէն գործ գտնելու համար տակաւին նրչափ օ-
րեր կորսնցընելու կը հարկադրի , մինչդեռ ան-
գործ անյուցած մէկ օրն առանց հացի օր մ'է ի-
րեն համար :

Ուրեմն կը կրկնենք . եթէ օրէնքը մասնա-
ւոր պարագաներու մէջ հարուստներուն երաշ-
խաւորութեան դիւրութիւն տուած չըլլար ,
անձնական անհրաժեշտ դժբաղդութեանց վրայ
միայն պիտի ցաւէինք : Բայց որովհետեւ օրէնքը
կը հաճի որոշեալ գումար մ'ունեցող մարդիկն
առժամանակեայ կերպով ազատ թող տալ , ին-
չո՞ւ համար այս դիւրութենէն կը դրկէ այն ան-
ձինքը՝ որոց համար ազատութիւնն անհրաժեշտ
է , որովհետեւ անոնց ընտանեաց կեանքն ու
գոյութիւնն այս ազատութենէն կախեալ է :

Այս ողբալի վիճակին դեղ մը չկայ արդ-
եօք : Կարծենք թէ կայ :

Օրինաց պահանջած երաշխաւորութեան
նուազագոյն գումարն է «հինգ հարիւր Ֆրանք» :
Արդ , աշխատասէր գործաւորի մը համար հինգ
հարիւր Ֆրանքը՝ միջին հաշուով վեց ամսուան
աշխատութեան վարձք է : Ենթադրենք թէ կին
մ' եւ երկու զաւակ ունենայ (այս ալ անոր ապ-
րեցընելիք անձանց միջին հաշիւն է) , յայտնի կը
տեսնուի որ նիւթապէս անհնար է հինգ հարիւր

Ֆրանսի գումար մ'երբէք աւելցընել : Ուրեմն իր ընտանիքը պահելու ազատութիւն չնորհելու համար հինգ հարիւր Ֆրանք երաշխաւորութիւն անկէ պահանջելը՝ օրինաց ընծայած դիւրութենէն իրապէս դայն դրկել է , քանի որ իր կանխակալ բանտարդելութեան աղետալի հետեւանաց պատճառաւ ամենէն աւելի իրաւունք ունի այն դիւրութիւնը վայելելու :

Արդեօք առաւել արդար , մարդասիրական, ազնիւ եւ հասարակաց բարի օրինակ տալու արժանի գործ մը չը՛լլար , երաշխաւորութիւն ընդունուած պարագաներու մէջ (երբոր ամբաստանելոյն պարկեշտ մարդ մ'ըլլալն ալ պատուաւոր վկայութեամբք հաստատուի) , իրենց աշխատութենէն եւ ուղղութենէն դատ ուրիշ դրամագլուխ չունեցող անձերէ՝ նիւթականի տեղ՝ բարոյական երաշխաւորութիւններ ընդունիլ , իրենց պատուոյն վրայ երդմամբ խօսք առնուլ , որպէս զի որոշեալ օրը դատաստանի ներկայանան : Արդեօք առաւել բարոյական եւ վսեմ չը՛լլար , մանաւանդ հիմակուան ժամանակս , երդմամբ տրուած խօսքին արժէքն այս կերպով բարձրացընել , եւ մարդն ալ իւր իսկ աչքին յարդելի ընել , որպէս զի տուած երդումը բաւական երաշխաւորութիւն համարուի : Արնայ մէկը մարդկային արժանապատուութիւնը՝ ժրխտելով դռնել թէ մեր այս առաջարկածը ցնորք մ'է , անհնարութիւն մ'է : Ար հարցընենք թէ պատերազմի մէջ դերի բռնուող զինուորաց մէջ

տեանուած կան շատ մարդիկ որք տուած եր-
զուամնին աւրած ըլլան, եւ միթէ այն զինուո-
րաց ու պաշտօնակալաց գրեթէ ամենն ալ ժո-
ղովրդեան որդիք չէին : Ուստի, պարկեշտ եւ
աղքատ աշխատաւորաց դասերուն մէջ երդման
զօրութիւնը չափազանց դուրս չենք ըլլար ե-
թէ հաւատենք թէ երբոր ամբաստանեալը
պատուոյն վրայ խօսք տայ դատաստանին օրը
ներկայանալու, իր խոստումը միշտ կը կատա-
րէ, ոչ միայն հաւատարմութեամբ, ճշդու-
թեամբ այլ եւ խորին շնորհակալութեամբ, ո-
րովհետեւ օրինաց այս ներողամտութեան շնոր-
հիւ իր ընտանիքը ներդութիւն չքաշեր իր բա-
ցակայութեան երեսէն :

Ասկէց զատ բան մը կայ՝ որուն վրայ Գաղ-
ղիա պարծելու իրաւունք ունի : Իր դատաստա-
նական պաշտօնատարները՝ ինչպէս նաեւ զինուո-
րականները՝ թէպէտ բաւական վարձատրուած
չեն, դիտուն, արդարակորով, անկաշառ, մար-
դասէր եւ անկախ են . իրենց օգտակար եւ
պատկառելի պաշտօնին մեծութիւնը կը ճան-
չեն, ուրիշ դասու պաշտօնեայնիքն աւելի ժո-
ղովրդեան հետ յարաբերութիւն ունենալով, ա-
նոնցմէ աւելի կրնան եւ դիտեն աշխատաւոր
դասուց տառապանքն ու դառն վիշտերը հաս-
կընալ : Ուստի նիւթական երաշխաւորութիւն
տալու կարողութիւն չունեցող պարկեշտ մար-
դոցմէ բարոյական երաշխաւորութիւն ընդու-
նելու պարագայից մասին՝ առաւել ընդար-

ճակ արտօնութիւն կրնայ շնորհուիլ դասաւո-
րաց :

Վերջապէս եթէ մեր օրէնսդիրներն ու մեզ
կառավարողները ժողովրդեան վրայ այն աստի-
ճան դէշ կարծիք ունենան որ մեր այս առա-
ջարկած դադարիւնները թշնամանալիք արհա-
մարհանօք մերժեն , դո՛նէ չի՞ կրնար խնդրուիլ
որ պահանջուած երաշխաւորութեան նուազա-
գոյն չափն այն աստիճան իջնէ , որ կանխակալ
բանտարկութեան ապարդիւն խտութենէն ա-
զատ մնալու պէտք ունեցող համեստ անձանց
կարողութեանը յարմարի : Միթէ կարելի չէ
գործաւորի մը միջին հաշուով ամսական վարձ-
քըն ութսուն ֆրանք ենթադրելով այս գու-
մարը երաշխաւորութեան նուազագոյն չափ ո-
րոշել : Թէպէտ այս ալ չափազանց է , բայց վեր-
ջապէս՝ բարեկամաց օգնութեամբ , գրաւատան
օգնութեամբ , կանխիկ առնուած վարձուց օգ-
նութեամբ , ութսուն ֆրանքը կրնայ եթէ ոչ միշտ՝
գոնէ երբեմն գտնուիլ , եւ այսպէս շատ ընտա-
նիք սոսկալի թշուառութենէ գերժ կը մնան :

Այս ըսելէ ետեւ դառնանք Տակօպէռի ըն-
տանեաց , որ Ակրիքօլի կանխակալ բանտարկու-
թեան պատճառաւ այնպիսի յուսահատ կացու-
թեան մը մէջ կը գտնուէր .

Տակօպէռի կինը քանի՛ կը մտմտար , սրտին
տաղնապն այնչափ կաւեղնար , վասն զի Միսօն
մարաջախտի աղջիկներն ալ հաշուելով կը տես-

ներ որ չորս հողի մէկէն առանց պարէնի կը մնային . բայց արդար խօսելով պատուական մայրն իրմէ աւելի որդւոյն վշտակրութեանը վրայ կը մորմոքէր , որովհետեւ գիտէր որ զաւակն իր մօրը ողբալի վիճակը միտքը բերելով առաւել ցաւ պիտի զգար :

Այս միջոցին դուռը զարնուեցաւ :

« Ո՞վ է ան , հարցուց Յրանսօազ :

— Ես եմ , տիկին Յրանսօազ , ես , Հայր Լօռիօ :

— Մտէք » ըսաւ Տակօպէսի կինը :

Դուռը բացուեցաւ եւ ներկարարը՝ որ միանգամայն դռնապանի պաշտօն կը վարէր՝ սեմին վրայ տեսնուեցաւ : Այս անգամ թեւերն ու ձեռքերն երբ վռտանակ փայլուն կանանչի՝ պատուական մանիշակի կապուտով ներկուած էին :

« Տիկին Յրանսօազ , ըսաւ հայր Լօռիօ , այս նամակը Սէն-Մէրիի եկեղեցւոյն օրհնած ջուր բաշխողը բերաւ Պ. Տիւպօա արքային կողմէ , պատուիրելով որ անմիջապէս ձեզ բերեմ տամ , վասն զի շատ ստիպողական է եղեր : — Խոստովանահօրս կողմանէ նամակ , ըսաւ Յրանսօազ զարմացմամբ , եւ գիրն առնելով յաւելցուց .
« Ենորհակալ եմ , հայր Լօռիօ : — Բանի մը պէտք ունի՞ք , տիկին Յրանսօազ : — Ոչ , հայր Լօռիօ : — Ծառայ եմ ընկերութեան :

Երբոր ներկարարը գնաց , Յրանսօազ անհամբեր տատամսութեամբ նամակը Մայէօի տըռուաւ ըսելով . « Ար կարգանս ինձ այս նամակը :

— Այո, տիկին, եւ նամակը բանալով հետեւեալը կարդաց .

«Միրելին իմ տիկին Պատուէն .

«Թէպէտ ձեր խոստովանութեան սովորական օրերն երեքշաբթի եւ շաբաթ են, բայց վաղը եւ շաբաթ ժամանակ չունենալով կիմացընեմ ձեզ որ այս առաւօտ գաք, եւ կարելի եղածին համար շուտով գաք, եթէ չէք ուզեր ամբողջ շաբաթ մ'անդեղջ եւ անապաշաւ մ'նալ : »

«Շաբաթ մը . . . տէր Աստուած . . . գոչեց Տակօպէռի կինը, վնայ ինձ, այսօր իսկ այս վրդովմանս եւ վշտիս մէջ խոստովանութեան ներկայանալու պէտքն եւելօք կ'զգամ : »

Յետոյ որբերուն դառնալով ըսաւ . «Սիննաբարին Աստուած լսեց ձեզ համար ըրած աղօթքս, սիրելի օրիորդներ . . . որովհետեւ այսօկ իսկ կարող պիտի ըլլամ պատուական եւ սուրբ մարդու մը խորհուրդ հարցընել ձեր հողւոյն վիճակին վրայ, որ առանց ձեր գիտնալուն վտանգի մէջ է . . . Խեղճ սիրուն հողիներ, որ անմեղ էք եւ միանգամայն մեղաւոր, թէ եւ դուք յանցանք չունիք : Ա՛հ, տէրը վկայ է որ ինչպէս որդւոյս՝ նոյնպէս եւ ձեզ համար սրտէս արիւն կերթայ : »

Ռօզ եւ Պլանշ ապշուածեամբ իրարու երեսնայեցան . վասն զի չէին հասկընար թէ ինչու համար իրենց հողւոյն վիճակն այսչափ երկիւղ պիտի պատճառէր Տակօպէռի կնոջ :

Իսկ Յրանսօաղ գործաւոր աղջկան գառնալով . «բարի Մայէօս, ըսաւ, ուրիշ բարեկամու-


Թիւն մ'ալ պիտի ընեա ինձ : Այրս Շարթր դա-
ցած ժամանակ Ակրիքօլիա շարթթական վար-
ձուէն ստակը հետն առաւ տարաւ : Ունեցած ստակ-
նիս ան էր . դիտեմ որ խեղճ դաւակս վրան ստակ
մը հունի . . . եւ բանտին մէջ թերեւս պէտք
կուենենայ : Ուստի մտար ծախէ սկահակս եւ սե-
ղանի սպասս , երկու դոյզ անկողնի ծածկոցս ,
եւ մետաքսեայ շալս զոր Ակրիքօլ տօնախմբու-
թեանս օրը տուած էր ինձ , ամենն ալ դրաւ առու-
նը տարս : Ես կը ջանամ իմանալ որդւոյս դանուած
բանտը , եւ քու բերելիք փոքրիկ գումարիդ
կէսն անոր կը դրկեմ , մնացեալն ալ մեր պիտոյից
կը դործածեմ մինչեւ որ այրս դայ : Բայց ան ալ
եկած ժամանակ ի՞նչ պէս պիտի ընենք . խեղճ
մարդն յանկարծական հարուածի պիտի դայ . մի-
անգամայն թ շուտա պիտի ըլլայ . . . որովհետեւ
դաւակս բանտն է , եւ իմ աչքս հտեաներ : Ո՛հ ,
Աստուած իմ , գոչեց տարաբաղդ մայրն անհամ-
բեր եւ դառն կակիծով , ինչո՞ւ այսչափ կը ճնշեա
զիս . . . ես ամեն ձեռքէս եկածն ըրի որպէս զի
քու ողորմութեանդ արժանի ըլլամ , եթէ ոչ
ինձ՝ գոնէ իմիններուս համար : »

Յետոյ իր այս տրտունջին համար ինքզինք
մեղադրելով ըսաւ . « Ոչ , ոչ , Աստուած իմ , ինչ
որ դու ինձ կը դրկես՝ պէտք է սիրով ընդունիմ :
Ներէ ինձ այս տրտունջս , եւ զիս միայն պատժէ՝
— Մի վհատիր , տիկին Ֆրանսօսադ , քաջալեր-
ուէ , ըսաւ Մայէօ . Ակրիքօլ անմեղ է , երկար
ժամանակ բանտը չմնար : — Բայց կը խորհիմ որ ,

ըսաւ Տակօպէոսի կիներ, դուն գրաւատունը երթա-
լով շատ ժամանակ պիտի կորսնցընես, խեղճ
Մայէօս: — Հոգ չէ, տիկինն Ծրանսօազ, անոր
տեղը գիշերը կը լցնեմ. միթէ ձեր այս տառա-
պանքը գիտնալէս ետեւ գիշերը քունս կրնայ
տանիլ. աշխատութիւնը դիւ կ'զբաղեցընէ: —
Բայց ճրագ պիտի վառես . . . — Մի վախնար,
տիկինն Ծրանսօազ. ես քիչ մ'աւելի ստակ ու-
նիմ, ըսաւ խեղճ աղջիկը սուտ խօսելով: — Եկ
գոնէ քեզ համբուրեմ, ըսաւ Տակօպէոսի կինն
արտասուալից աչօք, վասն զի դուն աննման աղ-
ջիկ մ'ես: »

Եւ անապարանօք դուրս ելաւ Ծրանսօազ,
Ռօզ եւ Պլանչ մինակ մնացին Մայէօսի հետ.
Եւ ահա վերջապէս հասաւ այն վայրկեանը՝ որուն
անհամբուրութեամբ կ'սպասէին:

Տակօպէոսի կինն ալ շուտով Սէն—Մէրիի ե-
կեղեցին հասաւ, ուր խոստովանահայրն իրեն
կ'սպասէր:



Գ. ԼՈՒԽ Գ .

ԽՈՍՏՈՎ ԱՆԱՐԱՆ

Չմերուան այն ձիւնոտ եւ միջին օրը Սէն-
 Մէրիի եկեղեցին տխրադին երեւոյթ մ'ուներ :
 Ֆրանսօադ վայրկեան մը դաւթին մէջ կանգ առ-
 նելու հարկադրեցաւ եղերական հանդիսի մը
 պատճառաւ :

Մինչդեռ քահանայ մը ցած ձայնով քանի
 մը խօսք կը մամաար, երկու երեք ալ ցեխոտ տի-
 րացուներ՝ աղտոտ շապիկներ հագած՝ հարեւան-
 ցի եւ դժկամակ կերպով աղօթ քներ կերգէին ե-
 դեւնափայտէ խեղճուկ դագաղի մը շուրջը , ո-
 րուն հետ պատառատուն գրգլեակներով ծերու-
 նի մ'եւ տղայ մը միայն ընկերացած էին , երկու-
 քըն ալ դառնապէս հեծեծելով : Դռնապանն ու
 լուսարարն այսպիսի խեղճ թաղման մը պատճա-
 ռաւ անհանդիստ ըլլալնուն վրայ դժգոհելով՝ ի-
 րենց պաշտօնական դդեսանն անդամ հագած կէ-
 ին , եւ անհամբերութեամբ ու յօրանջելով պաշ-
 տօնին աւարտմանը կ'սպասէին , որ իրենց գոր-
 ծատան բնաւ շահ չունէր : Աերջապէս քանի մը
 կաթիլ օրհնած ջուր ցօղեցաւ դագաղին վրայ ,
 եւ քահանայն մշտիկը լուսարարին տալով ձգեց
 գնաց :

Այս միջոցին այն ամօթ ալի տեսարաններէն
 մէկը տեսնուեցաւ որ վատ եւ սրբապիղծ վաճա-
 ռաչահի մ'անհրաժեշտ հետեւանքն է, անարժան
 տեսարան մը՝ որ յաճախ կը պատահի աղքատ
 ննջեցելոց թաղման ժամանակ, որք չին կրք-
 նար՝ ոչ մոմագին ոչ պատարագուց եւ ոչ ալ քնա-
 րի ծախք վճարել, որովհետեւ հիմա մեռելոց հա-
 մար քնարերգութիւն կայ (*):

Մերունին ձեռքը լուսարարին երկնցուց
 որ մշտիկն առնու:

« Առ . . . եւ շուտ ըրէ » ըսաւ լուսարարը
 շնչովն իր մատները տաքցընելով:

Մերունին սիրտը փղձկած էր, եւ ինքն ալ
 վերջին ծայր տկարացած. վայրկեան մը մշտիկն
 իր գողգոջուն ձեռքը բռնած անշարժ մնաց:
 Քաղաղին մէջ պառկողն իր աղջիկն էր . . . քո-
 վը կեցող ու լացող ցնցոտաւոր աղեկին մայ-
 րը . . . Մարդուն սիրտը կը կտրտէր այս ան-
 դառնալի հրաժեշտը մտածելով . . . եւ անշարժ
 կը կենար . . . կակճաղին հեծութիւններով
 կուրծքը կելնէր ու կիջնէր:

է՛, շուտ ըրէ նայինք, ըսաւ լուսարարը
 կոշտութեամբ. միթէ կը կարծես թէ գիշերն ալ
 հոն պիտի պառկինք: »

Մերունին արտորաց, դադաղին վրայ խաչա-
 կընքեց, եւ երբոր ծռելով մշտիկը թռանը ձեռ-
 քը տալ կուզէր, լուսարարը գործը բաւական

(*) Փարիզի Սէն-Թօմա — Տ'Աքէն եկեղեցին:

երկարած համարելով մշտիկը տղուն ձեռքէն
քաշեց առաւ, եւ մեռելարարձներուն աչք ըրաւ
որ դագաղը շուտով վերցընեն, խսկոյն կատար-
ուեցաւ :

« Ի՞նչ ճղճիմ ու դանդաղ մարդ էր այդ ծե-
րուկը, ըսաւ դռնապանը լուսարարին՝ դէպ ա-
ւանդատունը երթալով. հազիւ ժամանակ պի-
տի ունենանք նախաճաշ ընելու եւ հազուելու
որպէս դի առաւօտեան սլարսլոտ ննջեցեալին
թաղմանը գտնուինք . . . աճա մեռել մը՝ որուն
համար յողմիկը կարծէ . . . քալէ նայինք . . . »
— Եւ այդ դնդապեալի ուննոցներդ (*) ի՞նչ ընենք,
որով ամօռ վարձող տիկինին աչքին շքեղ երեւ-
նալ կուզես, է, սրիկայ, ըսաւ լուսարարը խո-
րամանդ նայուածքով մը : — Ի՞նչ ըսել կուզես,
անպիտան, վայելչադէմ մարդն հարկաւ աչքի
կերելի, պատասխանեց դռնապանն յաղթա-
կան դէմքով. ես չեմ կրնար կանանց աչքը կուր-
ցընել իրենց սրտին անդորրութեան համար : »

Եւ երկուքն ալ աւանդատունը մտաւ :

Սյս թաղման հանդէսը Յրանաօաղի տխրու-
թիւնն աւելցուցեր էր : Երբոր եկեղեցին մտաւ,
եօթն կամ ութ անձինք միայն կային այն խոնաւ
ու պաղ շէնքին մէջ ասդին անդին ամօռներու
վրայ նստած :

(*) Գաղղիոյ եկեղեցեաց դռնապանները զի-
նուորի կերպարանք եւ ձեռքերնին ալ նիզակ
ունին :

Օրհնած ջուր բաշխողներէն մէկը , որ կար-
միր դուարթ եւ գինեհար դէմքով խեղկատակ
ծերուկ մ'էր , տեսնելով որ Յրանսօաղ օրհնեալ
ջրոյ աւազանին կը մօտենար , ըսաւ անոր կա-
մաց մը . « Պ. Տիւղօա արբան դեռ ուս-
(խոստովանարան) չէ մտած , ջուր ըրէ , որպէս
դի ամենէն առաջ անոր մորուքը դու համբու-
րես : »

Յրանսօաղ թէ եւ վիրաւորեցաւ այս կա-
տակէն , բայց եւ այնպէս շնորհակալ եղաւ ան-
պատկառ սպասաւորէն , օրհնեալ ջրով երեսը
խաչակնքեց , եւ քանի մը քայլ յառաջ երթա-
լով , սալայատակին վրայ ծունդի վրայ եկաւ , եւ
խոստովանութեան մատչելէ առաջ իր սովորա-
կան աղօթքն ըրաւ : Յետոյ մութ խորշ մը դնաց ,
ուր խաւարին մէջ փայտաշէն խոստովանարան
մը կը տեսնուէր , որուն վանդակէ դռնակը
ներսէն սեւ վարագուրով մը ծածկուած էր : Աջ
ու ձախ կողմի նստելու տեղերը պարապ ըլլա-
լով , Յրանսօաղ աջ կողմը ծնկան վրայ եկաւ , եւ
պահ մը դառն մտածութեանց մէջ ընկղմեալ մնաց :

Քանի մը վայրկեանէ ետեւ՝ բարձրահասակ ,
աղէքէկ մազերով , ծանր ու խոժոռ դէմքով եւ
երկայն սեւ պատմուճանով քահանայ մը եկե-
ղեցւոյն վարի կողմէն ծանր ծանր յառաջ դալ
սկսաւ : Նկնահասակ եւ կրնակը ծռած դժուժ
ծերուկ մ'ալ հովանեակի մը յենլով հետը կու-
գար , եւ մերթ ընդ մերթ ականջն 'ի վար կը խօ-
սէր : Քահանայն ալ խորին եւ ակնածական ու-

շաղրութեամբ կանգ առնելով ականջ կը դնէր
անոր խօսքերուն : Երբոր խոստովանարանին
քով հասան , ծերուկը Ֆրանսուազն հոն ծնրադը-
կալ տեանելով քահանային երեսը նայեցաւ հար-
ցողական դէմքով :

« Այո՛ , ան է . . . ըսաւ քահանայն : — Ու-
րեմն երկու կամ երեք ժամէն երկու աղջիկները
Սուրբ—Մարիամայ—վանքը հասնելուն վտան-
կրնամ ըլլալ . . . ըսաւ ծերուկը :

— Ես ալ կը յուսամ . . . անոնց հոգւոյն խիբու-
թեան համար , պատասխանեց քահանայն խո-
նարհութեամբ , եւ խոստովանարանը մտաւ :
Կարճահասակ ծերուկը եկեղեցիէն դուրս ելաւ
դնաց : Այս մարդը Ռօտէնն , որ Սէն—Մէրի-
էն ելնելով հիւանդատունը դնաց որպս զի
հասկընայ թէ Տոքթոր Պալէնիէ Սարիէն օրի-
որդին համար տրուած հրահանգները ճշդիւ կը
կատարէր :

Ֆրանսուազ խոստովանարանին առջեւ ծուն-
դի վրայ եկած կ'սպասէր : Մէկ մ'ալ քովի փոք-
րիկ պատուհաններէն մէկը բացուելով ներսէն
ձայն մը լսուեցաւ : Այս ձայնը քահանայինն էր ,
որ քսան տարիէ ՚ի վեր Տակօպէռի կիներ կը խոս-
տովանցընէր , եւ անդիմադրելի ու ամենազօր
ազդեցութիւն մ'ունէր անոր վրայ :

« Նամակ մ'ատացմբ , ըսաւ ձայնը :

— Այո՛ , հայր իմ : — Բարի . . . խօսէ նա-
յինք . . . : — Օրհնէ զիս հայր իմ , վասն զի մե-
ղաւոր եմ , ըսաւ Ֆրանսուազ :

Չայնն օրհնութեան աղօթքը կարդաց :

Յրանսօազ ալ «ձ» ըսելով պատասխանեց :
Յետոյ խորհուրդը կարդաց մինչեւ Տեղայն, եւ
վերջին անգամ իր վրայ դրուած ապաշխա-
րութիւնն ինչ կերպիւ կատարած ըլլալուն
հաշիւը տալէ ետեւ, արձակում առած օրէն
'ի վեր դործած մեղքերը մի առ մի խոստովա-
նեցաւ . վասն զի այս պատուական կիներ,
աշխատութեան եւ մայրական սիրոյ այս աղ-
նիւ նահատակը միշտ կը կարծէր թէ մեղք կը
դործէ . իր խղճմտանքն անդադար կը տանջուէր
ով դիտէ ինչ անհասկանալի մեղքեր դործած
ըլլալու երկիւղիւ : Այս քաղցրաբարոյ եւ ա-
րիասիրտ արարածը՝ որ իր բովանդակ կեանքն
անձնութեամբ անցունելէ ետեւ՝ անդորր
եւ զուարթ հոգւով պէտք էր հանդէսէր, ինք-
դինք մեծ մեղաւորուհի մը համարելով իր օ-
րերն անդուլ անձկութեամբ կանցունէր . վասն
զի մեծ կասկած ունէր իւր հոգւոյն վրկութեան
վրայ :

« Հայր իմ, ըսաւ Յրանսօազ խոսվեալ ձայ-
նիւ, նախընթաց իրիկունն աղօթք չկրցայ ը-
նել . . . : Այրս որ շատ տարիներէ 'ի վեր հե-
ռացած էր ինձմէ, նախընթաց օրը Փարիզ հա-
սաւ . . . իր այս վերադարձին վրայ զգացած
սրտայուզութիւնս, շուարումս եւ չափազանց
ուրախութիւնս այս մեծ մեղքը դործել տուին
ինձ : — Ուրիշ, ըսաւ ձայնն այնպիսի խատու-
թեամբ մը, որ Յրանսօազի սիրտը բոլորովին

վրդովեց : — Հայր իմ . . . երէկ իրիկունս ալ
նոյն մեղքը գործեցի . . . մահատաղնապ անհան-
դրատութեան մը պատճառաւ . . . : Չաւակա
տունն չեկաւ . . . վայրկենէ վայրկեանս դինքը
կ'ապասէի . . . եւ այս սրտատանջութեանս մէջ
աղօթքիս ժամանակն անցաւ . . . : — Աւրիշ ,
ըսաւ ձայնը : — Հայր իմ , այս շաբթու ծայրէ 'ի
ծայր սուտ խօսեցայ որդւոյս՝ ըսելով թէ իմ
վատառողջութեանս վրայ իր ըրած յանդիմա-
նութիւնները մտիկ ընելով ճաշիս ժամանակ
քիչ մը դինի խմեր էի . . . : Բայց իրօք չէի խը-
մած եւ իրեն թողուցեր էի , վասն զի ինք շատ
աշխատելուն ու յողնելուն համար ինձմէ աւել-
ի պէտք ունի դինուոյ : — Շարունակէ , ըսաւ
ձայնը : — Հայր իմ , այս առաւօտ խեղճ որդւոյս
բանտարգելութիւնն իմանալով վայրկեանս մը
համբերատարութիւնս կորուսի : Քոխանակ խո-
նարհութեամբ եւ շնորհակալեօք կրելու այս նոր
փորձութիւնը՝ դոր Տէրը . . . կը դրկէր ինձ . . .
աւանդ , սրտիս կակիժէն ըմբոստացայ եւ տըր-
տունջ ըրի : — Յիրաւի գէշ շաբաթ մ'անցուցեր ես,
ըսաւ ձայնն առաւել եւս խստութեամբ , շատ գէշ
. . . արարածը Տէրոջմէն յառաջ դրեր ես միշտ
. . . վերջապէս . . . շարունակէ . . . : — Ա-
ւանդ , հայր իմ , ըսաւ Ֆրանսօսագ բեկեալ սրտիւ ,
դիտեմ , ես մեծ մեղաւորուհի մ'եմ . . . եւ
կը վախնամ որ աւելի ծանր մեղքեր գործելու
ճամբու մէջ եմ : — Խօսէ , նայիմ : — Այրս Սի-
պերիայէն հետը երկու դեռահասակ որբ բերաւ

. . . Սիսօն մարաշախտին աղջիկները . . . :
Երէկ առաւօտ յորդորեցի դիրենք որ աղօթքը
հեն , եւ ահիւ ու ցաւով իմացայ որ հաւատոյ
մասերէն եւ ոչ մէկը գիտէին . թէպէտ եւ տասն
եւ հինգ տարեկան են , եկեղեցւոյ խորհրդոց
եւ ոչ մէկն ընդունած են , մինչեւ անգամ մը
կրրտուած ալ չեն , հայր իմ . . . մկրտուած ալ
չեն . . . : — Ատոնք կռապանչտ են ուրեմն , դու
չեց ձայնը սրամտեալ դարմանօք : — Ահա ատոր
համար սիրտս կը մորմոքի , հայր իմ , որովհե-
տեւ ես ու այրս այս որբերուն ծնողաց տեղն
ըլլալնուս համար՝ անոնց մեղքը մեր վրայ կը
մնայ , այնպէս չէ , հայր իմ :

— Ատոր տարակոյս չկայ , ըսաւ ձայնը . ու
րովհետեւ դուք անոնց հոգեւոր ծնողքը կը հա-
մարուիք , պէտք է որ անոնց հոգւոյն փրկու-
թեան հոգ տանիք : Չէք գիտեր որ հովիւն իր
պահպանութեանը յանձնուած ոչխարաց համար
պատասխանատու է : — Աւրեմն , հայր իմ , քա-
նի որ այս աղջիկներն հոգեկորոյս մեղաց ներ-
քեւ են . . . ես ու այրս ալ նոյն մահացու մե-
ղաց ներքեւ պիտի մնանք :

— Անշուշտ , ըսաւ ձայնը , դուք անոնց
հօրն ու մօրը տեղն էք , եւ որդւոց գործած մեղ-
քը հօրն ու մօրը վրայ է՝ երբոր որդիքը քրիս-
տոնէական կրթութիւն չունենալով մեղանչեն :
— Ա՛հ , հայր իմ . . . ինչ է ատոր ձարը . քեզ
կը դիմեմ իբրեւ Աստուծոյ . . . այս աղջիկները
քանի որ քանի ժամ հեթանոսութեան մէջ մը-

նան , անհասի առաւել յաւիտենական դատա-
պարտութեան կը մտենան , ուղիղ չէ ըսածս ,
հայր իմ , գոչեց Յրանսօաղ զաւաղին հառաչ-
մամբ :

— Այո , այդպէս է , պատասխանեց ձայնը ,
եւ այս ծանր պատասխանատուութիւնը հիմա
քու եւ այրոջդ վրայ է , որովհետեւ ձեր պաշ-
տօնը հոգի խնամելու պաշտօն է :

— Ա՛հ , Տէր Աստուած , ողորմէ ինձ , ըսաւ
Յրանսօաղ լալով :

— Պէտք չէ որ այդչափ տագնապիտ , ը-
սաւ ձայնը քիչ մը մեղմութեամբ . այդ որբերը
բաղդաւոր են եղեր որ իրենց ճանապարհոր-
դութեան ժամանակ քու դէմդ ելեր են . . .
քեզնէ ու ամուսինէդ բարի ու քրիստոնէավա-
յել օրինակ կրնան առնուլ . . . թէպէտ քու
այրդ ալ երբեմն ամբարշտին մէկն էր , բայց
հիմա կարծեմ թէ կրօնական պարտականու-
թիւնները կը ճանչէ ու կը կատարէ :

— Անոր համար ալ պէտք է աղօթել առ
Աստուած , հայր իմ , ըսաւ Յրանսօաղ աղէկէդ
ձայնիւ , երկնային շնորհը դեռ վրան չէ իջած . . .
ինչպէս խեղճ որդւոյս ալ . . . նհ , հայր իմ ,
ըսաւ Յրանսօաղ արտառքը սրբելով , այս մը-
տածութիւնն իմ ամենէն ծանր խաչս է : — Ը-
սել է ուրեմն թէ ոչ այրդ . եւ ոչ ալ որդիդ
չեն կատարեր . . . ըսաւ ձայնը մտախոհ կեր-
պիւ . այս շատ ծանր խնդիր մ'է , շատ ծա-
նր . . . այդ նորապի աղջկանց հոգեւոր կրթ-

Թուժիւնը ծայրէն սկսելու է . . . խեղճերն
ամեն վայրկեան չար օրինակներ պիտի տեսնեն
քու տանդ մէջ . . . աչքդ բաց . . . ահա ը-
սի քեզ եւ դարձեալ կըսեմ . . . քու պաշտօ-
նըդ հոգի խնամելու պաշտօն է . . . Աստու-
ծոյ առջեւ պատասխանատուութիւնդ մեծ է . . .
չատ մեծ է . . . :

— Ո՛հ , հայր իմ , ատոր համար է որ իմ
սիրտս աչ կը տագնապի . . . եւ չեմ գիտեր ընե-
լիքս . . . օգնէ ինձ , խրատ մը տուր ինձ .
քու ձայնդ քսան տարիէ 'ի վեր պատգամ Աս-
տուծոյ է ինձ համար :

— Նժէ ինձ կը հարցընես , պէտք է որ ա-
մուսնոյդ հետ խորհրդակցելով այդ օրիորդնե-
րը հոգեւոր վարժատուն մը դրկես որ կրթուին :

— Բայց մեք շատ աղքատ ենք , վարժա-
տան վարձք վճարելու կարողութիւն չունինք ,
եւ աւելի գէշն այն է որ տղաս ալ քանի մ'երդ
չինած բլաւուն համար բանտարկուեցաւ :

— Տես ուր կերթայ . . . ամբարշտութեան
վերջը , ըսաւ ձայնը խատուժեամբ . տես Գար-
բիէլը . . . որ իմ խրատներու հնազանդեցաւ ,
եւ հիմա ամեն քրիստոնէական առաքինութեանց
կենդանի տիպար մ'է . . . :

— Ակրիքօլս ալ , հայր իմ , բարի յատկու-
թիւններ ունի . . . այնչափ բարեւիրտ , այն-
չափ բարեհախանձ է որ . . . :

« Քանի որ բարեպաշտութիւն չունի , ը-
սաւ ձայնն առաւել եւս խատուժեամբ , այդ

բարի յատկութիւն ըսածներուդ ամենն ալ ոին
երեւոյթներ են , որք սատանային մէկ փշմամբն
անհետ կըլլան . . . ինչու որ սատանան անկը-
թօն մարդուն սրտին մէջ կը բնակի : —Ո՛հ , եղկե-
լի դաւակն , ըսաւ Յրանաօսող լալով , եւ սակայն
ամեն օր կաղօթեմ որ հաւատոյ լոյսը սրտին
մէջ ճառագայթէ . . . :

—Նա միշտ ըսած եմ քեզ , յարեց ձայնը .
դու չստիչն աւելի տկարամտութեամբ վարուե-
ցար տղուդ հետ , եւ ահա հիմա ալ Աստուած
քեզ կը պատժէ . պէտք էր այդ անկրօն դաւ-
կէդ բաժնուէիր . դինքն այդպէս սիրելով իր ամ-
բարչաութեան աչք չդողէիր . երբոր մէկ ան-
գամդ փախ , կըսէ Սուրբ Գիրքը , պէտք է կըս-
բես ու մէկդի նետես . . . : —Աւանդ , հայր
իմ . . . դու դիտես որ այդ մէկ խրատող միայն
չեմ կատարած . . . վասն դի երբէք չկրցայ սրտիս
յաղթել ու դաւկէս բաժնուիլ . . . :

—Ահա ատոր համար քու փրկութիւնդ ալ
կասկածելի է . բայց Աստուած ողորմած է . . .
նայէ որ վերստին նոյն սխալման մէջ չիջնաս
այդ երկու աղջկանց պատճառաւ՝ դորս Նա-
խախնամութիւնը քեզ դրկած է որպէս դի յա-
ւիտենական դատապարտութենէ ազատես . ջա-
նա որ քու մեղապարտ անհողութեամբդ անոնք
ալ կորստեան դուրը չդըրին : —Ո՛հ , հայր իմ ,
ես շատ լացի , շատ աղօթեցի անոնց համար :

—Այդ բաւական չէ . . . այն թշուառնե-
րն հարկաւ չարն ու բարին չեն դիտեր . ա-

անոց հողին անշուշտ դայթակղութեան ու պրդ-
ծութեան անդունդ մ'է . ամբարիշտ մօր եւ ան-
հաւատ դօրականի մը ձեռքը մեծցած տղայքն
ինչ կրնան ըլլալ : — Այդ մասին մի վախնաք ,
հայր իմ , ըսաւ Յրանսօաղ պարզմտութեամբ ,
երկուքն ալ հրեշտակի պէս քաղրաբարոյ են , եւ
իմ այրս՝ որ անոց ծնած օրէն 'ի վեր քովեր-
նէն բաժնուած չէ , կրսէ թէ անոց սրտին պէս
բարի սիրտ չկայ : — Քու այրդ իր բոլոր կեան-
քը մահացու մեղօք անցուցած է , ըսաւ ձայնը
խատութեամբ , ուստի հողւոց վիճակը դատե-
լու մարդ չէ նա . ահա դարձեալ կրտեմ քեզ ,
որովհետեւ դուն հիմա այդ թշուառներուն ծը-
նողացը տեղն ես , այսօր՝ այս ժամուս՝ անոց
հողւոյն փրկութեանը պէտք է աշխատիս . ապա
թէ ոչ՝ սարսափելի պատասխանատուութեան
ներքեւ պիտի իյնաս : — Ա՛հ , ճշմարիտ է ըսածդ ,
հայր իմ , գիտեմ . . . գիտեմ . . . եւ այս երկիւղս
ալ գոնէ դաւկիս բանտարկութեան կակիծին
չափ սոսկալի է . . . բայց ինչ կուգայ ձեռ-
քէս . այս աղջիկները մեր տան մէջ չեմ կրնար
կրթել , վանն զի գիտութիւն չունիմ . . . մի-
այն հաւատք ունիմ . ասկէց դատ՝ խեղճ այրս՝
հողւոյն կուրութեամբն այս սուրբ բաներուն
վրայ կը ծաղրարանէ . իսկ որդիս՝ զիս չարա-
մեցրնելու համար իմ առջեւ կը յարդէ դանոնք
. . . : Աւստի դարձեալ կաղաչեմ քեզ , հայր
իմ , օգնէ ինձ . . . ինչ ընեմ , խելք մը սով-
րեցու ինձ :

—Եւ սակայն այդ երկու մատաղ հողիները սակալի կորստեան մէջ թողուլ չըլլար, ըսաւ ձայնը վայրկեան մը լուսթեանէ ետեւ. փրկութեան մէկ միջոց մը կայ . . . երկուք չկայ . . . այն է կրօնական վարժատուն մը դնել դանտնք, ուր բարեպաշտական եւ սուրբ օրինակներ միայն ունենան իրենց աչքին առջեւ: —Ա՛հ, հայր իմ, եթէ այս սատիճան աղքատ չըլլայինք, կամ գոնէ ես տակաւին աշխատելու կարող ըլլայի, կը ջանայի անոնց թոշակը վճարել, ինչպէս որ Գաբրիէլինը վճարած եմ: Գժբաղդարար հիմա աչքս գրեթէ բնառ չտեսներ. բայց մտքէս բան մը կանցնի, հայր իմ. դուք այնչափ բարեգործ անձինք կը ճանչէք . . . կարելի չէ որ անոնց կարեկցութիւնը շարժէք այս խեղճ որբերուն վրայ, եւ նպաստ մ'անունցմէ հայթայթէք:

—Բայց հայրերնին ո՛ւր է: —Հնդկաստան է եղեր. այրս ըսաւ ինձ թէ մօտերս Գաղղիա պիտի գայ . . . սակայն դեռ ստուգիւ յայտնի չէ . . . ասկէց դատ ուրիշ բան մ'ալ կայ, հայր իմ, սիրտս կը կարտի երբ կը մտածեմ որ այս տարարաղդ աղջիկները մեզ հետ թշուառ պիտի ըլլան . . . ինչու որ դաւկիս ձեռքը միայն կը նայինք, եւ ան ալ բանան է:

—Այդ աղջիկներն հոս ամենեւին տղական չունին, ըսաւ ձայնը: —Չեմ կարծեր, հայր իմ: —Ուրեմն մայրերնին դանտնք քու ամուսնոյդ յանձներ է որ Գաղղիա բերէ. —Այո՛,

հայր իմ , երեկ ալ Շարժր երթալու պարտաւորեցաւ խիստ ստիպողական գործի մը համար , որուն ինչ բլլալը չեմ գիտեր : »

(Ընթերցողք կը յիշեն որ Տակօպէս պատշաճ չէր դատած իր կնոջն յայտնել միտալին վրայ աղջիկներուն ունեցած ակնկալութիւնը , եւ անոնց ալ պատուիրեր էր որ մարդու չյայտնեն , մինչեւ անգամ Յրանսօաղի :)

— Աւրեմն այրդ հիմա Փարիզ չէ , ըսաւ ճայնը քանի մը վայրկեան լռութենէ ետեւ : — Աչ , հայր իմ , բայց այս իրիկուն կամ վաղ առաւօտ անշուշտ կուգայ : — Զիս մտիկ ըրէ , ըսաւ ճայնը նորէն քիչ մը լռու կենալէ ետեւ . այդ երկու աղջկանց հողւոյն փրկութեան համար կորսուած ամեն մէկ վայրկեանները նոր քայլափոխներ են դէպ 'ի կորուստ : Մէկ վայրկենէ միւսն Աստուծոյ ձեռքը կրնայ ծանրանալ անոնց վրայ , վասն զի նա միայն գիտէ մեր մահուան ժամը . եթէ յանկարծ խեղճերն այս վիճակին մէջ մեռնին , կարելի է որ յաւիտենական դատապարտութեան ներքեւ իջնան : Աւրեմն այսօրուրնէ պէտք է անոնց աչքը բանալ աստուածային լուսոյն , եւ կրօնական վարժատուն մը գիրենք դնել : Այս է ահա քու պարտքդ , բայց կատարելու փափաք ալ ունիս : — Ա՛հ , ունիմ , հայր իմ . . . սակայն ինչպէս որ արդէն ըսի , շատ չքաւոր եմ դժբաղդարար :

— Այդ գիտե՛մ . քու կողմէդ հաւատք եւ փայլ չպակսիր . բայց եթէ կարողութիւն ալ

ունենայիր այդ աղջիկները կառավարելու, ամուսնոյդ եւ որդւոյդ չար օրինակները քու հասնապաղօրեայ աշխատութիւնդ պիտի փճացունէին . այս պատճառաւ պէտք է որ ուրիշներն յանուն քրիստոնէական դժուրեան կատարեն այն բանը զոր դու չես կրնար ընել, դու որ պատասխանատու ես անոնց համար . . . Աստուծոյ առջեւ : — Ա՛հ, հայր իմ, եթէ ձեր շնորհիւ այս բարի գործը կատարուի, նրչափ երախտապարտ պիտի ըլլամ ձեզ : — Այդ անհրահարին բան մը չէ . ես վանամայր մը կը ճանչեմ, որուն վանքին մէջ աղջիկները պէտք եղածին պէս կրնան կրթուիլ . վճարուելիք թոշակն ալ իրենց աղքատութեան համեմատ կրնայ նուազիլ . բայց որչափ նուազ ալ ըլլայ՝ վճարել հարկ է . հանդերձնին եւ ուրիշ պիտոյքնին ալ յառաջուց հոգալ պէտք է . այս ալ քեզ համար խիստ ծանր է : — Աւանդ, ճշմարիտ է, հայր իմ :

— Քիչ մ'ատակ ողորմութեան դանձանակէս հանելով, մ'նայեալն ալ առատաձեռն բարեպաշտներէ հաւաքելով կրնամ պէտք եղած գումարը հայթայթել եւ այդ աղջիկները վանքը դնել : — Ա՛հ, հայր իմ, գուք իմ եւ այն աղայոց փրկին էք : — Առդեմ ըլլալ . . . բայց թէ անոնց հոգւոյն փրկութեան եւ թէ մեր ընելիքներուն յաջողութեան համար՝ քանի մը պայմաններ պիտի դնեմ ընելիք պաշտպանութեանս : — Ա՛հ, ըսէք, հայր իմ, արդէն իսկ

կրնողուհիս : Չեր հրամանն ասեն բանէ առաջ
է ինձ համար :

— Նախ՝ պիտի երթաս հիմա աղջիկները
բերես ու իմ տանս կառավարչուհւոյն յանձնես
որ անմիջապէս վանքը տանի : — Ա՛հ , հայր իմ ,
այդ անհնարին է , դոչեց Ֆրանսոսադ : — Ան-
հրնարին է մի , ինչո՞ւ : — Ամուսնոյս բացակա-
յութեան ժամանակ . . . : — Ի՞նչ կըլլայ : — Չեմ
համարձակիր ես իմ գլխուս այդպիսի բան մ'ը-
նել՝ առանց անոր հարցընելու : — Ոչ միայն ա-
նոր հարցընելու չես , այլ եւ պէտք է որ անոր
բացակայութեան միջոցին կատարես այս դոր-
ծը : — Ինչո՞ւ , հայր իմ , անոր դատնալուն չսպա-
սեմ : — Երկու պատճառի համար , յարեց ձայ-
նը խստութեամբ , պէտք է որ զգուշանաս այդ
բանէն . նախ՝ վասն զի այրդ իր խստասիրտ
ամբարշտութեամբը դէմ պիտի կենայ քու այդ
խոհեմ եւ աստուածահաճոյ դիտաւորութեանդ .
երկրորդ հարկ է որ աղջիկներն այսուհետեւ
բնաւ յարարերութիւն չունենան ամուսնոյդ
հետ , եւ ասոր համար պէտք է որ անոնց ուր
ըլլալն ալ չգիտնայ : — Բայց , հայր իմ , ըսաւ
Ֆրանսոսադ դառն շփոթութեան ու վարանման
մէջ իյնալով , այս աղջիկներն ամուսնոյս յանձ-
նուած են , հիմա առանց անոր հարցունելու
զանոնք տունէն հանել վանքը դրկելը . . . :

Չայնը Ֆրանսոսադի խօսքն ընդմիջեց :

— Այդ աղջիկները կրնան քու տանդ մէջ
կրթել , այն կամ ո՛չ : — Ոչ , հայր իմ , չեմ կըր-

նար : — Քու առնդ մնալով յաւիտեան ան-
զեղջ մնալու վտանգի մէջ են թէ ոչ : — Այո՛ ,
հայր իմ , վտանգի մէջ են . — Քանի որ դուն
անոնց ծնողաց տեղն ես , անոնց գործելիք մա-
հացու մեղաց պատասխանատու ես թէ ոչ :
— Աւանդ , այո՛ , հայր իմ , պատասխանատու եմ
առաջի Աստուծոյ : — Չանոնք այսօրէն վանք
մը դնելու առաջարկութիւնս անոնց հոգւոյն
փրկութեան համար է թէ ոչ : — Այո՛ , հայր իմ ,
անոնց հոգւոյն փրկութեան համար է : — Ու-
րեմն ընարութիւն ըրէ հիմա . . . : — Աղա-
չեմ , հայր իմ , ըսէք ինձ , ես իրաւունք ունիմ
առանց ամուսնոյս հաճութեան այս աղջիկնե-
րուն վրայ տնօրէնութիւն մ'ընելու : — Իրա-
ւունք մի՛ . ոչ միայն իրաւունք ունիս ընելու ,
այլ եւ սրբազան պարտաւորութիւնդ է : Միթէ
հրդեհ մը պատահած ժամանակ պարտքդ չէ
այդ դժբաղդները կրակին մէջէն ազատել , թէ
եւ այրդ արդիլած ըլլայ քեզ , կամ ինք հոն չգրա-
նուի : Ո՛ւր մնաց որ դուն ոչ թէ անոնց մար-
մինը միայն այրող հրդեհէ , այլ հոգիներն յաւիտե-
եան կիզող զարհուրելի կրակէ մը պիտի ազատես
զանոնք : — Աղաչեմ , հայր իմ , ներեցէք այս
մասին սխտելուս , ըսաւ խեղճ կիներ , որուն վա-
րանումն ու անձկութիւնն երթալով կաւելնար .
լուծեցէք տարակուսանքս . էրկանս հնազանդ մը-
նալու երդում տալէս ետեւ կրնամ այդպիսի բան
մ'ընել : — Հնազանդիլ բարի գործի համար , այո՛ ,
իսկ չարութեան համար՝ ոչ երբէք . եւ դուն

ինքնին կը խոստովանիս որ եթէ այդ որբերն
ամուսնոյդ ձեռքը մնան , իրենց հողւոյն փրկու-
թիւնը ոչ միայն կը գծուարանայ , այլ գուցէ
անհնարին ալ կըլլայ : — Բայց , հայր իմ , ըսաւ
Ֆրանսօսադ գողալով , երբոր այրս գառնայ դայ ,
պիտի հարցընէ ինձ թէ ո՞ւր են տղայքը . . .
ես ալ սուտ պիտի ըսեմ իրեն : — Լուս կենալը
սուտ գրուցել չէ . կըսես անոր թէ իր հարցմա-
նը չես կրնար պատասխան տալ : — Այրս շատ
լաւ մարդ է , բայց այդպիսի պատասխան մը ե-
թէ տալու ըլլամ կրակ կը կտրի . . . դինուո-
րութիւն ըրած մարդ է . . . բարկութիւնը
սարսափելի է , հայր իմ , ըսաւ Ֆրանսօսադ
գողալով : — Եթէ հարիւրապատիկ ալ աւել-
ի ահեղ ըլլայ իր ցատումը , պէտք է դիմադ-
րաւես , եւ այդպիսի մեծ առաքինութեան մը
համար ինչ որ ալ կրես՝ փառք պիտի հաճարիս
քեզ , գոչեց ձայնը բարկութեամբ . միթէ կը
կարծես թէ այս աշխարհիս մէջ մարդ մը դիւ-
բութեամբ կրնայ իր հողին փրկել , եւ միթէ ան-
կեղծ սրտով Աստուծոյ ծառայել ուղող մեղաւոր
մը միտքը կը բերէ իր ճանքուն վրայի քարերն
ու փուշերը որ կրնան իր ստքը կտրակել ու վի-
րաւորել : — Թողութիւն չնորհեցէք , հայր իմ ,
թողութիւն չնորհեցէք , ըսաւ Ֆրանսօսադ սր-
տաբեկ համբերատարութեամբ . ներեցէք որ
բանձմ' ալ հարցընեմ ձեզ , մէկ բան մը , սէ , եթէ
գուք չատաջնորդէք ինձ , ո՞վ պիտի առաջնորդէ :
— Խօսէ :

— Երբ որ Սիմօն մարաջախար գայ, անշուշտ
իր դաւկըները պիտի ուզէ էրկընէս, այն ժա-
մանակ այրս ի՞նչ պատասխան պիտի տայ աղջ-
կանց հօրը: — Երբ որ Սիմօն մարաջախար փա-
րիզ հասնի, անմիջապէս իմաց տուր մեզ, եւ
մենք ալ . . . պէտք եղածը կը խորհինք:
Վասն զի հայր մ'այն ժամանակ միայն իրաւունք
ունի իր դաւակաց վրայ՝ երբ որ անոնց հոգւոյն
փրկութեան հոգ կը տանի: Հօրմէն առաջ, հօր-
մէն վեր, Աստուած կայ, որուն պէտք է նախ
ծառայել: Ուստի լաւ խորհէ: Քեզ առաջար-
կածս երբ որ կատարես, այդ մատաղ աղջկանց
հոգին կը փրկուի, քեզ բեր չեն ըլլար, քու
խեղճութեանդ չեն մասնակցիր, սուքք տան մը
մէջ կը մեծնան ինչպէս որ կը փայլէ Գաղղիոյ
մարաջախտի մ'աղջկանց, այնպէս որ, երբ հայ-
րերնին Փարիզ հասնի, ԵՅԷ ԱՐԺԱՆԻ Կ ԶԱՆՈՆՔ
ՏԵՍՆԵԼՈՒ, փոխանակ թշուառ եւ կէս վայրե-
նի կռապաշտներ գանելու, երկու բարեպաշտ
ուսեալ համեստ եւ բարեկիրթ աղջիկներ կը
գտնէ, որք Աստուծոյ հաճոյ ըլլալով կրնան անոր
ողորմութիւնը հայցել իրենց հօր վրայ, որուն
շատ պէտք ալ ունի, վասն զի բռնութեան պա-
տերազմի եւ արիւնհեղութեան մարդ մ'է: Հի-
մա, որոչէ ընելիքդ: Կուզես հոգիդ վտանդի
մէջ դնելով այդ երկու դեռահաս աղջկանց ա-
պագան թէ այս եւ թէ հանդերձեալ աշխար-
հի մէջ զոհել՝ էրկանդ ամբարիշտ բարկութե-
նէն վախնալով:

Յրանսօաղի խոստովանահօր խօսքերը՝ որ-
չափ խիստ ու աններողական թուին, իր հա-
մոզման նկատմամբ բանաւոր եւ արդար էին,
վասն զի այս պարկեշտ եւ անկեղծ քահանայն
սրտանց համոզուած էր իր ըսածներուն: Ռօտէ-
նի ձեռքը կոյր գործիք մ'եղած, եւ չգիտնա-
լով թէ ինչ նպատակի կը ծառայեցընէին զինքը,
կը կարծէր որ եթէ Յրանսօաղն ստիպելով աղ-
ջիկները վանքը դնէ, աստուածահաճոյ պարտա-
կանութիւն մը կատարած կըլլայ: Ս,յս էր եւ է
ճիզութեաց ուխտին ամենէն սքանչելի հնարք-
ներէն մէկը. գործակից ընել իրենց պարկեշտ
եւ անկեղծ մարդիկ, որք առանց իրենց գաղա-
նի դիտումներն ու մեքենայութիւնները գիտ-
նալու՝ կուրարար աշխատին:

Յրանսօաղ երկար ժամանակէ՛ ի վեր իր խոս-
տովանահօր ազգեցութիւնը կրելու վարժուած
ըլլալով, անոր վերջին խօսքերուն պատասխան
չկրցաւ գտնել: Ուստի յանձնառու եղաւ, բայց
կը դողար ու կը օարսափէր մտածելով որ եթէ
Տակօպէտ Շարթրէն դառնայ ու մահամերձ մօր
մ'իրեն յանձնած աղայքը տունը չգտնէ, ի՛նչ
յուսահատ բարկութեամբ պիտի բորբոքի արդ-
եօք: Արդ, խոստովանահօրը խօսքին նայելով,
իր երկանը ցասումն սրչափ առաւել ահեղ ըլլար,
ինքն ալ այնչափ բարեպաշտական խոնարհու-
թեամբ պիտի համբերէր:

Ուստի պատասխան տուաւ իր խոստովանա-
հօր. «Աստուծոյ կամքը թող ըլլայ, հայր իմ, եւ

ինչ որ ալ պատահի ինձ . . . քրիստոնէական
պարտքս կը կատարեմ . . . ինչպէս որ կը հրա-
մայէք ինձ : — Աստուած ալ քեզ կը վարձատ-
րէ այն ամեն վշտաց համար զորս գուցէ կրել
հարկ ըլլայ քեզ այս սուրբ պարտականութիւնը
կատարելու համար . . . : Ըսել է թէ Աստուծոյ
առջեւ խօսք կաւտաս որ ամենեւին պատասխան
չպիտի տաս էրկանդ հարցումներուն՝ երբ որ հար-
ցընէ քեզ թէ ո՛ւր են Սիմօն մարաջախտին աղ-
ջիկները : — Այո՛ , հայր իմ , կը խոստանամ , ը-
սաւ Յրանսօազ դողալով : — Նոյն լռութիւնը պի-
տի պահես երբ որ աղջիկները դեռ ըստ բաւական
նին չկրթուած՝ Սիմօն մարաջախտն ալ գայ եւ
զանոնք հարցընէ քեզ : — Այո՛ , հայր իմ , ըսաւ
Յրանսօազ հետզհետէ ձայնը տկարանալով : —
Այլ դալէ ետեւ ձեր մէջ ինչ որ պատահի , ան-
պատճառ պիտի դաս ու իմացընես ինձ : Այո՛ ,
հայր իմ . աղջիկները երբ պիտի բերեմ ձեր սու-
նը : — Մէկ ժամէն . ես հիմա պիտի երթամ վանա-
մօր նամակ մը գրեմ , այն նամակը կառավար-
չուհւոյս կը յանձնեմ , որ անկասկածելի կին մ'է .
ան կառնու աղջիկները վանքը կը տանի . . . :

Վերջապէս Յրանսօազ իր խոստովանու-
թեան վերաբերեալ խրատները քահանայէն լսե-
լէ եւ իր նոր մեղաց համար ապաշխարելու պայ-
մանաւ արձակում ստանալէ ետեւ՝ խոստովանա-
րանէն դուրս ելաւ :

Սկեզեցին այս միջոցին դատարկ չէր . մեծ
բազմութիւն մը խոնուած էր հարուստ ննջեցելոց

մը թաղման հանդէսը տեսնելու համար, դոր երկու ժամ առաջ լուսարարը դռնապանին յիշած էր: Տակօպէսի կինը մեծ դժուարութեամբ կըրցաւ եկեղեցւոյն դուռը հասնիլ, որ շքեղ կերպով սեւադարձեալ էր:


Ո՛րչափ մեծ տարբերութիւն կար այս թաղման հանդիսին եւ այն աղքատին յուղարկաւորութեան մէջ՝ որ առաւօտուն այնպէս երկիւղալից կերպով եկեղեցւոյն դուռի շներկայացած էր:

Թաղին բոլոր քահանաներն զգեստաւորեալ դիմաւորելու կերթային թաւիշազարդ դագաղը. մեծաքսեայ եւ դիպակէ շուրջառնեւուն ու սեւ աստղերուն արծաթաթել ասղնենկարներն հազարաւոր մոմերու զոլմունքէն կը շողշողէին: Գոնապանն իր պայծառաշուք համազդեատին եւ ունոցներուն ներքեւ կը ճօխանար: Նուսարարը՝ պալէնայէ դաւադանն ուրախութեամբ ձեռքը բռնած՝ դռնապանին դիմացը կանդներ էր իշխանական ծանրութեամբ: Նրդիչները՝ նոր եւ սպիտակ շապիկներ հաղած՝ ահեղագոչ որոտմամբ կը դռային. դալարափողերուն դանչիւնէն պատուհաններուն ապակիները կը գրդղէին. վերջապէս այս հարաւատ մեռելին, այս ~~տաղմ~~ ^{կորէ} մեռելին հոգեհացին մասնակցելու պատրաստուած անձանց ամենուն դէմքին վրայ ուրախագին բայց զսպեալ դոհութիւն մը կար, որ երկու ժառանգաց դէմքէն ու կեցուածքէն կարծես թէ կաւելնար: Ս,յս վերջինները երկու բարձրահասակ կորովի եւ առոյգ ե-

ընտանացիներ էին, որք թէ եւ երջանկութեան
վայելուչ քօղ մը համարուած փափուկ համեստ
տութեան օրէնքը կը պահէին, բայց եւ այնպէս
կարծես թէ կը զուարճանային կօրուէին ու կը
հեշտանային իրենց հագած տխուր եւ խորհրդ-
դաւոր սգոյ վերարկուին ներքեւ:

Տակօպէսի կինը՝ թէեւ պարզամիտ ջերմե-
ռանդ մ'էր, դառնապէս վիրաւորեցաւ հարուստ
տին ու աղքատին դադաղներուն Աստուծոյ տա-
նը դուռն եղած ընդունելութեան դայթակզելի
տարբերութիւնը տեսնելով. վասն զի եթէ իրա-
կան հաւասարութիւն մը կայ՝ մահուան եւ յա-
ւիտենականութեան առջեւն է:

Այս երկու ձախող տեսարանները Ծրանսօա-
ղի արամութիւնն առաւել եւս կը ծանրացընէ-
ին, որ մեծ դժուարութեամբ եկեղեցիէն դուրս
ելնելով՝ արտօրնօք Պրիզ—Միշ փողոցին ճան-
քան բռնեց, որպէս զի շուտով աղջիկներն առ-
նու եւ իր խոստովանահօր տանը կատապարչու-
հետն յանձնէ Սուրբ—Մարիամայ վանքը տա-
նելու համար, որ՝ ինչպէս յայտնի է՝ տօքթոր
Պալէնիէի հիւանդանոցին քովն էր, ուր Ատրիէն
— Բարտօլիլ օրիորդը փակուած էր:



ԳԼՈՒԽ Դ.

ՄՕՍԻԷՕ ԵՒ ՌԱՊԱ-ԺՕՍ.

Տակօպէսի կիներ եկեղեցիէն ելնելով Պրիզ—
Միշ փողոցին բերանը հասած ժամանակ, օրհն-
եալ ջուր բաժնոցն ետեւէն հասաւ շնչասպառ
եւ աղաչեց որ շուտով Սէն—Մէրիի եկեղեցին
դառնայ, ուր Տիւպօս արբան զինքը կ'սպասէր
ամենակարեւոր բան մ'ըսելու համար:

Երբոր Ֆրանսօսադ ալ ետ կը դառնար, միա-
ձի կառք մը գնաց իր տանը դրանն առջեւ կե-
ցաւ: Կառավարը նստարանէն վար ցատկեց ու
կառքին դռնակը բացաւ:

« Կառավար, ըսաւ սեւադգեօտ գիրուկ կին
մը՝ որ կառքին մէջ նստած էր եւ գիրկն ալ ըս-
կունդ մը բռնած, հարցուր թէ Ֆրանսօսադ Պօ-
տուէն տիկնոջ բնակած տունն այս է
—Այո՛, տիկին, ըսաւ կառավարը:

Ընթերցողք անշուշտ կը յիշեն Սէն—Տիգիէ
տիկնոջ առաջին սենեկապանուհի Կռիվօս տի-
կինն եւ իր Մօսիէօ անուն սկունդը՝ որ բռնա-
ւորական իշխանութիւն մը կը վարէր իր տիրու-
հւոյն վրայ:

Ներկարարը, որ՝ ինչպէս յայտնի է՝ դռնա-
պանի պաշտօն ալ կը վարէր, Ֆրանսօսադի անունը
լսելուն պէս՝ իր գործարանէն դուրս ելաւ, եւ
քծնութեամբ կառքին քով վազելով պատաս-

խանեց Առիփօա տիկնոջ թէ Ֆրանսօազ Պօտուէն
այն տան մէջ կը բնակէր , բայց նոյն միջոցին հոն
չէր : Հայր Ղօռիօ թեւերը ձեռուրներն եւ մինչեւ
անգամ երեսին կէսը ոսկեգոյն պայծառ դե-
ղինով ներկուած էին : Մօսիէօ՝ այս դեղնաներկ
մարդը տեսնելուն պէս՝ կատղեցաւ , եւ երբոր
ներկարարն իր ձեռքը դրան եզրին վրայ դրաւ ,
սկունդը հաշելով վրան վաղեց ու դաստակը խա-
ծաւ :

Ա՛հ , գոչեց Առիփօա տիկինն անձկութեամբ ,
մինչդեռ հայր Ղօռիօ ձեռքն ուժգնութեամբ ետ
կը քաշէր . ձեռքիդ վրայի ներկը թունաւոր չըլ-
լայ . . . վասն զի շնիկս շատ քնքուշ է : » Եւ
սկսաւ խնամով սկունդին ցռուկը սրբել , որ տեղ
տեղ դեղին ներկով պլշտկած էր :

Հայր Ղօռիօ՝ շնիկին կատաղի խածուած քին
վրայ Առիփօա տիկինէն քաղաքավարական սրբա-
ցաւութիւն մ'սպասած ժամանակ , անոր այս
կերպ խօսելուն վրայ հազիւ իր բարկութիւնը
զսպելով՝ ըսաւ . « Տիկին , եթէ կին չըլլայիք եւ
այգ անպիտան կենդանին ալ ձերը չըլլար , հիմա
պոչէն կը բռնէի եւ ներկիս ջերաջերմ կատսային
մէջ խոթելով աղւոր նարնջագոյնի կը ներկէի
զայն . — Ի՛նչ , շունս դեղինի կը ներկէի՛ր ,
գոչեց Առիփօա տիկինը , եւ Մօսիէօն ամուր
մը դրկած կառքէն վար իջաւ դայրագին եւ
ծուռ ծուռ հայր Ղօռիօի նայեցաւ : — Բայց ,
տիկին , արդէն ըսի ձեզ թէ Ֆրանսօազ տիկինն
հոս չէ , ըսաւ ներկարարը տեսնելով որ սկուե-

դին տիրուհին դէպ 'ի մութ սանդուղը կերթար: — Հող չէ, կ'սպասեմ, ըսաւ Առիւօսա տիկինը պաղ կերպով. ո՞ր դատիկոնը կը նստի: — Զորրորդը, պատասխանեց հայր Վօռիօ ցամամբ իր դորժարանը մտնելով, եւ ինքնիրեն սկսաւ ըսել՝ մտքէն անցած չարութեան վրայ ինք ալ խնդալով. « Կը յուսամ որ մեր հայր Տակօպէտի շունը նեղանալով՝ այդ անիծած շնիկը վիզէն բռնածին պէս երկու կտոր կընէ: »

Առիւօսա տիկինը մեծ նեղութեամբ այն տաժանելի սանդուղէն վեր ելաւ, ամեն մէկ սանդղագրէսոյ վրայ յողնութիւն առնելով եւ զգուանօք իր շուրջը նայելով: Աերջապէս չորրորդ դատիկոնը հասաւ, եւ վայրկեան մը կանգ առաւ Ծրանսօազի խեղճուկ սենեկին առջեւ:

Այս միջոցին երկու որբերը սենեկին մէջ նստած էին: Մայէօ ալ՝ գրաւատունը տանելիք կարասիները ժողվելու կ'զբաղէր: Ռօզ եւ Ալան շապագային վրայ քաջալերական յոյսեր առնելով գոհ եւ ուրախ կերեւէին. վասն զի իմացեր էին Մայէօէն, որ կար կարել գիտնալնուն՝ եթէ ժրութեամբ աշխատէին, երկուքը մէկէն շարաթը ութ ֆրանք կրնային վաստակիլ, որ թէպէտ չնչին գումար մ'էր, ընտանիքին համար օգնութիւն մը կրնար ըլլալ:

Առիւօսա տիկնոջ Ծրանսօազի տունը գալը Տ'էկրինելի արբային եւ Սէն-Տիգրիէ իշխանուհւոյն խորհրդովն էր: Ասոնք առաւել խոհեմութիւն համարեր էին՝ աղջիկները Ծրանսօազի տունէն

աւնուլ եւ վանքը տանելու գործը Առիւփօա տիկ-
նոջ յանձնել , որուն վրայ կոյր վատահու թիւն
մ' ունէին : Տրանսօադիալ իմաց տրուեր էր խօս-
տովանահօրը բերնով թէ աղջիկները փոխանակ
իր տանը կառավարչուհւոյն յանձնելու , իր կող-
մէն գրով ներկայացող ուրիշ տիկնոջ մը պէտք է
յանձնէ , որ վանք մը տանի զանոնք :

Մէն—Տիպիէ իշխանուհւոյն հաւատարիմ
տիկինը սենեկին գուռը բախելէ ետեւ ներս մը-
տաւ եւ Տրանսօադ Պօտուէնը հարցուց :

« Հոս չէ , տիկին , ըսաւ Մայէօ երկշտու-
թեամբ՝ այս անակնկալ այցելութեան վրայ
զարմանալով եւ կնոջ նայուածքին առջեւ աչ-
քերը խոնարհեցրնելով :

— Աւրեմն պիտի սպասեմ , վասն զի խիտ
կարեւոր խօսելիք մ' ունիմ իրեն , սքառասխանեց
տիկինն Առիւփօա հետաքրքիր ուշադրութեամբ
երկու որբերուն գէմքը զննելով , որք նոյնպէս
վախերնուն առջեւնին նայիլ սկսան :

Ս.յսպէս ըսելով Առիւփօա տիկինը գանելով
մը Տակօպէռի կնոջ թիկնաթոռին վրայ նստու ,
եւ կարծելով թէ կրնար Մօսիէօն ազատ բող-
տալ , զգուշութեամբ գետինը գրաւ :

Բայց մէկէն խորունկ խուլ եւ խեղդ ուկ
մանչիւն մը թիկնաթոռին ետեւէն լսուելով , տի-
կինն Առիւփօա վեր դատկեց , եւ սկուռնոն ալ ահա-
բեկ հաշիւն մ' արձակելով ու գողգողալով իր
տիրուհւոյն քով վազեց կծկեցաւ :

« Ս.յս ինչ է , շուն կայ հոս , գոչեց տիկինն

Առիւթոս իսկոյն ծռելով որ Մօսիէօն նորէն գիրկն
տռնու :

Ռապա—Ժօա կարծես թէ այս հարցման
ինքնին պատասխանել ուզելով, ծանրութեամբ
ելաւ կանգնեցաւ թիկնաթռոխն ետեւէն՝ ուր
պառկած էր, եւ յօրանջելով ու ձկտելով ին-
քրդինք յոյց տուաւ :

Առիւթոս այս հուժկու կենդանին տեսնե-
լուն պէս, որ իր լայն որկորը բանալով երկու
կարգ սուր եւ անեղ ակռաները կարծես թէ
պարծանօք կը զուցընէր, դարհուրելով պօռաց :
Գաժան սկունդն ալ՝ որ Ռապա—Ժօայի դի-
մացը դտնուած ժամանակ սարսափահար դողա-
ցեր էր, ինքզինք տիրուհւոյն ծնդաց վրայ ա-
պահովցած տեսնելով՝ սկսաւ լրբարար մորն-
ջել, եւ Միպերիոյ դամբուն վրայ գրգռիչ
նայուածք մ'արձակել : Բայց մեռեալ Ժօվիա-
լին արժանաւոր ընկերը դայն արհամարհելով,
նորէն յօրանջեց անհոգութեամբ . յետոյ կաս-
կածոտ կերպով մը Առիւթօս տիկնոջ զգեստները
հոտոտելով կրնակը Մօսիէօի դարձուց, գը-
նաց Ռօզի ու Պլանշի թախց ներքեւ տարած-
ուեցաւ, եւ կարծես թէ անոնց գլխուն փոր-
ձանք մը դալիքն զգալով, իր խոշոր եւ ուշիւմ
աչքն անոնց վրայէն չէր դատեր :

« Գուրս հանեցէք այդ շունը, ըսաւ Առի-
ւթօս տիկինն իշխանական ձայնիւ, չէք տեսներ
որ շնիկս կը գրգռէ եւ դուցէ գէշութիւն մ'աչ
ընէ : — Մի վախնաք տիկին, Ռապա—Ժօս բան

չընէր եթէ իրեն դաշող չըլլայ, պատասխանեց
Ռօղ ժպտելով: — Ինչ որ ալ է, գոչեց Առիւօտ,
փորձանքը մէկէն 'ի մէկ կուգայ. այդ գայլի
գլխով եւ ահռելի ակռաներով յաղթանդամ կեն-
դանւոյն տեսքը միայն բաւական է մարդը լե-
զապատառ ընելու եւ սրչափ վտանգաւոր ըլ-
լալը հասկըցնելու . . . ձեզ կըսեմ, դուրս ը-
րէք . . . : »

Առիւօտ տիկինն այս վերջին խօսքն այն
աատիճան կիրքով արտասանեց, որ Ռասպա-
ժօայի ականջին անախորժ հնչելով գլուխն այն
անձանօթ կնոջ դարձուց եւ ակռաները ցուցը-
նելով մոնչեց:

Լռէ, Ռասպա—ժօան, ըսաւ Ալանչ սաստե-
լով:

Նոյն միջոցին ուրիշ անձանօթ մարդ մը
ներս մտնելով այս տեսարանին վերջ տուաւ,
որ բաւական շիտթութիւն կը պատճառէր աղ-
ջիկներուն: Նկողը գործակատար մ'էր՝ ձեռքը
նամակով մը:

« Ի՞նչ կուզէք, պարոն, հարցուց Մայէօ:
— Հոս բնակող տիկնոջ ամուսնէն ամենակա-
րելոր նամակ մը բերած եմ. վարի ներկարարն
ըսաւ ինձ թէ տիկինը հոս չէ, բայց կրնամ վեր-
ելնել: — Տակօպէտէն նամակ բերեր է, գոչե-
ցին ուրախութեամբ Ռօղ եւ Ալանչ, ուրեմն
Փարիզ դարձած է . . . ուր է, ուր է ինք:
— Այդ բարի մարդուն անունը Տակօպէտ է,
չեմ գիտեր, բայց մոխրագոյն ընչացքով հին

նշանակիր դորական մ'է, եւ հոս մօտը Շարթ-
րի կառքերուն գրատունն է : — Նոյն ինքն է . . .
գոչեց Պլանչ, առէք նամակը . . . »

Գործակատարը նամակը առաւ, եւ աղ-
ջիկն ալ մէկէն բացաւ :

Կռիւտա տիկնոջ գլխուն կարծես թէ կայ-
ծակ իջաւ : Կնք այնպէս գիտէր որ Տակօպէ-
սը Փարիզէն հեռացուցեր էին, որպէս զի Տիւ-
պօս արբային ձեռօք Վրանսօսադ համոզեն, եւ
ամեն բան յաջողեր էր : Վրանսօսադ հաճեր էր
երկու աղջիկները կրօնաւորուհեաց ձեռք յանձ-
նել, եւ նոյն միջոցին կը հասնէր դորականը՝
զոր երկու երեք օր Փարիզէն հեռու կը կար-
ծէին : Ուստի անոր այսպէս յանկարծ վերա-
դարձն իրենց նիւթած քրտնաջան մեքենայու-
թիւններն 'ի դերեւ կը հասնէր՝ նոյն իսկ պտու-
ղը քաղելու վայրկենին մէջ :

Ո՛հ, աէր Աստուած, գոչեց Ռօդ նամակը
կարդալէ ետեւ, այս ի՞նչ դժբաղդութիւն է :
— Ի՞նչ կայ, քոյր իմ, գոչեց Պլանչ ալ : — Նրէկ,
Շարթրէն դարձած ժամանակ կէս ճանրան նա-
յեր է որ քսակը կորուսեր է, եւ չկրնալով ճան-
բան շարունակել, ետքը վճարելու պայմանա-
տեղ մը բռնել ու Փարիզ դարձեր է : Հիմա կը
խնդրէ կնոջմէն որ ստակ դրկէ կառքին գրա-
տունը, ուր ինք կ'սպասէ :

— Ճշդիւ այդպէս է, բաւ դործակատարը,
որովհետեւ այդ յարգելի մարդն ըսաւ ինձ .
« Եստով գնա, տղան, վասն զի ես հոս դրաւ »

կեցած եմ : — Եկ ու տես որ . . . տանը մէջ
այ բան մը չկայ , ըսաւ Պլանչ , Տէր Ստուած ,
ի՞նչ պիտի ընենք :

— Այս բաները լսելով Առիւծոս տիկինը վայր-
կեան մը յուսադրեցաւ , բայց Մայէօ շուտով
անոր յոյսը ցրեց՝ իր պատրաստած ծրարը ցու-
ցընելով : « Անհող եղիք , օրինորդք . . . ահա
ստակ . . . գրաւատուներ հոսկէց հետի չէ , հիմա
ասոնք գրաւի կը դնեմ , եւ առած ստակիս մէկ
մասը շուտով կը տանիմ Պ. Տակօպէտի կուտամ եւ
մէկ ժամէն հոս կըլլայ : — Ա՛հ , սիրելի Մայէօ ,
իրաւունք ունիս , ըսաւ Ռօզ , սրչափ բարեսիրտ
ես , ամեն բանի ճարը կը խորհիս : — Ահաւա-
սիկ , յարեց Պլանչ , հասցէն նամակին վրայ
գրուած է , սա , որպէս զի դանուած տեղը
դիւրութեամբ դանես : — Ենորհակալ եմ , օրի-
նորդ , պատասխանեց Մայէօ . յետոյ ըսաւ դոր-
ժակատարին . « Գարձէք ձեզ զրկող անձին քով
եւ ըսէք որ ես հիմա գրատուներ կուգամ :
— Չարածձի՛սապատող , կըսէր ինքնիրեն Առիւծոս
տիկինն իր գայրուցը դապելով , ամեն բանի ճա-
րը կը գտնէ . ապա թէ ոչ , այն անիծեալ մար-
դուն անակնկալ գալուստէն ազատ կը մնայինք .
. . . հիմա ի՞նչպէս պիտի ընենք . այս աղջիկ-
ները չպիտի ուղեն հետս երթալ մինչեւ որ դօ-
րականին կինը չգայ . . . եթէ անոր գալէն ա-
ռաջ զիրենք տանելու առաջարկութիւն ընեմ ,
չեն ընդունիր եւ ամեն բան վտանգի մէջ կից-
նայ : Ի՞նչպէս ընեմ , Տէր Ստուած :

— Հող մի ընէք, ըսաւ գործակատարը դուրս
ելած ժամանակ, եւ հիմա կերթամ այն յար-
դելի անձին կրտսեմ որ անհող ըլլայ, քիչ ժա-
մանակէն գործը կարգի դրուելով գրատունէն
թող կը արուի : »

Երբոր Մայէօ արծաթէ սկահակն ու կե-
տակրոյ սպասը ծրարին մէջ կը դնէր, Առիւօա
տիկինը խոր մտածութեան մէջ ընկղմած էր :
Յանկարծ սթափեցաւ . դէմքը՝ որ քանի մը վայր-
կենէ 'ի վեր տխուր խոկուն եւ գրգռեալ էր,
մէկէն դուարթացաւ : Ոտքի վրայ ելաւ՝ Մօ-
սիէօն միշտ դիրկը բռնած, եւ ըսաւ աղջկանց .
« Արտիճեալու Ծրանասող տիկինը դեռ չեկաւ,
հաս մօտը մէկու մ'այցելու թեան պիտի երթամ,
չուտով կը դառնամ կուգամ . կը խնդրեմ որ ի-
մացընէք իրեն : »

Ս.յս խօսքն ըսելով Առիւօա տիկինը Մօ-
սիէօն առաջ դուրս ելաւ :



ԳԼՈՒԽ Ե.

ԱՐՏԱՔԻՆ ԵՐԵՒՈՅԹ

Մայէօ երկու որբերը վերատին սրտապրն-
դելէ ետեւ՝ ինքն ալ վար իջաւ բաւական դրժ-
տարութեամբ, վասն զի նախ իր խուցն ելելի
էր որպէս զի արդէն ծանրկէկ ծրարին վրայ իր

միակ բուրդէ վերմակն ալ աւելցընէ, որ իր
ցուրտ խցիկին մէջ իր մարմինը քիչ մը տաք-
ցընելու կը ծառայէր:

Առջի գիշերն Ակրիքօլի համար կրած սր-
տատանջութեանէն չէր կրցած աշխատիլ. ըս-
պասելու յուսոյ եւ կասկածի տագնապն ար-
դելք եղած էր: Այս օրն ալ դարձեալ անդործ
պիտի անցնէր. եւ սակայն ապրուստ պէտք էր
իրեն:

Մանր վիշտերը՝ որք աղքատին աշխատե-
լու կարողութիւնն անդամ կը կտորեն, կըրկ-
նապէս տարտափելի են: Խեղճին ուժը կը կտրի,
ակամայ անդործութեան կը դատապարտուի եւ
ետեւէն կարօտութիւնն ու թշուառութիւնը կը
հասնի:

Բայց Մայէօ, աւերածամեակն պարտականութեան
այս կատարեալ եւ սրտաշարժ տիպարը, տակա-
ւին այլոց անձնուէր ըլլալու, օգտակար ըլլա-
լու ետեւէ էր, եւ հարկ եղած ուժն ալ կը
դտնէր: Նրբեմն ամենատկար եւ ամենափափուկ
անձինք՝ սրտի կարգէ դուրս դօրութիւն մը
կուենեան. կարծես թէ բնականաբար հիւան-
դոտ եւ նկուն կազմուածք ունեցող անձանց
հողին մարմնոյն իշխելով անբնական կորով մը
կազդէ անոնց:

Այսպէս Մայէօ ալ քսան եւ չորս ժամէ՝ ի
վեր ոչ կերակուր կերած էր եւ ոչ քնացած:
Սառնաշունչ գիշեր մ'ամբողջ ցուրտէն տառա-
պեր էր: Աւաւօտուն Պապիլոն փողոցն երթա-

լու հասարճ ձիւնին ու անձրեւին ներքեւ երկու
անդամ Փարիզի մէկ մեծ մասը պարտելով չա-
րաչար յողներ էր, բայց ուժը չէր սպառեր .
այնչափ մեծ է սրտին զօրութիւնը :

Մայէօ Սէն-Մէրիի փողոցին ծայրը հասեր
էր : Բռուվէռ փողոցին մէջ երեւան ելած վեր-
ջին դաւակցութենէն 'ի վեր, այն բազմամարդ
թաղին մէջ ոտսիկանութեան զինուորաց եւ
քաղաքապահ տեսչաց թիւը սովորականէն ա-
ւելի էր : Գործաւոր աղջիկը՝ թէ եւ իր բեռին
ներքեւ կորացած՝ զրեթէ վազելով կերթար
մայթին վրայէն . նոյն միջոցին քաղաքապահ
զինուոր մը քովէն անցնելով, երկու հինգ Քը-
րանքնոց արծաթ դրամ գետինն ինկան, գորս
իր ետեւէն եկող սեւազգեստ գիրուկ կին մը
դիտմամբ Մայէօի ոտքին տակը նետեր էր :

Իսկոյն գիրուկ կինն այն գետինն ինկած
երկու արծաթ դրամները քաղաքապահ զին-
ուորին ցոյց տալով քանի մը խօսք ըստ եւ
Մայէօն ցուցուց . յետոյ ինքն ալ Պրիզ-Միշ փո-
ղոցին կողմը դառնալով աներեւոյթ եղաւ : Քա-
ղաքապահ զինուորը՝ Առիվօս ամիսոջ խօսքե-
րէն արթննալով՝ ստակները գեանէն վերցուց
եւ Մայէօի ետեւէն վազելով պօռաց . « Ե՛, քեզ
կրսեմ, կեցիր . . . մի վազեր . . . բռնեցէք . . .
բռնեցէք . . . այդ կինը . . . » :

Այս ձայնէն շատ մարդիկ մէկէն ետեւնին
դարձան : Այս թաղերուն մէջ երբոր հինգ կամ
վեց մարդ մէկտեղ ժողովուրի, իսկոյն մեծ բազ-

մութիւն կը խոնի հոն : Մայէօ չգիտնալով որ
քաղաքապահ զինուորին գոչումն իրեն ուղ-
ղուած էր , իր քայլերն առաւել կը փութա-
ցընէր որպէս զի վայրկեան մ'առաջ գրաւատու-
նը հասնի , եւ իր այս աճապարանաց մէջ ան-
ցորդներուն մէջէն կը սահէր կանցնէր , զգու-
շանալով միանգամայն որ մէկու մը չդպչի , վա-
սըն զի կը վախնար որ իր խեղութեան պատ-
ճառաւ զինքը կոպտարար կը ծաղրեն , ինչպէս
որ շատ անգամ կը պատահէր : Յանկարծ տե-
սաւ որ քանի մը մարդ իր ետեւէն կը վազէին ,
եւ նոյն միջոցին ուժեղ ձեռք մ'իր սւսէն բըռ-
նեց : Չարհուրելով ետին դարձաւ եւ տեսաւ
որ քաղաքապահ զինուոր մ'էր զինքը բանողը ,
ետեւէն ալ սասիկանութեան գործակալ մը
կը վազէր կուգար : Արդէն բոլորովին ալ մեծ
բաղմութիւն գումարուեր էր , մեծ մասամբ
դատարկացորտ , գծուծ , չարասիրտ , ժպիրն ,
աղխութեամբ եւ թշուառութեամբ վայ-
րենացած դարչատեւալ մարդիկ , որք անոպա-
գար փողոցներուն մայթերը կը շափեն : Այս խա-
ժամութեամբ ամբոխին մէջ գրեթէ երբէք արհես-
տաւոր մարդիկ չեն տեսնուիր , որովհետեւ աշ-
խատասէր գործաւորք կամ իրենց գործատունը
գոցած կամ աշխատութեան դրազած կըլլան :

« Չէս լսեր . . . Ժան աը Նիվէլի շանը պէտ
ճէր գլուխդ առեր կերթաս , ըսաւ սասիկանու-
թեան տեսուչն , եւ այնպէս ուժով մը թեւէն քա-
շեց որ ծրարը գետինն ինկաւ :

Երբոր խեղճ աղջիկն երկիւղիւ իր շուրջը
հայելով՝ այն լիրք, չարամիտ եւ ծաղրածու մար-
դոց աչքն իր վրայ ուղղուած տեսաւ, երբոր այն
ցած ու դինով մարդոց երեսին վրայ նկարուած
կոպտութիւնն ու անամօթութիւնը տեսաւ, բա-
լոր մարմնովը դողաց եւ երեսին գոյնը մոխիր
կարեցաւ: Ոտիկանութեան դործակալն ալ ան-
շուշտ կոպտութեամբ կը խօսէր անոր հետ. եւ
կրնանք ուրիշ կերպ խօսիլ ամոյն, դեղնած, շուա-
րած եւ անէն ու վիշտէն այլայլած խեղճ աղջկան
մը հետ, ցնցոտի կերպարանքով թշուառ ա-
րարածի մը հետ, որ ձմեռ ժամանակ անշահ կը-
տաւէ ցեխոտ ու ձիւնածորով շրջադդեստ մը
հաղած էր, վասն զի Մայէօ այն օրը շատ ճան-
քայ քալած էր: Ուստի ոտիկանութեան դոր-
ծակալը՝ արտաքին երեւութի դերագոյն օրի-
նաց համեմատ՝ օրով աղքատը միշտ կասկածելի
է, յարեց խստութեամբ. «Ս. յդ շատի մի արտա-
բար, աղջիկ, քիչ մը կեցի, կերելի որ դործդ
շատ ստիպողական է որ վրայիդ ստակները դե-
տինը կը ձգես ու ժողվելու ժամանակ չունիս:
— Արդեօք քամակի կուզին մէջ պահեր էր ստա-
կը, ըսաւ անդիէն խռպոտ ձայնով ծծմբառ ծա-
խողին մէկը, որ կանխահաս սրիկայութեան դա-
զիր ու դարչելի ախար մ'էր:

Ս. յս պայ դուարճարանութիւնը բարձրաձայն
ծիծաղով եւ հայհուհներով ընդունուեցաւ խաժա-
մուժէն, եւ Մայէօի շփոթութիւնն ու սարսափը
լրացուց: Եղկելին հաղիւ կրցաւ տկար ձայնիւ

պատասխանել ոտիկանութեան գործակալին՝
որ քաղաքապահ զինուորին ձեռքէն առած եր-
կու արծաթ դրամներն իրեն կը ներկայացընէր .

« Բայց պարոն . . . այդ ստակն իմս չէ :
— Սուտ ալ կը խօսիս , ըսաւ քաղաքապահ զի-
նուորը մօտենալով , յարդի տիկին մը տեսաւ որ
քու վրայէդ ինկան : — Ճշմարիտ կըսեմ , պա-
րոն , թէ իմս չին , պատասխանեց Մայէօ գողա-
լով : — Արդէն ըսի քեզ թէ սուտ կը խօսիս , ը-
սաւ քաղաքապահ զինուորը . մինչեւ անգամ այն
տիկինը քու շփոթեալ եւ մեղապարտ գէմքէդ
կասկածի երթալով ըսաւ ինձ թէ տես սա կուզի-
կը , ինչպէս մեծկակ ծրար մը թեւին ներքեւ
առած կը կծկէ եւ վրայէն թափած ստակներն ալ
չժողվէր . այս տեղ բան մը կայ : — Քաղաքապահ ,
ըսաւ անդիկն գարձեալ ծծմբառ ծախող սրիկան ,
մի հաւտար խօսքին . . . անգամ մը կուզը դնուէ ,
իր մթերանոցը հոն է . . . տարակոյս չունիմ որ
մէջը կոշիկներ , թիկնոցներ , հովանեակներ եւ
մեծ ժամացոյցներ ալ պահած է . հիմա ականջովս
լսեցի որ ժամացոյցն . հնչեց իր ուռուցիկ քամա-
կին մէջէն : »

Նորէն ծիծաղ , աղաղակ եւ հայհուէ ամբո-
խին մէջ . վասն զի սինլքոր խառնաղանձը միշտ
անգութ ու վայրագ է տառապեալ աղերսաւո-
րաց դէմ : Ամբոխն հետզհետէ կը խռնէր ,
եւ անոր հետ անախորժ աղաղակներ , սուր շը-
չիւններ եւ դուհիկ ծաղրաբանութիւններ :

« Թող տուէք որ տեսնենք , ձրի է , կը պո-

ապր մէկը : — Մի հրեր գլխ , կեցած անգլիա
վարձ քը վճարած եմ , կը պօռար ուրիշ մը : — Վար-
ձըր անդ մը հաննեցէ ք այդ կիներ , որ տեսնենք ,
կը դոչէր ուրիշ մ'ալ : — Ճշմարիտ է ըսածդ ,
ոտքերս ճմկեցան . ըրած ծախքս Հայիտի կրնամ
հանել , կըսէր մէկն ալ : — Յուցըցէ ք նայինք ,
ապա թէ ոչ ստակնիս ետ տուէք , կը դոչէր ու-
րիշ մ'ալ : — Աուզեմ . . . մեզ ալ տուէք այդ
ստպատէն , կը պօռար մէկ ուրիշն ալ : — Մեռե-
լը տեսնէինք այդ կուզիկին : »

Ընթերցողք թող երեւակայենն այն դժբաղդ ,
դիւրազգած , բարեօխրտ , ազնուախոհ եւ երկչոտ
արարածը՝ խուռն ամբոխին մէջ մնացած , քա-
ղաքապահ զինուորին եւ ստախկանութեան դոր-
ծակալին հետ նեղ տեղ մը կեցած եւ անագորուն
խուժանի մը կոչա ծաղրածութեանց եւ ոռնաց-
մանց նշաւակ եղած : Նորատի դործաւորու-
հին դեռ չէր հասկընար իր վրայ ձգուած ամբաս-
տանութեան սոսկալի ծանրութիւնը , բայց վեր-
ջը հասկըցաւ , երբոր ծրարը գետնէն վերցընե-
լով դողդոջուն ձեռացը մէջ բռնած ժամանակ՝
ստախկանութեան դործակալը դայն ձեռքէն քա-
շելով խատութեամբ ըսաւ . « Ի՞նչ կայ ատոր
մէջ . . . » — Պարոն , մէջը . . . ըս . . . ըս . . . »
Խեղճը սրտադողէն թոթովելով ըսելիքը կոր-
սընցուց :

« Հասկըցանք , ատկէց աւելի պատասխան
մը չունիս , ըսաւ ստախկանութեան դործակալը .
օ՛ն , շուտ ըրէ , քաց նայինք ծրարիդ փորը : »

Այս ըսելով, սատիկանութեան գործակալը
քաղաքապահ զինուորին օգնութեամբ ծրարը
քաշեց բաղաւ եւ մէջը գտնուած կարասիները
մի առ մի քննել սկսաւ ըսելով. «Օ՛, անկողնի
սաւաննիք . . . արծաթէ սկահակ մը . . . եւ
սեղանի սպասնիք . . . շալ մը . . . բուրդէ
վերմակ մը . . . շխտակը գէշ կողուպուտ չէ . . . :
Քեզ տեսնողը մուրացկան կը կարծէ, բայց ար-
ծաթեղէններ ալ ունիս եղեր . . . թէ եւ քիչ
է, բայց անմեղադիր եղիր : — Այդ կարասիները
քուկդ չեն, ըսաւ քաղաքապահ զինուորը : — Ահ
. . . պարսն . . . պատասխանեց Մայէօ՛ վրան
մտրելիք գալով, բայց . . . : — Ս՛, չարածճի
կուղիկ, քեզնէ մեծ բաներ գողցեր ես : Գողցեր
եմ մի՛, գոչեց Մայէօ երկու ձեռքը ստեղծամբ
իրար կցելով, վասն զի հիմա ամեն բան կը հաս-
կընար . . . «Նս . . . գողցեր եմ մի՛ . . . :
— Պահապան զինուորները, ահա կուգան պա-
հապան զինուորները, գոչեցին քանի մը ձայն . . . :
— Օ՛, է՛, գայլախաղ քշողները . . . Պէտուէն
ուտողները կուգան . . . : Ճանրայ բացէք 4Յերոցդ
տաճկուղախի գունդին, որուն ամեն մէկ հար-
ուածները մահաբեր կուղիկներ կը յօրինեն : »

Այս աղաղակներուն ու ցուրտ կատակա-
բանութեանց միջոցին երկու զօրական եւ տաս-
նապետ մը մեծ դժուարութեամբ յառաջ կուգա-
յին այն տղեզ եւ հոծ խաժամուժին մէջէն, ուր
իրենց ներկայութիւնը՝ հրացաններուն ու սուխ-
նելուն փայլելէն միայն կը հասկցուէր : Աստիկա-

նութեան տեսուչներէն մէկը գացիր մտակայ
պահականոցի հրամանատարին իմաց տուեր էր
այս մեծ ամբոխին գումարուժը, որով փողոցին
անցուդարձը կը խափանէր :

«Օ՛ն, ահա պահակներն եկան, քալէ՛ պա-
հականոցը, ըսաւ ոստիկանութեան գործակա-
լը Մայէօի թեւէն բռնելով : — Պարսն, ը-
սաւ խեղճ աղջիկը հեղձամղձուկ հեկեկանօք,
ձեռքերը սարսափէն իրար կցած, եւ փողոցին
մէջ ծուռնկի վրայ եկած . պարսն, շնորհ ըրէք,
թող տուէք որ ըսեմ ձեզ . . . հասկըցընեմ
ձեզ . . . : Պահականոցը գնա ու հոն հասկը-
ցու . . . քալէ՛ : — Բայց, պարսն . . . ես ա-
սոնք գողցած չեմ . . . դոչեց Մայէօ աղէկէզ
ձայնիւ . . . դթացէք ինձ . . . այսչափ բաղ-
մութեան մէջ . . . զիս իբրեւ գող բռնել տանիլ
. . . ո՛հ, դթացէք . . . շնորհ ըրէք . . . — Ընի
քեզ թէ երբոր պահականոցն երթաւ՝ հոն հաս-
կըցու : Բաղմութիւնը լցուած է փողոցին մէջ
. . . պիտի քալես թէ ոչ : » Եւ դժբաղդ աղջ-
կան երկու ձեռքէն բռնելով՝ ոտքի վրայ կանդ-
նեցուց : Նոյն միջոցին տասնապետն եւ երկու
գորականները բաղմութեան մէջէն անցնելով
քաղաքապահ ղինուորին քով հասան :

«Տասնապետ, ըսաւ քաղաքապահ ղինուոր-
րը, այս աղջիկը պահականոցը տարէք . . . ես
ոստիկանութեան ղինուոր եմ : — Ո՛հ, պարսն-
ներ, շնորհ ըրէք . . . ըսաւ Մայէօ երկու ձեռ-
քէն իրար կցած եւ ջերմ արասուք թափելով :

դիս մի տանիք , թող տուէք որ դործը հասկըցը-
նեմ ձեզ . . . ես գողութիւնը բրած չեմ , ահա
Աստուած , գողութիւնը բրած չեմ . . . մէկու մը
ծառայութիւնը ընելու համար է . . . թող տուէք
որ ըսեմ . . . — Չըսի՞ք թէ երբոր սրահակա-
նոցն երթա՞ն հոն հասկըցու . եթէ չես ուզեր քա-
լել , քեզ քաշքշուելով կը տանին , ըսաւ քաղա-
պահը :

Անհնար է նկարագրել այս վատ եւ սոսկա-
լի տեսարանը . . . : Տկար , սրտաթափ , եւ վա-
խէն ու գողէն նուազեալ թշուառ աղջիկը՝ զին-
ու որներէն քաշքշուելով տարուիլ սկսաւ : Ամեն
մէկ քայլափոխին ծունկերը կը դողդոջէին . հարկ
եղաւ որ քաղաքատան զինուորն եւ սատիկանու-
թեան դործակալը թեւերը մանեն . . . ինք ալ
մեքենայաբար ընդունեց անոնց օգնութիւնը :
Այն ժամանակ աղաղակներն ու հայհուհները նո-
րէն սկսան առաւել եւս կատաղութեամբ :

Տարաբաղդ աղջիկն այս երկու մարդոց մէջ
տեղը կիսամեռ քաշելով կարծես թէ զողզոթայի
կատարը կելնէր : Մտախալաստա մթնոլորտի մը
տակ եւ թիսատեսիլ մեծամեծ տուներէ շրջա-
պատեալ գայլոտ վտղոցի մը մէջ՝ սինլքոր խու-
ժանին խառնադանճ բաղմութիւնը՝ ֆալօի կամ
կոյայի ամենէն վայրագ դիշերատաքնութիւնները
կը յիշեցընէր : Յնցոտաղգեաց տղայք , զինով
կանայք եւ ձառագէմ մարդիկ իրար կը հրէին ,
իրարու կը դարնուէին , կը ծեծկուէին , եւ իրար
կը ճակէին որպէս զի այս կիսամեռ խեղճին , նող-

կալի սխալման մը զո՛ն եղող դժբաղդին կտեւէն
երթան ունալով ու սուլելով :

Սխալմունք, ստուղիւ կը քսամնի մարդ եր-
բոր մտածէ թէ այս կերպ ողբալի սխալումնե-
րով ձերբակալու թիւններ յաճախ կրնան պատա-
հիլ, որուն միակ պատճառը սխալ տեղեկու թիւն
մը եւ անոր հետ աղքատութեան արտաքին երե-
ւոյթին աղղած կասկածն է . . . : Մեք Հայալի
մտնանք երբէք այն դեռահասակ աղջիկը, որ
ամօթալի սուրեւառութեան մը կասկածանօք
ձերբակալ ըլլալով, զինքը տանող մարդոց ձեռ-
քէն հնարքով մը փախաւ, եւ տունէ մը վեր ել-
նելով՝ յուսահասարար ինքզինք պատուհանէն
վարնետեց եւ դլուխը ջախջախեցաւ . . . :

Կսիլօա աիկինը՝ Մայէօի վրայ այս վատ զըր-
պարտութիւնն ընելէ կտեւ՝ շտապաւ Պրիդ-Միշ
փողոցը դարձաւ, Հորս դասիկոններէն վեր ե-
լաւ . . . , եւ Ծրանսօտի սենեկին դուռը բանա-
լով յանկարծակիի եկաւ . . . : Տակօպէս իր կը-
նսջն եւ երկու որբերուն քով նստած էր :

ԳԼՈՒԽ Զ .

ՎԱՆՔ

Տակօպէսի տուն գալը երկու խօսքով բա-
ցատրինք :

Կառքերուն դրատան վերատեսուէր Տակօ-
պէսի զինուորական զէմքին վրայ նկարուած ուղ-

դու թեան վատանելով՝ սուսջարկեր էր իդնն որ
ստակը ետքէն բերելու խօսք տայ եւ ելնէ
գործին երթայ . բայց դորականը յամառեր հոն
իրբու պատանդ կենալ ուղեր էր , մինչեւ որ
կնոջմէն պատասխան մը դայ իր նամակին : Նը-
բոր դործակատարը ետ դառնալով իմացուց որ
պէտք եղած ստակը պիտի բերուէր , Տակօպէս
իր պատիւն ասպանովցած համարելով անմիջա-
պէս առնն դարձաւ :

Ուստի դիւրին է երեւակայել Առիվօս տիկ-
նոջ ապշումը՝ երբոր սենեկէն ներս մտնելով Տա-
կօպէսը տեսաւ . (որուն նկարագրութիւնն ար-
դէն լսած ըլլալով դիւրաւ ճանչեց) կնոջն եւ
երկու որբերուն քով :

Յրանսօաղ ալ Առիվօս տիկինը տեսնելուն
պէս դող ելաւ . արդէն Ռօղ եւ Պլանչ Տակօ-
պէսի կնոջն ըսեր էին թէ իր բացակայութեան
միջոցին տիկին մ'եկեր զինքը տեսնել կուզէր
ամենակարեւոր գործի մը համար : Յրանսօաղ
իր խոստովանածօրմէն իմացած ըլլալով՝ տարա-
կոյս չունէր որ աղջիկները Վանք տանելու հա-
մար դրկուած անձն էր այն եկողը : Ուստի մեծ
տագնապի մէջ ինկած էր : Տիւպօս արբային խրա-
տը կատարելու մտադիր էր , բայց կը վախնար որ
Առիվօս տիկինը բերնէն խօսք մը վախցընելով
Տակօպէս գործը կխանայ , այն թամանակ ամեն
ոյս կը կորնչի , եւ որբերը աղխտութեան ու
մահացու մեղաց վիճակին մէջ կը մնան , որուն
ինքզինք պատասխանատու կը կարծէր :

Տակօպէս, որ Ռօղի ու Պլանչի ձեռքը բըռնած նստեր էր, Սէն—Տիգրիէ իշխանուհւոյն խորհրդական կնոջ ներս մտնելուն պէս՝ ոտքի վրայ ելաւ եւ Ֆրանսօաղի երեսը նայեցաւ՝ եկողին ԹՎ ըլլալը հարցընելու կերպով:

Վտանգաւոր եւ վճռական վայրկեան մ'էր. բայց Առիւօա տիկինը Սէն—Տիգրիէ իշխանուհւոյն օրինակներէն կրթուած ըլլալով, իր ընելիքը մէկէն 'ի մէկ որոշեց. ուստի Մայէօի վրայ ըրած պժղալի դրապարտութենէն ետեւ՝ արտորնօք չորս դատիկոնէն վեր ելնելով շունչը կտրիչն եւ Տակօպէսն յանկարծ հոն տեսնելով դող ելնելը՝ որով իր դէմքն ամբոխեալ եւ վըշտակիր երեւոյթ մը կառնուր, յարմար առիթ համարելով, որպէս թէ քրտին յուզմունքն հանդարտեցընելու եւ խելքը գլուխն ամփոփելու համար վայրկեան մը լուռ կենալէ ետեւ՝ այլայլեալ ձայնով մը գոչեց. « Ս'հ, տիկին . . . աղեկաւոր բան մը տեսայ հիմա . . . ներեցէք չփոթուի՞նք . . . բայց սիրտս այն աստիճան շարժեցաւ որ . . . : — Ի՞նչ կայ, տիկին, ի՞նչ տեսաք, ըսաւ Ֆրանսօաղ դողալով, վասն զի կը վախնար որ Առիւօա տիկինն անդգուշութեամբ գործը կը ծակէ: — Պահ մ'առաջ հոս եկեր էի, ըսաւ Առիւօա, կարեւոր գործի մը վրայ ձեզ հետ խօսելու . . . երբոր ձեզ կ'սպասէի, խեղանդամ գործաւոր աղջիկ մը դանազան նիւթեր ժողվելով ծրարեց . . . : — Ս. յի . . . գիտեմ . . . ըսաւ Ֆրանսօաղ, մեր Մայ

յէօն է , պատուական եւ առաքինի աղջիկ մը . . .
— Ինձ ալ այնպէս երեւցաւ , տիկին . . . բայց
տեսէք ինչ եղաւ : Երբոր տեսայ որ դուք կու-
շանաք , ուղեցի հոս մօտը բարեկամի մ'այցե-
լութեան երթալ . . . վար իջայ . . . Սէն—Սէ-
րիի փողոցը հասայ . . . Ե՛հ , տիկին . . .
— Ետքը՞ , ինչ եղաւ , հարցուց Տակօպէտ :
— Բաղմութիւն մը հաւաքուած տեսայ . . . պատ-
ճառը հարցուցի . . . ըսին թէ քաղաքապահ
զինուոր մը դեռահասակ աղջիկ մը բռներ է իր-
րեւ գող , վասն զի ծրար մը կըտանի եղեր՝ մէջն
այլեւայլ բաներ լցուած , որք կերելի թէ իրե-
նը չեն . . . Երբոր այս խօսքը լսեցի , բաղմու-
թեան մօտը դացի . . . եւ ինչ տեսնեմ . . .
քիչ մ'առաջ հոս տեսած աղջիկս . . .
— Ս՛հ , խնդճ աղջիկ , աս ինչ փորձանք է ,
գոչեց Տրանսօազ երեսին գոյնը փոխուելով եւ
երկու ձեռքերը սոսկմամբ իրար կցելով : — Հաս-
կըցու նայիմ , ըսաւ Տակօպէտ իր կնոջը , ինչ էր
այդ ծրարը : — Ն՞նչ պիտի ըլլայ , քեզնէ պահե-
լիք բան մը չէ . ստակի պէտք ունենալով . . .
աղաչէր էի խեղճ Մայէօին որ քանի մը պէտք
չեղած բաներ գրաւատունը տանի . . . — Եւ
կարծեր են թէ գողցեր է , գոչեց Տակօպէտ ,
աշխարհիս ամենէն պարկեշտ աղջիկը գող կար-
ծել . . . սոսկալի բան . . . բայց , տիկին ,
պէտք էր որ միջնորդէիք . . . ըսէիք թէ դայն
կը ճանչէք : — Արի , պարոն , բայց դժբաղդա-
բար մտիկ բնող չեղաւ . . . բաղմութիւնը քա-

նի կերթար կը մեծնար . պահապան յղինուոր-
ներն ալ հասան եւ աղջիկը բռնեցին տարին . . .
— Խեղճ աղջիկն անչափ դիւրազգած եւ երկ-
չատ է որ վախէն մահուան դուռն հասեր է .
գոչեց Յրանուօաղ : — Աւանդ , դժբաղդ Մայէօ .
ինչ բարի քաղաքավար եւ քաղցրաբարոյ աղ-
ջիկ մ'է , ըսաւ Պլանչ արտասուելից աչօք քը-
րոջը դառնալով : — Յղնութիւն մը չկրնալով ը-
նել , յարեց Առիւօա , վարեցի հոս եկայ որ ի-
մացընեմ ձեզ այս սխալմունքը . . . առաջքը
չուտով կրնայ առնուիլ . . . միայն թէ շուտով
պէտք է կրթաք ու գործը հասկըցընելով պա-
հանջէք աղջիկը : »

Այս խօսքին վրայ Տակօպէս իսկոյն գլխ-
խարկն առաւ եւ խիստ կերպով մ'ըսաւ Առիւօա
տիկնոջ . « Այդ խօսքն սկիզբէն պէտք էր ըսէ-
իք , տիկին . . . ուր է հիմա այդ խեղճ աղ-
ջիկը : — Չեմ գիտեր , պարոն , բայց փողոցին
մէջ դեռ անչափ մարդ կայ , անչափ իրարան-
ցում կայ , որ եթէ շուտով փողոցն իջնելու
բարեհաճիք . . . կրնաք իմանալ . . . Բարեհաճիքն
ալ խօսք է որ կրնէք , տիկին . . . իմ պարտ-
քըս է երթալ փնտռել . . . խեղճ աղջիկ , ըսաւ
Տակօպէս , իրերու դող լռնուիլ . . . ստակալի
բան . . . հիմա թաղին ոստիկանութեան տես-
չին դրասենեակը կամ պահականոցը կերթամ
եւ հարկաւ դռնելով կառնում հոս կը բերեմ : »

Այս լսելով Տակօպէս շտապով դուրս ե-
լաւ : Յրանուօաղ , Մայէօի վիճակին վրայ քա-

Չալերուելով, փառք տուաւ Աստուծոյ, որ այս
առթիւ իր այրը տունէն կը հեռացընէր, որուն
այս միջոցիս հոն դանուիլը մեծ սրտադող մ'էր
իրեն: Առիւփօս տիկինը Մօսիէօն կառքին մէջ
թողեր ու այնպէս վեր ելեր էր: Տիւպօս աք-
բային նամակը Ֆրանսօաղի տալով նշանական
կերպիւ մ'անոր երեսը նայեցաւ եւ ամեն մէկ
բառերը դիտմամբ շեշտելով ըսաւ. « Այս նա-
մակին մէջ պիտի տեսնէք, տիկին, հոս դա-
լուս նպատակը՝ դոր դեռ չկրցի հասկըցընել ձեզ,
բայց շատ գոհ եւ ուրախ եմ, վասն զի այս
առթիւ յարաբերութիւն պիտի ունենամ այս
երկու սիրուն օրիորդաց հետ: »

Ռօզ եւ Պլանշ դարմանալով իրարու երես
նայեցան: Ֆրանսօաղ դողդողալով նամակն ա-
ռաւ: Իր խոստովանանքի ատկուածներն եւ ըս-
պանալից պատուէրները միայն կրցեր էին խեղճ
կնոջ խղճմտութեանը յաղթել, վասն զի Տա-
կօպէռի կատաղի ցասումը միտքը բերած ժա-
մանակ կը սարսափէր. ուստի պարզմտութեամբ
կը խորհէր թէ ինչպէս աղջիկներուն խօսք բա-
նայ եւ առաջարկէ որ այն տիկնոջ հետ երթան:

Առիւփօս տիկինն անոր այս տաղնապը գու-
շակելով աչք ըրաւ որ անհող ըլլայ, եւ եր-
բոր Ֆրանսօաղ իր խոստովանանքի նամակը կը
կարդար, ինք Ռօզի հետ խօսիլ սկսաւ ըսելով.
« Ձեր աղգականուհին նրչափ ուրախ պիտի ըլ-
լայ երբոր ձեզ տեսնէ, սիրելի օրիորդք: — Մեր
ազգականուհին մի, ըսաւ Ռօզ եւս առաւել

զարմանալով : — Այն , ըսաւ Առիւփօա , ձեր Փարիզ հասնիչն իմացեր է , բայց երկար հիւանդութեան մը պատճառաւ դեռ տկար ըլլալով չկրցաւ ինքն անձամբ հոս դալ եւ աղաչեց որ դամ ձեզ առնում ու իրեն տանիմ . . . : Գրեթե քաղղաքար , յաւելցուց Առիւփօա՝ երկու քոյրերուն շփոթիլը նշմարելով , ինչպէս որ Ֆրանսոսագ տիկնոջ դրկած նամակին մէջ ալ ըսած է , խիստ կարճ տեսութիւն մը միայն կրնաք ընել հետը եւ մէկ ժամէն դարձեալ հոս էք . բայց վաղը կամ միւս օր ինք անձամբ պիտի գայ եւ Ֆրանսոսագ տիկնոջ ու էրկանը հետ խորհրդակցելով ձեզ իր տունը պիտի տանի . . . վասն զի չուզեր բնաւ որ դուք հոս բեռ ըլլաք այնպիսի անձանց՝ որք արդէն այնչափ խնամք տանին ձեր վրայ : »

Այս վերջին խօսքերը խիստ լաւ տպաւորութիւն մ'ըրին երկու քերց վրայ . Տակօպէնի ընտանեաց ներդրութիւն աալու հոգը փարատեցին Նիթէ առանց Տակօպէնի հաճութեան Պրիզ-Միշ փողոցի տունէն բոլորովին երթալու խնդիր ըլլար , անշուշտ կը վարանէին . բայց Առիւփօա տիկնոջ խօսքը մէկ ժամու մէջ երթալ գալու վրայ էր . ուստի առանց ամենեւին կասկած մ'ընելու՝ Ռօզ ըսաւ Ֆրանսոսագի . « Կրնանք Տակօպէնի գալուն չսպասելով մեր ազգականուհեոյն այցելութեան երթալ : — Այն , կրնաք , ըսաւ Ֆրանսոսագ տկար ձայնիւ , որովհետեւ շուտով ետ պիտի դառնաք : — Ուրեմն , տիկին , այս

ազնիւ օրիորդներուն կազաչեմ որ անմիջապէս
ճանրայ ելնենք . . . վասն զի կուզեմ որ կէս
օրէն առաջ հոս դարձունեմ զիրենք : — Պատ-
րաստ ենք , տիկինն , ըսաւ Ռօզ : — Շատ աղէկ,
ուրեմն համբուրեցէք ձեր երկրորդ մայրը եւ
քաղեցէք , ըսաւ Առիւփօս տիկինը՝ հազիւ իր սրբ-
տառանջութիւնը ծածկելով , վասն զի կը գո-
ղար որ Տակօպէս վրայ կը հասնի :

Ռօզ եւ Պլանչ պագատուեցան Ծրանսօաղի
հետ , որ օտարի ձեռք մատնած երկու սիրուն
ու անմեղ աղջիկները թեւերուն մէջ գրկելով
չկրցաւ արտառքը դասել , թէպէտ եւ սրտանց
համոզուած էր որ անոնց հոգւոյն փրկութեան
համար էր :

Երթանք , օրիորդք , ըսաւ Առիւփօս սիրալիր
ճայնիւ , շուտ ընենք , ներեցէք անհամբերու-
թեանս , ձեր ազգականուհւոյն բերնէն կը խօ-
սիմ : »

Երկու քոյրերը Ծրանսօաղի հետ գորովա-
լիր սիրով պագատուելէ ետեւ՝ սենեկէն դուրս
ելան , եւ ձեռք ձեռքի տուած՝ սանդուղքէն
վար իջան Առիւփօս տիկինոջ ետեւէն . Ռապա-
ֆօս ալ աղջկանց ետեւէն կերթար զգուշարար
առանց անոնց դիտութեան . վասն զի Տակօպէ-
սի բացակայութեան ժամանակ ուշիմ կենդա-
նին անոնց քովէն չէր դատուեր :

Առաւել զգուշութեան համար անշուշտ Սէն-
Տէղիէ տիկինոջ հաւատարիմ կամակատարն հը-
րաման ըրեր էր կատարարին որ երթայ Պրիզ-

Միշ փողոցին ծայրը Քլօաթօի փոքրիկ հրապարակին մէջ սպասէ : Քանի մ'երկվայրկենի մէջ որքերն եւ իրենց առաջնորդուհին կառքին քով հասան :

Ա՛հ , քաղաքացուհի , ըսաւ կառավարը կառքին դռնակը բացած ժամանակ , մի՛ ներդա՛նաք խօսքիս , ձեր այս շուքը շատ խեղ եւ անհամբոյր է , քանի որ կառքիս մէջ դրած էք , կրակէ բռնկածի պէս կը պոռայ եւ կարծես թէ ամեն բան լափել կուզէ :

Եւ յիրաւի , Մօսիէօն մինակ մ'նալէ չախորժելով՝ ողբաձայն հեծութիւններ կարձակէր .

« Լաէ , Մօսիէօ , ահա եկայ » ըսաւ Առիվօս տիկինը . յետոյ երկու քոյրերուն դառնալով .
« Հաճեցէք ներս մտնել , օրիորդք , ըսաւ :

Ռօզ եւ Պլանշ կառքը մտան : Առիվօս տիկինն ալ ներս մտնելէ առաջ՝ կամացուկ մ'ըսաւ . կառավարին որ դիրենք Ս. Մարիամայ վանքը տանի . միանգամայն ուրիշ պատուէրներ տալու գբաղած էր , երբոր յանկարծ իր սկուռդը՝ որ աղջկանց կառքը մտած ժամանակ չարամտութեամբ մո՛նչեր էր , կատաղաբար հաչել սկըսաւ :

Այս կատաղութեան պատճառը խիստ պարզ էր : Ռապա—ժօս , որ մինչեւ այն ժամանակ առանց տեսնուելու աղջկանց ետեւէն կերթար , մէկ ոտամամբ կառքին մէջ ցատկեր էր : Սկուռդըն ալ անոր այս յանդգնութեան վրայ բարկանալով , իր սովորական դգուշաւորութեան

հակառակ՝ Ռապա—ժօայի վրայ ցաակեց ու անոր ցոռէն այնպէս սաստիկ խածաւ, որ Սիպերիոյ քաջ շունը՝ ցառէն կատարելով, սկունդը վիզէն բռնածին պէս՝ իր ուժեղ որկորին ճէջ երկու անգամ սեղմելով խեղդեց լիճնոց . . . ինչպէս որ կրնար հասկցուիլ սկունդին խեղդուել հեծութենէն : Այս ամենը գրելու չափ ժամանակ չտեւեց . վասն զի Ռօղ եւ Պլանշ վախնալով՝ հազիւ ժամանակ ունեցան երկու անգամ Ռապա—ժօան քովերնին կանչելու : —Ա՛հ, աէր Աստուած, ըսաւ Ասիվօս ասկիսնե այս իրարանցումը լսելով, այդ հրէշ շունը հասալ եկեր է . . . Մօսիէօս չելնէ խածնէ . . . շուտով վար իջուցէք, վռնակցէք, օրիորդք, հետ տանիլ չըլլար . . . :

Աղջիկները չգիտնալով Ռապա—ժօայի գործած ոճիրը, վասն զի Մօսիէօս կարքին նրատարանին ներքեւ անշունչ պառկած էր, եւ զայն հետերնին տանիլն ալ պատշաճ համարելով, իրենց օտքին ծայրովը զայն հրեցին ու սաստելով ըսին . « Վար իջիր, Ռապա—ժօան, առեն դարձիր . . . » :

Հաւատարիմ կենդանին նախ չուղեց հնազանդիլ, եւ քաղցր յանդիմանութեան դէմքով մ'անոնց նայեցաւ որպէս թէ զանդատելու համար թէ ինչու իրենց միակ պաշտպանը կը վռնակէին : Քայց երբոր Պլանշ դարձեալ խըտափու հրաման ըրաւ որ դուրս ելնէ : Ռապա—ժօան պոչը կախած՝ ախրութեամբ վար ի-

Չաւ կառքէն , զգալով թերեւս որ Մօսիէօ՛
հետ չափազանց խստութեամբ վարուած էր :

Առիւթօս տիկինը՝ վայրկեան մ'առաջ այն
թաղէն հեռանալու փութալով՝ աճադարանօք
կառքն ելաւ . կառավարը դռնակը դոցեց , իր
նստարանին վրայ ցատկեց , եւ կառքը սրար-
չաւ ճանքայ ելաւ . Առիւթօս տիկինը խոհեմու-
թեամբ կառքին վարագոյրները քաշեց , որպէս
զի՛ չըլլայ թէ Տակօպէս դէմէրնին ելնելով աղ-
ջիկները կառքին մէջ տեսնէ : Այս անհրաժեշտ
նախադգուշութիւնները կատարելէն ետեւ , Մօ-
սիօն միտքն եկաւ , զոր կաթոգին կը սիրէր .
այն խորին եւ չափազանց դորովանօք՝ զոր շա-
րաքարոյ անձինք երբեմն կուեննան կենդան-
եաց վրայ . վասն զի կարծես թէ անոնց վրայ
կամփոփեն ու կը հեղուն այն սիրոյ զգացումը՝
զոր իրենց նմաններուն վրայ պէտք էր ունենա-
լին . մէկ խօսքով , Առիւթօս տարփառին յարում
մ'ունէր այն դաժան վատ եւ չար շնիկին ,
թերեւս իր մոլութեանց դաղտնի նմանակրու-
թիւն մ'ունենալուն համար : Այս յարումը վեց
տարիէ 'ի վեր կը տեւէր , եւ քանի որ Մօսիէօ
տարիքը կառնուր , տիրուհւոյն սէրն ալ կա-
ւելնար :

Տղայական երեւոյթ ունեցող այս մանր պա-
րագային վրայ դիտմամբ կը խօսինք , վասն զի
չատ անգամ ամենէն փոքրիկ պատճառներն ա-
ղետալի վախճաններ կուեննան , եւ վասն զի
վերջապէս հասկըցընել կուզենք ընթերցողաց

Թէ ինչ աստիճան յուսահատութեան եւ կատա-
ղութեան մէջ ինկաւ այս կինը՝ երբոր իւր շան
մեռնիլն իմացաւ . այնպիսի յուսահատ կատա-
ղութեան մը՝ որուն հետեւանքը որբերուն կըր-
նար դպչիլ :

Կառքն արագ ընթաց կարչաւէր քանի մը
վայրկենէ՝ ի վեր երբոր Ասիւօա տիկինը՝ որ կառ-
քին առջիւ կողմը նստած էր՝ Մօսիէօն կանչեց .

Մօսիէօ գերադանց պատճառներ ունէր պա-
տասխան չտալու :

« Անպիտան չարածճի . . . ըսաւ Ասիւօա
քաղցրութեամբ, արդեօք սրչափ մտեր ես . . . այն
անպիտան մեծ շունը կառքին մէջ մտցընողն
եա չէի , այնպէս չէ , օրիորդք . . . , Աօղին եկ
նայիմ , եկ համբուրէ տիրուհիդ եւ շուտով հաշ-
տուինք . . . պինդ գլուխ : »

Գարձեալ լռութիւն Մօսիէօին կողմանէ :
Ռօդ եւ Պլանչ իրարու երես նայիլ սկսան տա-
տամսութեամբ , վասն զի գիտէին Ռապա-ժօ-
այի քիչ մը վայրագ ըլլալը , բայց Մօսիէօին
սպաննուած ըլլալն ալ չէին յուսար : Ասիւօա
տիկինը՝ իւր այնչափ սիրալիր կոչումներուն դէմ
սկունդին յամառ լռութեանը վրայ զարմանալով
քան թէ կասկածի երթալով , ծռեցաւ որ նըս-
տարանին ներքեւէն առնու , ուր խորամանկու-
թեամբ կծկած կը կարծէր . թաթիկ մը ձեռքին
եկաւ . բռնեց իսկոյն իրեն քաշեց , եւ կէս մը
կատակելու՝ կէս մ'ալ նեղանալու կերպով մ'ը-
սաւ :

« Օ'ն, վեր ել, ցած կենդանի . . . ինչ ըլ-
կայդ այս օրիորդներուն ալ պիտի հասկցընես . . . »

Այսպէս բռնով սկունդը վեր առաւ մեծա-
պէս դարմանալով անոր շարժումներուն կարգէ
գուրս թռչու թեան վրայ . բայց նրչափ մեծ ե-
զաւ ստակումը՝ երբոր ծունդին վրայ դնելով տե-
տաւ որ բոլորովին անզգայ էր .

« Կաթում է . . . կաթում . . . դո-
շեց, թշուառ կենդանին շատ կուտէր . . . խիտ
շատ կուտէր . . . դիտէի որ օր մ'այս ձիւնը
պիտի դար գլխուն : » Յետոյ խուճապաւ ետեւը
գտնալով . « Կառավար, կեցի . . . կեցի »
պոռայ առանց մտածելու թէ կառավարը չէր
կրնար իր ձայնը լսել . յետոյ Մօսիէօի գլուխը վեր
առաւ կասկածելով թէ կրնար մարած ըլլալ .
բայց երբոր վզին վրայ հինգ վեց սուր ակամե-
րու խոր ու արիւնառու ծակերը տեսաւ, շնի-
կին ողբալի մահուան բուն պատճառն իսկոյն հաս-
կըցաւ . իր առաջին զգացումը ցաւ եւ յուսահա-
տութիւն եղաւ . « Մեռած է . . . դոշեց, մե-
ռած է . . . եւ արդէն պաղած . . . մէն, Տէր
Ստառած . . . եւ սկսաւ լալ :

Չարերուն արտառքը չարագուշակ է . . .
Չար մարդը երբոր ծանր ցաւ մը չիմանայ՝ չլաք .
եւ ցաւին արտայայտութիւնը՝ փոխանակ սիրտը
մեղմելու, ամոքելու, փանդաւոր դայրութեմով
կը բորբոքէ . . . Այսպէս Մօսիէօի տիրուհին
ալ՝ նախ կսկծագին գորտիանօք փղձկելէ ետեւ՝
ցասմամբ եւ ատելութեամբ վառեցաւ . . . այն .

մոլեղին առեւելթեամբ բորբոքեցաւ երկու օ-
րիորդաց դէմ, որք իր շնիկին մահուան աղամայ
պատճառներն էին. իր սրտին ռիսն մշնչափ յայտ-
նի նկարուեցաւ դաժան դէմքին վրայ, որ Ռօզ
եւ Պլանչ անոր երեսին հրացայտ կարմրութենիւն
դարհուրեցան երբոր կատաղի նայուածք մ'ա-
նոնց վրայ ձգելով աշխարհայ ձայնիւ գոչեց.

« Չեր շունն ըրաւ այս բանը, — Թողութիւն
ըրէք, տիկին, մեզ մի սրգողիք, գոչեց Ռօզ.
— Նախ ձեր շունը խածաւ մեր Ռապա-Ժօան,
յարեց Պլանչ ալ երկչոտ ձայնիւ:

Կռիւթօս որբերուն գող ելնելը տեսնելով
խելքը գլուխը ժողովեց. հասկցաւ որ իր ան-
խոնկ բարկութիւնը կրնար գէշ հետեւանք
ունենալ. ուստի իւր վրէժխնդրութեան իսկ
շահուն համար ինքզինք բանել հարկ էր, որ-
պէս զի կասկած չպատճառէ Սիմօն մարաջախ-
տի աղջկանց: Ուստի մէկէն 'ի մէկ իր սիրան
հանդարտած չցուցրնելու համար՝ քանի մը
վայրկեան ալ աղջկանց երեսը ծուռ ծուռ նա-
յելէ ետեւ՝ այնպէս երեւցուց որ քիչ քիչ իր
բարկութիւնն իջաւ եւ դառն կսկիծ մը յաջոր-
դեց. վերջապէս Կռիւթօս ձեռքովն երեսը ծած-
կելով՝ երկար հառաչանք մ'արձակեց եւ լալ
ձեւացուց:

« Խեղճ տիկին, ըսաւ կամայ մը Ռօզ Պը-
լանչի, տես ինչպէս դառնապէս կուլայ. մեք
ինչպէս որ Ռապա-Ժօան կը սիրենք, ինքն
ալ հոյնապէս իր շնիկը կը սիրէ եղեր . . . »

— Աւանդ, ճշմարիտ է ըսածդ, պատասխանեց
Պլանչ, մեր ծերունի Ժովիային մեռած ժամա-
նակն ալ որչափ լայնք . . . : »

Առիւթա տիկինը քանի մը վայրկեան ետքը
գլուխը վեր առաւ, աչուրները սրբեց, եւ
յուզեալ բայց սիրալիր ձայնով մ'ըսաւ. « Ներ-
ողամիտ եղիք ինձ, օրիորդք . . . կրիցս շար-
ժու մը կամ մանաւանդ սրտիս բուն կսկիծը
չկրցի մէկէն 'ի մէկ զսպել . . . որովհետեւ
շատ կը սիրէի այս խեղճ շնիկը . . . որ վեց
տարիէ 'ի վեր քովէս չէր գատուեր : — Մեք ալ
կը ցաւինք այս դժբաղդ դէպքին վրայ, տիկին,
ըսաւ Ռօզ, մանաւանդ անոր համար որ ան-
դարմանելի է . . . — Քիչ մ'առաջ կըսէի քրոջս
թէ ձեր զգացած կսկիծին ծանրութիւնը մեք
ալ փորձով կը հասկընանք, ինչու որ մեր սիրտն
ալ շատ մորմոքեցաւ երբոր մեզ Սիպերիայէն
բերող մեր ծերունի ձին մեռաւ : — Աերջա-
պէս, սիրելի օրիորդք, ալ ասոր խօսքը չը-
նենք . . . յանցանքն իմս է . . . պէտք չէր որ
հետս բերէի . . . բայց ինձմէ գատուիլ ալ չէր
ուզեր ամենեւին . . . կը յուսամ թէ չէք մե-
ղադրեր այս տեսակ տկարութիւնները . . .
երբոր մէկ մարդ մը բարի սիրտ ունի, ինչպէս
մարդոց՝ նոյնպէս կենդանեաց վրայ կը դժայ . . .
Ուստի ձեր դիւրազգածութեանը դիմելով կը
խնդրեմ որ կիրք ելնելուս ներողամիտ ըլլաք :
— Բայց մեք արդէն մոռցանք զայն, տիկին . . .
եւ միայն ձեր սրտին կոտրելուն վրայ կը ցաւ-

ւինք : — Այս ալ կանցնի , սիրելի օրիորդներս ,
այս ալ կանցնի . ձեր ազգականուհւոյն հիմա
ձեզ տեսնելով զգալիք ուրախութիւնը զիս կը
մխիթարէ . արդեօք նրչափ կը ջանիկ պիտի ըլ-
լայ երբոր ձեզ պէս սիրուն ազգականները տես-
նէ . . . մանաւանդ ձեր զարմանալի նմանու-
թիւնն առաւել եւս սիրտ կը գրաւէ : — Չա-
փաղանց ներողամտութեամբ կը գատէք մեզ ,
տիկին : — Սմենեւին ոչ . . . եւ անտարակոյս
եմ , որ ինչպէս դէմքով նոյնպէս եւ բարութե
իրարու կը նմանիք : — Այդ բնական է տի-
կին , ըսաւ Ռօզ . մեր ծնած օրէն 'ի վեր վայր-
կեան մը զատուած չենք իրարմէ , ոչ ցերեկ
եւ ոչ գիշեր . . . ի՞նչպէս բնութիւննիս ալ ի-
րարու նման չըլլայ : — Ի՞նչ կըսէք , սիրելի օ-
րիորդներս , վայրկեան մ'անգամ իրարմէ զատ-
ուած չէք : — Երբէք , տիկին :

Եւ երկու քոյրերն զմայլելի ժպիտով մ'ի-
րարու ձեռք սեղմեցին :

« Ուրեմն նրչափ պիտի արտմէիք եւ խեղճ
ըլլայիք արդեօք եթէ իրարմէ զատուէիք .
— Ո՛հ , անհնար բան է , տիկին , ըսաւ Պլանչ
ժպտելով : — Ինչո՞ւ անհնար է : — Վասն զի որո՞ւ
սիրտը կը տանի մեզ իրարմէ զատել : — Ան-
շուշտ , սիրելի օրիորդներս , շատ անխիղճ եւ
չարասիրտ ըլլալու է մէկը որ այդպիսի բան
մ'ընէ : — Ո՛հ , տիկին , յարեց Պլանչ ժպտելով ,
ամենաչար մարդիկ անգամ . . . չեն կրնար մեզ
իրարմէ բաժնել : — Շատ աղէկ , սիրելի փօքրիկ

օրիորդներս , բայց ի՞նչ պատճառաւ : — Ասան
դի այս բանը մեզ հափազանց կը վշտացընէ :
— Մեր մահուանը պատճառ կըլլայ . . . : — Խեղճ
տղայք . . . : — Ասկէց երեք ամիս առաջ մեզ
քանտ դրին , բանտապետը որ խիստ դաժան
մարդ մը կերեւէր , մեզ տեսնելուն պէս ըսաւ .
& Ս.յս տղայքն իրարմէ զատելը՝ երկուքն ալ
սպաննել ուղեւէ . . . : » Ուստի մէկտեղ կե-
ցանք գոհ եւ երջանիկ , որչափ որ կարելի է
երջանիկ ըլլալ բանտի մէջ : — Ս.յդ բանը ձեր
հափազանց գորովասրտութեան ապացոյց մ'է ,
միանգամայն գովեստ մ'է այն անձանց՝ որք
հասկըցեր են թէ դուք մէկտեղ մնալով երջա-
նիկ կըլլաք : »

Ս.յս միջոցին կառքը կեցաւ , եւ կառափա-
րին ձայնը լսուեցաւ որ կը գոչէր . & Հաճեցէք
դուռը բանալ :

& Ս.հա հասանք ձեր սիրելի աղգականուհ-
ւոյն առեր , ըսաւ Ասիփօսա տիկինը :

Դրան երկու փեղկերը բացուեցան եւ կառ-
քըն աւտով ծածկուած բակի մը մէջ մտաւ :
Ասիփօսա տիկինը վարագոյրներէն մէկը վեր առ-
նելով ընդարձակ բակ մը տեսնուեցաւ որուն
լայնքը բարձր պատով մը բաժնուած էր , եւ
որուն մէջ տեղը գաւթի ձեւով կամարայարկ
չէնք մը կար գաճէ սիւներու վրայ , եւ կամար-
այարկին ներքեւ փոքրիկ գուռ մը : Աստին
ներսի կողմը՝ կոխածոյ քարերէ մեծ չէնքի մը
կառարն ու ճակատը կը տեսնուէր , որ Պրիզ

— Միշ փողոցի տնակին հետ բաղդատելով պա-
շտա մ'էր . ուստի Պլանչ միամիտ դմայլմամբ
մ'ըսաւ Ասիւօա տիկնոջ . « Օ՛, տիկին , այս
ինչ գեղեցիկ առն է : — Այդ տեսածնիդ բան
մը չէ . հիմա ներսը պիտի տեսնէք՝ . . . որ բո-
լորովին ուրիշ բան է » պատասխանեց Ասիւօա .
Առաւիարը կառքին դռնակը բացաւ . նրչափ
մեծ եղաւ Ասիւօա տիկնոջ բարկութիւնն ու
երկու որբերուն ալ դարմանքը՝ երբ տեսան Ռա-
պա—ժօա , որ հանճարեղաբար կառքին ետեւէն
եկեր , եւ ահանջները տնկելով ու պոչն երեր-
ցնելով կարծեա թէ ըրած ոճիրը մոռցեր եւ իր
ուշիս հաւատարմութեան համար դուրեւան լսե-
լաւ կ'ապասէր :

Այս ինչ է , գոչեց Ասիւօա՝ ցաւերը նո-
րողուելով . այս դարչելի շունը կառքին ետե-
ւէն եկեր է : — Շիտակը խօսելով , պատուական
շուն մ'է , քաղաքացուհի , ըսաւ կառաւարը ,
ձիերէս քայլ մ'եւ հմնաց . . . կերեւի որ լա-
վարժուած է քալելու . . . անվեհեր եւ խիզախ
կենդանի մը , որ երկու մարդու գէմ կրնայ դնել .
. . . տես ինչ կորովի լանջք ունի : »

Չրաւեալ Մօսիէօի ախրուհին Ռապա—ժօա-
յի վրայ կառաւարին շքայլած անպատեհ գո-
վեստներէն առաւել եւս դրդուելով ըսաւ որ-
բերուն . « Սպասեցէք քիչ մը կառքին մէջ որ-
պէս զի ձեր ազգականուհւոյն քով հանել տամ
ձեզ : »

Ասիւօա տիկնինն արագ քայլերով փոքր գը-
ճ—20

բան քով դնաց ու զանգակը քաշեց : Կրօնա-
ւորի հագուստով կին մը դուռը բացաւ եւ ակ-
նածական խոնարհութեամբ ողջունեց Կռիվօս
տիկինը , որ այս միակ խօսքն ըսաւ անոր . « Ա-
հա բերի երկու աղջիկները : Պ . Տ'էկրիների ար-
քային եւ Իշխանուհւոյն հրամանն այս է որ ան-
միջապէս իրարմէ զատուին եւ խիստ մենա-
բաններու մէջ փակուին . . . կը հասկընանք ,
քոյր իմ , խիստ մենարաններու մէջ . . . ան-
զեղջ մեղաւորներու յատուկ եղած կանոնով ,
— Աերթամ հիմա մեր մօրը (վանամայրին) կխմա-
ցընեմ , ըսաւ կրօնաւորուհին խոնարհելով ,
— Սիրելի օրիորդներս , հրամայէք եկէք , ըսաւ
Կռիվօս երկու աղջիկներուն՝ որք պատեհ ա-
ռիթ դտեր՝ Ռապա—ժօան կը փայփայէին՝ զմայ-
լելով անյողգողդ հաւատարմութեանը վրայ .
— Ձեր աղգականուհի տիկնոջ քով պիտի ել-
նէք . ես ալ կէս ժամէն կուգամ ձեզ կառ-
նում : Կառավար , այդ շունը թող մի տար : »

Ռօզ եւ Պլանշ՝ կառքէն իջած ժամանակ-
նին մտքերնին Ռապա—ժօայի տուած ըլլալով ,
չէին նշմարած աշխատաւոր քոյրը , որ կէս մը
դրանն ետեւը կեցած ըլլալով լաւ չէր տեսնուեր :
Ուստի երկու քոյրերն իրենց կարծեցեալ առաջ-
նորդին կրօնաւորուհիի կերպարանք ունենալը
չէին դիտեր մինչեւ որ զիրենք դռնէն ներս
մտցուց եւ խկոյն դուռը վրանուն գոցուեցաւ :
Երբոր Կռիվօս տիկինը տեսաւ որ աղջիկները
վանքին մէջ փակուեցան , հրաման ըրաւ կա-

ապարհին որ բակէն դուրս ելնէ եւ փողոցի դը-
րան առջեւ սպասէ : Առաւելարն ալ այնպէս ը-
րաւ : Ռապա—ժօա՝ որ Ռօզին ու Պլանչին փո-
քրր դռնէն ներս մտնելը տեսեր էր , հոն վա-
ղեց : Այն ժամանակ Առիւփօա ըսաւ դուրսի դրո-
նապանին՝ որ յաղթահասակ ու կորովի մարդ
մ'էր . « Նիքօլա , տասն Ֆրանք կուտամ քեզ ,
եթէ այս մեծ շունն հիմա աչքիս առջեւ սատ-
կեցընես , որ դաւթին մէջ ընդգծեր է : »

Նիքօլա՝ Ռապա—ժօայի թիկանց լայնու-
թիւնը նկատելով՝ դըռնին երկրցուց եւ ըսաւ .
« Այդպիսի յաղթանդամ շուն մ'սպաննել դի-
րին գործ չէ , տիկին : —Քսան Ֆրանք կուտամ
քեզ , հա՛ , եթէ աչքիս առջեւ սպաննես : —Բայց
ատոր համար հրացան սէտք է , ես միայն եր-
կաթէ կռան մ'ունիմ : —Բաւական է , մէկ հար-
ուածով կրնաս սատկեցընել : —Վերջապէս ,
տիկին , փորձենք , բայց խելքս չկտրեր : »

Այս ըսելով Նիքօլա գնաց իր երկաթէ կը-
ռանը բերելու :

« Ո՛հ , եթէ ուժս բաւէր » ըսաւ Առիւփօա :
Գռնապանը դարձաւ եկաւ իր կռանովը ,
եւ նենդութեամբ ծանր ծանր Ռապա—ժօայի
մօտեցաւ , որ կամարայարկին ներքեւ նստած
էր : »

« Նի , մանչս , հոս եկ , աղւոր շունս » ըսաւ
Նիքօլա ձախ ձեռքովն իր ծունկին դարնելով
եւ աջ ձեռքն ալ կռանն ետեւը պահելով :

Ռապա—ժօա ելաւ կանգնեցաւ , ու շար-

բուժեամբ Նիքոլայի նայեցաւ , եւ անշուշտ
 անոր ընթացքէն ու շարժմունքէն հասկընալով
 որ չար դիտաւորութիւն մ'ունէր, մէկ ցատկե-
 լով հեռացաւ , եւ թշնամեօյն ետեւի կողմն
 անցնելով գործին ինչ ըլլալը լաւ հասկըցաւ եւ
 հեռու կեցաւ :

« Բանը ծակեցաւ , ըսաւ Նիքոլայ . . . շան
 ծնունդը կ'զգուշանայ . . . դիտ քովը չպիտի մո-
 տեցընէ . . . լմնցաւ : — Ի՛նչ ասկիտար մարդ ես
 եղեր, ըսաւ Առիվօս կատարելով եւ հինգ Ֆրանքնոց
 մը նետելով Նիքոլայի . դոնէ դուրս վաճառէ ասկից :
 — Այդ ըսածդ սպաննելէն դիւրին է , տիկինն : »

Եւ արդարեւ Ռատա-Ֆօս հարածուելով եւ
 յայտնի կռուոյ մ' անօգուտ ըլլալն ալ հասկը-
 նալով , բակէն դուրս փողոցն ելաւ . բայց հոն
 կարծես թէ զգալով որ աղաա կամ չէզոք գեանի
 մը վրայ էր , Նիքոլայի ամեն սպառնալեաց հա-
 կառակ՝ դրանն առջեւ ստատեց՝ ինքզինք անոր
 կռանէն պահպանելու չափ հեռու : Աւտի երբոր
 Առիվօս տիկինը՝ կատարութեան մոխիր կարած՝
 իր կառքը կը հեծնէր , ուր Մօսիէօս անշունչ
 դիակը կեցած էր , կակծադին դառնութեամբ
 տեսաւ որ Ռատա-Ֆօս դոնէն քանի մը քայլ
 անդին պառկած էր : Նիքոլայ՝ դոյն անկէ՝ հե-
 աացընելու համար ըրած ջանից անօգուտ ըլ-
 լալը տեսնելով դուռը գոցեց ներս դնաց :

Միակերպ շունն իր սեռին յատուկ եղած առի-
 ճանաչողութեամբ Պրիդ-Միչ փողոցին ճանքան
 գաննելուն փառահ ըլլալով որքերուն կ'սպասէր :

Այսպէս երկու քոյրերը փակուեցան Ս.
Մարիամայ վանքին մէջ, որ ինչպէս արդէն
ըսինք՝ Ստրիէն ար Քարաօվլի փակուած հի-
ւանդանոցին դրեթէ կից էր

Հիմա ընթերցողը Տակօպէսի կնոջ տունը
տանինք : Ծրանասօղ անագորուն անձկութեամբ
էրկանը դառնալուն կ'սպասէր, որ անշուշտ
Սիմօն մարաջախտի աղջկանց ուր դացած եւ
ինչ եղած ըլլայն իրմէ պիտի հարցունէր :

Գ. ԱՌԻՍ Է .

ԽՈՍՏՈՒԱՆԱՀՕՐ Մ'ԱԶՂԵՅՈՒԹԻՒՆԸ

Հաղիս որբերը Տակօպէսի կնոջմէն բաժ-
նուէր էին, խեղճ կիներ ծուռի վրայ դալտի
Չեքմեքանդութեամբ աղօթել սկսաւ : Արտառ-
քը՝ որ երկար ժամանակ բռնած էր՝ առատա-
պէս հօսիլ սկսաւ : Որչափ եւ անկեղծարար հա-
մաղուած էր որ աղջիկները մօտնեւոյ՛ բարեպաշ-
տական պարտաւրանութիւն մը կատարած էր,
բայց եւ այնպէս դողալով էրկանը դառնալուն
կ'սպասէր : Եր մտլեռանդ կուրթեան մէջ կը
հասկընար որ Տակօպէս իրաւացի պատճառնեց
ունէր իրեն դէմ բարկանալու . անկէջ դատ թըշ-
ուառ կիներ այս դժնդակ պարագայիս մէջ կը
պարտաւորէր Ս.կնիթօլի բանտարկութիւնն ալ

Իմացընել իր ամուսնոյն՝ որ դեռ չէր դիտեր :
Սանդուղին կողմէն ոանաձայն մը լսելուն պէս
Յրանսօաղի սիրտը կը թնտար եւ ականջ կը
դնէր . յետոյ վերատին կաղօթէր Չերմեդանդու-
թեամբ՝ աղաչելով զՍատուած որ այս նոր եւ
դժուար փորձը կրելու կարողութիւն սայ իրեն :

Վերջապէս սանդղադիսին վրայ ոտքի ձայն
լսեց . այս անգամ տարակոյս չմնաց որ Տակօ-
պէռ էր . իսկոյն նստաւ , աչուրները սրբեց ,
եւ իր շիտթութիւնը ծածկելու համար մոխրա-
գոյն հաստ կտաւէ պարկ մ'առաւ ծունգին վը-
րայ եւ կարել ձեւացուց . բայց ձեռուրներն
այն աստիճան կը դողային որ հազիւ ճասեղը
կրնար բռնել :

Քանի մը վայրկեան ետքը դուռը բացուե-
ցաւ եւ Տակօպէռ ներս մտաւ : Զօրականին
խիտ դէմքը խոժոռ եւ տխուր էր . ներս մտ-
նելուն պէս գլխարկը բարկութեամբ սեղանին
վրայ նետեց՝ առանց մէկէն 'ի մէկ որբերուն
հոն չըլլալը նշմարելու . այնչափ սիրտը նեղա-
ցած ու միտքն դրաղած էր :

« Խեղճ աղջիկ . . . սոսկալի բան , դռչեց :
— Մայէօն տեսնո՞ր , պահանջեցիր , ըսաւ մէկէն
Յրանսօաղ՝ վայրկեան մ'իբ տաքնապը մոռնա-
լով : — Այո՛ , տեսայ , բայց ի՞նչ վիճակի մէջ .
սիրտ չէր կրնար դիմանալ . սաստկապէս բողո-
քելով պահանջեցի զինքը . բայց պատասխան
տուին ինձ թէ նախ հարկ էր որ ոստիկանու-
թեան գործակալը տուն դար եւ . . . »

Յետոյ Տակօպէս զարմանքով մ'աչուրները
սենեկին չորս կողմը պտըտցընելով ըսաւ կնո-
ջը . « Աղջիկներն ո՛ւր են . . . : »

Տրանսօագի վրայ պաղ սարսուռ մ'եկաւ ,
եւ տկար ձայնով մ'ըսաւ . « Սիրելիս . . .
ես . . . : »

Եւ չկրցաւ շարունակել :

« Ռօղ եւ Պլանչ ո՛ւր են , պատասխան տուր
նայիմ . . . Ռապա—ժօան ալ հոս չէ : — Մի
նեղանար : — Օ'ն , ըսէ նայիմ , արդեօք դրացի
կնոջ մը հետ դո՛ւրս հանեցիր , ըսաւ Տակօպէս
խստութեամբ . դու ինչո՛ւ հետերնին չգացիր ,
կամ եթէ քիչ մը դուրս ելնել պտըտիլ կուզէին ,
ինչո՛ւ չյորդորեցիր որ իմ գալուս սպասէին . . .
դուրս ելնել ուզելնին խելքի դէմ չէ . . . վասն
զի այս տխուր սենեկին մէջ սիրտերնին հարկաւ
կը նեղանայ . բայց կը զարմանամ թէ ինչպէս
խեղճ Մայէօյի վրայ լուր մը չառած դուրս ելեր
են այս աղջիկները՝ որ հրեշտակի սիրտ ունին . . . :
Բայց դուն ալ ինչո՛ւ այդպէս դեղներ ես , յա-
ւելցուց Տակօպէս մօտէն Տրանսօագի երեսը
նայելով . ինչ ունիս , խեղճ կինս , հիւանդ ես : »

Եւ գորովանօք կնոջը ձեռքը բռնեց : Տրանսօ-
ագ՝ ամուսնոյն այս սրտաշարժ կարեկցութեան
խօսքերէն եւս առաւել յուզուելով գլուխը խո-
նարհեցուց եւ լալով անոր ձեռքը համբուրեց :

Զօրականը ձեռքին վրայ վազած ջերմ արա-
սուքն զգալով առաւել եւս վրդովեցաւ ու
գօչեց . « Ինչո՛ւ կուլաս . . . եւ հարցմանս չես

պատասխաներ . . . ըսէ ինձ հասցիմ , ինչ կայ ,
ինչ վիշտ ունիս , սիրելի կինս . . . արդեօք
ծանր եկաւ քեզ հարցընելու թէ ինչու համար
այս սիրելի աղայքը թողուցիր որ դրացի կնոջ
մը հետ դուրս ելնեն : Բայց . . . ինչ ընեմ . . .
մայրերնին մեռած ժամանակ ինձ յանձնեց դա-
նոնք . . . նուիրական աւանդ մ'են . . . ուս-
տի ինչպէս որ հաւն իր վառեակներուն վրայ
կը դողայ , ես ալ գրեթէ ճշմարիտ հաւ մ'եմ
այս աղջկանց համար , ըսաւ իննդալով որպէս
զի Ծրանսօսողի արամութիւնը փարատէ :

— Եւ իրաւունք ունիս սիրելու . . . :

— Օ՛ն , սիրող հանգարտեցու , դիտեա որ
թէպէտ ձայնս հաստ է , բայց սիրտս բարի է
. . . որովհետեւ այդ դրացի կնոջ վրայ վատա-
հու թիւն ունիս , այնչափ վախնալու բան մը չկայ
. . . բայց այսուհետեւ , սիրելի Ծրանսօսողս ,
առանց ինձ հարցընելու այդպիսի բան մի ը-
նէր . . . : Աերեւի թէ աղջիկները քեզնէ խընդ-
րեր են որ քիչ մը դուրս ելնեն պարտին Ռա-
պա—Ժօայի հետ : — Աչ . . . սիրելիս . . . ես . . . :
— Ի՞նչպէս ոչ . . . ով է այդ դրացի կնոջ՝ ո-
րուն յանձնեցիր աղջիկները . ուր տարաւ դա-
նոնք . երբ պիտի բերէ : — Ես . . . չեմ դի-
տեր . . . մտմտաց Ծրանսօսող մարած ձայնով :
— Չես մի դիտեր , գոչեց Տակօպէս բարկանա-
լով . յետոյ ինքզինք բռնեց եւ բարեկամական
յանդիմանութեամբ մ'աւելցուց : — Չես դիտեր
. . . բայց չէիր կրնար պայմանաժամ մը դնել ,

կամ որ լաւագոյն էր՝ դուն անձամբ դուրս հանել զանոնք եւ ուրիշի չյանձնել . . . Արդեօք այս աղայքը քեզ շատ թախանձեցին որ պարտելու ելնեն : Բայց գիտէին որ ես չուտով պիտի դառնայի դայի . ինչո՞ւ չ'սպասեցին ինձ , հէ , Պրանսոն . . . կը հարցընեմ քեզ , ինչո՞ւ չ'սպասեցին ինձ : Պատասխան տուր նայիմ . . . զիս մի ճաթեցընէր , գոչեց Տակօպէռ ռաքը գեւորներ զարնելով . պատասխան տուր . . . »

Պրանսոնդի ճարը կտրեցաւ . այս կրկին կըրկին եւ ստիպողական հարցումները՝ որք վերջապէս ճշմարտութիւնն երեւան պիտի հանէին , երկար եւ դժնդակ տանջանք մ'էին իրեն . Ուստի մէկէն 'ի մէկ վերջացընելու համար որոչեց որ իր ամուսնոյն դաման ծանրութիւնը խոնարհ համբերատարութեամբ կրէ , բայց Աստուծոյ առջեւ երդմամբ իր խոստովանածորը տուած խոստումն ալ բնաւ չլուծէ : Ոտքի վրայ ելնելու կարողութիւն չունենալով , դլուխն առջեւը ձաւց , եւ երկու թեւերն ասթոռին երկու կողմէն վար ձգելով՝ նուաղեալ ձայնիւ մ'ըսաւ ամուսնոյն . « Ինչ որ կուզես ըրէ ինձ . . . բայց աղջկանց ուր դացած եւ ինչ եղած ըլլալը մի հարցընէր . . . վասն զի չեմ կրնար պատասխան տալ քեզ . . . »

Եթէ երկինքէն զօրականին ռախց առջեւ կայծակ իյնէր , այնչափ չէր սարսափէր . երեսին գոյնը նեւեց , սլաղ քրտինք մը ծածկեց կունդ հակաար , եւ աչուրները անկած ու ապ-

շած՝ քանի մը վայրկեան անշարժ եւ մունջ մը-
նաց քար կտրածի պէս :

Յետոյ մէկէն 'ի մէկ այս վաղանցիկ թմրու-
թեանէն սթ ափելով, ցամառալից շարժմամբ կնոջն
երկու ուսէն բռնեց, փետուրի մը պէս դիւրու-
թեամբ վերցուց իր առջիւ կանգնեցուց, եւ
ինքն ալ դէպ անոր ծռելով՝ ահեղ եւ յուսա-
հատ ձայնիւ գոչեց . «Տղայքը : — Ծնորհ . . .
շնորհ . . . ըսաւ Ֆրանսուազ մարած ձայնիւ :
— Ո՞ւր են տղայքը . . . կրկնեց Տակօսլէռ իր
կորովի ձեռաց մէջ Ֆրանսուազի նիհար եւ նկուն
մարմինը զնցելով, եւ որոտընդոստ ձայնիւ աւել-
ցուց . — Պատասխան պիտի տամ, տղայքը :
— Զիս սպաննէ . . . կամ ներէ . . . վասն զի
չեմ կրնար պատասխան առ քեզ, ըսաւ հէք
կինը՝ երկչոտ բնութեանց յատուկ եղած ան-
ընկճելի եւ միանգամայն ողորջ յամառութեամբ,
երբոր համոզուած ըլլան թէ ըրածնին բարի է :
— Թշուառ կի՛ն, գոչեց զօրականը, եւ
բարկութեանէն ցաւէն ու յուսահատութեանէն ին-
քըզինք կորանցընելով՝ կինը բռնեց վեր վեր-
ցուց որպէս թէ գետինը դարնել ու կտոր կը-
տոր ընելու համար . . . : Բայց այս պատուա-
կան մարդն իր քաջութեանը չէր ձգեր վաս-
անգթութիւն մ'ընել : Այս տկամայ կատաղու-
թեանէն ետեւ՝ թող տուաւ կինը . . . :

Ֆրանսուազ ինքզինք չկրնալով ոտքի վրայ
բռնել՝ իր երկու ծնոցաց վրայ ինկաւ, ձեռ-
քերն իրար կցեց, եւ շրթունքին տկար շար-

Ժուճէն տեսնուեցաւ որ կաղօթէր . . . Այն
ժամանակ Տակօպէսի վրայ գլխու պատյա եւ
սպշուժիւն մ'եկաւ , խորհրդածուժիւնը վայր-
կեան մը կորանցուց . այս պատահարն այնչափ
յանկարծական եւ այնչափ անհասկանալի էր , որ
քանի մը վայրկեան սպասել հարկ եղաւ ինքը-
ղինք գտնելու եւ հասկընալու համար թէ իր կի-
նը , հրեշտակի սիրտ ունեցող կինը , որ Սիմօն
մարաջախտին աղջկանց իրեն համար ինչ ըլլալը
քաջ գիտէր , ինչ պատճառաւ արդեօք կըօէր իրեն
թէ « Անոնց վրայ բան մի հարցըներ ինձ , պա-
տասխան չեմ կրնար տալ : » Այս անբացատ-
րելի եւ տապալիչ իրողութեան առջեւ ամե-
նէն զօրաւոր եւ անյողողող միտքերը կը շուա-
րէին կը մ'նային : Զօրականը քիչ մ'ինքղինք
հանդարտեցընելով եւ աւելի պաղարիւնու-
թեամբ այս գործը նկատելով հետեւեալ խո-
հական խորհրդածուժիւնն ըրաւ . « Այս ան-
հասկանալի գաղտնիքը կինս միայն կրնայ բա-
ցարել ինձ . . . ուստի ոչ ձեռք պէտք է
ղինքը եւ ոչ մեռցընել . . . ուրեմն զինքը խօ-
սեցընելու համար ամեն հնարաւոր միջոց գոր-
ծածենք , եւ մանաւանդ ինքղինքնիս դասե-
լու ջանանք : »

Տակօպէս աթոռ մ'առաւ , ուրիշ աթոռ
մ'ալ կնոջը ցուցուց որ դեռ ծուղի վրայ էր ,
եւ ըսաւ . « Նստէ սա աթոռին վրայ :

Ծրանսօսող հլու եւ բեկեալ նստաւ աթո-
ռին վրայ :

« Ահնա , մտիկ ըրէ զիս , ըսաւ Տակօսէա
 օտւղ եւ ընդհատ ձայնիւ , եւ այնպիսի կցկտուր
 արտասանութեամբ՝ որ իր հազիւ դասուած
 բուն անհամբերութիւնը կը յայտնէր . պէտք
 է հասկընաւ որ այս բանը չկրնար այսպէս անց-
 նիլ . . . վրադ բռնութիւն չպիտի բանեցընեմ
 երբէք . . . Քիչ մ'առաջ կիրքս շարժելով
 խատու թեամբ վարուեցայ , բայց դղջացի . . .
 եւ մէկ մ'ալ չպիտի ընեմ . . . ապահով եղիր . . .
 սակայն վերջապէս պէտք է դիտնամ թէ մեր են
 այս աղայքը . . . մայրերնին դանտնք ինձ յանձ-
 նեց , ես ալ Սիպերիոյ խորերէն հոս չբերի որ դու
 ելնես այսօր ըսես ինձ թէ « Ինձ մի հարցըներ . . .
 չեմ կրնար անոնց ուր երթալն եւ ինչ ըլլալն ը-
 սել . . . » Ատոնք խօսք չեն . . . ենթադ-
 րէ թէ Սիմօն մարաջախան հիմա հոս դայ եւ ինձ
 հարցընէ թէ « Տակօսէա , մեր են դու կընե-
 րըս . . . » Ի՞նչ պատասխան պիտի տամ ի-
 րեն . . . ըսէ նայիմ . . . ահա կը տեսնես որ
 հանդարտ ոգւով կը խօսիմ . . . կիրք չունիմ . . .
 ինքզինքդ իմ տեղս դիր . . . ի՞նչ պատասխան
 տամ մարաջախաին , հէ , ըսէ ինձ . . . խօսէ . . .
 — Աւանդ . . . սիրելիս . . .

— Աւաղի բան չկայ , ըսաւ դօրականը ճա-
 կատը սրբելով , որուն երակներն այնչափ ուռեր
 ու ձկտեր էին որ կարծես թէ պիտի ճաթէին . ի՞նչ
 պատասխան պիտի տամ մարաջախաին : — Իմ
 վրայ ձգէ . . . ես ամեն բան յանձն կատնում :
 — Ի՞նչ պատասխան կուտաս : — Արսեմ թէ եր-

կու դեռահասակ աղջիկ յանձնեցիր ինձ, եւ քը
 գուրս ելար եւ ետ դառնալուդ զանոնք հիանե-
 լով ինձ հարցուցիր, եւ ես ալ պատասխանեցի
 թէ չեմ կրնար անոնց ինչ ըլլալը քեզ ըսել:
 — Ա՛ . . . մարաջախան ալ այդ խօսքերով դո՛ն
 կըլլայ, այնպէս չէ, ըսաւ Տակօպէս բուռներն
 ու ժգնու թեամբ ծունկին վրայ սեղմելով: — Գըժ-
 բաղդարար ասկէց ուրիշ պատասխան չեմ կրնար
 տալ . . . ոչ անոր եւ ոչ քեզ . . . թէ եւ մահն
 աչօքս տեսնեմ . . . »

Տակօպէս այս յուսահատ յամառութեան
 խօսքերը լսած ժամանակ նստած տեղէն վեր
 ցատկեց: Համբերութիւնը կը հասնէր, բայց
 չուզելով կրից բորբոքման տեղի տալ եւ սպառ-
 նալեաց դիմել, որոց անօգուտ ըլլալը կ'ըզար,
 մէկէն սաք ելաւ, պատուհաններէն մէկը բացաւ
 եւ իր հրատապ ճակատը ցուրտ օդին ներկայա-
 ցուց: Արքոր դուխը քիչ մը զովանալով հան-
 դարտեցաւ, քանի մը քայլ առաւ սենեկին մէջ
 եւ նորէն եկաւ կնոջը քով նստաւ, որ արտաս-
 ուալից աչքը Գրիստոսի խաչելութեանն ուղ-
 դած էր խորհելով որ անոր ուսին լ'րայ ալ ծանր
 խաչ մը դրած էին:

Տակօպէս նորէն շարունակեց .
 « Ըրած խօսքերէդ կը հասկընամ որ այս
 տղայոց կենացը վտանգ պատճառող դէպք մը
 պատահած չէ: — Ա՛ . . . ոչ . . . փառք Աս-
 տուծոյ, ողջ առողջ են . . . ահա այսչափ կըր-
 նամ ըսել քեզ . . . — Մինանկ դուրս ելան »

— Չեմ կրնար դրուցել : — Արդեօք մէկու մը հետ
 դուրս ելան : — Ա՛հ , սիրելիս , ինչո՞ւ այդպէս
 երկար բարակ հարցումներ կընես ինձ . չեմ
 կրնար պատասխան տալ : — Պիտի դառնան դա՞նս
 — Չեմ գիտեր »

Տակօպէս ցատկեց ոտքի վրայ ելաւ . նորէն
 համբերութիւնն հատնելու վրայ էր : Աննեկին
 մէջ քանի մը քայլ պտըտելէ ետեւ՝ դարձեալ
 եկաւ նստաւ :

« Բայց վերջապէս , ըսաւ կնոջը , այս տղա-
 յոց ուր գացած ըլլալն ինձմէ պահելէդ շահ մը
 չկրնար ըլլալ քեզ . ինչո՞ւ չես ուզեր իմացընել
 ինձ : — Ասան գի չեմ կրնար ուրիշ կերպ ընել :
 — Աարժեմ թէ . . . երբոր անանկ բան մը իմա-
 ցընեմ քեզ . . . դոր ըսելու կը պարտաւորեա
 դիս . . . լաւ մտիկ ըրէ , յարեց Տակօպէս խը-
 ոտվեալ ձայնիւ : — Ն՛մէ այս տղայքը փետրվար
 ԱՅ էն օր մ'առաջ քովս չգտնուին , եւ կը տես-
 նես որ ժամանակ ալ չկայ . . . դուն պատ-
 ճառ պիտի ըլլաս որ ես Սիմօն մարաջախախն
 աղջիկները կողոպտող գողի մը գիրք պիտի ու-
 նենամ . կը հասկընաս , գող պիտի համարուիմ ,
 ըսաւ զօրականն յուզեալ ձայնիւ . յետոյ յա-
 ւելցուց այնպիսի աղիողորմ կերպով մը որ Յը-
 բանսօաղի սիրտը կտրտեցաւ . — Նւ սակայն ինչ
 որ պարկեշտ մարդ մը կրնար ընել՝ ամենն ալ
 ըրի այս խեղճ տղայքն հոս բերելու համար
 Գու չես գիտեր թէ ճանքան ի՛նչ քաշեցի այս
 խեղճ աղջկանց համար . ո՛րչափ հոգ , ո՛րչափ

սիրտհասնում կրեցի . . . վասն զի վերջապէս . . .
ղօրական մարդ մը , այս երկու աղջկանց հոգը
վրաս առած . . . մի միայն արիութեամբ եւ անձ-
նութիւնութեամբ կրցայ գլուխ հանել . . . եւ եր-
բոր այսչափ աշխատութեանցս փոխարէն կը
կարծէի թէ պիտի կրնամ անոնց հօրն «Մհա դա-
ւակներդ» ըսել . . . : Տակօպէս չկրցաւ խօս-
քը շարունակել . . . եւ իր առջի բերան զգա-
ցած բուն զայրութիւն ցաւաղին փղծկում մը
յաջորդելով լալ սկսաւ :

Ճրանսօաղ՝ Տակօպէսի մոխրագոյն ընչաց-
քին վրայ ծանր ծանր վիժող արտասուաց կայ-
լակները տեսնելով իր հաստատամտութիւնը
վայրկեան մը դրդուեցաւ . բայց խոստովանա-
հօրը տուած երդումը յիշելով , եւ վերջապէս
որբերուն յաւիտենական վրկութիւնը մտածե-
լով , իր տկարամտութիւնը մեղայրել սկսաւ ,
որուն համար Տիւպօս արբայէն սաստիկ յան-
դիմանութիւն պիտի լսէր : Ուստի երկչոտ ձայ-
նով մ'ըսաւ .

«Ի՞նչպէս կրնան քեզ ամբաստանել թէ ար-
դայքը կողոպտեր ես :

—Մտիկ ըրէ , ըսաւ Տակօպէս ձեռքովն
աչքը սրբելով . այս աղջկանց Սիպերիոյ խորե-
րէն այնչափ յողնութիւն կրելով եւ վտանգաց
դիմագրաւելով հոս դալը մեծ շահեր եւ դուցէ
ամբաւ հարստութիւն մը ձեռք բերելու հա-
մար է . . . եւ եթէ փետրվար 13 ին . . . հոս
. . . Փարիզ , Սէն—Ճրանսօա փողոցը ներկայ չը-

դանուին, ամեն բան պիտի կորնչի, եւ յան-
ցանքն իմ վրայ պիտի մնայ . . . ինչու որ քու
ըրածիդ պատասխանատուն ես եմ :

— Փետրվար 13 . . . Ծրանսօս փողոց . . .
Պարրիէլի պէս . . . ըսաւ Ծրանսօսդ դարմայ-
մամբ էրկանը երեսը նայելով : — Պարրիէլն ի՞նչ
եղեր է, հարցուց Տակօպէս : — Երբոր Պարրիէ-
լը փողոցէն դուայ ու տունը բերելով ինձ որդեգիր
ըրի . . . խեղճ մանուկին ճիտը պղնձէ միտալ
մը կախուած էր . . . : — Պղնձէ միտալ մը, դո-
չեց զօրականն ապշելով, վրան ալ այս խօսքերը
փորագրուած . « Փարիզ պիտի գանուիս 1832
փետրվար 13ին Ծրանսօս փողոցը : — Այո՛, ճշշ-
գիւ այդպէս փորագրուած էր, բայց դուն ուս-
կի՞ց գիտես . . . : — Ուրեմն Պարրիէլ ալ, ը-
սաւ զօրականն ինքնիրեն . յետոյ մէկէն յաւել-
ցուց . — Պարրիէլ գիտէ որ վրայէն այդ պիտի մի-
տալ մը գտած ես : — Ժամանակաւ խօսած եմ ի-
րեն . ասկէց դատ՝ ծոցէն ալ օտարազգի լեզուով
դրուած թուղթերու ծրար մ'ելաւ, դոր խոստո-
վանահօրս՝ Պ . Տիւպօս արքային յանձնեցի որ
քննէ : Ժամանակէ մ' ետեւ խոստովանահայրս
ըսաւ թէ այն թուղթերը կարեւոր բաներ չեն :
Յետոյ երբոր Պ . Ռօտէն անուն բարեպաշտ եւ ո-
ղորմասիրտ անձ մը Պարրիէլի կրթութեան հոգը
վրան առնելով կղերական վարժարանը դրաւ : Պ .
Տիւպօս արքան այն թուղթերն ու միտալը Պ . Ռօ-
տէնի յանձնեց, եւ այնուհետեւ ամենեւին բան
մը չլսեցի անոնց վրայ : »

Նրբոր Ֆրանսոսաց իր խոստովանահօր խօսքն ըրաւ, կարծես թէ դօրականին մտքին մէջ յանկարծ փայլակ մը ծագեցաւ: Թէպէտ Գարբիէլի ու որբերուն բոլորաթիքն երկար ժամանակէ 'ի վեր լարուած որոգայթներն հասկընալէ հետեւ էր, բայց աղօտ կերպիւ զգաց որ իր կիսը խոստովանարանի ծածուկ ազդեցութեան ներքեւ ըլլալու էր: ազդեցութիւն մը՝ որուն նպատակն ու վախճանն արդարեւ չէր հասկընար, բայց գոնէ որբերուն նկատմամբ Ֆրանսոսացի յամառ լռութիւնը մատամբ մը կը բացատրէր:

Չայրկեան մը խորհելէ ետեւ՝ ոտքի վրայ ելաւ, եւ ծուռ ծուռ կնոջն երեսը նայելով ըսաւ. « Այս բաներուն մէջ . . . կարդաւ որի մաս կայ: — Ո՞նչ ըսել կուզես, սիրելիս . . . : — Ըսել կուզեմ թէ դուն այս աղայքն ինձմէ պահելէ դընաւ շահ մը չունիս. դուն աշխարհի ամենէն բարեսիրտ կիսնն ես. կը տեսնես քաշածս, եթէ քու խելքովդ շարժելիք, անշուշտ կը գթայիր իմ վրայ . . . : — Բայց սիրելիս . . . : — Ըսի եւ նորէն կըսեմ. այս բանին մէջ խոստովանարանի հոտ կայ. դու դիս եւ այս աղայքը խոստովանահօրդ զոհելու ելեր ես. բայց . . . լաւ խորհէ ըրածիդ վրայ . . . : Ես հիմա կերթամ անոր ուր ըլլալը կիմանամ . . . եւ կը հասկըցընեմ անոր թէ իմ տանս մէջ խառնուողն ես եմ թէ ինքը, եւ եթէ պատասխան չտայ, գոչեց դօրականն սպառնալից ձայնիւ, ես դայն

խօսեցրին: Ելու ճանքան դիտեմ . . . : — Ո՛հ, տէր
Սասունած, գոչեց Յրանսօաղ սարսափելով եր-
բոր այս ամբարիշտ խօսքերը լսեց . քահանայ
է . . . խորհէ մէկ մը . . . քահանայ : — Ս, յնպի-
սի քահանան որ տանա մէջ խռովութիւն մատ-
նութիւն եւ թշուառութիւն կը ձգէ, անըզ-
գամ մ'է . . . որմէ կրնամ համար պահան-
ջել ինձ եւ իմ մարդոցս հասուցած հարութեա-
նը . . . ուստի ըսէ նայիմ ո՛ւր են տղայքը . . .
ապա թէ ոչ՝ գիտցած եղիր որ հիմա պիտի եր-
թամ խոստովանահայրդ գանեմ ու անոր հար-
ցրնեմ : Հոս վատ մեքենայութիւն մը կայ, ու
բուն անգիտաբար մեղօակից եւ, թշուառ կին,
. . . բայց եւ աւելի կուզեմ ուրիշի մ'օձիքէն
բռնել քան թէ քու : — Սիրելիս, ըսաւ Յրան-
սօաղ ողոր, եւ անվրդով ձայնիւ . շատ կը սը-
խալիս եթէ կը յուսաս որ այդպէս խոսութեամբ
կրնաս այնպիսի պատկառելի ծերունուոյ մ'աչ-
քը վախցրնել, որ քան տարիէ 'ի վեր հոգւոյս
փրկութեան առաջնորդն է : — Տարիքն ստակ
չընէր . . . : — Ո՛հ, ո՛ւր կերթաս սիրելիս,
այդ ի՛նչ դարհուրելի գէմք է : — Սկեղեցիդ
կերթամ . . . հոն անշուշտ քեզ կը ճանչեն . . .
խոստովանահայրդ պիտի գանեմ եւ նայինք ի՛նչ
կրնեմ : — Սիրելիս, կաղաչեմ, Սասունծոյ սի-
րոյն, գոչեց Յրանսօաղ սարսափելով եւ Տա-
կօպէսի ճանքան կարելով որ գէպ 'ի գուռը
կը վազէր . խորհէ մէկ մը ի՛նչ ծանր բան է ը-
նելիքդ . . . քահանայի մը վրայ կուռի եր-

Թալ . . . չես գիտեր թէ վերապահեալ մեզք՝
մ'է այդ :

Տակօպէսի կիսն իր սլարդմտութեամբը կը
կարծէր թէ ասկէց աւելի անարկու բան մը չէր
կրնար ըսել իր էրկանը . բայց զօրականն ա-
մենեւին ականջ չկախելով կիսը մէկդի հրեց ,
եւ սաստիկ բարկութենէն գլխարկն անգամ
մոռնալով առնուլ , երբոր բաց գլխով դուրս
կելնէր , դուռը բացուեցաւ եւ ոստիկանու-
թեան տեսուչը ներս մտաւ Մայէօին եւ ոստի-
կանութեան գործակալին հետ՝ որ աղջկան ձեռ-
քէն առած ծրարը կը բերէր : Ոստիկանութեան
տեսուչն է , ըսաւ Տակօպէս մէջքի պաշտօնա-
կան դօտիէն ճանչելով . ն՛հ , շատ աղէկ . աս-
կէց աւելի յարմար ժամանակ չէր կրնար դալ : »

ԳԼՈՒԽ Ը .

ՀԱՐՅԱՓՈՐՁ

« Ֆրանսօսադ Պօտուէն տիկինն ո՛վ է , հար-
ցուց տեսուչը : — Ես եմ , պարոն . . . ըսաւ
Ֆրանսօսադ . յետոյ Մայէօն տեսնելով որ մոխիր
կարած կը դողար եւ չէր համարձակեր յառաջ

* Վերապահեալ կըսուին այն մեզքերը՝ գո-
րրս Պապը կամ անկէ յատուկ արտօնութիւն
ունեցող եպիսկոպոսները՝ միայն կրնան քաւել :

գալ, ձեռուքներն անոր երկնցուց, եւ նն, դրժ-
բաղդ աղջիկ, գոչեց լալով, ներէ . . . ներէ . . .
այս նախատինքն ալ դարձեալ մեզ համար կը-
րեցիր . . . եւ գորովանօք գործաւորուհի աղ-
ջիկը համբուրեց : Այն ժամանակ Մայէօ ու-
տիկանութեան տեսչին դառնալով ասուր եւ
սրտաշարժ ծանրութեամբ մ'ըսաւ . « Ար տես-
նէք . . . պարոն . . . ես գողութիւն ըրած
չեմ : — Ուրեմն, տիկին, ըսաւ տեսուչը Ֆը-
րանսօսադի, այս ծրարին մէջի արծաթէ սկա-
հակը . . . շալը . . . վերմակները . . . : — Ի-
մրս են, պարոն . . . եւ ինձ բարեկամութիւն
մ'ընելու համար էր որ այս սիրելի աղջիկը . . .
այս աղնիւ եւ ամենապարկեշտ աղջիկը հաճե-
ցաւ այս կարասիները գրաւատուէր տանիլ . . .
— Պարոն, ըսաւ խստութեամբ տեսուչը գոր-
ծակալին, ողբալի սխալ մը գործեր ես . . . զոր
պէտք եղած տեղը պիտի խնայընեմ եւ խնդրեմ
որ արժանաւոր պատիժդ կրես . դուրս ել : Յե-
տոյ Մայէօի դառնալով ստուգապէս կարեկից
դէմքով մ'ըսաւ . « օրիորդ, այս անարժան ի-
րողութեան վրայ դժբաղդարար իմ անկեղծ
ցաւակցութիւնս ձեզ յայտնելէ զատ ուրիշ բան
չեմ կրնար ընել . . . Հաւատացէք որ շատ վըշ-
տացայ այս սխալ գործին վրայ՝ որ անշուշտ
խիստ դառն ցաւ պատճառեց ձեզ . . . : — Ար
հաւատամ, պարոն, ըսաւ Մայէօ, եւ շարհա-
կալ եմ ձեզ : »

Այս բտելով Մայէօ կէս մեռելի պէս նրա-

տաւ , վասն զի քաշած այնչափ սրտագողէն
ոչ սիրտ մնացեր էր վրան եւ ոչ ուժ :

Ոստիկանութեան տեսուչը մեկնելու վրայ
էր , երբոր Տակօպէս՝ որ քանի մը վայրկեանէ ՚ի
վեր խոր մտածութեան մէջ կերեւէր , ամուր
ձայնով մ'ըսաւ անոր . « Պարոն տեսուչ . . .
կը խնդրեմ որ վայրկեան մը զիս մտիկ ընէք .
եղելութիւն մը պիտի իմացընեմ ձեզ : — Խօսե-
ցէք , պարոն . . . : — Ըսելիքս խիտա կարեւոր
բան մ'է , եւ դուք ալ իշխանութեան պաշ-
տօնեայ մ'ըլլալնուդ համար՝ ձեր առջեւ
պաշտօնական կերպիւ այս յայտարարութիւնը
կընեմ : — Ես ալ իբրեւ իշխանութեան պաշ-
տօնատար մտիկ կընեմ ձեզ , պարոն : — Դեռ
երկու օր է որ Փարիզ հասայ Ռուսաստանէն՝
հետք երկու մանկամարդ աղջիկ բերելով , զորս
մայրերնին . . . Միտօն մարաջախտի կիներն ինձ
յանձնած էր . . . : — Լինելի դո՛ւքն է Միտօն
մարաջախտ ըսածնիդ , հարցուց տեսուչը զար-
մացմամբ : — Այո՛ , պարոն . . . երէկ . . . ստի-
պողական գործի մը համար աեղ մ'երթալու
պարտաւորուելով , աղջիկներն հոս թողու-
ցի . . . : Այս առաւօտ , իմ բացակայութեանս
ժամանակ հոսկէց աներեւոյթ եղեր են . . . եւ
ես ստուգութեամբ գիտեմ ո՛վ է այս բանն ը-
նողը . . . : — Սիրելիս . . . դուզեց Ծրանսօտը
դող ելնելով . . . : — Պարոն , ըսաւ տեսուչը ,
ձեր այդ յայտարարութիւնը վերջին առաջնա-
ձանք է . . . առնէ՞ք մարդ կորսուել . . . դու . . .

ցէ իսկ արդեւրափակ պահուիլ . . . բայց լա-
զիտեա . . . : — Աղջիկները ժամ մ'առաջ հոս-
էին . . . պարոն , դարձեալ կրսեմ . . . որ հոս
չեղած ժամանակս վերցուցեր տարեր են . . . :
— Ձեր այդ յայտարարութեան համար սուտ է
չեմ կրնար ըսել , պարոն . . . սակայն այդպի-
սի յանկարծական առեւանդութիւն մը դժուա-
րահաւատալի կերեւի . . . : Մնաց որ՝ ո՛վ ըսաւ
ձեզ թէ այդ աղջիկները չպիտի դառնան դան :
Վերջապէս կասկածնիդ որո՛ւ վրայ է : Բայց մէ-
կու մը դէմ ամբաստանութիւն ընելնէդ առաջ
յիշեցէք որ օրինաց պաշտօնէի մ'առջեւ կը խօ-
սիք . . . : Ասկէց դուրս ելնելէս ետեւ կարեւ-
րի է որ գործը դատաստանի իյնայ : — Իմ ալ
ուզածս այդ է , պարոն . . . ես այս աղջկանց
համար պատասխանատու եմ իրենց հօրը՝ որ այսօր
կամ վաղը կուգայ , եւ պէտք է որ ինքզինքս
արդարացրնեմ անոր առջեւ : — Ար հասկընամ ,
պարոն , այդ ամեն պատճառները . բայց նորէն
անգամ մ'ալ կրսեմ . զգոյշ կեցիք , չըլլայ որ
սխալ կասկածանօք մտքերնիդ մտլորի . . . վասն
զի ձեր ամբաստանութիւնը լսելէս ետեւ . . .
կարելի է որ ձեր ամբաստանած անձին դէմ
անմիջական միջոցներ ձեռք առնում . . . :
Արդ՝ եթէ՞ ձեր ամբաստանութիւնը սխալ ըլլայ
. . . ծանր հետեւանք կունենայ ձեզ համար . . .
անա հետուն չերթանք . . . ըսաւ տեսուչս
յուզեալ ձայնիւ մը Մայէօն ցուցրնելով , կը
տեսնէք անիրաւ ամբաստանութեան մը հետեւ

ւանքը : — Ար լսես , սիրելիս , գոչեց Յրանսօազ
առաւել եւս զարհուրելով Տիւպօա արբային
դէմ Տակօպէնի ունեցած գիտաւորութեան
վրայ , կաղաչեմ , աւելի խօսք մի ընէր . . . »

Բայց զօրականը խորհելով համագուեր էր
որ Յրանսօազ իր խոստովանանքօր ազդեցու-
թեամբը միայն կրնար գործել եւ վերջն ալ
այսպէս լուռ կենալ . ուստի վստահ կերպով մ'
րուաւ . « Ամբաստանեմ կնօջս խոստովանա-
հայրն՝ իբրեւ հեղինակ կամ խորհրդակից Սիմօն
մարաջախտի ազգականց յափշտակուելուն : »

Յրանսօազ ցաւագին հառաչք մ'արձակեց
եւ ձեռուրներովն երեսը ծածկեց . Մայէօ ալ
անոր քով երթալով աստիկել կը ջանար :

Ոստիկանութեան տեսուչը՝ որ Տակօպէնի
ամբաստանութիւնը խորին զարմանքով մտիկ
ըրեր էր , խոստութեամբ ըսաւ անոր . « Բայց
պարոն , ձեր ամբաստանած անձը վերջինս աս-
տիճան ակնածելի պաշտօն եւ կարգ ունեցող
անձ մ'է . . . քահանայ մ'է . . . վստահու-
թեամբ գիտէք որ ըրած ամբաստանութիւնն իդ
անիրաւ չէ . . . : Պարոն . . . ինդիրը քա-
հանայի մը վրայ է . . . ես կանխաւ ըսի ձեզ . . .
լաւ պէտք էր խորհելիք . . . գործը քանի կեր-
թայ կը ծանրանայ . . . : Ձեր ատրիքն ունե-
ցող մարդու մը . . . թեթեւամտութեամբ գոր-
ծել աններելի է . . . : — Անշուշտ , պարոն ,
ըսաւ Տակօպէն անհամբերութեամբ , իմ տա-
րիքս ունեցող մարդ մը քիչ շատ դատողու-

Թիւն ալ կուեննայ . աւետք ինչ է դործը : Արե-
նրս աշխարհի ամենէն բարի եւ պատուաւոր
ամեն է . . . հարցուցէք այս թաղիս մէջ եւ
ամեն մարդ կը վկայեն . . . բայց կրօնամուտ է
քսան տարիէ 'ի վեր ամեն բան իր խոստովա-
նահօր աչօքը կը տեսնէ . . . : Չաւկին վրայ
հողի կուտայ , զիս ալ շատ կը սիրէ , բայց
զաւկէն ալ ինձմէ վեր . . . խոստովանահայրը
կայ միշտ . . . — Պարոն , ըսաւ տեսուչը , այդ ըն-
տանեկան ներքին պարագաները . . . : — Խիստ
կարեւոր են . . . յարեց Տակօպէս , ինչպէս որ
պիտի տեսնէք . . . : Ասկէց մէկ ժամ առաջ
գուրս կելնեմ այս խեղճ Սայէօն աղապելու հա-
մար . . . : Ետ դառնալուս՝ աղջիկներն հոս չի
կային , կը հարցրնեմ կնոջս թէ ուր են , վասն
զի անոր քով թողուցեր էի . . . ծուռգի վրայ
կուգայ լալովու կրտէ ինձ թէ . . . Ինչ որ կուգես
բրէ ինձ . . . բայց աղջիկներուն ինչ եղած ըլ-
լալք մի հարցրնելու . . . չեմ կրնար պատասխան
տալ քեզ : — Չչմարիտ է . . . տիկին . . . դո-
ջեց տեսուչը դարմացմամբ Փրանսօաղի երեսը
նայելով : — Աիրք , սպանալիք , աղաչանք ,
օգուտ մը չըլին , շարունակեց Տակօպէս , ամե-
նուն ալ սրբուհեոյ մը պէս քաղցրութեամբ այս
պատասխանը տուաւ . . . « բան մը չեմ կրնար ը-
սել : » Արդ , պարոն , ես կը պնդեմ թէ կինս
բնաւ չահ մը չունի այս աղայոց անհետանալէն .
ինքը բոլորովին իր խոստովանահօր աղդեցու-
թեան ներքեւ է . . . անոր հրամանաւն ըրած է ,

եւ միայն գործիք մ'է . յանցաւորը մի միայն
խոստովանահայրն է : »

Քանի որ Տակօպէս կը խօսէր , ոստիկանու
թեան տեսուչն առաւել եւս ուշադրութեամբ
Ֆրանսօազի կը նայէր , որ Մայէօի թեւերուն
կրթնած դառնապէս կուլար :

Վայրկեան մը խորհելէ ետեւ , տեսուչը քայլ
մը մօտեցաւ Տակօպէսի կնոջ եւ ըսաւ . « Տիկին
ձեր ամուսնոյն ըրած յայտարարութիւնը լսե-
ցի՞ք — Այո՛ , պարոն : — Ինքզինքնիդ
արդարացընելու համար ի՞նչ ունիք ըսելիք
— Բայց , պարոն , գոչեց Տակօպէս . ես կնոջս
դէմ դատ հունիմ . . . այդ բանը մտքէս հեռու
է . . . իմ դատս խոստովանահօրը դէմ է : — Պա-
րոն , դուք գործն օրինաց պաշտօնէին ձգեցիք
. . . ուստի անոր դիտնալիք բանն է ճշմար-
տութիւնն երեւան հանելու համար պէտք ե-
ղածն ընել Արկին կը հարցընեմ ձեզ ,
օստիկին , յարեց Ֆրանսօազի դառնալով . ինքը-
զինքնիդ արդարացընելու համար ի՞նչ ունիք
ըսելիք : — Աւանդ , ոչինչ , պարոն : — Իրան է որ
ձեր այրը դուրս ելած ժամանակ այդ աղջիկ-
ները ձեր հսկողութեան յանձնեց . — Այո՛ , պա-
րոն : — Իրան է որ ետ դառնալուն զանոնք հոս
չի գտաւ : — Այո՛ , պարոն : — Իրան է որ երբ
հարցուց ձեզ թէ աղջիկներն ո՞ւր են , դուք
պատասխանեցիք թէ այդ մասին չէք կրնար
բան մ'իմացընել իրեն : »

Եւ տատամստ հետաքրքրութեամբ մը

Յրանսօաղի տալիք պատասխանին կ'սպասէր :

« Այո՛ , պարոն , ըսաւ Յրանսօաղ միամիտ
պարզութեամբ , այդպէս պատասխան տուի
էրկանս : »

Ոստիկանութեան տեսուչը տխրազգաց
զարմանքով մը պաշարեցաւ :

« Ի՞նչ կ'ըսէք , տիկին . . . ձեր ամուս-
նոյն այնչափ աղաչանացը , այնչափ թախան-
ձանացն ուրիշ պատասխան մը չկրցի՞ք տալ .
բնաւ տեղեկութիւն մը չուզեցի՞ք տալ . ան-
հաւատալի բան . անկարելի բան : — Սակայն եւ
այնպէս ճշմարիտ է , պարոն : — Բայց վերջա-
պէս , տիկին , այդ ձեզ յանձնուած աղջկունքն
ի՞նչ եղան : — Այդ հարցմանց չեմ կրնար պա-
տասխան տալ . . . պարոն . . . երբոր էրկա-
նքս պատասխան չտուի . . . ուրիշին ի՞նչպէս
կարելի է . . . — Տեսնո՞ք , պարոն , իրաւունք
չունի՞մ . այսպիսի պարկեշտ եւ պատուական
կին մը , խոհական , դպօն եւ անձնուէր կին
մ'այսպէս խօսի . բնական բան է : Դարձեալ
կըսեմ ձեզ , պարոն , թէ խոստովանահօր մատը
կայ այս դործին մէջ . ուստի շուտով եւ աղ-
դուութեամբ անոր օձիքը բռնենք . . . ամեն
բան կիմանանք . . . եւ իմ խեղճ տղայքս ալ
վերստին ձեռքս կը յանձնուին : »

Ոստիկանութեան տեսուչը չկրնալով սրտին
շարժումը դապել , ըսաւ Յրանսօաղի . « Տի-
կին . . . պաշտօնիս պարտականութենէն հար-
կադրեալ խստութեամբ պիտի խօսիմ հիմա ձեզ

հետ . . . : Այս դործն այն աստիճան ծանր է , որ հիմա պիտի երթամ դատաստանական ատեանին իմացընեմ : Գուք կը խոստովանիք որ այդ աղջիկները ձեզ յանձնուեցան , եւ հիմա ինչ եղած ըլլալնին չէք կրնար ըսել . . . : Արդ , լաւ ուշադրութիւն ըրէք ինձ . . . : Եթէ յամառիք եւ անոնց վրայ տեղեկութիւն մը չտաք , անոնց կորսուելուն պատասխանատուութիւնը ձեր վրայ միայն կիյնայ . . . եւ ես ալ ցաւօք սրտի ձեզ բանալը ղրկելու կը հարկադրիմ . . . : — Զի՛ս . . . գոչեց Յրանսօաղ դողալով : — Կինս բանալը ղրկէք , գոչեց Տակօպէռ . . . բնաւ երբէք . . . իմ բողոքս ասոր դէմ չէ , խոստովանահօրը դէմ է . . . : Իմ խեղճ կինս բանալը կէլ : »

Եւ կնոջը քով վազեց որպէս թէ պաշտպանելու :

« Պարո՛ն , ալ ժամանակն անցաւ , ըսաւ ոտականութեան տեսուչը . դուք ձեր գանդատն յայտնեցիք ինձ երկու աղջկանց անհետանալուն վրայ : Ձեր կնոջն ըրած յայտարարութիւններուն նայելով առ այժմ ինքն է միայն յանցաւոր : Ուստի պիտի առնուիմ զինքը տէրութեան օրինապահին քով տանիմ . մնացեալն անոր գիտնալիք բանն է : — Ես ալ կըսեմ ձեզ , պարո՛ն , թէ կինս հոսկէց դուրս չպիտի ելնէ , գոչեց Տակօպէռ սպառնալից ձայնիւ : — Պարո՛ն , ըսաւ տեսուչը պաղ արեամբ , ձեր սրտին ցաւը կը հասկընամ , բայց նոյն իսկ ճշմարտու-

Թեան օգտին համար՝ կը յորդորեմ ձեզ որ չի
հակառակիք իմ ընելիքիս , զոր տան վայրկեան
եսքը նիւթապէս անհնար կըլլայ ձեզ արդե-
լուր : Սյա խօսքերը՝ զոր տեսուչը ծանր հան-
դարտութեամբ մ'ըսաւ , Տակօպէսի խելքը գը-
լուխը բերին :


« Բայց վերջապէս , պարոն , գոչեց , ես կը-
նտջս դէմ բողոք չունիմ . . . — Թող տուր ,
սիրելիս , դիս մի հոգար , ըսաւ նահատակ կի-
նը դիւցազնական յանձնառութեամբ . Տէրը դիս
դժնդակ փորձի մ'ալ ենթարկել կուզէ , ես իր
անարժան աղախինն եմ . . . իր կամացը շնոր-
հակալութեամբ պէտք է հնազանդիմ . եթէ
կուզեն՝ թող բանտը տանին դիս . այն խեղճ
աղջկանց վրայ ինչ որ հոս չըսի , բանտին մէջ
ալ ըսելիք չունիմ . . . — Բայց , պարոն ,
կը տեսնէք որ կնոջս խելքը վրան չէ գո-
չեց Տակօպէս . ի՞նչպէս կրնաք այս վիճակին
մէջ եղող անձ մը բանտարկել . — Չեր ամբաս-
տանած միւս անձին դէմ բնաւ յանցաւորութեան
նշան մը , ապացոյց մը չկայ , եւ անոր աատի-
ճանն իսկ դինքը կը պաշտպանէ : Թող տուէք
ուրեմն որ տիկինը տանիմ . . . Թերեւս առա-
ջին հարցափորձէ մ'ետեւ դարձեալ ձեզ կը դար-
ձունեն : Ար ցաւիմ , պարոն , յաւելցուց տեսու-
չը խռովեալ ձայնիւ , այսպիսի պաշտօն մը կա-
տարելուս վրայ , մինչդեռ ձեր որդւոյն բան-
տարկութիւնն ալ արդէն . . . ձեզ . . . — Հէ ,
գոչեց Տակօպէս կնոջն եւ Մայէօի երեսը նայե-

լով ապշութեամբ, այս ի՞նչ կըսէ . . . որդիս . . .
 — Ի՞նչ, չէի՞ք գիտեր . . . նհ, պարոն . . .
 ներեցէք, ըսաւ տեսուչը դառնապէս յուզուե-
 լով, մեծապէս կը ցաւիմ այսպիսի չարագոյծ
 յայտնութիւն մ'ընելուս վրայ: — Զաւակս . . .
 կրկնեց Տակօպէս երկու ձեռքը ճակտին տանե-
 լով, զաւակս . . . բանտարկուած: — Քաղա-
 դաքական յանցանքի մը համար, որ բարերադ-
 դարար ծանր չէ, ըսաւ տեսուչը: — Ա՛հ, ալ
 չեմ կրնար գիմանալ այս ամեն փորձութեանց որ
 ամեն կողմանէ կը տեղան վրաս, ըսաւ Տակօպէս,
 եւ սրտաթ ափ ինկաւ աթոռի մը վրայ՝ ձեռուը-
 ներովն երեսը ծածկելով

Աղեկառուր հրաժարական ողջոյններէ ետեւ,
 որոց մէջ Ֆրանսօսադ՝ իր մահատագնապ անձ-
 կութեան հակառակ՝ դարձեալ Տիւսյօս արբա-
 յին տուած երդման վրայ անյողդողդ կեցաւ,
 Տակօպէս, արմուկովը սեղանի մը կրթնած, եւ
 այսչափ սրտայուզութիւններէ ընկճեալ, չկըր-
 ցաւ ինքզինք բռնել, եւ դոչեց. «Նրէկ . . .
 կինս . . . որդիս . . . եւ երկու խեղճ որբերս
 քովս էին . . . եւ հիմա, միայնակ . . . նհ,
 միայնակ մնացի . . . »

Նրբոր դորականը սրտակէզ մորմոքմամբ
 այս խօսքերը կարտասանէր, քաղցր ու տխուր
 ձայն մը լսուեցաւ ետեւէն, որ երկչոտ կերպիւ
 մ'ըսաւ: «Պարոն Տակօպէս . . . ես հոս եմ . . .
 եթէ հաճիք՝ պատրաստ եմ ձեզ ծառայել, եւ

ձեր քով կենալ . . . : Այս խօսքն ըստիւ Մա.
յէօ էր :



ՄԱՍՆ ԻՆՆԵՐՈՐԴ

ԼԱ ՌԷՆ ՊԱՔԱՆԱԼ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԲԱՐԵԿԵՆՊԱՆԻ ԽԱՂ

Տակօպէոի կնոջ հարցափորձի տարուելուն հետեւեալ օրը շնորհայտօղ եւ խնձղալից տեսարան մը կը տեսնուէր Շաթլէի հրապարակը տան մ'առջեւ, որուն ստորին եւ առաջին դասիկոնները «Այաթընկեր Հորթ» նշանաբանով ճաշատան մ'ընդարձակ սրահներ էին: Մեծ բարեկենդանին հինգշաբթի գիշերը լրացած էր. քաղմաթիւ այլանդակ եւ գծուծ դիմակաւորներ Օթէլ տը Վիլի (քաղաքապետական պալատ) թաղին մէջի գինետանց պարահանդէսներէն դուրս կելնէին եւ երգելով Շաթլէի հրապարակէն կանցնէին. քայց տեսնելով որ գեաեզրին վրայէն ուրիշ ծպտեալ մարդոց խուճք մը կուգար, առաջինները կանգ առնելով անոնց հասնելուն սպասեցին ուրախութեան աղաղակներով, որպէս զի անպարկեշտ խօսակցութեանց եւ գռեհիկ խեղկատակութեանց մրցում մը բա-

նան, որոց մէջ ականաւոր եղած է վատէ :

Այս քիչ շատ արբեալ բաղմութեան վրայ հետզհետէ ուրիշ շատ մարդիկ ալ աւելցան, որք իրենց արհեստին պատճառաւ առաւօտուն կանուխ ֆարիդի փողոցները պարտելու հարկադրեալ են, եւ ամենը մէկէն յանկարծ հրապարակին մէկ կողմը խռնեցան, այնպէս որ նոյն միջոցին դժգոյն եւ խեղանդամ աղջիկ մ'անկէց անցած ժամանակ՝ բաղմութենէն պաշարուեցաւ : Այս աղջիկը Մայէօ էր, որ առաւօտուն կանուխ ելեր իր կարի վարպետին կերթար քանի մը կտաւեղէն առնելու : Խեղճ գործաւոր աղջկան երկիւղը դիւրաւ կրնայ հասկըցուիլ, երբոր ակամայ այս տաք գլուխ ամբոխին մէջ իյնալով՝ առջի աւուր դժնդակ դէպքը յիշեց : Բայց իր բոլոր ճգանց հակառակ եւ մանաւանդ ինքն ալ խիստ տկար ըլլալով՝ չըկրցաւ քայլ մ'առաջ երթալ, վասն զի նոր եկող դիմակաւորաց խումբն առաջիններուն վըրայ խուժելով, անոնց մէկ մասը մէկ կողմ բաժնուեցան, միւսներն ալ յառաջ մղուեցան, եւ Մայէօ ալ ասոնց մէջ գտնուելով՝ բաղմութեան ալիքներէն քշուեցաւ ու ճաշատան մօտ գտնուող խումբերուն մէջ ձգուեցաւ :

Նորեկ դիմակաւորները միւսներէն լաւագոյն կերպարանք ունէին - ասոնք այն դուարթ եւ աղմկասէր անձանց դասէն էին՝ որք Շօմիէսի, Բրատօի, Քօլիդէի եւ ուրիշ քիչ շատ հերարձակ կաքաւատանց մէջ յաճախ կը տես-

նուրիս , եւ ընդհանրապէս ուսանողներէ , խա-
նութեան օրիորդներէ , վաճառատանց սպասա-
ւորներէ , խառնակեաց աղջիկներէ եւայլն կը
բաղկանան :

Այս խումբը , միւս դիմակաւորաց ծաղրա-
բանութիւններուն պատասխանելէ զատ՝ կար-
ծես թէ մեծ անհամբերութեամբ ուրիշ ջանկաց-
եալ մէկու մը գալուն կ'սպասէր : Հետեւեալ
խօսքերը՝ զոր ծաղրածու եւ ծաղրածուհի ,
փայտակիր եւ փայտակրուհի , եւ ուրիշ իրարու
յարմար զոյգեր մէկ մէկու հետ կը փոխանակե-
ին , անհամբեր բաղձանօք սպասուած անձանց
վրայ դադարիար մը կրնան տալ :

Արեւակուրնին առաւօտեան ժամ եօթնին
համար ապապրուած է : Արդէն իրենց կառքը
հասած ըլլալու էր : — Այո , բայց կերելի որ
Պարանալ թաղուհին Բրատօի վերջին արշաւին
առաջնորդել ուղելով ուշ մնացած է : — Սթէ
այդ բանն իմացած ըլլայի , հոն կը կենացի պաշ-
տելի թաղուհիս տեսնելու համար : — Աօպինէ ,
եթէ մէկ մ'ալ դայն պաշտելի թաղուհիդ կո-
չես , քեզ կը ճանկրտեմ , բայց այս անգամ մի-
այն կը կամրթեմ : — Սէլէսթ , հանդարտ կեցի-
ծնած ժամանակս մօրս ինձ հաղուցած բնական
թուխ բեհեզը կըսեւցընես : — Ինչու համար Պար-
անալը քու պաշտելի թաղուհիդ կը կոչես . . .
ես ինչդ եմ ուրեմն : — Դու ալ պաշտելիս ես ,
բայց թաղուհիս չես . . . վասն զի ինչպէս որ
բնութեան դիշերներուն մէջ մէկ լուսին մը կայ :

այնպէս ալ Յրատօի գիշերներուն մէջ մէկ Պա-
քանալ մը կայ : — Ո՛հ , ի՛նչ ալ աղւոր է . . .
Թանձրամարմին անպիտան մը : — Աօպինէ իրա-
ւունք ունի . թագուհին շատ փառաւոր էր այս
գիշեր : — Եւ շատ ալ դուարթ : — Ես ալ երբէք
գինքն այն աստիճան զուարթ տեսած չունէի :
— Հասկա կերպարանքը սրչափ մարդը կը շուա-
րեցընէ : — Ա՛սպշեցընէ : — Մաղերը փուշ փուշ
կընէ : — Ար շանթահարէ : — Փոշի կը դարձունէ :
— Իրմէ զատ մէկը չկայ նմանը հնարող : — Հա-
սկա կաքաւելը : — Օ՛ , այն , արձակ , ծածանուա
եւ դաշարապառչտ : — Երկնից դտակին ներքեւ
անոր նման Պայատէր (կաքաւիչ Հնդիկ կին)
չկայ : — Աօպինէ , շուտ ըրէ շալս տուր . . . այն-
չափ հաստ մէջքիդ փաթթեցիր որ քուրջ դար-
ձուցիր . չեմ ուզեր դարդերս փճացընել այնպիսի
կոշտ մարդոց համար որ ուրիշ կանայքը Պա-
յատէր կը կոչեն : — Օ՛ն , Սէլէսթ , մի բարկա-
նար . . . չես տեսներ որ թուրքի կերպարանք
մտած եմ , եւ Պայատէրի խօսք ընելս այս կեր-
պարանքիս անյարմար չէ : — Քու Սէլէսթդ ալ
միւս կանանց պէս է , Աօպինէ , Պաքանալ թա-
գուհւոյն վրայ կը նախանձի : — Ար նախանձիմ
մի , ես . դարմանալի բան . . . : Եթէ անոր
պէս անասօթ ըլլալ ուզէի , ինձ համար ալ այն-
չափ կը խօսէին . . . : Վասն զի ինչէն այն-
չափ համբաւ ասացած է . անոր համար որ ծաղ-
րահան մականունն մ'ունի : — Ս, յդ մասին անոր
վրայ նախանձելիք բան մը չունիս . . . ինչո՞ւ

որ քեզ ալ Սէլէսթ կը կոչեն : — Սէլէսթ իմ ա-
նունս է , կօպինէ , դուն ալ գիտես . . . : — Այո ,
քայց երեսդ նայողը մականունն կը կարծէ : — կօ-
պինէ , այդ խօսքդ ալ ետքը կը յիշեցընեմ
քեզ . . . : — Եւ Սաքար ալ կօզնէ քեզ մի առ
մի համրելու , այնպէս չէ : — Անտարակոյս , եւ
դուն ալ դու մարը կը տեսնես . . . մէկը կը թո-
ղում . . . եւ միւսը կը բռնեմ . . . միւս ըսա-
ծրս . . . քեզ մի կարծեր : — Սէլէսթ , դիտ կը
վշտացընես . . . ես ըսել կուզէի քեզ թէ քու
հրեշտակային անունդ հակառակ է փոքրիկ հրա-
շալի դէմքիդ՝ որ Պաքանալ թագուհւոյն դէմ-
քէն աւելի կայտառ է : — Հիմա ալ դիտ շողո-
քորթել կ'սկսիս , անդգամ : — Տանտիրոջս անիծ-
եալ գլխոյն վրայ կերդնում , որ եթէ ուղես ,
դուն ալ Պաքանալ թագուհւոյն չափ կրնաս
վատան երեւոյթ մ'ունենալ , որ այս ալ քիչ
գովեստ չէ քեզ : — Արդարեւ , վատան երեւոյթ
ունենալու մասին Պաքանալ թագուհին գէշ չէ
. . . եւ խրոխտ ալ է : — Ո՞ւր թողունք որ
քաղաքապետական գործակալներն ալ կը մո-
գէ : — Եւ քաղաքապետ գինուորներն ալ կար-
ծես թէ մագնիսական դօրու թեամբ իրեն կը քա-
շէ : — Որչափ եւ սրգողիլ ուղեն . . . վերջա-
պէս կը խնդացընէ զանանք . . . : — Եւ ամենն
ալ « թագուհիս կը կոչեն : — Դեռ այս գիշեր
քաղաքապետական գինուոր մը մոգեց , ճշմարիտ
վարդուհի մը՝ կամ մանաւանդ նորաբոյս վար-
դենի մը՝ որուն ամօթխածութիւնը շուշանէն

ասաջ գրգռեցաւ, երբոր թագուհին իւր հող-
 մածուփ կակաչի պարը կը խաղար: — Ի՛նչ աղ-
 ար հակապար, Քուշ-Թու-Նիւն եւ Պարսնալ
 թագուհին Ռօղ Բօմբօնի եւ Նինի-Մուլէնի հետ
 գէմ առ գէմ:

Եւ չորսն ալ հողմածուփ կակաչներու պէս
 անդադար կը տատանէին: — Աղէկ միտքս ճը-
 գեցիր, Նինի—Մուլէնի համար ըսուածը ճըշ-
 մարիտ է: — Ո՞րը: — Այսինքն թէ գրագէտ
 մ'է որ կրօնքի վրայ տեսրակներ կը շինէ:
 — Այո, ճշմարիտ է: Շատ անգամ վարպետիս
 տունը տեսած եմ, որ իրեն ստակ կուտայ.
 Թէպէտ առուտուրին աղէկ չէ, բայց կատակասէր
 է: — Արօնասէր ալ կը ձեւանայ, այնպէս չէ:
 — Անշուշտ, երբոր պէտք ըլլայ, այն ժամա-
 նակ թեւի հաստութեամբ Պ. Տիւմուլէն մը
 կըլլայ. աշուրները չորս գին կը պարտոցընէ, եւ
 պարսնոցը տնկելով եւ ոտքերը կծկելով կը
 քալէ. բայց գործը լինցընելէ ետեւ կերթայ
 շողիփ պէս պարահանդէսներուն մէջ կը ցնդի,
 որոց համար հողին կուտայ, եւ ուր կանայք
 ալ գինքը Նինի—Մուլէն անուանած են, ա-
 սոր վրայ աւելցուր Չուրի պէս գինի խմելն ալ,
 եւ այն ժամանակ ինչ ծաղիկ ըլլալը կը հակը-
 նատ: Բայց ստոնց հետ մէկ տեղ կրօնական լը-
 բաղբայ մէջ ալ յօգուածներ կը գրէ, այնպէս որ
 սուտ ջերմեռանդները որոց շատ անգամ քիթէն
 կը բռնէ ստանց ինք բռնուելու, անոր անուամ-
 քը կերպնուն: Տեանելու է իր յօգուածներն ու

տեարակները (բայց մինակ տեաներու է՝ եւ ոչ
կարգալու) . ամեն երեսի մէջ՝ սասանային եւ
անոր եղջիւրներուն վրայ , ամբարշտաց եւ յե-
ղափոխականաց համար պատրաստուած բոցե-
րուն վրայ , եպիսկոպոսաց իշխանութեանը վը-
րալ , Պապին դօրութեանը վրայ կը ճառէ . . .
նր մէկն ըսեմ . . . Նինի—Մուլէնի առասպել-
ները . . . առած ստակին փոխարէն առաս-
պել կը ծախէ . . . : — Ասկէց դատ վեր-
ջին ծայր ալ գեղեցիկ է . . . հողմածուփ
կակաչի հակապարին մէջ ինչ թեթեւ քայլա-
փոխներ կանուր Ռօզ—Բօմբօնի հետ : — Ն-
ինչ վայելչաձեւ գլուխ մ'ունէր իր հոռմէական
սաղաւարտովն եւ եզերքը դուրս դարձած եր-
կայն կօշիկներովը . . . : — Ռօզ—Բօմբօն ալ
չատ աղէկ կը պարէ . իր պտոյաները բանաս-
տեղծական են : — Նւ ծածանմունքը երեւա-
կայական : — Այն , բայց Պաքանալ թագուհին
վեց հազար ոտք բարձր է հասարակ ծածան-
մանց մակերեւոյթէն . . . այս իրիկուան հող-
մածուփ կակաչի պարը մտքէս չելներ : — Պաշ-
տելի բան էր : — Յարգելի էր : — Սյսինքն եթէ
եւ ընտանեաց հայր ըլլայի , զաւակացս կրթու-
թիւնն անոր կը յանձնէի : — Սյդ պարին առ-
թիւ էր որ քաղաքապետական զինուորը՝ գրը-
գրուեալ վարդուհիի պէս կարծրելով նեղացաւ :
— Ստոյգ է որ քայլերը քիչ մ'արագ էին :
— Խիստ եւ սնդագոյն էին . այս պատճառաւ
քաղաքապետական զինուորը քովը գնաց ու ը-

աւ . « Ի՞նչ է այդ , թաղուհին , դիտմամբ
այդպէս կը խաղաս : — Ոչ , ամօթխանձ պատե-
րազմող , պատասխանեց թաղուհին , եւ ամեն
խրիկուն անդամ մ'այս փորձը կրնեմ , որպէս զի
ծերութեանս ժամանակ լաւ կարենամ պարել .
այս ըրածս իղձ մ'է որպէս զի գնդապետի աս-
տիճան ստանաս . . . : »

— Ի՞նչ արտառոց աղջիկ է : Ես չեմ կար-
ծեր որ մինչեւ վերջը Քուշ-Թու-Նիւի հետ շա-
րունակէ : — Ղաան զի ժամանակաւ բանոր
մ'էր : — Ի՞նչ անխելքութիւն : Նթէ մեզ պէս
ուսանող կամ վաճառատան մանուկ ըլլայ ու
խրոխտանայ՝ արժէ . . . ոչ . եւ կը զարմանամ
թաղուհւոյն հաւատարմութեան վրայ . . . :
— Յիշաւի , արդէն երեք չորս ամիս եղաւ . . . :
— Թաղուհին զայն խենդի պէս կը սիրէ , ան
ալ թաղուհին անբանի պէս : — Կրարու հետ
խօսակցութիւննին արդեօք որչափ ծիծաղելի
է : — Երբեմն կը հարցընեմ եւ ինձ թէ Քուշ-
Թու-Նիւն ուսկից կը գանէ այսչափ ծախք ը-
րած ստակը . . . : Կերեւի թէ այս գիշերուան
ծախքն ալ ան ըրաւ . երեք հատ քառաձի կառք
եւ առաւօտեան ճաշ քսան հոգիի համար՝ տաս-
նական ֆրանքէն : — Կրտեն թէ ժառանգու-
թիւն ձեռք բերեր է . . . : Այս պատճառաւ , Նի-
նի-Մուլէն՝ որկոչունքներու եւ դուարձութեանց
հոտը շուտով կառնու , այս գիշեր բարեկամա-
ցաւ անոր հետ . . . միանգամայն Պաքանալ
թաղուհւոյն վրայ ալ անպարկեշտ դիտաւորու-

Թիւններ ունի անշուշտ : — Ճշմարիտ է . բայց
չատ արեղ է ինքը . եւ կանայք ալ կուզեն ա-
նոր հետ պարել , որպէս զի հանդիսականք
խնդարէն ճաթին : Աղածն ու ըլլալիքն այս է .
Փոքրիկ Ռօզ—Բօմբօնը որ այնչափ սիրուն է ,
իր ուսանող սիրելւոյն բացակայութեան ժամա-
նակ զայն իրեն հակող կամ պահապան ընտրեց
իրրեւ անկասկածելի մարդ : — Ա՛ . . . կառ-
քերն ահա կուգան , կառքերը՛ , դռչեց բազ-
մութիւնը միաձայն :

Մայէօ՛ դիմակաւորաց քով կենալու հար-
կադրեալ ըլլալով՝ այս խօսակցութիւնը ծայրէ
ծայր լսել էր ջաւելով , վասն զի խօսքն իր քրոջը
վրայ էր , զոր երկար ժամանակէ՛ ՚ի վեր չէր
տեսած : Պաքանալ թագուհին չարասիրտ աղ-
ջիկ մը չէր : Բայց Մայէօյի յետին խեղճութեան
վիճակը՝ որուն ժամանակ մը մասնակից ըլլալէ
ետեւ չէր կրցել դիմանալ , խիստ դառն տրիս-
րութիւն կը պատճառէր այս ուրախասէր աղջ-
կան . եւ թէպէտ քանիցս անգամ իւր քրոջն
օգնութիւն ընել ուղած էր , բայց Մայէօ այն
օգնութեան պատուաւոր վաստակէ յառաջ ե-
կած չըլլալը գիտնալով չէր ընդունած . այս
պատճառաւ Պաքանալ ալ ետ կեցեր էր ուրիշ
անգամ այսպիսի առաջարկութիւն մ'անոր ը-
նելէ :

« Կառքերը . . . կառքերը » աղաղակեց
նորէն բազմութիւնն ուրախութեամբ յառաջ
վազելով , այնպէս որ Մայէօ՛ առանց ուզելու՝

նորեկ դիմակաւ որաց անցնիլը տեսնելու փութացող բազմութեան առջեւի կարգին մէջ դրանու եցաւ : Եւ արդարեւ հետաքրքրաշարժ տեսարան մ'էր : Չիաւոր մարդ մը՝ աւերհանդակի կերպարանք մտած, արծաթով բանուած կապոյտ դդեռա մը հագած, ետեւէն ալ մեծ պոչ մը ձգած՝ որուն ծայրէն բռնկած վառօղ կը բղխէր, դլուխն ալ երկայն ժապաւէններով փեղոյր մ'դրած՝ առաջին կառքին առջեւէն կերթար՝ ձեռքի խարազանը ճարձատեղընելով եւ բարձրաձայն դռչելով . « Ճանրայ բացէք Պաքանալ թաղուհւոյն եւ իր սղախատականաց : »

Ետեւէն եկող բաց կառքին մէջ՝ դոր չորս վատուժ ձի կը քաշէին վրանին երկու սասանայակերպ կառավարներով, շեղջակոյտ մը բարձրացած էր արանց եւ կանանց, որը նրստած, որը կանգնած, որը մէկ մէկու վրայ հեծած, ամենն ալ անճոռնի եւ խենդ ու խելառ կերպարանքով . անհաւատալի խառնուրդ մը պայծառ դոյներու, ծաղիկներու, ժապաւէններու, դառեկներու եւ ուրիշ ոսկեփայլ նիւթերու : Այս այլանդակ ձեւոց հանդերձանաց եւ պրծնադարդութեանց խառնուրդին մէջէն՝ անհեթեթ կամ վայելուչ, դեղեցիկ կամ ազեղ դլուխներ դուրս ցցուած էին, ամենն ալ յիմար արեւոցութեամբ տաքցած, եւ ամենը մէկէն մոլեռանդ սքանչապմամբ մը դէպ 'ի երկրորդ կառքը դարձած, ուր Պաքանալ թաղուհին վեհապետարար բազմած էր . բազմութիւնն ալ անդադար դին-

քը կողջուէր . Ահողէ թաղուհին Պաքանալ ըստ
Այս երկրորդ բայ կառքին մէջ՝ Հողմա-
ծուի կակաչի հոչակաւոր կաքաւին շորս պա-
րագլուխները կային . Նինի—Մուլէն , Ռօղ—
Քօմբօն , Քուշ-Թու-Նիւ եւ Պաքանալ թա-
ղուհին :

Տիւմուլէն՝ կրօնական մատենադիրը՝ որ իր
պաշտպանն եղող Պ. Ռօտէնի բարեկամաց չափ
եւ անոնցմէ աւելի Սէնթ—Քօլօմպ տիկնոջ վրայ
ազդեցութիւն ունենալու կաշխատէր , Տիւ-
մուլէն՝ որ Նինի—Մուլէն մականունն ստացած
էր , կառքին առջեւի բարձերուն վրայ կանգ-
նած՝ սքանչելի պատկերի մը նիւթ կրնար ըն-
ծայել Քալօ կամ Ատլարնի պատկերհաններուն,
մանաւանդ Ատլարնիի , այն մեծանուն պատ-
կերհանին՝ որ ճարտար ծաղրանկարի գերաս-
քանչ երեւակայական ազտ ճաշակին եւ խոյ-
թիչ աշխոյժին հետ Սկարթի շնորհքը բանաս-
տեղծութիւնն ու նրբութիւնը կը լծորդէր .
Նինի—Մուլէն՝ որ գրեթէ երսուն եւ հինգ տա-
րու կար , արծաթապատ թուղթէ հռոմէական
սաղաւարտ մը դրած էր գլխուն ետեւօքը . եւ ա-
նոր մէկ քովը կարմիր փայտէ կոթով եւ վրան
սեւ փետուրներու մեծ փունջով աւել մը խո-
թած էր , որ անոր չափազանց լուրջ տես-
քը վայելչապէս կ'ամօքէր . Սաղաւարտին ներ-
քիւ՝ ընտիր գլխիներու բարի ողիով տաք-
ցած ամենակարմիր եւ ամենազուարթ երես
մը կը տեսնուէր : Մեծ ու անկուած թիթ մը

որուն նախնական ձեւն համեատարար կը ծածկուէր կարմիր եւ կապոյտ պաշարաց առատ բորբոսներով, այս լերկ եւ անմորուք երեսին վրայ ծաղրական ազդուութիւն մը կաւելցունէր, եւ հաստ ու դուրս դարձած շուրթերով բերան մ'ալ հիանալի զուարթութիւն մը կուտար, որ ճակտին ներքեւ զոլած մոխրագոյն խոշոր աչաց մէջ փայլած ուրախութեան լուկը յարմարէր:

Այս Սիլէնի փորով ուրախ—զուարթ մարդը տեսնողը կը հարցընէր ինքնիրեն թէ ի՛նչպէս մինչեւ զարդ թերեւս հարիւր անգամ դիտին մէջ չէր խողած այն լեղին, այն մաղձը, այն թոյնը՝ որ իր տեսրակներէն կը կաթէր անդրալեռնականութեան թշնամիներուն դէմ, եւ ի՛նչպէս իր կաթ ոլիկ հաւատքը կըրնար անյողգողք եւ անարատ մ'նալ այս սպանգարամետական եւ կաքաւամոլ ծայրայեղութեանց մէջ: Այս հարցման պատասխանն անհրնարին կերեւէր եթէ չխորհուէր որ շատ անգամ ամենէն վատ եւ ամենէն նողկալի դերեր խաղցող կատակերգակները խիստ բարի մարդիկ են:

Յուրաքանչեւ սաստիկ ըլլալուն, Նիւի—Մուլէն կուրծքը բաց կրկնոց մը հադեր էր, որուն ներքեւէն ձկան թեփաւոր մորթի ձեւով դրանն եւ մարմնոյ գունով փաթ թոցը կը տեսնուէր, որ մէջքէն մինչեւ սրունքները կիջնէր եւ կոշիկներուն դուրս դարձած դեղին եզերքովը

մէկէն կը կտրուէր : Աստ քին դէպ 'ի առջեւը
ծած' վայրենի աղաղակներ կարձակէր , որոց
մէջէն մերթ ընդ մերթ այս բառերը կը լսուէին .
« Ահցցէ Պաքանալ թագուհին » . յետոյ ձեռ-
քը բռնած մեծ շնչան մ'արագ արագ դար-
ձունելով կը ճանչեցընէր :

Քուչ-Թու-Նիւ՛ Նինի—Մուլէնի քովը կանդ-
նած՝ ճերմակ մետաքսէ դրօշակ մը կը ծածա-
նեցընէր , որուն վրայ այս խօսքը գրուած էր .
« Սէր եւ ուրախութիւն առ թագուհին Պաքա-
նալ : » Քուչ-Թու-Նիւ գրեթէ քսան եւ հինգ
տարեկան կար , խարտեաչ մորուքով շրջանակ-
եալ հանճարեղ եւ դուարթ դէմք մ'ունէր
քնհատութենէ եւ զեղխութենէ նիհարցած ,
որուն վրայ անհողութեան , համարձակութեան
եւ հեզնիչ ծաղրածութեան զարմանալի խառ-
նուրդ մը կը տեսնուէր . բայց վատ կամ չար
կրից նշան մը դեռ չկար . մէկ խօսքով՝ Փարիզ-
ցիի կատարեալ պատկեր մ'էր՝ այն նշանակու-
կութեամբ որ ընդ հանրապէս կը տրուի այս բառին՝
թէ բանակի մէջ , թէ գաւառաց մէջ եւ թէ պա-
տերազմական ու առեւտրական նաւուց մէջ :
Թէպէտ եւ գովեստ մը չէ այս , բայց թշնամանք
ալ չէ . մակդիր մ'է՛ որ միանգամայն հպերանք
դմայլու՛մ եւ վախ կը պարունակէ . վասն զի այս
նշանակութեամբ՝ եթէ Փարիզցին շատ անգամ
ծոյլ եւ անզուսպ է , գործի մէջ յաջողակ , վը-
տանդի մէջ անվեհեր , եւ միշտ սարսափելի
կերպով հեզնիչ ու ծաղրածու է : Քուչ-Թու-Նիւ

այ փառաւոր կերպարանք մը մտած էր . ար-
ծաթ կոճակներով սեւ թաւիշէ զգեստ մը ,
բոսորադոյն բաճկոն մը , լայն կապոյտ շերտե-
րով տափատ մը , մէջքը լաճոտի ձեւով շալ
գօտի մը՝ ծայրերը վար կախուած , ծաղիկնե-
րով ու ժապաւէններով դարդարուած փեղոյր
մը : Այս կերպարանքը խիստ լաւ վայլեր էր
իր արձակ եւ ճապուկ իրանին : Աստ քին ներ-
սի կողմը Ռօզ — Բօմբօն եւ Պաքանայ թաղու-
նին կանդնած կեցեր էին բարձերու վրայ :

Ռօզ — Բօմբօն՝ տանն եւ կօթն տարեկան
աղջիկ մ'էր՝ առաջ ծոպադործ , եւ ամենա-
սիրուն փոքրիկ գէմք մ'ունէր . փայտակրի կեր-
պարանք մտած էր խիստ վայելչայարմար կեր-
պով . գլուխը ճերմակ փոշիով ծածկուած կեղ-
ծամ մ'ունէր եւ անոր վրայ կանանչ սև նարինջ
դունով եւ արծաթ ժապաւէններով ոստիկա-
նութեան սէգ զլխարկ մը քովքնափ դրած էր ,
որով իր սեւ աչքերուն պայծառութիւնն եւ կլոր
այտերուն կարմրութիւնն առաւել կենդանու-
թիւն կ'ստանային : Այլը նարինջադոյն փողկապ
մ'ունէր գօտիին պէս երկայն ծայրերով . բայ
կանանչ թաւիշէ արծաթահոռ զգեստը նեղ
բաճկոնին պէս մարմնոյն փակած ըլլալով , մէջ-
քին գեղեցկութիւնը կատարելապէս երեւան
կը հանէր , որուն դիւրաթեք ճապկութիւնն
սքանչելապէս կը յարմարէր Հողմածուփ կա-
կաշի պարին թեթեւաշարժ տառանմանց .
վերջապէս լայն տափտան ալ՝ որ զգեստին կեր-

այսպէս ու դոյնէն էր, բաւականէն աւելի փա-
կած էր մարմնոյն :

Պարանայ թագուհին մէկ ձեռքովը Ռօզ—
Ռոմբոնի ուսին կրթնած էր, եւ բոլոր դիւտովն
անկէ բարձր էր : Մայէօի քոյրը վեհապետաբար
կը նախագահէր այս յիմար արբեցութեան՝ որուն
շարժանիթն իր ներկայութիւնը միայն կը թուէր,
այնչափ իր սրտագրաւ տեսքն եւ եռանդուն աշ-
խոյժն ազդեցութիւն ունէր իր շրջակայից վրայ :
Ինքը քսան տարեկանի մօտ բարձրահասակ ազ-
ջիկ մ'էր, սթափ, բարեձեւ, վայելուչ տես-
քով, զուարթ եւ անհանդարտ դէմքով : Քրօջը
պէս գեղեցիկ մազեր եւ խոշոր կապոյտ աչքեր ու-
նէր. բայց փոխանակ անոր աչացը պէս քաղցրա-
հայեաց ու երկչօտ ըլլալու, զուարճասիրութեան
անխոնջ եռանդով կը փայլէին : Այն աստիճան
առօյգ եւ կորովի կազմութիւն մ'ունէր, որ
թէ եւ շատ դիշխաններ ու ցերեկներ շարունակ
դրօտանքով ու կերուխուժով անքուն անցու-
ցեր էր, երեսին կենդանութիւնը, այսերուն
վարդագեղ կարմրութիւնն եւ ուսերուն թար-
մութիւնը ընաւ թռչնած չէր, այնպէս որ տես-
նողը կը կարծէր թէ հօնպիտ ննջարանէ մը նոր
դուրս ելած էր : Մտած կերպարանքը որչափ որ
տարօրինակ եւ դժբաճանալի կերպով միմտական
էր, բայց եւ այնպէս շատ ազէկ վայելցուցեր
էր. ոսկեգոյն չուխայէ նեղ ու երկայն բաճկոն
մը հագած էր ծիրանեգոյն ժապաւէնէ խոշոր
ձուղերով զարդարուած, որք իր մերկ թեւերուն

վրայ կը ծածանէին . վրայէն ալ ոսկեփայլ մանր
նիշերով կարմիր թաւիչէ կարճ շրջազդեաս
մը հագած էր՝ որ մինչեւ իր բարակ եւ ուժեղ
արունքներուն կէսը կիջնէր . Ոտքը ճերմակ մե-
տաքսէ գուլպայներեւ անոնց վրայէն ալ պղնձի
կրունկով կարմիր կօշիկներ հագած էր . Նրբէք
սպանիացի կաքաւիչ մ'այս աղջկան շափ բա-
րակ, բարձր, կլոր, առածիգ եւ ճապուկ մէջք
մ'ունեցած չէր . կարծես թէ կաքաւի եւ շարժ-
ման սատանան փորը մտած էր . գրեթէ ամեն
վայրկեան՝ դլխուն շնորհալի որորմամբն եւ
ուսերուն ու ազդերց թեթեւ ծածանմամբը
կարծես թէ աներեւոյթ նուազարանի մը գեղ-
գեղմանց կը հետեւէր՝ քանի որ կառքին դրո-
նակին վրայ վայելչապէս դրած աջ ոտքովն
ամանակ կը դարնէր . ոսկեզօծ եւ բոժոժա-
ւոր պսակ մը դրած էր գլուխը՝ 'ի նշան իւր
շունդալից թագաւորութեան . մազերը երկու
մեծ հլւսքերու բաժնուած՝ իր կարմրերինն այ-
տերուն շուրջը բոլորուելով կերթային դլխուն
ետեւ կ'ոլորուէին . ձախ ձեռքը փոքրիկ Ռօզ
— Բօմբօնի ուսին վրայ դրած էր , աջովն ալ
մեծ ծաղկափունջ մը բռնած՝ բազմութիւնն ա-
նով կողջունէր բարձրաձայն ծիծաղելով :

Բժուարին է նկարագրել այս խնձղալից
եռանդուն եւ յիմարական պատկերը , որ երրորդ
կառքով մը կամբողջանար . Այս կառքն ալ ա-
ռաջնոյն պէս անձոռնի դիմակաւորաց բուրգով
մը լցուած էր :

Այս ուրախացից բաղմութեան մէջ մէկ անձ
մը միայն կար՝ որ խոր ախրութեամբ այս տե-
սարանը կը դիտէր . այն անձը Մայէօ էր , որ
հանդիսատեսաց առջեւի կարգին մէջ արդիւ-
ուեր մ'նացեր էր , եւ չէր կրցեր դուրս ելնել ,
Նրկար ժամանակէ 'ի վեր քրոջմէն բաժնուած
ըլլալով , այս առաջին անգամ էր որ դայն կը
տեսնէր իր տարօրինակ յաղթանակին փառաւո-
րութեանց մէջ՝ ուրախութեան աղաղակներէ
եւ իր դուարձակից ընկերաց կեցցէներէն շրջա-
պատեալ :

Գեռահասակ գործաւորուհւոյն աչքերն ար-
տասուօք լցուեցան : Թէպէտ այնպէս կերեւէր
որ Պաքանալ թաղուհին իր շուրջը պատող
անձանց խտոնադոշ ցնծութեանց մասնակից էր ,
թէպէտ երեսներն ուրախութեամբ պայծառա-
ցած էին , թէպէտ անցաւոր պերճութեան մը
ամեն շքեղութիւնները կը վայելէր , բայց եւ
այնպէս Մայէօ կը դաւէր անոր վրայ . . . ինքը
. . . խեղճ ու թշուառ . . . պատատատուն
քուրջեր հագած . . . որ այն աւուր պարէնը
հայթայթելու համար առաւօտուն կանուխ աշ-
խատութեան դորձ գտնելու ելած էր
Մայէօ քրոջը նայելով՝ բաղմութիւնը մոռցեր
էր . վասն զի շատ կը սիրէր իր քոյրը , մանա-
ւանդ որ անոր արդի վիճակը շատ ցաւալի
կը գտնէր Աւստի աչքն այն ուրախ եւ
դեղանի աղջկան անկած՝ իր դժգոյն եւ քաղ-
ցրբ դէմքին վրայ կարեկից գթութիւն , խորին


ևւ դառն զշտակրութիւն մը կը տեսնուէր . . .
Յանկարծ Պաքանայ թագուհւոյն զուարթ եւ
արատես աչքը՝ որ խուժանին վրայ կը պարտոյր-
նէր՝ Մայէօի տխուր եւ արտասուածութեամբ նայ-
ուած քին հանդիպեցան :

« Բնորս , գոչեց Սէֆիդ (արդէն ըսած ենք
որ Պաքանայ թագուհւոյն անունն այս էր) , քնի-
րքս » : Եւ կաքաւչի մ'արագութեամբ մէկ
ցատկելուն վար իջաւ իր շարժական դահէն՝ որ
բարբաղղարար նոյն միջոցին անշարժ կեցած
էր , եւ Մայէօի առջեւ կանդ առնելով՝ գորո-
վանօք անոր փաթ թուեցաւ :

Այս դէպքն այն աստիճան շուտով անցաւ ,
որ Պաքանայ թագուհւոյն ընկերներն անոր
յանդուգն եւ վտանգաւոր ոտուակէն շուարած՝
չէին դիտեր ինչ էր պատճառը . Մայէօի շուրջը
դանուող դիմակաւորներն ալ ապշելով մէկ կողմ
քաշուեցան , եւ Մայէօ՝ իր քրոջը հետ պագ-
տուելու բերկրութեան զրադելով չմտած եց այն
կարգէ դուրս հակապատկերը՝ որ ամբոխին զար-
մանքն ու ծիծաղը պիտի զրգուէր : Սէֆիդ նախ
մտածեց այս բանը , եւ չուզելով որ քրոջն ա-
նարգանք մ'ըլլայ , դարձաւ դէպ ՚ի կառքն եւ
ըսաւ . « Աօ՛ղ—Բօ՛ւբօն , թիկնոցս ինձ նետէ . . .
ևւ դուք , Նինի—Մուլէն , կառքին դռնակը շու-
տով բացէք : » Պաքանայ թագուհին թիկնոցն
ստաւ եւ անմիջապէս Մայէօի վրայ փաթթեց՝
այնպէս որ խեղճ աղջիկը շարժելու անդամ ժա-
մանակ չունեցաւ . յետոյ ձեռքէն բռնելով ը-

աւաւ . Քալէ , քալէ : — Ե՞ս , գոչեց Մայէօ զար-
հաւրելով , ի՞նչ կըսես , քոյր իմ : — Քեզ հետ
անպատճառ խօսելիք ունիմ . . . ես հիմա սեն-
եակ մը կը դանեմ եւ հոն առանձին կը խօսակ-
ցիմք : Եւրո ըրէ , սիրելի քոյրս , այսչափ բազ-
մաթեան առջեւ ընդդիմաթիւն մի ընեք . . .
քալէ :

Մայէօ ամբողջին տեսարան ըլլալէ վախնա-
լով , եւ միւս կողմանէ այս դէպքէն ապշած
ու դող ելած՝ մեքենայարար քրոջն ետեւէն
դնաց , որ քաշեց ղինքը կառքը մտցուց , որուն
դուռը Նինի—Մուլէն բացեր էր : Պաքանալ
թաղուհւոյն թիկնոցը Մայէօին աղքատիկ զգեա-
տըն ու խեղութիւնը ծածկելով , խուժանը դայն
ճաղրելու առիթ հունեցաւ . բայց կը դարմա-
նար այս կարգէ դուրս հանդիպման վրայ : Նոյն
միջոցին կառքերը Շաթլէի ճաշատան դուռը
հասան :



ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀԱԿԱՍԱՏԻԲ

Մայէօ եւ Պաքանալ թաղուհւոյն իրարու
հանդիպելնէն քանի մը վայրկեան ետքը՝ ճա-
շատան մէկ սենեակը մտան :

Ս'կ հարէն համբուռեմ քեզ , ըսաւ Սէֆիդ
Գ.—27

գեղահասակ գործաւորուհւոյն , գոնէ հիմա առանձին ենք , վախնալու բան մը չունիս :

Պարանալ թագուհին՝ քրոջը փաթթուած ժամանակ՝ թիկնոցը Մայէօի վրայէն վար իջնալով , երբոր անոր հագուստներուն խեղճութիւնը տեսաւ , դոր Շաթլէի հրապարակին խուռն բաղմութեան մէջ չէր կրցեր նշմարել , ձեռքերն իրար կցելով՝ ցաւազին դարմանքով մը հառաչեց : Յետոյ իր քոյրը լաւ մը տեսնելու համար աւելի մօտենալով , անոր նիհար առատ կարած ձեռքն իր գիրուկ ձեռաց մէջ առաւ եւ քանի մը վայրկեան դննեց աջն հէքուակար արարածը , որ քաշած դրկումներէն ու քնհատութիւններէն դեղնած ու վառած էր , եւ վրան ալ հին ու կարկատուն կտաւէ շրջադեպտէ մը դառ ուրիշ հագուստ չունէր . « Ա՛հ , քոյր իմ , այս ի՞նչ վիճակի մէջ կը տեսնեմ քեզ . . . գոչեց մորմոքեալ սրտիւ , եւ ալ խօսք մը չկրնալով արտասանել՝ լալով Մայէօի պարանոցն ինկաւ , եւ իր կսկծադին հառաչանաց մէջ յաւելցուց . « Ներէ՛ , քոյր իմ , ներէ : — Ի՞նչ կայ , սիրելի՛ քոյրս , ըսաւ գործաւոր աղջիկն յուղեալ սրտիւ եւ մեղմով մը քրոջը բաղկաց մէջէն ինքզինք ազատելով , ինչո՞ւ համար ինձմէ ներում կը խնդրես :

— Ինչո՞ւ համար մի՛ , ըսաւ Սէֆիզ՝ արտասուալից եւ ամաչելէն ծիրանիի պէս կարմրած երեսյ վեր առնելով . մի՛թէ ամօթ չէ՞ ինձ այս ոտաւ դարդարանքներով պաճուճութիւն եւ յի-

մարաբար այսչափ ծախք ընել, մինչդեռ դառն
այդպէս ցնցոտիներով ծածկուած, ամեն բանէ
զուրկ, խնդութեամբ եւ դուցէ իսկ անօթու
թեամբ կը տուայտիս . վասն զի քու դժբաղդ
դէմքդ այն աստիճան դեղնած ու վատած չէի
տեսեր երբէք : — Մի վախնար, քոյր իմ, առող-
ջութիւնս տեղն է . այս գիշեր քիչ մ'արթուն
մնալուս համար դէմքս դեղնած է . բայց կա-
զաչեմ, մի այդպէս լալով զիս վշտացըներ :

Զարմանալի էր արդարեւ որ Պաքանալ
թագուհին՝ արբեալ բազմութենէ մը փառա-
ւորուած պայծառաշուք վիճակին մէջ Մա-
յէօէն միսիթարութիւն կընդունէր : Ուրիշ դէպք
մ'այս հակապատկերն առաւել զգալի ըրաւ :
Յանկարծ քովի սրահէն ուրախութեան աղա-
ղակներ լսուեցան, որք եռանդագին ցնծու-
թեամբ « կեցցէ թագուհին Պաքանալ, կեցցէ
թագուհին Պաքանալ » կը գոչէին :

Մայէօ ցնցուեցաւ, եւ տեսնելով որ քոյրն
ամօթահար շփոթելով երեսը ձեռուրներուն մէջ
կը ծածկէր, աչքն արտասուօք լցուեցաւ :

« Սէֆիդ, ըսաւ անոր, կաղաչեմ, մի այդ-
պէս տրտմիր . թող տուր որ քեզ տեսնելու բա-
րեբաղդութեանս վրայ քիչ մ' ուրախանամ .
նրչափ ժամանակ էր որ քեզ տեսած չէի : Բայց
ի՞նչ ունիս, ըսէ ինձ : — Թերեւս զիս կարհա-
մարհես սրտովդ, քոյր իմ, եւ իրաւունք ու-
նիս, ըսաւ Պաքանալ թագուհին աշուրները
որբելով : — Քեզ արհամարհեմ մի . . . Էս,

եւ թնչու համար : — Անոր համար որ փոխա-
նակ քեզ պէս աղքատութեան արիարար հան-
գուրծելու՝ այս կեանքը կը վարեմ : »

Սէֆիդի կսկիծն այն աստիճան դառն էր ,
որ Մայէօ՝ միշտ բարեւիրտ եւ ներողամիտ՝
ուզեց նախ իր քոյրը մխիթարել եւ քիչ մ'ախ-
բարձրացընել իր աչքին . ուստի դորովայից
կերպիւ մ'ըսաւ . « Գու՛ն արդէն աւարի մը քա-
ջութեամբ աղքատութեան համբերելով , սի-
բելի Սէֆիդ , առաւել արժանիք եւ արիութիւն
ունեցար՝ քան թէ ես իմ բոլոր կենացս մէջ
համբերելով : — Ա՛հ , քոյր իմ , մի ըսեր այդ
բանը . — Բայց անկեղծաբար խօսելով , յարեց
Մայէօ , ըսէ նայինք , քոյր իմ , ինձ պէս աղեց
աղջիկ մ' ի՛նչ բարոյական փորձութեան ենթա-
կայ կրնայ ըլլալ : Միթէ բնականաբար առանձ-
նութիւն փնտռելու չեմ պարտաւորիր ես՝ որչափ
գու ընկերական եւ գուարձայից կեանք : Ինձ
պէս տխեղծ աղջիկ մ' ի՛նչ պիտոյք կրնայ ու-
նենալ : Քիչ մը բան հերիք է ինձ : — Եւ այն
քիչն ալ ամեն ժամանակ չես կրնար դանել :
— Զշմարիտ է , բայց այնպիսի կարօտութիւն-
ներ կան՝ դորս ես՝ տկար ու հիւանդատ ըլլա-
լուս՝ քեզմէ աղէկ կրնամ կրել . օրինակի հա-
մար՝ անօթութիւնը տեսակ մը թմրութիւն կը
բերէ վրաս , որուն վերջը մեծ տկարութիւն
մ'է միայն : Իսկ դու՝ ուժեղ եւ առողջ ըլլա-
լով անօթութիւնը քեզ կը դայրացընէ , եւ վը-
րադ մոլեղնութիւն կը բերէ : — Ա՛հ , չեմ ի-

չեր, քանի՛ քանի անգամ քեզ այս դռնն առաջ-
նապներուն մէջ ինկած տեսայ, երբոր մեր ուր-
խուր խցիկին մէջ անդործ մնալով մեր շարա-
թական չորս ֆրանքն ալ չէինք կրնար վաստը-
կիլ, եւ հետեւաբար անօթի ժամանակ կան-
ցունէինք, վասն զի մեր մեծարտութիւնը չէր
թողուր մեզ որ դրացիներու դիմէինք: — Այն
մեծարտութիւնը դ՛նէ դու պահեցիր, ըսաւ
Սէֆիդ: — Դուն ալ պահեցիր, յարեց Մայէօ:
միթէ մարդ կային կարողութեան ներելուն չափ
դու ալ չմաքառեցար կարօտութեան դէմ: Բայց
կարողութիւնն ալ սահման մ'ունի:
Ես քեզ լաւ կը ճանչեմ, Սէֆիդ, դուն
ամեն բանէ աւելի անօթութեան չկրցար դի-
մանալ, անօթութեան եւ անոր հետ այն առ-
ժանեյի անդուլ աշխատութեան՝ որ ամենա-
հարկաւոր պիտայքդ անգամ լցնելու չէր բա-
ւեր: — Բայց դու համբերութեամբ կրեցիր այն
կարօտութիւնները եւ տակաւին ալ կը կրես:
— Քեզ կրնաս ինձ հետ բաղդատել, պատաս-
խանեց Մայէօ, եւ քրոջը ձեռքէն բռնելով եւ
բաղմոցի մը վրայ կախուած հայելոյ մ'առջեւ
տանելով. « Անգամ մը դէմքդ նայէ, ըսաւ,
միթէ կը կարծես թէ Ստուած՝ քեզ այսչափ
դեղեցկութիւն, տաք ու եռանդոտ արիւն,
զուարթ, աշխոյժ, դիւրահաղորդ ու գուար-
ճասէր բնութիւն տալով ուղեր է որ ծաղիկ
հասակդ ցրտասառոյց խցիկի մը մէջ անցունես,
արեւու երես չտեսնելով, աթուակիդ վրայ

դամուած, ցնցութիւնսր հազած եւ անդուռ ու
անյոյս աշխատութեան դատաստարտուած: Այ-
ինչու որ Սատուած ուտելու եւ խմելու պի-
տոյքէն դատ ուրիշ պիտոյք ալ տուած է մեղ: Ե
Միթէ մեր նուաաս վիճակին մէջ անդամ գե-
ղեցկութիւնը քիչ մը զարդարանքի պէտք չու-
նի: մանկութիւնը շարժման ուրախութեան
եւ զբօսանաց պէտք չունի: Միթէ ամեն հա-
տակ հանգստութեան եւ քիչ մ'ալ դուարձու-
թեան պէտք չունի: Նստադրենք թէ օրը տաս-
ներկու կամ տասներկու ժամ աշխատելէ ե-
տեւ՝ փորդ կշտացընելու, շարաթը երկու ան-
գամ զբօսանք ընելու եւ զմայլելի գէմքիդ
վայլելիք նոր ու մաքուր հազուստ մը շինելու
չափ վաստակ ունենայիր, միթէ աւելի ըան մը
կուղէիր: անշուշտ ոչ, ինչպէս որ հարիւր ան-
գամ ըսած ես ինձ: Աւրեմն անտանելի չքառ-
րութենէդ յաղթուեցար, վասն զի քու պիտոյ-
քըդ իմիններէս աւելի մեծ են: — Զչմարիտ է,
պատասխանեց Պաքանալ թագուհին խոհուն
գէմքով մը: Միթէ օրն երկու ֆրանք միայն
վաստրկէի, բոլորովին ուրիշ կեանք կանցընէի,
որովհետեւ, քոյր իմ, սկիզբները դառնապէս
ծանր կուգար ինձ ուրիշի ծախքով ապրիլ:
— Աւրեմն՝ առանց յաղթուելու՝ այդպէս ընելու
բռնադատուած ես, սիրելի Սէֆիդա, ապա թէ ոչ
փոխանակ վրադ ցաւելու՝ կը մեղադրէի քեզ:
դու կամօքդ չընտրեցիր այդ վիճակը, այլ ա-
կամայ կրեցիր, ինչպէս որ ես իմս կը կրեմ:

— Տարաբանողք քոյրս, ըսաւ Սէֆիդ խանն
դադառանսօք Մայէօն հասխու բերով, փոխանանկ
եւ քու վրայդ ցաւելու, դու զիս կը մխիթա-
րես ու կը քաջալերես այդ ողորմելի վիճակիդ
մէջ: — Հող մի ընէր, ըսաւ Մայէօ, Աստուած
արդար եւ բարի է. թէպէտ շատ ձիրքերէ զիս
զուրկ թողուց, բայց ինձ յատուկ բերկրու-
թիւններ ալ շնորհեց՝ ինչպէս ձեզ ալ ձեր յա-
տուկ բերկրութիւնները: — Բու բերկրութիւն-
ներդ մի: — Ս.յն, եւ մեծ բերկրութիւններ, ա-
նանց որոց կեանքս չամփագանց անտանելի պիտի
լըլար եւ ես ալ կրելու քաջութիւնս չէի կրնար
ուեննալ: — Կը հասկընամ, ըսաւ Սէֆիդ յուզ-
եաց սրտիւ, դու տակաւին այլոց անձնութիւն-
թիւն ընելու ալ միջոց կը դանես, եւ ասով քու
վիշտդ կ'ախտիես: — Դոնէ ձեռքէս եկածը կը-
նեմ՝ որչափ եւ փոքր բան մ'ըլլայ, եւ երբոր
յաջողիմ, յաւելցուց Մայէօ քաղցր ժպիտով մը,
ինքզինքս երջանիկ կը համարիմ ու կը փառա-
ւորուիմ այն խեղճ փոքրիկ մըջիւնին պէս՝ որ շատ
աշխատութեամբ յարցի խոշորկէկ շիւղ մը հա-
տարակաց բոյնը բերելու կարող կըլլայ: Բայց
այիմ վրայ չխօսինք: — Ս.յն, խօսինք, կազա-
լեմ, թէ եւ սիրտդ նեղանալու ալ ըլլայ, ըսաւ
Պարանալ թագուհին երկշտութեամբ. քեզ
բան մը պիտի առաջարկեմ, գոր երբեմն չըն-
դունեցիր: Կարծեմ որ ժաք* դեռ ստակ ունի

* Ընթերցողք կը յիշեն որ Գուշ-Թու-Նիւ Ժաք

վրան . մեք յիմարարար շատ ստակ կը վառ-
նենք ասդին անդին դէմերնիս ելնող աղքատ
մարդոց բաշխելով . կաղաչեմ , թող սուր որ
քեզ օգնութիւն մ'ընեմ . դու որչափ ծածկես
երեսէդ յայտնի կը տեսնուի որ չարաչար աշ-
խատելով հողիդ բերանդ եկած է . — Ենորհա-
կալ եմ , սիրելի Սէֆիդս . . . քու սրտիդ բա-
րութիւնը կը ճանչեմ , բայց ես բանի մը կա-
րօտութիւն չունիմ , իմ քիչ մը վաստակս ինձ
կը բաւէ : — Ձեռ ընդունիր առաջարկութիւնս ,
ըսաւ Պարանայ թագուհին տխրութեամբ , վասն
զի դիտես որ տալիք ստրկիս վրայ պատուաւոր
խաւունք մը չունիմ . . . այդպէս թող ըլլայ . . .
կը հասկընամ խղճսութիւնդ , բայց գոնէ Ժա-
քէն սուէր մ'ընդունած եղիր . ան ալ երբեմն մեզ
պէս գործաւոր մ'էր . միթէ ընկեր ընկերի չօ՞գ-
ներ . կաղաչեմ , սիրելի քոյրս , ընդունէ , ապա
թէ ոչ այնպէս պիտի հաւատամ որ դիս կարհա-
մարհեստ . — Ես ալ այնպէս պիտի հաւատամ օր
դու դիս կանարդես՝ եթէ ստիպես որ ընդու-
նիմ , սիրելի Սէֆիդս , ըսաւ Մայէօ այնպիսի
կորուկ եւ միանգամայն քաղցր ձայնիւ , որ
Պարանայ թագուհին հասկըցաւ որ ամեն թա-
խանձանք անօգուտ պիտի ըլլան . Ուստի արի-
բութեամբ դուխը խոնարհեցուց , եւ աչքէն
արտասուաց նոր կաթիլ մը դլորեցաւ .

Ռէնրթօն կանուանէր , եւ Թափառական Հրեայի
քրոջը ցեղէն էր :

«Առաջարկած նպատակը չընդունելուս վրայ
կը տրամախոսեմ, ըսաւ Մայէօ քրոջը ձեռքը բռն
նկելով. ես ալ շատ կը ցաւիմ, բայց խորհե
քիչ մը եւ կը հասկընաս: — Պաքանալ թագու
հին վայրկեան մը լուռ կենալէ կտիւ: «Իրա
ւունք ունիս, ըսաւ դառն սրտիւ, տարիաւա
րիս տաւած նպատակը չես կրնար ընդունիլ:
այսպիսի բան մ'առաջարկելը քեզ նախատե
լ: Երբեմն մարդ այն աստիճանն անողատիւ մի
ճակի մէջ կը գտնուի, որ ընել ուղած բարեգոր
ծաւթիւնն իսկ անպատիւ կըլլայ: — Սէֆիդ,
դիտես որ իմ միտքս քեզ վերաբերել չէր:
— Ա՛հ, հաւատար ինձ, քոյր իմ, ըսաւ Պա
քանալ թագուհին, որ ես որչափ անհոգ եւ
զուարթ ըլլամ, խորհրդածութեան վայրկեան
ներս ունիմ երբեմն նոյն իսկ յիմարական ու
բախտութեանցս մէջ, թէ եւ բարեբաղդաբար
այն վայրկեաններն յաճախ չեն հանդիպիր:
— Ի՞նչ կը խորհիս այդ վայրկեաններուն մէջ:
— Կը խորհիմ որ վարած կեանքս պարկեշտ չէ:
այն ժամանակ կը մտածեմ Քաթէն քիչ մ'առակ
խնդրել, տարի մ'ապրելու չափ, եւ գալ քու
քովդ նստիլ եւ նորէն քիչ քիչ աշխատելու
վարժուիլ: — Ս.յդ գէշ գաղափար չէ, ինչո՞ւ
չես գործադրիր: — Ղաան դի գործադրելէս
առաջ ինքզինքս անկեղծաբար կը հարցաքն
նեմ եւ քաջութիւնս կը կտրի: Ա՛ղգամ որ ին
քզինքս աշխատութեան չսխալի կրնամ վար
ժեցընել եւ այս կեանքէս հրաժարիլ, որ մերթ

հարուստ է , մերթ աղքատ , բայց դ՛նէ՛ ազատ ,
անգործ , ուրախալից , անհող , եւ միշտ ալ
հաղարապատիկ նախամեծար է քան զայն կեան-
քը՝ որ շարաթը չորս Ֆրանք վաստրկելով
պիտի վարէի : Մնաց որ , ես երբէք չահու աչք
ունեցած չեմ . քանի քանի անգամ չուղեցի իմ
աղքատ տարփաւորս թողուլ եւ ինձ սիրելի չեղող
հարուստ մարդոց հետ կենակցիլ . երբէք ինձ հա-
մար բան մ'ուղած չեմ , թաք թերեւս տասն
հազար Ֆրանք մոխեց երեք չորս ամսէ՛ ՚ի վեր ,
բայց եւ այնպէս ունեցածնիս երկու դժուծ
ունեակ է՝ հաղիւ պէտք եղած կարասիներով
զարդարուած . վասն զի մեք միշտ դուրսը կապ-
րինք թոչնոց պէս : Բարերազգաբար , զինքը
սիրած ժամանակս ստակ մը չունէր . ինձ ընծայ
արուած քանի մը զարդեր հարիւր Ֆրանքի վա-
ճառեր եւ այն դումարը վիճակահանու թեան
գրեր էի . եւ որովհետեւ խենթերուն բաղդը
միշտ բաց կըլլայ , չորս հազար Ֆրանք չահե-
ցայ : Թաք ալ ինձմէ վար չէր մնար ուրախու-
թեան խենթութեան ու անհողութեան մէջ .
ուստի ըսինք իրարու . «Մեք իրար կը սիրենք .
մինչեւ որ ստակնիս հասնի՝ կեանք կընենք .
հասնելէն ետքն ալ՝ այս երկուքին մէկը . կամ
իրարմէ ձանձրանալով կը զատուինք , կամ ի-
րար տակաւին սիրելով՝ մէկտեղ կը նստինք ու
աշխատելու փորձ կընենք , Նթէ չկրնանք եւ
իրարմէ ալ բաժնուիլ չուղենք , աման մ'ա-
ծուիս մեր գործը կը լմնցընէ :

— Տէր Աստուած, գոչեց Մայէօ երեւին
դոյնը բոլորովին նեւելով: — Մի վախնար քոյր
իմ, վրայ բերաւ Պաքանայ թագուհին, գործեր-
նիս այն վիճակին չհասաւ: Դեռ ատակնիս բոլո-
րովին չէր հասած, երբ առեւտրական գործակա-
տար մը՝ որ ինձ քծներ էր, եւ այնչափ ալ տգեղ
էր որ հարուստ ըլլայն ամենեւին աչքիս չէր
երեւնար, գիտնալով որ ես Ժաքին հետ կապ-
րէի, զիս ստիպեց որ . . . Բայց ինչո՞ւ կը
ձանձրայրնեմ քեզ այս մանր պարագաները
պատմելով: Նրկար չընեմ, Ժաքին ունեցած մէկ
անատոյզ ժառանգութեան իրաւունքներուն
վրայ բաւական ստակ փոխ արուեցաւ մեզ:
Այն ստակով է որ կ'զբօսնունք: Քանի որ ըս-
տակ կայ, այսպէս կերթանք: — Բայց, սիրելի
Սէֆիրոս, փոխանակ այդպէս յիմարաբար այդ
ստակը վատնելու՝ ինչո՞ւ համար չէք շահեցը-
ներ . . . եւ դուն ալ Ժաքին հետ չես կար-
գուիր, քանի որ վրան սէր ունիս: — Ա՛հ, պա-
տասխանեց Պաքանայ թագուհին ծիծաղելով,
որուն անհոգ եւ զուարթ բնութիւնը տխրու-
թեանը յաղթել կ'սկսէր. նախ պէտք է գիտ-
նաս որ շահու գրուած ստակը զուարճութիւն
մը հտար քեզ. շատ շատ թուղթի կտորի մը
վրայ պիտի նայիս, զոր ձեռքդ կուտան փոխա-
րէն այն ազւորիկ ոսկիներուն՝ որոցմով հազար
զբօսանք կրնաս գանել: Իսկ կարգուելու գա-
լով, արդարեւ Ժաքն այն աստիճան կը սիրեմ
որ երբէք ուրիշ մէկն այնչափ սիրած չեմ, սա-

կայն ինձ այնպէս կը թուի որ հետը կարգուեալ
 լէս ետեւ այժմեան երջանկութիւննիս կը կոր-
 առի, վասն զի իբրեւ տարփաւոր՝ անցեալիս վը-
 բայօք բան մը չկրնար ըսել ինձ՝ բայց երբոր
 ամուսինս ըլլայ, վերջապէս օր մը կրնայ եւ-
 րեսա տալ, եթէ իմ վարքս յանդիմանութեան
 արժանի է, կուզեմ որ ես զիս յանդիմանեմ.
 դո՛ւնէ ձեւ մը կը բանեցընեմ. — Աղէկ,
 խենթ աղջիկ, բայց այդ ստակը յաւիտեան
 չտեւեր . . . ետքն ի՞նչ կընէք: Ետքը մի՛,
 բանդ նայէ, ետքը . . . լուսնին մէջ է: Ինձ
 այնպէս կուգայ միշտ որ մինչեւ վաղը հարիւր
 տարի պիտի անցնի. եթէ միշտ մտածենք թէ
 օր մը պիտի մեռնինք, ապրելնիս չարժեր:»

Սէֆիդի եւ Մայէօի խօսակցութիւնը նորէն
 ընդմիջեցաւ ահագին աղմուկով մը՝ որուն մէջ
 ամենէն աւելի Նինի—Մուլէնի շոնչանին տար-
 ձանչիւնը կը լսուէր. յետոյ աղմուկին յաջոր-
 գեց որոտագին դռչիւն մը՝ որ ապակիներն ան-
 գամ դղրդեց, եւ որուն մէջ այս բառերը մի-
 այն կրնային հասկցուիլ. «Պաքանալ թագու-
 հի՛ն, Պաքանալ թագուհի՛ն:» Մայէօ այս յան-
 կարժական դռու մէն վախնալով վեր ցատկեց.
 «Պալատականներս են դարձեալ՝ որ ան-
 համբերութեամբ զիս կուզեն, ըսաւ Սէֆիդ այս
 անգամ ծիծաղելով. — Տէր Աստուած, դռչեց
 Մայէօ սարսափելով, եթէ դան հոս մտնեն քեզ
 տանելու համար . . . — Աչ, ոչ, անհոգ եղիր.
 — Բայց ահա կուգան . . ., ոտքի ձայները չեա

բար զուրսի ներ սրահին մէջ . . . ահա կը մտ-
տենան . . . ո՛հ, կաղաչեմ, քոյր իմ, զիս կա-
մայուկ մ'ասկէց զուրս հանէ որ այդ մարդ ոցմէն
չտեսնուելով միայնակ մեկնեմ : »

Երբոր զուրս կը բացուէր, Սէֆիզ մէկէն
վազեց եւ զուրսի ներ սրահին մէջ պատդա-
մաւորութիւն մը տեսաւ, որուն առջեւ ինկեր
էին Նինի-Մուլէն՝ իր զարհուրելի շանչանովը
զինեալ, Ռօզ-Բօմբօն եւ Քուշ-Թու-Նիւ :

« Պաքանալ թագուհին կուզենք, ապա
թէ ոչ՝ հիմա գաւաթ մը ջրով ինքզինքս կը
թաւաւորեմ, գոչեց Նինի-Մուլէն : — Պաքա-
նալ թագուհին կուզենք, ապա թէ ոչ՝ հիմա
քաղաքապետին զուրս կերթամ եւ Նինի-Մու-
լէնի հետ ամուսնանալուս ծանուցումը կը վազ-
ցընեմ, գոչեց Ռօզ-Բօմբօն սպառնական դէմ-
քով : — Պաքանալ թագուհին կուզենք, ապա
թէ ոչ՝ իր պալատականներն ոտք ելնելով պիտի
դան զինքը վերցընեն զուրս հաններ, ըսաւ ու-
րիշ ձայն մը : — Ա, յո՛, այո՛, վերցընենք, գո-
չեցին ամենը մէկէն զարհուրելի որոտմամբ :

— Ժանք . . . զու միայն ներս մտիր, ըսաւ
Պաքանալ թագուհին՝ առանց այն սպառնալից
հրաւերները բանի տեղ դնելու . . . յետոյ իր պա-
լատականաց դառնալով իշխանական վեհու-
թեամբ մ'ըսաւ . « Տան վայրկենէն կուգամ : »
Եորէն դժոխային գոռում մը բրդաւ : — Աեց-
ցէ Պաքանալ թագուհի » գոչեց Տիւմուլէն իր
շանչանը տատանելով եւ ետ դարձաւ, խուճըն

այ ետեւէն . նոյն միջոցին Բուշ-Թու-Նիւ մի-
այնակ սենեակը մտաւ .

« Ժանք , ըսաւ անոր Սէֆիդ , այս օրիորդն
իմ սիրելի քոյրս է : — Շատ ուրախ եմ ձեզ անս-
նելուս , օրիորդ , ըսաւ Ժանք սիրալիլը կերպով ,
եւ կրկնապատիկ ուրախ , որովհետեւ մեր ըն-
կեր Սկրիքօլի վրայ ձեզմէ լուր կրնամ առ-
նուլ . . . , Բանի որ ես միլիոնաւորի կեանք
կը վարեմ , իրար անսած չունինք , բայց զինքը
միշտ կը սիրեմ իբրեւ բարի եւ քաջ ընկեր մը . . .
Դուք անոր տունը կը բնակիք . ի՞նչպէս է : — Ա-
ւանդ , պարոն , մեծ փորձու թիւններ եկան թէ
իրեն եւ թէ ընտանեացը գլխուն . . . ինքը
բանտն է : — Բանտն է մի՞ , գոչեց Սէֆիդ : — Ակ-
րիքօլ . . . բանտն է . . . ի՞նչ պատճառաւ ,
հարցուց Բուշ-Թու-Նիւ : — Բազա քական թե-
թ եւ յանցանքի մը համար : Կը յուսացուէր որ ե-
րաշխաւորութիւն տալով բանտէն կրնար ազա-
տիլ — Անչուշտ 300 ֆրանք բա-
ւական է . . . ես լաւ գիտեմ . . . ըսաւ Բուշ-
Թու-Նիւ : — Դժբաղդաբար անհնար եղաւ . վա-
տըն զի այն անձը՝ որմէ օգնութիւն կ'օայաս-
ուէր »

Պաքանալ թագուհին Մայէօի խօսքն ընդ-
միջելով ըսաւ Բուշ-Թու-Նիւի . « Ժանք . . . կը
հասկընամ . . . Ակրիքօլ բանտն է . . . 300
ֆրանքի համար : — Ի՞նչպէս չեմ հասկընար
. . . առոր համար ակնարկներ ընելու հարկ
չկայ : Ինչո՞ւ ազայ , մայրն ալ ինք կը նայի :

— Ա՛հ, այո՛, պարոն, եւ առաւել ցաւալին այն
է որ հայրն ալ Ռուսաստանէն եկաւ, եւ մայրը . . .

— Անցի՛ք, օրիորդ, ըսաւ Քուչ-Թու-Նիւ
դարձեալ ընդ միջելով Մայէօի խօսքը, անէք
այս քսակը . . . հոս ամեն բան կանխիկ վը-
ճարուած եւ այսչափը միայն մնացած է . . .
մէջը քսանեւհինգ — երսուն նարօլէոն կայ . . .
դորս նեղութեան մէջ գտնուող ընկերի մ'օդ-
նելէ աւելի լաւ կերպով չեմ կրնար հատցընել .
Տուէք Ակրիքօլի հօրը, որ պէտք եղած մի-
ջոցներն անյապաղ 'ի դործ դնէ, եւ վաղն Ակ-
րիքօլ իր դարբնոցն երթայ, ուր ինձմէ աւելի
կուղեմ որ ան գտնուի: — Ժաք, եկ շուտով
համբուրէ դիս, ըսաւ Պաքանալ թագուհին:
— Գլխուս վրայ, մէկ մ'ալ եւ միշտ, ըսաւ Ժաք
ուրախութեամբ թագուհին համբուրելով:

Մայէօ վայրկեան մը վարանեցաւ. բայց
խորհելով որ այն ստակն ալ փուճ տեղը պիտի
վատնուէր, քանի որ կրնար կեանք եւ յոյս
պարգեւել Ակրիքօլի ընտանեաց. խորհելով
դարձեալ որ այն 500 ֆրանքը ետքէն Ժաքին
վճարուած ժամանակ կրնար թերեւս խիստ օգ-
տակար ըլլալ անոր, ընդունեց, եւ քսակն ա-
ռած ատեն արտասուալից աչօք ըսաւ. «Պա-
րսն Ժաք, կընդունիմ . . . արդարեւ ազնուա-
խոհ եւ բարեսիրտ էք եղեր. Ակրիքօլի հայրը
գմնէ այսօր այս մխիթարութիւնը պիտի գտնէ
իւր դժնդակ վշտաց . . . շնորհակալ եմ, ան,
շնորհակալ եմ: — Շնորհակալ ըլլալու պէտք

չկայ, օրիորդ . . . երբոր մէկն ստակ ունի, մի-
նակ իրեն համար չէ, աւրիչներուն համար աչ
է . . . »

Աղաղակները նորէն սկսան ատաւել կատա-
ղութեամբ, եւ Նինի—Մուլէնի շունչանն աչ
անտանելի կերպիւ ճանչեց :

«Սէ ֆիզ, ըսաւ քուչ-Թու-Նիւ, եթէ չիգտա
հիմա ներսն ամեն բան կը կտարանն, եւ սաստի
ալ չունիմ որ կտարածնին մճարեմ : Ներեցէ ք
օրիորդ, յաւելցուց ծիծաղելով, ահա կը տես-
նէք որ թագաւորութիւնն ալ պարտականու-
թիւններ ունի . . . »

Սէ ֆիզի սիրտն ելնելով թեւերը Մայէօի
երկնցուց, որ քաղցր արտաւ ք թափելով քը-
րոջը փաթթուեցաւ : «Մէկ մ'ալ Էրբ կրնամ
տեսնել քեզ, ըսաւ Մայէօ : — Քիչ ժամանա-
կէն, բայց սիրտս շատ կը ցաւի քեզ այդ թըշ-
ուառ միճակին մէջ տեսնելու համար, դու չես
ներեր ինձ սիրտիւ . . . : — Միտի դմս . խօսք
կուտան ինձ : — Ես խօսք կուտամ անոր կող-
մէն, ըսաւ Ժաք, որ քեզ տեսնելու պիտի
դանք, եւ քեզ հետ ձեր դրացի Սկրիքօլը :
— Օ՛ն ուրեմն ներս գնա, Սէ ֆիզ, եւ 'ի բոլոր
սրտէ ուրախացիր, փանդի Պ. Ժաք այսօր ըն-
տանիքի մ'երջանկութեան պատճառ, պիտի ըլ-
լայ : »

Ս. յս ըսելէ ետեւ, երբոր քուչ-Թու-Նիւ ալ
ապահովցուց զինքը որ իր ուրախ եւ պոռչատը
ընկերներէն շատանուելով կրնար վար իջնել :


Մայէօ գաղտագողի վար իջաւ անապարելով
 որ գոնէ բարի լուր մը ասնի ճակօպէռի , բայց
 նախ ուղեց Պապիլոն փողոցն երթալ եւ Ատ-
 րիէն տը Քարտօվիլի քանի մ'օր առաջ բնակած
 ապարանքը հանդիպիլ : Ընթերցողք ետքը պի-
 տի իմանան Մայէօի հոն երթալուն պատճառը :

Աղջիկը ճաշատան դռնէն դուրս ելած ժա-
 մանակ տեսաւ որ քաղաքացիի վայելուչ կեր-
 պարանքով երեք մարդ ջած ճայնով կը խօսակ-
 ցէին եւ կարծես թէ իրարու հետ խորհուրդ
 կընէին ճաշատունն 'ի վեր նայելով : Նոյն մի-
 ջոցին չորրորդ մարդ մը ճաշատան սանդուղէն
 շտապով վար իջաւ ու ասոնց քով գնաց :

« Ի՞նչ լուր , լսին միւս երեքն անհամբեր
 հետաքրքրութեամբ : — Հոտ է : — Աղէկ դիտես :
 — Աշխարհի վրայ երկու Քուշ-Թու-Նիւ կնից ,
 պատասխանեց միւսը , հիմա տեսայ զինքը , առ-
 պեստի կերպարանք մտած . դեռ նոր նախաճա-
 շի նստած են , որ երեք ժամ կը տեւէ : — Ու-
 բեմն . . . սպասեցէք զիս հոս . . . կրցած-
 նուղ չափ ինքզինքնիդ պահելով . . . երթամ
 թելին գլուխը դանեմ . գործը պարկին մէջ է : »
 Այսպէս ըսելով մարդոցմէն մէկը վազելով ա-
 ներեւոյթ եղաւ հրապարակին քովի փողոցնե-
 րուն մէկուն մէջ : Այս միջոցին Պաքանալ թա-
 գուհին խրախճանի սրահը մտաւ Քուշ-Թու-
 Նիւի հետ , եւ բազմութիւնը որոտաճայն կեց-
 ցէներով զինքն ողջունեց :

« Հիմա , գոչեց Սէֆիդ բունն հրապար-

մ' զգալու կերպիւ եւ որպէս թէ իր միաքն զբա-
ղեցընելու փափաքելով . հիմա , բարեկամք իմ ,
փոթորիկ , մրրիկ , որոտում , կործանում եւ ա-
մեն տեսակ դժբախտ . . . : Յետոյ դաւաթը
Նինի—Մուլէնի երկնցընելով ըսաւ . « Այց ,
խմենք » եւ ամենը միաբերան « կեցցէ թագու-
հին » գոչեցին :



ԴԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՆԱԽԱՃԱՇ

Պաքանայ թագուհին՝ Գուշ-Թու-Նիւն դէմն
առած եւ Ռօզ—Բօմբօնն ու Նինի—Մուլէնն ալ
աջ կողմը , կը նախադահէր նախաճաշի սեղա-
նին՝ զոր ժաք առատաձեռնաբար կը նուիրէր
իր զբօսանաց ընկերներուն :

Ս.յս պատանիներն ու նորասի աղջիկները
կարծես թէ մոռցեր էին կէս գիշերէն մէկ ժամ
առաջ սկսած ու առաւօտեան ժամ վեցին ա-
ւարտած պարահանդէսին յողնութիւնը : Ամեն
զոյգ միապէս ուրախ սիրամոլ եւ անխոնջ՝ կը
խնդային կուտէին ու կը խմէին մանկական եւ
չուայտոտ եռանդով : Ս.յս պատճառաւ ճա-
շին առաջին մասին ժամանակ խօսակցութիւն
չատ չեղաւ , այլ միայն դաւաթներուն ու պը-
նակներուն բախման շտապիւնը կը լսուէր :

Պաքանայ թագուհւոյն դէմքն այնչափ ուրախ
չէր, բայց սովորականէն աւելի տաքցած կերե-
ւէր. այտերը կարմրած էին, աչուրներուն փայ-
լումէն կը հասկցուէր որ տենդային յուզմունք
մ'ունէր, եւ ինքզինք ուրախութեամբ դրադե-
ցընել կուզէր. քրոջը հետ ըրած խօսակցութիւնը
մերթ ընդ մերթ միտքը գալով այն տխուր յիշա-
տակներն իրմէ հեռացընել կը ջանար:

Ժաք մերթ ընդ մերթ Սէֆիդի կը նայէր
խանդակաթ տարփանօք. վասն զի, Պաքանայ
թագուհւոյն եւ իր մէջ եղած թէ բնաւորու-
թեան, թէ ճաշակի եւ թէ մտաց դարմանալի
նմանակցութեամբ իրենց կապակցութիւնն ա-
ռաւել խորարմատ եւ զօրաւոր էր, որ լոկ զուար-
ճութեան վրայ հիմնեալ անցաւոր սիրակցու-
թեանց մէջ սովորաբար չտեսնուիր: Սէֆիդ եւ
Ժաք չէին իսկ դիտեր իրենց սիրոյն զօրութիւ-
նը, վասն զի մինչեւ այն ժամանակ ուրախու-
թիւններով ու տօներով շրջապատեալ էր, եւ
երբէք ձախող դէպքով կամ դժբաղդութեամբ
մը վրդոված չէր:

Փոքրիկ Ռօզ—Բօմբօն քանի մ'օրէ 'ի վեր
այրի մնացեր էր ուսանող պատանի է մը՝ որ
բարեկենդանն ուրախութեամբ անցունելու հա-
մար իր գաւառը դացեր էր ընտանիքէն քիչ մը
ստակ բրցունելու՝ այն առասպելայօղ պատըր-
ուակներով որք աւանդութեամբ մնացած են
եւ ինամով կը մշակուին բժշկութեան ու օրէ-
նրագիտութեան դպրոցներուն մէջ: Ռօզ—Բօմ-

բօն՝ հարու աղիւտ հաւատարմութեամբ մ' եւ
կասկածի պատճառ չտալու համար՝ անմնաս Նի-
նի—Մուլէնն իրեն պահապան ընտրեր էր :

Այս վերջինը՝ սաղաւարտը գլխէն հանած
բլլալով ճաղատ գլուխը երեւան ելեր էր, ու
բուն բոլորակքը սեւ ու խառած մազերէ շր-
ջանակ մը կար՝ ետեւի կողմը բաւական երկայն :
Սպանդարամասական նշանաւոր երեւութով մը՝
քանի որ գինովութիւնը վրան կը տիրէր, իր
կարմիր երեսաց պէս ծիրանեգոյն գօտի մը հե-
տըդհետէ ճակատը պատելով սպիտակափայլ
գանակին վրայ կեղնէր : Ռօդ—Բօմբօն՝ այս ե-
րեւոյթին նշանակութիւնը հասկընալով կոչ-
նականներուն ցոյց տուաւ, եւ բարձրաձայն խըն-
դալով գոչեց . « Նինի—Մուլէն, զգոյշ կեցիր,
գինիին մակընթացութիւնը զարմանալի կեր-
պով կը բարձրանայ : —Նրբոր գլխէն վեր ելնէ
. . . պիտի խեղդուի, աւելցուց Պաքանալ թա-
գուհին : —Ո՛վ թագուհի, միտքս մի շփոթեր
. . . խորհրդածութիւն ունիմ . . . պատասխա-
նեց Տիւմուլէն, որ արդէն գինովնալ սկսեր էր,
եւ ձեռքը գինիով լցուն շաքարօղիի դաւաթ
մը բռնէր էր հին ժամանակի բաժակներուն ձե-
ւով, վասն զի սովորական դաւաթներն ի-
րենց միջակ մեծութեան համար արհամարհե-
լով աղայական խաղալիկ կը կոչէր : —Ար խոր-
հրդածէ եղեր . . . բաւ Ռօդ—Բօմբօն, Նի-
նի—Մուլէն կը խորհրդածէ, ու շտղութիւնը ը-
րէք . . . —Ար խորհրդածէ մէ . . . ուրեմն հի-

ւանդ է : — Ի՞նչ կը խորհրդածէ արդեօք . պարի մէջ նազելի ոտնփոխ մը : — Նասկրէնեան արգիլեալ գիրք մը :

— Այո՛ , կը խորհրդածեմ , ըսաւ Տիւմուլէն ծանրութեամբ . ընդհանրապէս եւ մասնաւորաբար գինիին վրայ կը խորհրդածեմ . . . գինիին , որուն համար սքանչելին Պօսիւէ՛ (Տիւմուլէն գինովցած ժամանակ Պօսիւէն յիշելու անպատեհ սովորութիւնն ունէր) որ գինիէ լաւ կը հասկընար , ըսած է թէ « Քաջութիւնը , գօրութիւնը , ուրախութիւնը եւ հոգեւոր արբեցութիւնը գինիին մէջ է » (երբոր խմողը խելք ունի) , աւելցուց Նինի-Մուլէն փակագծի մէջ առնելու կերպով : — Ուրեմն ես քու Պօսիւէդ կը պաշտեմ , ըսաւ Ռօզ-Բօմբօն : — Իսկ իմ մասնաւոր խորհրդածութիւնս այս է թէ արդեօք Քալիլիացւոց Աանայի հարսանեաց գինին կարմիր էր թէ ճերմակ . . . երբեմն ճերմակ գինիին կը հարցընեմ , երբեմն կարմիրին . . . երբեմն ալ երկուքին մէկէն : — Այդ ըսածդ խնդրոյն խորը գննել է , ըսաւ Քուշ Թու-Նիւ : — Ասմ մասնաւոր գինւոյ սրուակներուն խորը , ըսաւ Պաքանալ թագուհին : — Ինչպէս որ դուք կըսէք , վեհափառ թագուհի . . . եւ ես արդէն շատ փորձերով ու գննութիւններով մեծ գիւտ մ'ըրած եմ . այսինքն , եթէ Աանայի հարսանեաց գինին կարմիր էր . . . : — Ուրեմն ճերմակ չէր , ըսաւ Ռօզ-Բօմբօն աւշմութեամբ : — Եւ եթէ վերջապէս ապացուցանելի թէ ոչ

ձերմակ էր եւ ոչ կարմիր , հարցուց Տիւմուլէն
 դատաւորական ծանրութեամբ : — Ըսել կըլար
 թէ գինով էիր , մեծիոր պարոնս , պատասխա-
 նեց Քուշ-Քու-Նիւ : — Թագուհւոյն էրկանը
 խօսքը ճշմարիտ է . . . երբոր մէկը գիտու-
 թեան չափազանց ծարաւի ըլլայ՝ այս բանը կը
 պատահի , բայց հոգ չէ . այս ինդրոյն վրայ
 ուսմունքէ ուսմունք անցնելով եւ բոլոր կեան-
 քըս նուիրելով իմ յարգելի ասպարիզիս վախ-
 ճանին պիտի հասնիմ՝ բաւականապէս պատ-
 մական դոյն մը տալով իմ ծարաւիս , ինչպէս
 նաեւ աստուա . . . ծա . . . բա . . . նա . . . կան
 եւ հնա . . . գի . . . տա . . . կան : »

Անհնար է նկարագրել Տիւմուլէնի դէմքին
 դուարձալի ծամածռութիւնն ու ձայնին նմա-
 նապէս դուարձալի հնչումը , որով արտասա-
 նեց եւ վանկ առ վանկ շեշտեց այս վերջին բա-
 ռերը՝ որք ամենուն ծիծաղը շարժեցին :

« Հնադիտութիւն . . . ըսաւ Ռօզ-Բօմ-
 բօն , ինչպէս բան է . պոչ ունի . ջուրի վրայ
 կը պտրտի : — Թող տուր , ըսաւ Պաքանալ թա-
 գուհին , ատոնք գիտունի կամ ձեռնածուի բա-
 ռեր են , որք ձիու մազէ շինուած կլոր պարկե-
 րու պէս ուսուցիկ են . . . եւ աւելի բան
 մը չունին . . . : Մեք մեր գործին նայինք . . .
 Նինի-Մուլէն , Շամբանիա մը լից : Ռօզ-Բօմբօն ,
 քու Տիլէմօնիդ կենդանութեանը . . . եւ յա-
 ջող վերագարձին . . . : — Խմենք մանաւանդ
 քրկար ստեպղինին (ստրկի գումար) յաջողու-

Թեանը համար՝ զոր իր ժլատ եւ կծծի ընտա-
նիքէն քաշել կը յուսայ բարեկենդան ընելու
համար, ըսաւ Ռօզ-Բօմբօն : Բարեբաղդարար՝
ստեպղին (ստակ) քաղելու համար խորհած հը-
նարքը գէշ չէ . . . : Ռօ՛ղ-Բօմբօն, գոչեց Նի-
նի-Մուլէն, թէ որ այդ երկդիմի հանձարարա-
նութիւնը դիտմամբ կամ առանց դիտման ը-
րիր, եկ համբուրէ դիս . . . աղջիկս : —Շը-
նորհակալ եմ . . . ամուսինս եթէ լսելու ըլ-
լայ՝ ի՞նչ կըսէ : —Ռօ՛ղ—Բօմբօն . . . ես կըր-
նամ քեզ ապահովցընել այդ մասին . . . Սուրբ
Պօղոս առաքեալը . . . կը լսես, սուրբ Պօղոս
առաքեալը . . . : Է՛հ, ըսէ նայինք . . . ի՞նչ
ըրեր է Ս. Պօղոս առաքեալը : —Ս. Պօղոս բա-
ցորոշապէս ըսած է թէ « Ամուսնացեալ մար-
դիկն այնպէս պէտք է ապրին՝ որպէս թէ կին
չունին . . . » —Ս. յդ խօսքն ինձ համար չէ,
Ֆիլէմօնին կը վերաբերի : —Ս. յո՛, ըսաւ Նինի
—Մուլէն՝ բայց սքանչելին Պօսիւէ Ս. Պօղո-
սի այս խօսքն յիշելէ ետեւ կաւելցընէ . « Եւ
հետեւաբար ամուսնացեալ կանայք ալ այնպէս
պէտք է ապրին՝ որպէս թէ այր չունին . . . »
Ուրեմն ուրիշ բան չմնար ինձ՝ բայց միայն թե-
ւերս բանալով քեզ դրկել, ուլ Ռօզ—Բօմբօն,
մանաւանդ որ Ֆիլէմօն քու այրդ ալ չէ . . .
—Ըսել չեմ ուզեր, բայց խիստ տգեղ ես, Նի-
նի—Մուլէն . . . : —Ս. յդ ալ պատճառ մ'է . . .
ուրեմն Ֆիլէմօնի նիւթած հնարքին կենդանու-
թեանը խմելով կը մտալթեմ որ ամենախոշոր

ստեպղին մ'արտադրէ . . . — Շատ անգամ ըսիր ,
ըսաւ Ռօդ—Բօմբօն , խմենք 'ի կենդանութիւն
այս օգտաւէտ բանջարին՝ որ ուսանողաց ամե-
նահարկաւոր նպարակն է : — Եւ ուրիշ ամեն
ստեպղինակերաց » յաւելցուց Տիւմուլէն :

Այս բաժակը խիստ յարմարաւոր դալով
միաձայն հաւանութեան աղաղակներով ըն-
դունուեցաւ :

« Նորին վեհափառութեան եւ իւր պալա-
տականաց թոյլատուութեամբ , ըսաւ նորէն Տիւ-
մուլէն , բաժակ մ'ալ կատաջարկեմ 'ի յաջո-
ղութիւն ինձ վերաբերեալ գործի մը՝ որ քիչ
մը նմանութիւն ունի Տիլէմօնի ստեպղինին . . .
եւ մի տքս կը վկայէ որ այս բաժակն երջան-
կաբեր պիտի ըլլայ ինձ : — Ըսէ նայինք , ինչ
է . . . — Ահա ըսեմ . « Ի կենդանութիւն իմ
ամուսնութեանս » գոչեց Տիւմուլէն ոտքի վը-
րայ ելնելով :

Այս խօսքին վրայ դարհուրելի աղաղակ ,
քրքիջ եւ դժուտոց մ'ելաւ սրահին մէջ : Նինի—
Մուլէն ամենէն աւելի կը պոռար , ոտուրները
գետինը կը զարնէր եւ կը խնդար , բերանն ան-
հեթեթ կերպիւ բանալով եւ այս խլացուցիչ ժը-
խորին վրայ իր շունչանին սուր շաշիւնն ալ ա-
ւելցընելով :

Այս փոթորիկը քիչ մը հանդարտելէ ետեւ ,
Պարբանալ թագուհին ոտքի վրայ ելաւ ու ըսաւ .
« Կը խմեմ 'ի կենդանութիւն սպառաց Նինի—
Մուլէն տիկնոջ : — Ա՛յ թագուհի , ձեր այդ

Թատրեմադթութիւնն այն աստիճան սիրտս կը
 խանդաղատէ, գոչեց Տիւմուլէն, որ ձեզ կը
 կը թողում սրտիս խորոցը մէջ կարգալ իմ ա-
 պագայ ամուսնոյս անուէր, որ է Օնտէ-Մօտէսթ-
 -Մէսալին-Անժէլ-Սէնթ-Քօլօմպեան այրի ախիւ-
 նը . . . — Ահցցէ . . . կեցցէ . . . — Աւթ-
 առն տարեկան է եւ հազար լիրայէն աւելի ե-
 կամուտ ունի, որ իր մտխրագոյն ընչացքին
 թելերէն եւ երեսին խորշումներէն շատ ըսել
 է: Այն աստիճան ալ գէր է, որ իր մէկ շր-
 շաղգեօար կրնայ վրանի տեղ ծառայել այս
 պատուարժան ընկերութեան. ուստի յոյս ու-
 նիմ որ իմ ապագայ ամուսինս բարեկենդանի
 վերջին օրը ձեզ ներկայացընեմ՝ իր հօտը
 լախող հովուուհի կերպարանքով. կուզէ-
 ին զինքը դարձի բերել, բայց ես վրաս կառ-
 նում դայն դբօսցընել, եւ կարծեմ թէ աւելի
 կախորժի. արդ՝ սէտք է որ դուք ալ օգնէք
 ինձ աղանդարամետական ծայրայեղ գեղխու-
 թեանց մէջ դայն ընկղմելու: — Ինչի մէջ
 ուզես կընկղմենք, գոչեցին: Ռօղ—Բօմբօն ալ
 ձերմակ մազին կտարտուելուն երգն սկաա-
 նուաղել իր ծանօթ եղանակովը: — Քաղաքա-
 պան զինուորները պիտի պատկատին անկէ:
 — Պիտի ըսեն անոնց թէ ակնածութիւն ըրէք
 . . . ձեր մայրն ալ թերեւս օր մ'այդ տարի-
 քին հասնի: »

Յանկարծ Պաքանալ թագուհին ռաքի վրայ
 ելաւ. գէմքը դառն եւ հեգնական ուրախու-

Թեան դարմանալի երեւոյթ մ'ունէր, եւ մէկ ձեռքը լցուն դաւաթ մը կար :

« Արսեն թէ քօլէոան իր կօթն փարսախի կոշիկներով դէպ հոս կուղայ . . . դոչեց . ուստի այս բաժակը քօլէոային համար կը խմեմ : »

Եւ խմեց : Կոչնականք որչափ եւ ուրախ էին, այս խօսքը հարաշշուկ ապաւորութիւն մ'ըրաւ վրայնին . կարծես թէ ելեքարական սարսուռ մ'անցաւ ժողովին վրայէն եւ գրեթէ ամենուն դէմքն ալ յանկարծ տխրեցաւ :

« Ա՛, Սէֆիդ . . . ըսաւ Ժաք յանդիմանական կերպով : — Քօլէոային համար կը խմեմ, դոչեց նորէն Պաքանալ թաղուհին անվահերութեամբ . թող խնայէ այն անձանց որ ապրելու փափաք ունին, եւ 'ի միասին մեռցընէ այն անձինքը՝ որք իրարմէ դատուիլ չեն ուզեր . . . : »

Ժաք եւ Սէֆիդ իրարու երեսնայեցան արագ նայուածքով մը՝ զոր իրենց բնկերները չըկրրցան նշմարել, եւ քանի մը վայրկենի հափ Պաքանալ թաղուհին մօռնջ եւ մտախոհ կեցաւ :

« Ա՛, այդ ուրիշ բան է, ըսաւ Ռօզ—Բօմբօն խրոխտ դէմքով մը . քօլէոային . . . որպէս զի այսուհետեւ անմեղ մանկունք միայն մնան աշխարհի վրայ : »

Այս դանաղան խօսքերուն հակառակ՝ Պաքանալ թաղուհեոյն ըրած ձախող ապաւորութիւնը չփարատեցաւ կոչնականաց սրտէն . Տիւմուլէն այս տխուր խօսակցութիւնը խափանել

ուղելով դոչեց . & Սասանան տանի մեռեալները . կեցցէն ողջերը , Նս ողջերուն՝ մանաւանդ բարի ողջերուն առթիւ բաժակ մը կուղեմ առաջարկել 'ի պատուական կենդանութիւն մեր զուարթութեամբ թագուհոյն , 'ի կենդանութիւն մեր կոչնաատէրին , որուն յարգելի անունը դժբաղդաբար չեմ դիտեր . որովհետեւ այս գիշեր զինքը ճանչելու պատիւ ունեցայ . ուստի ներողամիտ թող ըլլայ ինձ եթէ պարզապէս Քուշ-Թու-Նիւի(*) կենդանութեանը համար խմեմ , անուն մը՝ որ իմ համեստութեանս չըզրպչիր բնաւ , վասն զի Ադամ նախահայրն ալ ուրիշ կերպ չէր պառկեր , Ուրեմն Քուշ-Թու-Նիւի համար . — Ծնորհակալ եմ , քաղրթեղ պարոնս , ըսաւ Ժաք . եթէ ես ձեր անունը մոռնայի , Քի-Վէօ-Պօառ (արբեցող) կը կոչէի ձեզ , եւ անտարակոյս եմ որ լսելնուդ պէս & Ներկայ եմ » կը պատասխանէիք . — Այո , ներկայ , ներկայագոյն , ըսաւ Տիւմուլէն մէկ ձեռքով զինուորական ողջոյն տալով , միւսովն ալ իր մեծ դաւաթն երկնցընելով . — Մնաց որ , ըսաւ Քուշ-Թու-Նիւ մտերմական կերպով մը , մէկ մէկու հետ բաժակ բաժակի դարնելէ ետեւ՝ իրար լաւ ճանչել պէտք է իմ անունս Ժաք Ռէնըբօն է . — Ռէնըբօն , դոչեց Տիւմու-

(*) Ընթերցողք կը յիշեն որ Քուշ-Թու-Նիւ՝ & Մերկ պառկող » ըսել է .

լէն զարմանալով երբոր այս անունը լսեց, թէ
եւ կէս գինով էր. ձեր անունը Ռէնըրթօն է.
— Ամենակատարեալ Ռէնըրթօն . . . ինչո՞ւ կը
զարմանաք : — Անոր համար որ այդ անունով
հին ընտանիք մը կայ . . . Ռէնըրթօնի կոմսերը :
— Իրան կըսէք, զարմանալի՛ բան, ըսաւ Քուշ-
թու-Նիւ ծիծաղելով : — Այո՛, Ռէնըրթօնի կոմ-
սերը՝ որք միանգամայն Քարտուլիլի դուքս են,
աւելցուց Տիւմուլէն : — Ուրեմն, ըսէք նայինք,
քաղրթեղ պարոննա, արդեօք այդպիսի մեծ
ընտանիքէ մը սերեալ ըլլալու երեւոյթ ունի՞մ
. . . ես՝ որ զուարճութեան ու կերուխուսի
դբաղեալ գործաւոր մ'եմ : Ի՛նչ, գործաւոր մի՛
. . . արդեօք հազար ու մէկ գիշերներուն մէջ
ենք, գոչեց Տիւմուլէն առաւել եւս զարմա-
նալով. Քաղտասարի խնճոյք մը կուտաք մեզ,
հանդերձ քառաձի կառքերով . . . եւ գոր-
ծաւոր մ'էք . . . կաղաչեմ, ըսէք ինձ ձեր
արհեստը . . . որպէս զի ես ալ ատոր հետեւիմ եւ
թողում Տիրոջն այդին՝ ուր գէշ աղէկ տաշտա-
թաղ ընելու կ'զբաղիմ : — Բայց, պարոնն, չեղ-
նէք կարծէք թէ Պանքայի տոմսակներու կամ
աչք խաբող դրամներու գործաւոր եմ, ըսաւ
Ժաք ծիծաղելով : — Ա՛, ընկեր . . . այդպիսի
կարծիք մը . . . — Ներելի է ունենալ իմ այս
շուայլութիւնս տեսնելով . . . բայց ձեր տա-
րակոյսը փարատեմ . . . ըրած ծախքս ժա-
ռանդութեան ստակ է : — Անշուշտ հօրեղբայր
կամ մօրեղբայր մ'է կերած խմածնիդ, ըսաւ

Տիւմուլէն շողոքորթ կերպիւ մը : — Ճշմարիտն
ըսելով . . . ես ալ չեմ գիտեր . . . — Ի՞նչ
կըսէք , կերած ստակնուդ ուրկէ գալը չէք
գիտեր : — Նախ պէտք է գիտնաք որ իմ հայրս
հնահաւաք (հին քուրջեր հաւաքող) մ'էր . . .
— Հնահաւաք մի՛ , գոչեց Տիւմուլէն բոլորո-
վին ասլշելով , թէ եւ սովորաբար իր արբե-
ցութեան ընկերներն ընտրելու մասին անսխալ
էր . բայց իւր առաջին զարմանքն անցնելէ
ետեւ՝ զմայլելի քաղցրութեամբ մը յարեց .
— Սակայն հնահաւաքներ կան՝ որ . . . խիստ ըն-
տիր մարդիկ են : — Ս,յդ խօսքը ծաղրելու մտք
կըսէք , ըսաւ Չաք , եւ սակայն ճշմարիտ է .
հայրս խիստ բանխառն եւ ընտիր մարդ մ'էր ,
Կատարեալ գիտնականի մը շափ Յունարէն ու
Լատիներէն կը խօսէր , եւ ինձ ալ միշտ կըսէր
թէ շափաբերական ուսմանց մէջ իր ոտքն եկող
չկար , թող որ շատ ալ ճանապարհորդութիւն
ըրած էր . . . — Ուրեմն , ըսաւ Տիւմուլէն
հետզհետէ սթամիելով , Ռէնըբօնի կոմսերուն ըն-
տանիքէն ըլլալնիդ շատ հաւանական է : — Ըսել
է որ , յարեց անդիէն Ռօզ-Բօմբօն ծիծաղելով ,
ձեր հայրն հետաքրքրութեան եւ պատուոյ հա-
մար քուրջ կը հաւաքէր : — Ոչ , ոչ , ասլրելու
համար , ըսաւ Չաք , բայց երխասարդութեանը
ժամանակ ունեւոր է եղեր . . . : Կերեւի որ կամ
մանաւանդ իր խեղճ վիճակին մէջ չէր երեւիր
որ իր մէկ հարուստ ազգականին գիտեր էր ,
բայց այն հարուստ ազգականը & Բարի եկար »

ըսեր էր : Այն ժամանակ իր յուսարէնէն լատի-
նիքէնէն եւ հափաքերու թեմէն օգուտ քաղել
ուզեր էր . բայց չէր յաջողեր : Կերեւի որ այն
ժամանակները Փարիզի մէջ դիտնականները կը
վիտային : Ուստի անօթի չը սատկելու համար
իր ճանկաւոր դաւադանին ծայրով հաց փնտը-
ռելու ելաւ , եւ յիրաւի գտաւ ալ , վասն զի
հօրաքրոս մեռնելէն ետեւ՝ որուն հետ գեղը կը
քնակէինք , երբոր Փարիզ դարձայ , ես ալ երկու
տարի այն հացը կերայ : — Ուրեմն ձեր յարգելի
հայրը տեսակ մը փիլիսոփայ էր , ըսաւ Տիւմուլէն ,
եւ կերեւի թէ շեղջակոյտի մը մէջէ գանձ մը
գտած է , ապա թէ ոչ՝ ձեր այդ ըսած ժառան-
գութեան խելքս չհասնիր : — Մի արտորաք ,
պարոն , կեցիք որ խօսքս լմնցընեմ . Տասներ-
կու տարեկան էի , Պ . Թրիբօի գործարանն ա-
շակերտ մտայ . երկու տարի ետքը հայրս դիպ-
ուածով մը մեռաւ , մեր ձեռնայարկի խցիկին բո-
լոր կարասին ինձ ժառանգութիւն թողուց ,
փսիաթ մը , աթոռ մ'ու սեղսն մը . միանգամայն
Քօլօնիայի ջրոյ սրուակներ պահելիք հին տու-
փի մը մէջ քանի մը թուղթեր՝ որք անգղիե-
րէն գրուած կերեւին , եւ պղնձէ միտալ մը , որ
չղթայովը մէկտեղ կէս ֆրանք հապիւ կար-
ժէր . . . : Այն թուղթերուն վրայ հայրս երբէք
խօսք մ'ըրած չէր ինձ : Ուստի չգիտնալով ա-
նոնց ինչ բանի պիտանաւոր ըլլալը , փոխանակ
այրելու՝ հին սնտուկի մը տակը նետեցի , եւ աղէկ
օր այնպէս եմ ըրեր , ինչու որ այն թուղթե-

բուն վրայ ստակ փոխ տուին ինձ . — Ի՛նչ ա-
նակնուհեղի բան , ըսաւ Տիւմուլէն . ըսել է թէ
ձեր քով այդպիսի թուղթեր գանուելը գիտեն
եղեր : — Հին առնելիքներ գանուու ետեւէ ե-
ղող մարդոցմէ մէկն եկաւ Ս. Քիզը գտաւ , ան
ալ ինձ խօսեցաւ , եւ մարդը թուղթերը կար-
գալէ ետեւ ըսաւ ինձ թէ գործը երկբայելի է ,
բայց դանձնք դրաւ առնելով տասն հազար Ֆր-
րանք փոխ կուտայ . . . եթէ հաճիմ . . .
Մտածէ անգամ մը , տասն հազար Ֆրանք . . .
գանձ մ'էր ինձ համար . ուստի մէկէն ընդու-
նեցի : . . . — Բայց պէտք էր մտածելիք որ ձեր
առնելիքի թուղթերը կարելի է խիստ մեծ ար-
ժէք ունէին . . . — Չեմ կարծեր . . . որովհե-
տեւ հայրս՝ որ անշուշտ անոնց արժէքը գիտէր ,
օգուտ մը չէր քաղած անոնցմէ . . . ասկէց զատ՝
տասն հազար Ֆրանքի կլոր սակիները՝ որ մէկէն
'ի մէկ չեմ գիտեր ուսկից ձեռքս կլինային . . .
փախցընելու կուզամ . . . իսկոյն առի . . .
Միայն թէ գործակատարը երաշխաւորութեան
փոխանակադիր մ'ստորագրել տուաւ ինձ : — Ստո-
րագրեցի՞ք : — Ինչո՞ւ պիտի շտորագրէի . գոր-
ծակատարն ըսաւ ինձ թէ պարզասլէս ձեւի հա-
մար էր ստորագրելս , եւ յիրաւի ալ այնպէս էր ,
վասն զի արդէն տասնեւհինգ օրէն աւելի է որ
վճարման պայմանաժամն անցած է եւ ինձ բան
մ'ըսող չեղաւ . . . այն ստակէն տակաւին հա-
զար Ֆրանքի չափ մնացորդ կայ գործակատա-
րին քով , զոր գանձապահ ըրի ինձ՝ տեսնելով

որ քովը սնտուկ մը կար . . . : Ահա , մեծփոր
 տարուս , այն տասն հազար Քրանքը ձեռքս անց-
 նելէն ՚ի վեր ասանկ աստուրնէ մինչև իրիկուն
 կուտնմ կը խմեմ . ցախսարեկի պէս հրճուելով
 որ դարչելի Պ . Թրիբոյի բերնին հոտը մտիկ ը-
 նելէ ազատեցայ :

Այս անունն արտասանած ժամանակ , Ժա-
 քի դէմքը՝ որ մինչև այն ժամանակ զուարթ-
 էր՝ յանկարծ տխրեցաւ . Սէֆիդ՝ որ քիչ մ'ա-
 ռաջ իր միտքը դրաւող դժնդակ ապաւո-
 թութեանէն ազատեր էր , անհանգիստ սրտով
 Ժաքին երեսը նայեցաւ . վասն զի զիտէր թէ
 Թրիբոյի անունը լսած ժամանակ ինչ աստիճան
 կը դայրանար :

« Եր ճանչէ՞ք Պ . Թրիբոյն , յարեց Քուչ-Թու-
 -Նիւ . այնպիսի մարդ մ'է , որ բարիները հար-
 եւ հարերը հարադոյն կրնէ . . . : « Լաւ հեծնո-
 ղին լաւ ձի » կըսեն . բայց պէտք էր ըսել « Լաւ
 վարպետին լաւ գործաւոր . . . : » Ո՛հ , երբոր
 այս մարդը միտքս կը բերեմ . . . ըսաւ Քուչ-Թու-
 -Նիւ . . . եւ կռուին ու ժգնութեամբ սեղանին
 դարկաւ : — Չգէ տա մարդը , Ժաք , եւ քիչ մ'աչ
 ուրիշ բանի վրայ խօսինք , ըսաւ Պաքանալ
 Թագուհին : — Օ՛ն , Ռօզ—Բօմբօն . . . քիչ մը
 խնդացու զինքը . . . : — Խնդալու տխորժ
 հունիմ , պատասխանեց Ժաք՝ խստիւ եւ զինիին
 ազդեցութեանէն գլուխը տաքցած կերպով մը .
 չեմ կրնար ինքզինքս դսպել . երբոր այն մար-
 դը միտքս կուղայ . . . կրակ կը կարիմ , ճեռ-

Ներսէս է թէ Բնչալէս կը վարուի գործաւորաց
հետ . « Չարանճի գործաւորներ . . . գարշելի
գործաւորներ , կըսէ , կը տրանջեն թէ Բնչալէս
Քէ Հոյ շոյ . որոնց Բնչալէս հրացանի «լա՛ Բնչալէ-
ս» է . . . « Եւ ինչո՞ւ հանրապետներ . . . » Եւ գոր-
ծատան մէջ բանող խեղճ տղայքը տեսնելու է ,
որք մեծ մարդոց չափ աշխատելով հողինին
բերաննին կուգայ եւ հինգով տասնով կը մեռ-
նին . . . բայց որոնք հողն է , մեռածներուն
տեղ խեղճներ կուգան . . . » Զի չեն
որ սատկածին տեղ մինչեւ որ ստակ չտայ՝ ու-
րիշը չկրնայ դնել : — Հասկըցանք , նախկին վար-
պետդ չես սիրեր , ըսաւ Տիւմուլէն առաւել
եւս զարմանալով իր կոչնատիրոջ դժգոհ եւ
մտահոգ դէմքին վրայ , եւ մանաւանդ ցաւե-
լով որ խօսակցութիւնն այս տխուր դարձուածքն
առաւ . ուստի քանի մը խօսք ըսաւ Պաքանալ
Թագուհեոյն ականջն 'ի վար , եւ ան ալ խոր-
հրդակցական ակնարկով մը պատասխանեց :
— Այ . . . Պ . Թրիքօն չեմ սիրեր , ըսաւ նորէն
Քուշ-Թու-Նիւ , եւ կատեմ դինքը . գիտէք ին-
չու համար . վասն զի իմ այսպէս անառակու-
թեան մէջ իյնալուս պատճառը կէս մ'ալ ան
է . այս խօսքս պարծանք մը չէ , այլ ճշմար-
տութիւն է . . . » Իր քով աշկերտ եղած ժամա-
նակս այն աստիճան եռանդուն փափաք ունէի
աշխատութեան , որ շապիկս անդամ կը հանէի .
այս պատճառաւ է որ իմ անունս Քուշ-Թու-
Նիւ դրին . . . » Սրդ՝ պարապ տեղը հողիս

կը հանէի . . . երբէք քաջալերական խօսք մը
չլսեցի : Ամենէն առաջ կերթայի դործատուներ
եւ ամենէն ետեւ դուրս կելնէի . բնաւ տես-
նող չկար . . . : Օր մը մեքենային վրայ իյնա-
լով վիրաւորեցայ . . . զիս հիւանդանոց տա-
րին . . . դեռ լաւ մը չառողջացած ելայ , նո-
րէն աշխատիլ սկսայ . . . դիտող չեղաւ . բայց
հոգս չէր . ես անձանձիր կաշխատէի . . . մինչ-
դեռ ուրիշները՝ որ ինձմէ աւելի փորձ էին եւ
վարպետը լաւ կը ճանչէին , անդադար եւ 'ի
դուր կրտէին ինձ համար . « Ն'նչ անխելք ար-
դայ է որ փուճ տեղը մէջքին ոսկրները կը կո-
տրատէ . . . ինչ օգուտ պիտի տեսնէ . . . :
Աշխատէ , հողիդ հանէ , անմիտ , աւելի կամ
պակաս բան մ'ըլլալիք չունիս : » Այս խօս-
քերուն ահանջ չէի կախեր ամենեւին : Վեր-
ջապէս օր մը , բարի ծերունիի մը՝ որ հայր Ար-
սէն կը կոչուէր եւ երկար ժամանակէ 'ի վեր
դործատան մէջ կաշխատէր եւ բարի վարուց
օրինակ մ'էր , ուժէ իյնալուն պատճառաւ ճան-
բայ արուեցաւ : Այս բանը մահու հարուած
մ'էր խեղձ ծերունիին . հիւանդոս կին մ'ու-
նէր , եւ ինքն ալ ծեր ու տկար ըլլալուն չէր
կրնար ուրիշ տեղ մը մտնել . . . : Երբոր դոր-
ծատան դիտարը խեղձին ճանքուիլն իրեն իմա-
ցուց , ողորմելին չէր ուղեր հաւտալ , եւ յու-
սահատութենէն լալ սկսաւ : Նոյն միջոցին Պ.
Թրիբօ կանցնէր . . . հայր Արսէն ձեռնամած
պաղատեցաւ անոր խնդրելով որ դոնէ իր վարձ-

քին կէսը տալով զինքը վար դնէ : — Ի՞նչ կը
տես , մարդ , ըսաւ Պ. Թրիրօ ուները թոթվե-
լով , միթէ գործարանս անկելանոց պիտի ընեմ .
աշխատելու կարող չես , դնա : — Բայց քառ-
սուն տարի շարունակ աշխատեցայ , ալ ի՞նչ
կուղէք որ ըլլամ , սէ , տէր Աստուած , կըսէր
տարաբաղդ ծերունին : — Այդ իմ մտածելիք բն-
նքս է , պատասխանեց Պ. Թրիրօ , եւ գրագրին
գառնալով « Շարաթականին հաշիւը տեսէք ու
ճանբեցէք երթայ » ըսաւ : Գնաց հայր Արսէն .
այն . . . դնաց . . . բայց նոյն գիշերը ինքն
ու կինն ածուխի կաղով իրենք զիրենք խեղ-
դեցին :

Արդ , ես տղայ էի , բայց հայր Արսէնի
գէպքէն բան մը սովբեցայ , այսինքն թէ մեր
չարաչար աշխատիլը պարտաւ բան էր , թէ շա-
հր միայն գործարանատէրը պիտի վայելէր՝ ա-
ռանց մեր յարգը ճանչելու եւ գոհութիւն
մ'իսկ յայտնելու , եւ թէ՛ մեր ծերութեան ժա-
մանակ փողոցի մ'անկիւնը սատկելէ դատ ու-
րիշ յոյս չկար մեզ համար : Այսպէս խորհելով
աշխատելու եռանդս մարեցաւ , եւ ըսի մտօքս .
« Իմ պարտականութենէս աւելի աշխատելով
ի՞նչ օգուտ պիտի ըլլայ ինձ : Աթէ իմ աշխա-
տութեամբս Պ. Թրիրօ միլիոն վաստրկի՛ անկէց
տասկ մը շահ կայ ինձ . ոչ , » ուստի նկատելով
որ աշխատութենէս ինքնասիրութեանս կամ
անձնական շահուս օգուտ մը չկար , գղուեցայ ,
եւ իմ վարձքս ստանալու համար որչափ գոր-

ձեւ հարկ էր՝ այնչափ միայն աշխատիլ սկսայ՝
անհող ծոյլ եւ մուլի եղայ եւ կըսէի ես ինձ .
& Նրբոր աշխատելէ բողորովին ձանձրանամ,
հայր Սրտէնին եւ կնոջն ըրածը կընեմ . . . »

Ժաք այս դառն խորհրդածութիւններէն
ակամայ յափշտակուած միջոցին , միւս կոչնա-
կանները՝ Տիւմուլէնի եւ Պաքանալ թագուե-
ւոյն մունջ ակնարկութիւններէն ազդուելով
լռելեայն միաբաներ էին . ուստի երբոր Պա-
քանալ թագուեիս նշան մը տալով սեղա-
նին վրայ ցատկեց եւ շիշերն ու դաւաթ-
ներն ոտքովը տապալեց , ամենն ալ ոտքի վրայ
եղան եւ Նինի—Մուլէնի շունչանին հետ ձայ-
նակցութեամբ գոչեցին « Մրրկածուփ կակաչի
պարը . . . Մրրկածուփ կակաչի պարը կու-
ղենք : »

Ս.յս ցնծալից աղաղակէն , որ հրալից ուռմ-
բի պայթման պէս յանկարծ գոռաց , Ժաք ցըն-
ցուեցաւ . յետոյ դարմացմամբ իր կոչնականաց
նայելով ձեռքը ձակատը տարաւ որպէս թէ
զինքը գրաւող դժնդակ զաղափարները վանել
կուզէր , եւ ապա գոչեց . « Իրաւունք ունիք .
ձն , յառաջ քալենք , մէկ , երկուք , եւ կեց-
ցէ սւրախութիւն : »

Վայրկենի մը մէջ կորովի բազուկներ սե-
ղանը վերցուցին , ինձոյից ընդարձակ սրահին
մէկ անկիւնը քշեցին . հանդիսականք աթու-
ներու նստարաններու եւ սլատուհանաց եզր-
ներուն վրայ խոնեցան եւ Քուշ-Թու-Նիւի .

Պաքանալ թագուհւոյն , Նինի—Մուլէնի եւ
Ռօղ—Բօմբոնի ձեւացուցած ընդդիմապարհին
ներդաշնակցելու համար Ռօմանոսոց հանրածանօթ
երգը միաձայն նուագել սկսան :

Տիւմուլէն՝ իր շունչանը կոչնականներէն մէ-
կուն յանձնելով իր հռոմէական փետրադարդ
անհեթեթ սաղաւարտը գլուխը դրաւ , եւ աե-
ղանի նստած ժամանակ թիկնոցը հանած ըլլա-
լուն , իր այլածեւ կերպարանքին բոլոր շքե-
ղութիւնը տեսնուիլ սկսաւ : Չկան թեիամորթ
պատենի ձեւով գրաւը պատշաճապէս կը վերջա-
ւորէր փետրադարդ բաճկոնով մը՝ որ պարարակ
եղին ուղեկցող վայրենեաց հաղածին կը նմանէր :
Նինի—Մուլէն մեծ փոր մ'եւ բարակ սրունքներ
ունենալով , իր սրունից սակրներն իր եղբայրս
լայն կոշկացը մէջ կը տատանէին :

Փոքրիկ Ռօղ—Բօմբօն , ոստիկանութեան
դիւարիլը ծուռ դրած , երկու ձեռքը տախտափն
գրպաններուն մէջ խոթած , եւ իրանը քիչ մը
դէպ յառաջ ծռած , աջէն ձախ իր ազդերաց
վրայ ծածանելով երկու հանդիպաքայլ առաւ
Նինի—Մուլէնի հետ՝ որ ինքզինք ամփոփած՝
յառաջ կուգար ոստոստելով , ձախ սրունքը
կտարելով եւ աջն առաջ նետելով , ոտքին ծայ-
րը վեր առած եւ կրունկը տախտակամածին
քսելով . ասկէց դատ՝ ձախ ձեռքը ծոծրակին
կը դարնէր , եւ միահաղոյն շարժմամբ աջ թեւն
ալ երկնցընելով կարծես թէ դիմացիններուն ա-
չաց մէջ փոշի նետել կուզէր :

Այս ընդդիմապարը մեծ յաջողութիւնս դրա-
նելով եռանդազին ծախահարութեամբ ընդուն-
ուեցաւ՝ թէ եւ Մրրկածուի Ասկաչի պարին ան-
մեղ նախաշաւիղն էր : Յանկարծ դուռը բաց-
ուեցաւ , եւ սպասաւորներէն մէկն աչքովը
Քուչ-Թու-Նիւն վայրկեան մը փնտռելէ ետեւ՝
վազեց անոր քով եւ ախանջն 'ի վար բան մ'ը-
սաւ :

« Ն'ս , դոչեց ժաք բարձրաձայնս ծիծաղե-
լով . կատանկ է այդ : »

Սպասաւորը քանի մը խօսք ալ աւելցրնե-
լով , Քուչ-Թու-Նիւն դէմքը մէկէն 'ի մէկ այ-
լայլեցաւ , եւ « շատ աղէկ . . . կերթամ » ը-
սելով քանի մը քայլ դէպ 'ի դուռը դնաց :

« Ի՞նչ կայ , ժաք , հարցուց Պաքանալ թա-
դուհին դարձանքով : — Հիմա կուգամ , թող իմ
տեղս ուրիշ մը խաղայ , դուք պարը շարունա-
կեցէք , ըսաւ Քուչ-Թու-Նիւն , եւ շտապով
դուրս ելաւ : — Թերեւս կերակրոց հաշուեցու-
ցակին մէջ բան մտցուած է՝ կարգադրելու
դնաց , ըսաւ Տիւմուլէն , հիմա կը դառնայ
կուգայ : — Անշուշտ այդպէս պիտի ըլլայ , ըսաւ
Սէֆիդ : Հիմա կարգը ասպետին է , ըսաւ ժա-
քին տեղն անցնողին դառնալով , եւ ընդդիմա-
պարը շարունակեց :

Նինի—Մուլէն աջովը Ռօդ—Բօմբօնի եւ
ձախտիլն ալ Պաքանալ թադուհուոյն ձեռքէն բռն-
նած էր՝ երկուքին մէջ տեղը աստանելու հա-
մար . պարի ձեւ մը՝ որուն մէջ Նինի—Մուլէ-

'նի ծաղրաշարժ խեղկատակութիւնն անհնար էր
 նկարագրել : Նոյն միջոցին դուռը նորէն բաց-
 ուեցաւ եւ թաքը դուրս կանչող սպասաւորը
 խուճապեալ դէմքով մը Սէֆիդի քովն երթա-
 լով անոր ալ տկանջն 'ի վար բան մ'ըսաւ :
 Իսկոյն Պաքանալ թաղուհինն երեսին գոյնը
 նետեց , սուր ճիչ մ'արձակեց , եւ շտապով վա-
 ղեց դռնէն դուրս ելաւ առանց խօսք մ'ար-
 ասանելու , եւ բոլոր կոչնականք ապշեցան
 մնացին :



ԳԼՈՒԽ Դ.

ՀՐԱԺԱՐԱԿԱՆ ՈՂՋՈՑՆՔ

Պաքանալ թաղուհինն ճաշատան սպասա-
 ւորին հետ սանդուղէն վար իջաւ : Գուռը կառք
 մը կար , որուն մէջ էր Քուշ-թուճիւ՛ այն մար-
 դոց մէկուն հետ՝ որք երկու ժամ առաջ Շաթ-
 լէի հրապարակին մէջ կեցած կը խօսակցէին :
 Արբոր Սէֆիդ կառքին քով հասաւ , մարդը վար
 իջաւ եւ ժամացոյցը նայելով ըսաւ թաքին .
 « Քառորդ մը ժամանակ կուտամ ձեզ . . . առ-
 կէց աւելի բան մը չեմ կրնար ընել , բարձր ար-
 դաս . . . այնուհետեւ . . . պէտք է ճանաչ
 ելնէք . . . : Զըլլայ որ ձեռքերնուս փախչե-

լու փորձ փորձէք, վասն զի մեք՝ քանի որ կառքը հոս կենայ՝ դռնակներուն քով կը հսկենք : »

Սէֆիզ մէկ ցատկելուն կառքին մէջ նետուեցաւ : Սրտին թունդ ելնելէն մինչեւ այն ժամանակ խօսք մը չէր կրցած ընել . բայց երբոր ծաքի քով նստելով դէմքին այլայլութիւնը նշմարեց, ալ չկրնալով ինքզինք բռնել . « Ի՞նչ կայ, ի՞նչ կուզեն քեզնէ, դոչեց : — Պարտքի համար քանտ կը տանին . . . ըստ ծաք սրտաբեկ կերպիւ : — Քեզ, դոչեց Սէֆիզ աղեկտուր ձայնով : — Այո, այն երաշխաւորութեան փոխանակագրին համար՝ դորդորձակատարն ինձ ստորագրել տուաւ՝ ըսելով թէ ձեւի համար էր : Անդգամը : — Բայց դուն անոր քով ստակ չունիս . . . թող վար դնէ իբրեւ թերհաշիւ : — Մէկ ստակս չէ մնացած : Գորձակատարը դատաստանատան նուիրակաց բերնով իմաց կուտայ ինձ որ փոխանակագիրը վճարած չըլլալուս համար՝ իր քով մնացած հազար ֆրանքը չպիտի տայ ինձ . . . : — Աւրեմն հիմա այդ մարդուն երթանք եւ աղաչենք որ քեզ բանտարկել չտայ : Սիթէ ինք չէր որ եկաւ այդ ստակը քեզ փոխ տալ առաջարկեց . ես քաջ դիտեմ այս բանը, վասն զի նախ ինձ խօսք բացաւ . ուստի կը յուսամ որ կը դժայ : — Արդ՞ թայ մի . . . սեղանաւորի գորձակատար մը . . . դարմանալի խօսքեր կընես . . . : — Ըսել է որ . . . ամենեւին յոյս չկայ, դոչեց Սէֆիզ երկու ձեռքն անձկութեամբ իրար կցելով . յե-

տոյ յարեց . « Բայց վերջապէս պէտք չէ բողո-
բովին յուսահատիլ . . . : Ինքը խօսք տուած
էր քեզ . . . : — Այո՛ , բայց ահա կը տեսնու
թէ ինչպէս կը կատարէ իր խոստումը , ըսաւ
Ժաք դառնութեամբ . ես ստորագրութիւն
տուի՝ առանց ամենեւին դիտնալու թէ ինչ էր
ստորագրածս . վճարօրն անցած է . եւ հիմա ա-
նոր ըրածն օրինաւորութեան համաձայն ըլլա-
լով , դէմ կենալս բնաւ օգուտ մը չըներ , այս
ամենն ինձ հասկըցուցին . . . : — Բայց կրնան
քեզ երկար ժամանակ բանալ պահել . . . :
— Հինգ տարի . . . եթէ չվճարեմ . . . : Եւ
որովհետեւ յաւիտեան չեմ կրնար վճարել , ուս-
տի բանալ մնալուս բնաւ տարակոյս չկայ . . . :
Ա՛հ , այս ի՞նչ դժբաղդութիւն է որ եկաւ մեր
գլխուն , եւ ահա ճար մ' ալ չենք կրնար դըտ-
նել » ըսաւ Սէֆիղ գլուխը ձեռացը մէջ ծած-
կելով :

« Մտիկ ըրէ , Սէֆիղ , ըսաւ Ժաք վշտա-
գին ձայնիւ . քանի որ այս կառքին մէջ նստած
եմ , մէկ բան մը միայն կը մտածեմ , այսինքն
թէ քու վիճակդ ի՞նչ պիտի ըլլայ : — Ինձ հա-
մար հոգ մի ըներ . . . : — Քեզ համար հոգ
չընեմ , խենթ ես . . . ի՞նչ պիտի ընես : Մեր
երկու սենեկաց կարասին երկու հարիւր ֆրանք
չըներ : Այնչափ յիմարաբար ստակ մսխեցինք
որ մեր տան վարձն ալ չենք վճարած , եւ ե-
րեք ամսական պարտք ունինք . . . ուրեմն մեր
կարասեաց վաճառումէն ալ յոյսչկայ քեզ հա-

մար . . . եւ առանց մէկ ստակի պիտի մնաս :
Ես գոնէ բանտին մէջ անօթի չեմ մնար . . .
իսկ դու . . . ի՞նչպէս պիտի ապրիս : — Այդ
մտածութիւններով հիմակուց տազնապիլէդ
ի՞նչ կեղնէ : — Բայց կը հարցընեմ քեզ թէ վաղն
ի՞նչպէս պիտի ապրիս , գոչեց ծաք : — Այս
հանդերձս եւ ուրիշ քանի մը բան կը ծախեմ ,
ստրկին կէսը քեզ կը զրկեմ , մնացեալը կը պա-
հեմ , եւ անով քանի մ'օր կանցունեմ : — Ետ-
քը՞ : — Ետքն ալ . . . ի՞նչ դիտեամ . . . այն
ատեն կը մտածենք . . . հիմա ի՞նչ ըսեմ քեզ . . . :
— Մտիկ ըրէ , Սէֆիդ , ըսաւ ծաք սրտակէզ
մորմոքմամբ . հիմա կը տեսնեմ թէ քեզ սրչափ
կը սիրեմ . . . սիրտս կը տրորի մտածելով որ
քեզնէ պիտի բաժնուիմ . . . քու ինչ ընելի-
քըդ եւ ըլլալիքդ չգիտնալուս համար կը սար-
սափիմ . . . : » Յետոյ ձեռքը ճակտին վրայ
դնելով աւելցուց . « Ար տեսնես , մեր այս կոր-
ծանման պատճառը՝ « օրն այսօր է , վաղը դա-
լիք չունի » ըսելնիս եղաւ . ահա կը տեսնես
որ վաղը եկաւ հասաւ : Արդ՝ երբոր ես քու
քովդ չըլլամ , երբոր այդ վաճառելիք լաթե-
բուդ ստակը հատցունես . . . քանի որ աչ-
խատելու ալ անկարող ես . . . ի՞նչ պիտի ը-
նես . . . կուզես որ ընելիքդ ես ըսեմ քեզ . . .
դիս պիտի մոռնաս եւ . . . : »

Եւ որպէս թէ ինք ալ սոսկալով իր այս
մտածութենէն , յուսահատ կատաղութեամբ գո-
չեց . « Ա՛հ , եթէ դիտնայի որ վերջը հոն պի-

տի հասնի , դու իսս գեանի քարերուն զարնելով
կը ջախջախէի : »

Սէֆիղ ծաքին միտքը հասկընալով , պա-
րանոցին փաթ թուեցաւ ու կիրքով մ'ըսաւ .
« Ե՞ս , ուրիշ մարդ սիրեմ . . . անհնարին բան
է . վասն ես ալ քեզ պէս հիմա կը տեսնեմ թէ
նրչափ քեզ կը սիրեմ եղեր : — Բայց ապրելու
համար . . . խեղճ Սէֆիղս . . . ապրելու հա-
մար . . . : — Ի՞նչ պիտի ընեմ , արիութիւնը
ձեռք կառնուեմ , կերթամ առաջուան պէս քը-
րոջս հետ կը նստիմ . . . կաշխատիմ , եւ հացս
կը պաճարեմ . . . : Այն ժամանակ քեզ տես-
նելու համար միայն դուրս կելնեմ . . . : Հար-
կաւ այդ դորձակատարը քանի մ'օր ետքը պի-
տի մտածէ որ դուն չես կրնար տասն հազար
Ֆրանք վճարել իրեն , քեզ բանտէն արձակել
կուտայ . ես ալ մինչեւ այն ժամանակ աշխատե-
լու կը վարժուիմ . . . դուն ալ կը տեսնես եւ
նոյն վարժութիւնը ձեռք առնլով աղքատօրէն
բայց հանդարտ սրտով կապրինք քեզ հետ . . .
վաստակնիս այս եղած կըլլայ , որ դոնէ վեց ա-
միս դրօսանք ըրինք մէկտեղ , մինչդեռ ուրիշ
չատերը կեանքերնուն մէջ դրօսանքն ինչ ըլ-
լալը չեն գիտեր . հաւատան խօսքիս , սիրելի
Ծաք . . . : Այս բանն օգտակար խրատ մը պի-
տի ըլլայ ինձ : Յթէ դիս կը սիրես , ամենեւին
հոգ մի ընէր ինձ համար . ես հազար անգամ ա-
ւելի կը սիրեմ մեռնիլ՝ քան թէ ուրիշ տարիա-
ւոր մ'ունենալ : — Արեւմն համբուրէ դիս . . . »

ըսաւ թաք արտասուալից աչօք . կը հաւատամ
խօսքիդ . . . դու զիս կը քաջալերես թէ ներ-
կային եւ թէ ապագային համար . . . իրա-
ւունք ունիս , պէտք է ջանանք վերստին աչ-
խատութեան ձեռք զարնելու , կամ եթէ ոչ . . .
հայր Արսէնին ածխոյ գրուանը . . . վասն զի . . .
գիտցած եղիր որ . . . աւելցուց թաք ցած ձայ-
նիւ եւ դողդողալով , վեց ամսէ 'ի վեր գինովի
պէս էի , հիմա կ'սթափիմ . . . եւ կը տեսնեմ
թէ ուր կերթայինք . . . : Մտակնիս հատնե-
լէն ետեւ կարելի էր որ ես գողութեան սկսէի ,
դուն ալ . . . : — Ա՛հ , թաք , զիս կը վախցը-
նես , մի ըսեր այդ բանը , գոչեց Սէֆիդ՝ Քուչ-
-Թու-Նիւի խօսքը կարելով . երդում կուտամ
քեզ որ քրոջս քովը պիտի դառնամ եւ քա-
ջութեամբ աշխատիմ . . . : »

Պաքանալ թագուհին անկեղծութեամբ կը
խօսէր , եւ հաստատ մտօք իր խօսքը կատա-
րել կուղէր . իր սիրտը դեռ բոլորովին դէշցած
չէր . չքաւորութիւնն ու թշուառութիւնը՝ շա-
տերու պէս իրեն ալ մոլորելուն պատճառ եղած
էին . մինչեւ այն ժամանակ գոնէ իր սրտին հրա-
պուրանացը հետեւեր էր՝ առանց ցած եւ շա-
հասէր նկատմանց , հիմա ալ թաքին դժնդակ
կացութիւնը տեսնելով սէրն առաւել կը բոր-
բոքէր , եւ ինք իր վրայ վստահութիւն մը կը դ-
գար երդում ընելու՝ որ երթայ Մայէօի քով ,
եւ կրկին այն չոր ու անդուլ աշխատանաց
կեանքը ձեռք առնու , այն դառն կարօտու-

Թեանց կեանքը՝ որուն արդէն չէր կրցեր դիմանալ, եւ որ առաւել անտանելի պիտի ըլլար իրեն քանի որ դատարկ եւ դքսասէր կեանք մը վարելու վարժուեր էր : Այսու ամենայնիւ, ժաքին տուած քաջալերական խոստումներն անոր վիշտն ու սրտատանջութիւնն սիտիեցին . ժաք բաւական խելք եւ սիրտ ունէր հասկընալու համար որ այն դահավէժ զառ 'ի վայրը՝ որուն վրայ ժամանակէ մ'ի վեր ինքզինք կուրարար ձգեր էր, հարկաւ զինքն ու Սէֆիզ կորստեան անդունդը պիտի գլորէր :

Գատաստանի նուիրակներէն մէկը կառքին դռնակին դարնելով՝ ըսաւ ժաքին . « Տղան, հինգ վայրկեան մնաց, շուտ ըրէք : — Օ՛ն, քեզ տեսնեմ, աղջիկս . . . քաջասիրտ եղիր, ըսաւ ժաք : — Հող մի ըներ այդ կողմէն եւ վատահեղիր քաջասրտութեանս վրայ : — Նորէն վեր չե՞ս ելներ : — Ա՛հ, ոչ, ըսաւ Սէֆիզ, այս հանդէսն ու կոչունքը նողկանք կուտայ ինձ հիմա : — Ամեն ծախքերն ալ վճարուած են . . . հիմա սպասաւորներէն մէկուն բերնով իմաց կուտամ որ մեզ չսպասեն, ըսաւ ժաք . մեծ զարմանքի մէջ պիտի իյնան, բայց հող չէ . . . — Նրանի՛ թէ կարենայիր հետս գալ մինչեւ մեր տունը, ըսաւ Սէֆիզ, կարծեմ թէ այս մարդն ալ դէմ չկենար, վասն զի այդ կերպարանքով Սէնթ—Բէյաժի (բանտը) չես կրնար երթալ : — Ճշմարիտ է ըսածդ, դէմ չկենար, բայց որովհետեւ ինքն ալ մեզ հետ կառքին մէջ պի-

տի նօտի , չենք կրնար անոր առջեւ իրարու
հետ խօսիլ . . . ուստի թող տուր ինձ որ կե-
նացս մէջ առաջին անգամ խոհականութեամբ
հետդ խօսիմ : Սիրելի Սէֆիդ , լաւ միտքդ
պահէ ըսելիքս , որուն կէսն ալ ինձ է , ըսաւ
Ժաք ծանր եւ սրտաղդած ձայնիւ . այսօրէն
սկսէ ինքզինքդ աշխատութեան վարժեցընել
. . . որչափ տածանելի եւ ապարդիւն ըլլայ
մի վարանիր . ապա թէ ոչ՝ այս դասը շուտով
կը մոռնաս . եւ ինչպէս որ դուն ալ կըրսես՝ այ-
նուհետեւ ժամանակ չմնար , եւ դուն ալ նոյն
վախճանը կունենաս՝ դոր այնչափ թշուառ աղ-
ջըկունք ունեցած են . . . կը հասկընանս ըսա-
ծըս . . . : — Ար հասկընամ , ըսաւ Սէֆիդ կար-
մըրելով . բայց սուելի լաւ կը համարիմ մեռ-
նիլ՝ քանի՛ է այնպիսի կեանք մը վարել . . . :
— Իրաւունք ունիս . . . այդպիսի պարագայի
մը մէջ ես ալ կօզնեմ քեզ . . . մեռնելու . . .
աւելցուց Ժաք ցած եւ դասակալ ձայնիւ ,
Վօտան եմ , Ժանք , պատասխանեց Սէֆիդ խան-
դազին տարիմամբ սիրելչոյն փաթ թուելով .
յետոյ աւելցուց տխրութեամբ . — Ար տեսնես ,
Ժանք , որ քիչ մ'առաջ մեր ուրախութեան
ժամանակ զգացած դառն սրտաբեկութիւնս
նախազգայութիւն մ'էր՝ որուն պատճառն ես
ալ չէի գիտեր , եւ քօլէնային համար բաժակ
կը խմէի . . . որպէս զի մեզ երկուքս 'ի միա-
սին մեռցընէ . . . : — Է՛ , ո՞վ կրնայ ըսել թէ
քօլէնան չպիտի դայ , յարեց Ժաք տխուր

դէմքով . թերեւս անուխի կարօտ չընէր մեզ ,
դոր գնելու ստակ ալ գուցէ չունենանք :
— Ես այսչափ միայն կըսեմ քեզ , Ժաք , որ
դիս միշտ պատրաստ պիտի գտնես թէ ապրե-
լու եւ թէ մեռնելու քեզ հետ : — Ուրեմն աչ-
ւըներդ սրբէ , ըսաւ Ժաք սրտառու թաղ-
ծութեամբ . այս մարդոց առջեւ աղայութիւն
չընենք »

Քանի մը վայրկեան ետքը՝ կառքը Ժաքի
բնակարանին ճանքան բռնեց , որպէս զի բանտն
երթալէ առաջ զգեստը փոխէ :

Մայէօի քրոջն առթիւ նորէն կրկնենք .
(այնպիսի բաներ կան՝ զորս մարդ սրչափ յեղ-
յեղէ՝ քիչ է) . աշխատութեան չկանոնաւորուե-
լուն աղետալի հետեւանքներէն մէկն ալ վար-
ձուց անբաւականութիւնն է : Ասկէց է որ աղջ-
կանց մեծ մասը կը հարկադրին իրենց ապրուս-
տին համար այնպիսի կապակցութիւններ յան-
ձըն առնուլ՝ որք իրենց ապականութեան ու
կորստեան պատճառ կըլլան : Երբեմն՝ իրենց
աարփաւորէն չափաւոր գումար մը կ'ստանան , որ
իրենց աշխատութեան վարձուն վրայ աւելնա-
լով իրենց ապրուստին կօղնէ : Երբեմն ալ
Մայէօի քրոջը պէս աշխատութիւնը բոլորովին
կը թողուն եւ իրենց ընտրած մարդուն հետ
կենք կանցունեն՝ երբոր մարդը ծախք ընե-
լու կարող է . այս զբօսանաց եւ անդործու-
թեան միջոցին՝ ծուլութեան անբուժելի բորը
մշանջենապէս կը տիրէ այն թշուառ աղջկանց

վրայ : Այս առաջին կամ մէկ դէմքն է ապակա-
նութեան, գործնկերութեան մեղապարտ անհո-
գութիւնը հարկ կը դնէ անհամար գործաւոր
ազնկանց վրայ, որք 'ի ծնէ ամօթխածութեան
ուղղութեան եւ պարկեշտութեան բնազդումն
աւնին :

Ժամանակէ մ'ետեւ՝ երբեմն տարիաւոր-
նին ղիրենք կը թողու՝ երբոր մայր կըլլան, եր-
բեմն ալ տարիաւորն յիմար շռայլութեամբ
պարտական իյնալով կը բանտարկուի, եւ աղ-
ջիկն անոր անօգնական երեսի վրայ կը մնայ՝
առանց ապրուստի :

Ասոնք՝ որ դեռ սիրտ ու քաջութիւն ու-
նին, նորէն աշխատութեան կ'սկսին . . . բայց
ասոնք խիստ սակաւաթիւ են : Իսկ մնացեալ-
ները . . . չքաւորութենէ եւ պարապորդ ու
հանգիստ կեանք վարելու վարժութենէ ստիպ-
եալ՝ անարդութեան վերջին աստիճանին մէջ
կ'իյնան : Այս անարդութիւնը մեղադրանքէ ա-
ւելի ցաւակցութեան արժանի է, վասն զի այս
թշուառներուն անկման առաջին եւ էական
պատճառն է իրենց աշխատութեան վարձուն ան-
բաւականութիւնը կամ բռնի անգործութիւնը :

Աշխատութեան չկանոնաւորուելուն մէկ ու-
րիշ օղբալի հետեւանքն ալ՝ մարդոց համար՝
վարձուց անբաւականութենէն զատ՝ իրենց վը-
րայ հարկ դրուած գործը կատարելու համար
գրեթէ միշտ խոր զղուանք մ'աւնենալնին է : Այս
ալ գիւրաւ կը հասկցուի : Միթէ աշխատութիւնն

անոնց սիրելի ընելու փոյթ եղած է՝ կամ գրադ-
մանց պէսպիսութեամբ, կամ պատուասիրա-
կան մրցանակօք, կամ խնամատարութեամբք,
կամ անոնց աշխատութենէն յառաջ եկած շա-
հուն համեմատ վարձատրութեամբք, կամ վեր-
ջապէս բազմամեայ աշխատութենէ ետև ծե-
րացած կամ անկարող եղած ժամանակնին ապ-
րելու յուսով: Աչ. երկիրը բնաւ փոյթ չունի՝
ոչ անոնց պիտոյից, ոչ ալ իրաւանց վրայ:

Եւ սակայն, ամենուն մէջէն մէկ արհեստ
մը միայն յիշելով, շողեչարժ գործարանաց մէջ
մեքենագործներ կամ գործաւորներ կան՝ որք
ամեն օր շողիի պայթման կամ մեքենայից սար-
տախելի ատամունքներէն ջախջախուելու եւե-
թակայ ըլլալով առաւել վտանգի մէջ են՝ քան
թէ գորականները պատերազմի մէջ, եւ գործ-
նական հազուադիւտ ճարտարութեամբ՝ իրենց
երկար եւ պատուաւոր ասպարիզին մէջ արուես-
տից դարգացման եւ հետեւաբար երկրին անժրխ-
տելի ծառայութիւններ կը մատուցանեն, միայն
թէ կատասյի մը պայթմամբ սատակամահ չըլլան
կամ մեքենային երկաթի ատամանց մէջ մէկ
անդամնին չփշրի: Այս վերջին պարագային
մէջ խեղճ աշխատաւորը գոնէ նոյնչափ վար-
ձատրութիւն կընդունի՝ որչափ կընդունի գո-
րական մը իւր գովելի բայց անպտուղ քաջու-
թեան փոխարէն. այն է անկարողաց խնամա-
տան մէջ տեղ մը: Աչ. . . երկրին քնչ փոյ-
թըն է. . . եւ եթէ վարպետն ալ ապերախտ

ու անխիղճ մէկն է, խեղանդամ աշխատաւորը
ճառայելու կարողութիւնն չունենալով կերթաց
անկիւնն մ'անօթի կը մեռնի :

Վերջապէս արուեստից փառաւոր հանդէս-
ներուն ու տօներուն մէջ երբէք կը յիշուին
կամ կը հրաւիրուին այն ճարտար դորձաւոր-
ները՝ որք այդ սքանչելարուեստ բեհեզներն ու
կերպասները դորձած են, այդ պաղպաղուն
զէնքերը դարբնած ու ոսկենկար դրուած
են, այդ ոսկի ու արծաթ քաժակները քան-
դակած են, այդ երենոսէ ու փղոսկրէ կահերը
կերտած են, այդ ակնախափղ գոհարներն այն-
չափ փափուկ ճարտարութեամբ ընդելուղած
են : Այ . . . ձեզնայարկի մը մէջ դժուճ խցիկի
մը խորը թշուառ ու սովատանջ ընտանիքէ մը
չրջապատեալ՝ հաղիւ չնչին թոշակով մը կրնան
ապրիլ այն անձինքը, որք՝ պէտք է խոստովա-
նինք՝ մեր երկրին հարստութեան փառաց կու-
պարծանաց առիթ եղող հրաշակերտներուն ար-
տադրութեան գոնէ կիսով չափ զատակակից
եղած են :

Իր բարձր պաշտօնին եւ ՊՍԲՏԱԿԱՆՈՒ-
ԹԵԱՆՅ Քիչ մը խելամուտ եղող առեւտրական
դորձոց պաշտօնեայ մը չափափ պահանջէ արդ-
եօք, որ արուեստահանդիտից մէջ ձեռակերտ ներ-
կայացնող իւրաքանչիւր դորձարան՝ քանի մը
ատփիճաններու ընտրութեամբ ամենէն յատա-
շարէմ դորձաւորները որոշէ, եւ դորձարա-
նապէտն ալ անոնց մէջէն որն որ արուեստա-

կան չքեղ հանդէսներուն մէջ դործաւորաց դաս-
ար ներկայացընելու արժանաւորագոյն դասի՝
դասն ընտրէ : Միթէ այն ժամանակ աղնիւ եւ
քաջալերական օրինակ մը չընծայեր դործարա-
նատէրը՝ երբոր հասարակաց վարձատրութիւն-
ներուն եւ մեծարանաց առաջարկէ դործաւոր
մը՝ դոր իր ընկերները կընտրեն իրեւ ամե-
նէն պարկեշտ, ամենէն աշխատասէր եւ ամե-
նէն հանձարեղն իր արհեստին մէջ : Այն ժա-
մանակ յուսահատեցուցիչ անարդարութիւն մը
կանհետանայ, աշխատաւորի մ'առաքինու-
թիւններն աղնիւ եւ վսեմ նպատակաւ մը կը
քաջալերին, եւ դործաւորն ալ աղէկ աշխա-
տիլն իրեն շահ կը համարի : Տարակոյս չկայ որ
դործարանատէրն իր թափած հանձարին, վտան-
գի մէջ դրած դրամադլուխներուն, կառուցած
չէնքերուն եւ երբեմն ալ ըրած բարեգործու-
թիւններուն պատճառաւ՝ իրեն տրուած պա-
տիւններն ստանալու արդար իրաւունք ունի .
ինչո՞ւ համար աշխատաւորն անդթարար կը դըր-
կուի այն վարձատրութիւններէն՝ որք այնչափ
մեծ ազդեցութիւն ունին բաղմութեան վրայ :
Միթէ բանակի մը մէջ դօրապետներն ու սպայ-
ները միայն կը վարձատրուին : Ինչո՞ւ համար
տրուեստից հզօր եւ բաղմարդիւն բանակին
մէջ ալ՝ գլուխներն արդարապէս վարձատրուե-
լէ ետեւ՝ ղինուորներն անտես կըլլան :


Ինչո՞ւ համար յայտնի վարձատրութեան նը-
շաններ կամ օգոստատիառ շրթունքէ մ'ելնող

Քաջալերական եւ մխիթարար խօսքեր՝ չկան անոնց համար . ինչո՞ւ համար վերջապէս Գաղղիոց մէջ եւ ոչ մէկ դործաւոր մ'իւր ձեռքի ճարտարութեան ու երկարատեւ ժրջան վաստակոց համար պատուանշան մ'ստացած չտեսնուիր : Այն փոքրիկ խաչանշանն ու անոր յարակից չափաւոր թոշակը կրկին եւ արդարապէս արժանի վարձատրութիւն մը չկրնանք համարուիլ : Բայց ոչ . խոնարհ աշխատութեան, արդիւնաւէտ աշխատութեան համար ուրիշ բան չկայ , բայց միայն մոռացութիւն , անարդարութիւն, անտարբերութիւն եւ արհամարհանք :

Այս հասարակաց անիութութենէն՝ որ շատ անգամ ապերախտ վարպետներու անձնապաշտ դոռոզութեամբն եւ դաժան խտտարտութեամբ առաւել եւս կը ծանրանայ , ողբալի վիճակ մը կը ծագի աշխատաւորաց համար : Ոմանք՝ անդու աշխատութենէ մ'ետեւ դարձեալ չքաւոր կեանք մը կը վարեն եւ տարածամ կը մեռնին . ուրիշներ ալ մահառիթ արբեցութեան մէջ իրենց վշտաց անցաւոր մոռացութիւն մը կը փնտռեն . շատեր ալ վերջապէս առաւել կամ լաւ աշխատելէ ոչ շահ մ' եւ ոչ բարոյական կամ նիւթական խրախոյս մ'ունենալով, իրենց թոշակը ստանալու համար հարկ եղածէն աւելի չեն աշխատիր . ինչու որ զիրենք աշխատութեան կապող բան մը չկայ . աշխատութիւնն իրենց աչաց առջեւ բարձրացընող պատուող եւ փառաւորող բան մը չկայ . դատարկութեան հրա-

պոյրներէն զիրենք պահպանող բան մը չկայ .
 եւ եթէ դիպուածով ժամանակ մը ծուլարար
 ապրելու առիթ գտնեն , քիչ քիչ դատարկա-
 սիրութեան ու ցոփութեան ունակութիւններ
 բուն կը վարժուին , եւ այսպէս շատ անգամ
 'ի ծնէ քաջառողջ պարկեշտ եւ բարեմոյն բը-
 նութեան տէր անձինք , իրենց բարի եւ աշ-
 խատասէր հակամիտութիւնները պաշտպանող
 եւ արդարապէս քաջալերող խնամակալութիւն-
 ներէ զուրկ մնալով ամենաչար կիրքերով 'իս-
 պառ կապականին

Հիմա երթանք Մայէօի ետեւէն , որ զինքը
 սովորաբար գործածող անձին տունը գործ փրն-
 արուելու երթալէ ետեւ , Պասիլուն փողոցը՝ Ատ-
 րիէն տը Քարաօվիլի սպարանքը գացեր էր :



ՄԱՍՆ ՏԱՍՆԵՐՈՐԴ

Վ Ա Ն Ք



ԳԼՈՒԽ Ա.

ՖԼՕՐԻՆ

Մինչդեռ Պաքանակ թագուհին եւ Քուչ-
 Թու-Նիւ իրենց կենաց ամենէն ուրախակից
 միջոցն այսպէս տխուր կերպով կաւարտէին ,
 Մայէօ Պաշիլոնն փողոցի ապարանին դուռը կը
 հասնէր : Հնչակը քաշելէ առաջ՝ դործաւորու-
 հին աչքը սրբեց , վասն զի նոր վշտով մը կը
 տառապէր : Ճաշարարին պանդոկէն մեկնելէ
 ետեւ՝ իրեն ամեն ժամանակ դործ տուող ան-
 ճին տունը դացեր էր , բայց նա չէր ուզեր այս
 անգամ դործ տալ՝ ըսելով թէ մի եւ նոյն դոր-
 ծը մէկ երրորդ պակաս վարձով կրնար կանանց
 բանտին մէջ կարել տալ : Մայէօ՝ այս վերջին
 ապաւէնն ալ չկորսնցընելու համար՝ ինքն ալ
 նոյն պակաս գնով աշխատիլ յանձն տառ .
 քայց կարուելիք կտաւեղէններն արդէն օրուած

ըլլալով, դժբաղդ աղջիկը մինչեւ տասներեկին դ
 օր անդործ մնալու կը հարկադրէր : Սակէց կըր-
 նայ հասկցուիլ խեղճին կրած տաղնապը . վասն
 դի ակամայ անդործութեան առջեւ ուրիշ ընե-
 վիք չէր մնար իրեն, բայց եթէ մուրալ, անօ-
 թի մեռնիլ կամ գողութիւն ընել :

Իսկ Պապիլոն փողոցի ապարանքն երթա-
 լուն պատճառն հիմա կը հասկցուի :

Մայէօ կամացուկ մը փոքր դրան հնչակը
 քաշեց . քիչ մ'ետքը Յլօրին եկաւ դուռը բա-
 ցաւ : Ս,յս անգամ նաժիշտն Աարիէնի չքնաղ
 ճաշակին համեմատ չէր հագուած . ընդհակա-
 ռակն խտակրօն պարզութեան կերպարանք
 մ'ուներ . թխերանդ լայն շրջազգեստ մը հա-
 գեր էր, որուն ներքեւ իր վայելչագեղ բարակ
 մէջքն անյայտ կըլլար . սեւ սաթի գունով մա-
 դերուն հիւսքն հաղիւ կը տեսնուէր տափակ
 ու օսլայով ողորկուած փոքրիկ գտակին ներքեւ,
 որ կրօնաւորուհեաց գլխարկին քիչ մը կը նմա-
 նէր . բայց այս պարզ եւ անշուք կերպարան-
 քովն ալ Յլօրինի թխորակ ու դժգոյն գէմքը
 միշտ գեղեցիկ էր :

Ինչպէս որ արդէն ըսած ենք, մեղապարտ
 հարկով մը Ռօտէնի եւ Պ. Տ'էկրինեի բացար-
 ձակ իշխանութեան ներքեւ դրուած ըլլալով,
 Յլօրին մինչեւ այն ժամանակ լրտեսութիւն
 ըրած էր Աարիէնի քով, թէ եւ անոր լիապա-
 տար վստահութիւնն ու սիրալիր խնամքը միշտ
 կը վայելէր Յլօրինի սիրտը բոլորովին աւրուած

չէր : շատ անգամ խղճին խայթէն դառնապէս
բայց 'ի դուր կը տանջուէր՝ մտածելով թէ ինչ
վատ պաշտօն մը վարելու հարկադրեալ էր ախ-
րուհւոյն քով :

Արբոր Մայէօն տեսաւ , (Յլօրին դայն կը
ճանչէր , վասն զի առջի օրն ալ Մայէօ ան-
կէց իմացեր էր Ակրիքօլի բանտարկուիլն եւ
Ատրիէն օրիորդին յանկարծ խենթենալը) ,
ցնցուելով ետ քաշուեցաւ , վասն զի դեռահա-
սակ գործաւորուհւոյն դէմքն այն աստիճան այ-
լայլած էր որ Յլօրինի սիրտն 'ի դուր շարժե-
ցաւ : Բռնի անգործութեան լուրը՝ խեղճ աղջ-
կան դանուած ներզ վիճակին եւ պարագանե-
րուն մէջ՝ սարսափելի հարուած մ'էր . թա-
փած նոր արտառքներուն նշանները կեցած է-
ին այտերուն վրայ . դէմքը խոր վշտակրո-
թեան եւ տաղնապի պատկեր մը կրնծայէր՝ ա-
ռանց իր գիտնալուն , եւ այն աստիճան վա-
տած տկարացած ու ճնշուած կերեւէր , որ Յլօ-
րին յառաջ վազելով թեւն անոր տուաւ եւ
քաղցրութեամբ դայն բռնելով ըսաւ . « Ներս
մտէք , օրիորդ , ներս մտէք . . . քիչ մը հանդ-
չեցէք . երեսնիդ դոյն չէ մնացեր . . . եւ խիստ
յոգնած ու հիւանդ կերեւիք : »

Այս ըսելով Յլօրին՝ Մայէօն փոքրիկ եւ
գորգով պատած սրահ մը մտցուց , որուն մէջ
լուցեալ վառարան մը կար , եւ կրակին մօտ
գիպակադարդ թիկնաթուի մը վրայ նստուց :
Ժօրժէթ եւ Հէպէ ճանբուեր էին , եւ միայն

Յլօրին աղանաղան մնացեր էր փոքր աղարա-
նին :

Երբոր Մայէօ նստաւ , Յլօրին կարեկցու-
թեամբ մ'ըսաւ անոր . « Օրիորդ , բան մը չէք
խմեր . քիչ մը շաքարով ու նարնջի ծաղկով
տաք ջուր : — Ենորհակալ եմ , օրիորդ , ըսաւ
Մայէօ սիրտը թունդ ելնելով , վասն զի բարե-
տրտութեան ամենաախօքրիկ նշան մը տեսած ժա-
մանակ երախտագիտութեամբ կը շոյուէր . աւ-
կէց զատ քաղցր զարմանքով մը կը տեսնէր որ
Յլօրին իր գծուծ կերպարանքին համար զինքը
չէր արհամարհեր ու իրմէ չէր խորշեր : — Քիչ
մը հանդչելէ զատ ուրիշ բան չեմ ուզեր , ըսաւ ,
վասն զի շատ ճանրայ քալած եմ , եւ եթէ
ներէք . . . — Ազաճնուդ չափ հանդչեցէք ,
օրիորդ . . . խեղճ տիրուհւոյս երթալէն 'ի վեր
մինակ եմ այս աղարանին մէջ . . . (այս խօս-
քնն ըսած ժամանակ Յլօրին կարմրելով հառա-
չեց) . . . ուստի ամենուին մի նեղէք ինք-
զինքնիդ . . . կրակին մօտը եկէք , կաղաչեմ ,
ասդին եկէք . . . հոս նստէք . . . աւելի հան-
գիատ կընէք . . . սէ , օտքերնիդ ալ նրչափ
թրջած է . . . սա ակոռակին վրայ դրէք : »

Յլօրինի այս մարդասիրական ընդունելու-
թիւնը , գեղանի գէմքը , շարժումներուն վա-
յելչութիւնը՝ որք հասարակ նաժիշտի մը գոր-
ծեր չէին , խոր տպաւորութիւն ըրին Մայէօի
վրայ , որ իր նուաստ վիճակին հակառակ՝ շնոր-
հալի փափուկ եւ բարեձիւ վարմունքներն ու

խօսքերը խիստ աղէկ կ'զգար . ուստի այս քաղ-
ցըր զգացման անդի տալով , դեռահասակ գոր-
ծաւորուհին՝ որ սովորաբար տառամատա դիւ-
րազգածութիւն մ'եւ կասկածոտ կրկնութեւ
թիւն մ'ունէր , կարծես թէ Յլօրինի վրայ վրա-
տահութիւն մ'զգաց :

« Ո՛րչափ բարեօրրա էք , օրինորդ , ըսաւ
անոր սրտառուչ ձայնիւ , ձեր այդ բարի խնամ-
քը զիս կը շփոթեցընէ . — Հաւատացէք , օրի-
որդ , ըսաւ Յլօրին , որ այս վառարանին քով
ձեզ նստեցընելէ աւելի բան մ'ընել կուզէի . . .
նրչափ քաղցր եւ սրտագրաւ դէմք մունիք :
— Ո՛հ , օրինորդ , ի՞նչ անուշ բան է լաւ կրակի
մը քով տաքնալը » ըսաւ Մայէօ պարզմտու-
թեամբ եւ գրեթէ ակամայ : Յետոյ իր շափա-
ղանց վառիկասրտութեամբը վախնալով որ իր
այցելութիւնն երկնցընելէն չկարծուի թէ իրեն
եղած հիւրընկալութիւնը չարաչար գործածել
կուզէր , յաւելցօւց . « Հոս գալուս պատճառն
ըսեմ ձեզ , օրինորդ : Երէկ իմացուցիք ինձ որ
այս ապարանին մէջ Ակրիքօլ Պօտուէն անու-
նով երիտասարդ երկաթագործ մը ձերբակալ
եղեր էր . . . : — Աւանդ , այն , օրինորդ , եւ
այս ալ այն միջոցին որ իմ խեղճ փրուհիս ա-
նոր օգնութիւն մ'ընելու կ'զբաղէր . . . : — Պ.
Ակրիքօլ՝ որ իմ եղբայրացիս է , ըսաւ Մա-
յէօ թեթեւ մը կարմրելով , երէկ իրիկուն բան-
տէն նամակ մը գրած է , որուն մէջ կաղաչէ
ինձ որ իր հօրն ըսեմ թէ առանց յապաղելու

հոս գայ եւ խմայրնէ Քարտովիլ օրիորդին թէ
ինքը՝ Ակրիքօլ՝ խիստ կարեւոր տեղեկութիւն-
ներ ունի հազարդելիք օրիորդին կամ անոր
կողմանէ իրեն զրկուելիք անձի մը , տեղեկու-
թիւններ՝ զորս գրով յայտնելու չէր համարձա-
կեր , վասն զի կը վախնար որ չըլլայ թէ բան-
տին անօրէնն իր նամակը կարդայ : — Ի՞նչ կը-
սէք , Պ. Ակրիքօլ իմ փրուհեոյս ամենակարե-
ւոր տեղեկութիւններ ունի յայտնելիք , ըսաւ
Յլօրին զարմացմամբ : — Այո՛ , օրիորդ , վասն
զի դեռ Ակրիքօլ չգիտեր Քարտովիլ օրիորդին
գլխուն եկած աղետալի փորձութիւնը : — Ճշշ-
մարիտ է . . . սէ . . . խելագարութիւնն այն
աստիճան յանկարծակի վրան եկաւ , որ մէկուն
մաքէն չէր կրնար անցնիլ , ըսաւ Յլօրին աչ-
ուրները խոնարհեցրնելով : — Անշուշտ այդ պէս
եղած պիտի ըլլայ , ըսաւ Մայէօ , վասն զի ,
երբոր Ակրիքօլ առաջին անգամ Քարտովիլ օ-
րիորդը տեսաւ . . . անոր շնորհալի կերպե-
րուն , փափկասրտութեանն ու բարութեան վրայ
սքանչացած տուն դարձաւ : — Տիրուհեոյս հետ
տեսնուողներուն ամենն ալ այնպէս կըլլան , ը-
սաւ Յլօրին ախրութեամբ : — Այս առաւօտ ,
չարունակեց Մայէօ , Ակրիքօլի խնդրոյն նամե-
մատ հօրը տունն երթալով տեսայ որ դորս ե-
լեր էր , վասն զի մարդը մեծ տագնապի մէջ է .
բայց եղբայրադրիս նամակն այնչափ ստիպողա-
կան էր , եւ անոր այնպէս աղնուարար պաշտ-
պանութիւն ընել ուղող Քարտովիլ օրիորդին

համար ալ այնչափ կարեւոր կերեւէր, որ եւ
անձամբ եկայ: — Գծադրաբար օրիորդը հոս
չէ, ինչպէս որ գիտէք: — Բայց ընտանիքէն
մէկը չկայ, որուն կարենամ եթէ ոչ խօսիլ,
գոնէ ձեր բերնով հասկըցընել թէ Ակրիքօյ
խիստ կարեւոր դադանիքներ ունի իմացընելիք
օրիորդին համար: — Զարմանալի՛ բան քաւ
Յլօրին մտածելով եւ Մայէօյ պատասխան չը-
տալով: Յետոյ դարձաւ ըսաւ անոր. « Ի՞նչ
դադանիք է արդեօք, դուք ընաւ չէք գիտեր:
— Բնաւ, օրիորդ, բայց քաջ գիտեմ որ Ակրի-
քօյ պատուոյ եւ ուղղութեան վերջին աստի-
ճան նախանձախնդիր, արդարախոհ եւ անկեղծ
է. ուստի իր խօսքին կրնանք հաւատալ . . . :
Մնաց որ ի՞նչ շահ կրնայ ունենալ . . . : — Ա՛յ,
հասկըցայ, դոչեց Յլօրին յանկարծ մտքին մէջ
լոյս մը ծագելով եւ Մայէօյ խօսքը կարելով
հիմա միտքս եկաւ:

Երբոր Պ. Ակրիքօյ հոս պահուրտած տե-
ղէն դանուելով բռնուեցաւ, եւ դիպուածով
հոն դանուելով, շտապաւ կամացուկ մ'ըսաւ
ինձ. « Ըսէք ձեր աղնիւ տիրուհւոյն թէ ինձ
ըրած բարութիւնն անվարձ չպիտի մնայ. եւ
թերեւս այս թաքուստին մէջ պահուրտիլս ան-
օգուտ չպիտի ըլլայ . . . : » Այսչափ միայն
կրցաւ ըսել ինձ. վասն զի իսկոյն բռնեցին զին-
քը տարին Շիտակն ըսելով, եւ այն խօսքերը շը-
նորհակալեաց յայտարարութիւն մ'եւ օր մը փոք
ձով օրիորդին ցաւընելու յոյս մը կարճեցի . . . :

բայց հիմա այն խօսքերը ձեզ դրած նամակին
հետ բաղդատելով . . . ըսաւ Յլօրին խորհր-
դածելով . . . — Արդարեւ, ըսաւ Մայէօ,
այս թաքուստին մէջ ապաստանին եւ ձեր տի-
րուհւոյն կամ անոր ազգաստճմէն մէկուն կա-
րելոր դադանիքներ յայտնելու խօսքերն իրա-
րու հետ յարմարութիւն մ'ունին : — Այս թա-
քուստին մէջ երկար ժամանակէ 'ի վեր մտնող
կամ նստող եղած չէր, ըսաւ Յլօրին, թերեւ
Պ. Ակրիքօյ հոն տիրուհւոյս վերաբերեալ կա-
րելոր բան մը գտած կամ տեսած է : — Եթէ
Ակրիքօյի նամակն այն աստիճան ստիպողական
չերեւէր ինձ, ըսաւ Մայէօ, հոս չէի դար, եւ
կը թողուի որ ինքը բանտէն արձակուելէ ետեւ
անձամբ դար, վասն զի իր վաղեմի ընկերներէն
մէկուն օգնութեամբը քիչ օրէն կազատի բան-
տէն . . . բայց լաւ չգիտնալով որ երաշխաւո-
րութիւն տալէ ետեւ անմիջապէս թող կը արը-
տի՞ թէ ոչ . . . ուզեցի նախ հաւաստարմու-
թեամբ կատարել ինձ ըրած յանձնարարութիւ-
նը, զոր ձեր տիրուհւոյն անոր վրայ ցուցըցած
ազնիւ բարեարտութիւնը սլարաք կը դնէր վը-
րաս : »

Յլօրին՝ այն ամեն մարդոց պէս որոց բնա-
կան բարի զգացումները մերթ ընդ մերթ կար-
թնանան, մխիթարութիւն մը կ'զգար ուրիշի
բարիք ընելէն, երբոր առանց իրեն վնաս մը
դալու կարենար ընել, այսինքն առանց իր վը-
րայ իշխողներուն անողոք ցասումն իր վրայ

բերելու : Ուստի մտածեց որ Մայէօի շնորհիւ
թերեւս մեծ ծառայութիւն մը կրնար ընել իր
տիրուհւոյն : Քաջ դիմանալով Սէն-Տիգրիէ իշխա-
նուհւոյն ատելութիւնն իր եզրօրոտուոյն գէմ ,
հաւաստի էր որ Ակրիքօլի ընելիք կարեւոր
յայտնութիւնը՝ Քարտօլիլ օրիորդէն դատ ու-
րիշի մ'ընելը վտանգաւոր էր : Ուստի ակորազ-
գած եւ խոկուն կերպով մը Մայէօի ըսաւ . « Մտիկ
ըրէք , օրիորդ . . . ես ձեզ խորհուրդ մը պի-
տի տամ , որ կարծեմ թէ խեղճ տիրուհւոյս
օգտակար կրնայ ըլլալ . բայց եթէ ընելիք
յանձնարարութիւններս ուշադրութեամբ չկա-
տարէք , այս իմ ըրած ծառայութիւնս աղե-
տաբեր կըլլայ ինձ : — Ե՞նչ կըսէք , օրիորդ ,
ըսաւ Մայէօ դարմայմամբ Ծլօրինի երեսը նա-
յելով : — Տիրուհւոյս օգտին համար Պ. Ակրիքօլ
անկէ դատ ուրիշ որ եւ է մէկու մը պէտք չէ
յայտնէ այդ ամենակարեւոր գաղտնիքը : — Բայց
եթէ Քարտօլիլ օրիորդը չկրնայ տեսնել , ինչպե-
անոր ընտանեացը չյայտնէ : — Ընդհակառակն՝
առաւել տիրուհւոյս ընտանիքէն պէտք է պա-
հէ իր դիտցածները . . . Երբոր Ատրիէն օրի-
որդն առողջանայ . . . Պ. Ակրիքօլ անոր հետ
թող խօսի . մինչեւ անգամ եթէ յաւիտեան չա-
ռողջանայ , ըսէք ձեր եզրայրագրին որ աւելի
աղէկ կընէ այն գաղտնիքն իր վտրը պահել՝ քան
թէ տիրուհւոյս թշնամեացն իմացընելով անոնց
չահուն ծառայեցընել . . . հաւատացէք ինձ
որ ուրիշ կերպ չկրնար ըլլալ : — Ար հասկընամ

ըսածնից , օրինորդ , ըսաւ Մայէօ արարու թեամբ .
ձեր ազնուասիրտ արուհւոյն ընտանիքը զին-
քը չսիրեր եւ թերեւս կը հարածէ ալ , այնպէս
չէ : — Այդ մասին աւելի բան մը չեմ կրնար
ըսել ձեզ հիմա . իսկ իմ մասին գալով , կա-
ղաչեմ , խօսք տուէք ինձ , որ Պ. Արթիքօյ
բնաւ մէկու մը շինացունէ ձեր հոս դալն ա . ինձ
հետ այս դործին վրայ խօսակցիլը , եւ իմ ալ
այս խորհուրդը ձեզ տալս . . . : Ահնայս եր-
ջանկու թիւնը . . . բայց ոչ , յարեց Յլօրին
դառնու թեամբ՝ որպէս թէ երջանիկ . ըլլալու
յոյն երկար ժամանակէ 'ի վեր կորուսած էր ,
— կհնայս ոչ թէ երջանկու թիւնը՝ այլ հան-
գըստու թիւնը ձեր խորհրդ արահու թեմէն կախ-
եալ է : — Ա՛հ , այդ մասին անհող եղիք , ըսաւ
Մայէօ՝ Յլօրինի վշտահար գէմքէն սիրար դո-
րովելով եւ միանգամայն զարմանալով , ես ա-
պերախտու թիւն չեմ ընկր . աշխարհի մէջ Ար-
թիքօյէն դատ ոչ ոք պիտի իմանայ ձեզ հետ
տեսակցիլս : — Ենորհակալ եմ , օրինորդ , շնոր-
հակալ եմ » ըսաւ Յլօրին յիզ ձեկելով :

Մայէօ՝ Յլօրինին աչքէն վիժած արտա-
ուայ կայլակները տեսնելով զարմայաւ ու ը-
սաւ . « Ենորհակալ կըլլաք ինձ , օրինորդ ,
— Այո՛ . . . ձեր շնորհիւ մաքուր եւ անխառն
երջանկու թիւն մը կ'զգամ այս վայրկենիս մէջ .
վասն զի գուցէ իմ սիրելի արուհւոյս ծառայու-
թիւն մը պիտի մատուցած ըլլամ՝ առանց զիս ար-
դէն ընկճող վիշտերս առաւել ծանրացընելու . . . »

— Դուք այդպէս դժբաղդ ըլլաք, դոչեց Մա-
 յէօ ապշելով: — Անշուշտ կը դարձանաք ըսա-
 ծիս, բայց հաւատացէք ինձ, որ ինչ ալ ըլլայ
 ձեր վիճակը՝ խմբիս հետ կը փոխեմ, դոչեց
 Յլօրին գրեթէ ակամայ: — Աւանդ, օրինորդ, ը-
 սաւ Մայէօ, դուք այնչափ բարեսիրտ կերեւիք
 ինձ՝ որ չեմ կրնար թոյլ տալ ձեզ իմ վիճակիս
 փափաքիլ, մանաւանդ այսօրուան օրս: — Ի՞նչ
 ըսել կուղէք: — Ո՛հ, օրինորդ, անկեղծաբար
 կը մտաւթեմ ձեզ համար, ըսաւ Մայէօ դառնու-
 թեամբ, որ դուք երբէք չդճաք փորձով թէ
 ինչ սոսկալի բան է աշխատելու գործ չունե-
 նայն այնպիսի անձի մը համար՝ որ աշխատու-
 թեանէ դատ ուրիշ ապրելու միջոց չունի: — Ի՞նչ
 կըսէք, այդ վիճակին մէջ էք. ո՛հ, տէր Ասա-
 ուած, դոչեց Յլօրին անձկուեթեամբ Մայէօի
 երեսը նայելով:

Գեռահասակ գործաւորուհին գլուխը խո-
 նարհեցուց ու պատասխան չառաւ. իր շա-
 փազանց մեծ սրտուեթեամբն այս ըրած յայտնու-
 թեան վրայ ալ գրեթէ սարջացաւ, վասն զի
 արտունջի երեւոյթ մ'ունէր, եւ իր վիճակին
 դառնութիւնը միտքը գալով բերնէն փախեր էր:

Եթէ այդպէս է, յարեց Յլօրին, կը ցաւ իմ
 ձեր վրայ ՚ի բոլոր սրտէ . . . բայց եւ այնպէս
 չեմ գիտեր թէ իմ սարարադդութիւնս արդ-
 եօք ձերինէն մեծ չէ: »

Յետոյ վայրկեան մը խորհելէ ետեւ՝ Յլօրին
 յանկարծ դոչեց. « Բայց միտքս բան մը կու-

գայ . . . եթէ ապրուստ ճարելու միջոց չու-
նիք . . . կը յուսամ թէ կրնամ ձեզ գործ գրու-
նել . . . : — Կրնայ ըլլալ , օրինորդ , գոչեց
Մայէօ . . . երբէք չէի համարձակեր այդպիսի բա-
րեկամութիւն մը ձեզնէ խնդրել . . . թէ եւ իմ
փրկութեանս պատճառ պիտի ըլլար . . . բայց
հիմա ձեր այդ ազնիւ առաջարկութիւնը վստա-
հութիւն կուտայ ինձ . . . ուստի պէտք է խոս-
տովանիմ ձեզ , որ դեռ այս առաւօտ ձեռքէս
առին խիստ թեթեւագին գործ մը՝ որով շարա-
թը չորս ֆրանք կը վաստրկէի . . . : — Շարա-
թը չորս ֆրանք , գոչեց Տլօրին՝ հազիւ կրնա-
լով լսածին հաւատալ : — Սրդարեւ խիստ քիչ
վաստակ մ'է , ըսաւ Մայէօ , բայց կը բաւէր
ինձ . . . : Գօթրադդարար , ինձ գործ տուող
անձը հիմա ելեր կրսէ թէ աւելի վար գնով
բանող գտած է : — Շարաթը չորս ֆրանք ,
կրկնեց Տլօրին սիրտը շարժելով խեղճ Մայէօի
այս աստիճան չքաւորութեանն ու միանգա-
մայն դարմանալի համբերատարութեան վրայ .
արդ՝ ես ձեզ այնպիսի անձանց դրկեմ , որք օ-
րը գոնէ երկու ֆրանք վաստրկելու գործ գրու-
նեն ձեզ : — Օրն երկու ֆրանք վաստրկիմ . . .
կարելի բան է . . . : — Սնտարակոյս . . . միայն
թէ պէտք է ցերեկները երթաք աւուրչէքով
աշխատիք , եթէ չէք ուղեր սպասաւոր ըլլալ :
— Իմ այս վիճակիս մէջ գտնուող անձ մը , ըսաւ
Մայէօ մեծսիրտ երկչոտութեամբ , իրաւունք
չունի արդարեւ իր դիւրադգածութեանց ան-

տալու , բայց եւ այնպէս աւելի լաւ կը համար-
րիմ աւուրչէքով տանս մէջ աշխատիլ , թէ եւ
պակաս վարձով : — Յերեկներն երթալը դժբաղ-
դարար անհրաժեշտ պայման մ'է , ըսաւ Յլօ-
րին : — Ուրեմն այդ յոյսը մտքէս պէտք է հա-
նեմ , պատասխանեց Մայէօ տխրութեամբ , չէ
թէ ցերեկը երթալ չուզելուս համար . . . ապ-
րուսանս ամեն բանէ առաջ է . . . այլ վասն զի
դորձաւորուհիներէն կը պահանջուի որ դոնէ
վայելուչ ու մաքուր զգեստ հագած ըլլան . . .
իսկ ես կը խոստովանիմ , քուանց ամօթ համար-
ելու , վասն զի իմ աղքատութիւնս պարկեշտ
է . . . որ վրայի զգեստէս աւելի բան մը չու-
նիմ հագնելիք : — Այդ հող չէ , ըսաւ Յլօրին ,
պատշաճ կերպով հագուելու միջոցները կը արը-
ւին ձեզ : »

Մայէօ առաւել եւս զարմանքով Յլօրինի
կրեար նայեցաւ : Ըրած առաջարկութիւններն
ու խոստումներն իր յուսացածէն եւ ուրիշ դոր-
ձաւորուհեաց ընդհանրապէս վատարկածէն այն-
չափ վեր էին , որ Մայէօ հաղիւ կրնար հաւա-
տալ :

« Բայց . . . հարցուց վարանելով , թնչ
պատճառաւ այդչափ առատաձեռնութիւնս պի-
տի ընեն ինձ , օրինորդ , եւ ես ալ ինչ կերպով
կրնամ արժանի ըլլալ այդչափ բարձր վար-
ձուց : »

Յլօրին ցնցուեցաւ . բարեարտութեան եւ
դժոյ զգացումն եւ Մայէօի քաղցրութեան ու

համբերատարութեան վրայ խանդաղատելով
անոր օգտակար ըլլալու բաղձանքն՝ ան-
խորհուրդ առաջարկութիւն մ'ընելու դրդեր
էին զինքը . զիտէր թէ իր առաջարկած օգուտ-
ներն ինչ պայմանաւ կրնար ձեռք բերել Մա-
յէօ . ուստի սկսաւ խորհիլ թէ արդեօք Մայէօ
կը հաճէր այն պայմանն ընդունիլ : Գժբաղդա-
բար Յլօրին շատ առաջ դացած ըլլալով, չկր-
ցաւ համարձակիլ ամեն բան անոր յայտնել .
ուստի որոշեց այն ապաղայ կէտը գործաւո-
րուհւոյն խղճին թողուլ . ասկէց զատ, որով-
հետեւ սխալման մէջ ինկող անձինք սովորա-
բար չեն ուզեր այլոց անսխալութեան հաւա-
տալ, Յլօրին բաւ ինքնիրեն, թէ կարելի է
որ Մայէօ՝ իր գանուած յուսահատ վիճակին
մէջ իր կարծածին չափ փափկասրտութիւն չու-
նենայ . . . :

Այս մասձութեամբ խօսքը շարունակեց .
« Ար հասկընամ ձեր ըսածը, օրինորդ, ձեր սո-
վորաբար վատարկածէն այսչափ աւելի շահա-
ւոր առաջարկութիւններն անշուշտ ձեզ կը
զարմայրնեն . բայց պէտք է ըսեմ ձեզ թէ իմ
առաջարկածս բարեպաշտական հաստատութիւն
մ'է՛ արժանաւոր եւ կարօտ կանանց գործ
կամ պաշտօն գանելու նպատակաւ հիմնուած,
որ սուրբ Մարիամայ (Սէնթ—Մարի) անուան
նուիրեալ է եւ պարկեշտ սպասուհեաց համար
տեղ եւ գործաւորուհեաց համար աւուրչէքով
գործ գանելու կ'զբաղի . . . : Արդ՝ այս գոր-

ծինս դլուխ եղո շներն այն աստիճանս ողորմած
անձինք են, որ եթէ իրենց պաշտպանութեան
ներքեւ աստուած գործաւորութիւններն իրենց
վարելիք պաշտօնին յարմար դդեաս չուենանս,
հագուատ ալ կուտան անոնց : »

Յլօրինի գեղեցիկ առաջարկութեանց վրայ
տրուած այս գոհացուցիչ բացատրութենէն Մա-
յէօ հարկաւ պիտի համոզուէր . որովհետեւ խըն-
դիրը բարեգործութեան վրայ էր :

« Հիմայ հասկըցայ ձեր առաջարկած վար-
ձունս բարձրութեան պատճառը, ըսաւ Մայէօ .
բայց ես մէկը չուենիմ որ այդ հաստատութեան
դլուխ կեցող ողորմած անձանց պաշտպանու-
թիւնը վայելելու յանձնարարութիւն մ'ընէ ինձ
համար : — Քանի որ նեղութեան մէջ էք, աշ-
խատասէր եւ պարկեշտ էք, իրաւունքս ունիք
անոնց պաշտպանութիւնը վայելելու . . . մի-
այն պէտք է կանխաւ դիտնաք որ ձեզ պիտի
հարցընեն թէ ձեր կրօնական պարտականու-
թիւններն անթերի կը կատարէք : — Աչ ոք ինձ
մէ աւելի կը սիրէ ու կօրհնէ զՍտուած, օրի-
ւորդ, ըսաւ Մայէօ քաղցր վստահութեամբ .
բայց կան ինչ ինչ արարողութիւններ՝ որոց
կատարուծը խղճմտանքի գործ է, եւ եթէ այս
մասին խիտտ պահանջումներ ըլլան ինձմէ,
աւելի լաւ կը համարիմ հրաժարիլ ձեր այդ ը-
տած պաշտպանութենէն : — Ամենեւին, չկայ
տտանկ բան . միայն, ինչպէս որ ըսի, որով-
հետեւ խիտտ բարեպաշտ անձինք են այս գոր-

ծինս գլուխները , ուստի պէտք չէ զարմանաք
այնպիսի հարցումներ ընելուն վրայ . . . :
Վերջապէս , անգամ մը փորձեցէք , ինչ վնաս
կրնէք : Եթէ ընելիք առաջարկութիւննին գոր-
ծերնուդ գայ՝ կրնգունիք . . . եթէ՝ ընդհա-
կառակն՝ ձեր խղճին աղատութեանը գէմ երե-
ւին , չէք ընդունիր . . . եւ չընդունելովնիդ
այ ձեր վիճակն աւելի գէշ չըլլար : »


Մայէօ պատասխան մը չունէր այս եղբա-
կացութեան՝ որ իրեն կատարեալ ընդարձա-
կութիւն տալով ամեն կասկած կը հեռացընէր .
ուստի պատասխանեց . « Կրնգունիմ ձեր առա-
ջարկութիւնը , օրիորդ , եւ 'ի բռլոր սրտէ շը-
նորհակալ կըլլամ ձեզ . բայց ո՞վ պիտի ներկա-
շացընէ զիս : — Ես . . . , վաղը , եթէ կուղէք :
— Բայց գուցէ իմ վրաս տեղեկութիւններ առ-
նուլ ուզեն . . . » — Սէնթ-Մարիի վանքին մե-
ծաւորուհի պատուարժան Սէնթ Բէրբէթիւ մայ-
րապետը կրնայ ձեր արժանաւորութիւնը հաս-
կընալ՝ առանց ուրիշ անդեկութեանց պէտք ու-
նենալու . ապա թէ ոչ՝ պէտք եղածը կը գրու-
ցէ ձեզ , եւ գուք ալ կրնաք դիւրութեամբ դիմ-
քը դո՛ն ընել : Ուրեմն՝ ալ ըսելիք չմնաց , եւ
վաղը կերթանք : — Օրիորդ , ես հոս գամ ձեզ
առնելու : — Աչ , արդէն ըսի ձեզ թէ պէտք չէ
որ Պ . Սկրիքօլին կողմանէ ձեր հոս գալն ի-
մացուի , եթէ նորէն հոս գալու ըլլաք , թե-
բեւս իմացուի եւ կասկածի առիթ տայ : Ուստի
եւ կառքով կուգամ ձեզ կառնում . . . ուր է

ձեր բնակարանը : — Պրիզ—Միշ փողոցը թիւ
3 . . . : Արտիկանու այդ աշխատութիւնը յանձն
պիտի առնուք , օրիորդ , մեր տանը տակը դըռ-
նապանի պաշտօն վարող ներկարարին կառա-
ջարկէք որ Մայէօին իմաց տայ ձեր հոն գալը :
— Մայէօին , ըսաւ Ֆլօրին գարմացմամբ : — Այո՛ ,
օրիորդ , պատասխանեց գործաւորուհին արը-
տում՝ ժպտով մը , այդ ծաղրական մականունը
կուտան ինձ խեղութեանս պատճառաւ , եւ
անա ասոր համար է որ , յարեց Մայէօ արտաս-
ուելով , զերեկ ժամանակ օտար ճարտար տունը
բանելու երթալէ կը վախնամ . . . նրչափ մար-
դիկ կան որ ծաղր կրնան . . . առանց դիտ-
նալու թէ ինչ աստիճան սիրտ կը ծակեն . . .
բայց , յարեց Մայէօ արտասուքը սրբելով , համ-
բերելէ զատ ուրիշ ինչ կրնամ ընել . . . :

Ֆլօրին՝ դառնապէս զգածեալ՝ Մայէօի ձեռ-
քէն բռնեց ու ըսաւ . « Մի վշտանաք . այնպիսի
արտաշարժ տարաբաղդութիւններ կան՝ որ կա-
րեկցութիւն կաղդեն եւ ոչ ծաղր : Արդեօք չեմ
կրնար ձեր բուն անունը հարցընել : — Իմ բուն
անունս Մատլէն Սօլիսօ է , բայց կրկին կըսեմ
ձեզ , օրիորդ , որ Մայէօ հարցընէք , վասն զի
այս անունով աւելի կը ճանչեն զիս : — Աւրեմս
վաղը կէս օրին Պրիզ—Միշ փողոցը կուգամ :
— Այո՛ , օրիորդ , ձեր այս բարեբարութեան փո-
խարէն ինչպէս պիտի կրնամ երախտագիտու-
թիւնս ցուցընել : — Ատոր խօսքը չընենք . իմ
բոլոր ըսողձանքս այս է որ ընելիք միջնորդու-

Թիւնս օգտակար ըլլայ ձեզ , եւ այս ալ դուք
միայն պիտի կրնաք դատել : Իսկ Պ . Ակրիքօլի
գալով , առ այժմ պատասխան մի դրէք անոր .
սպասեցէք որ բանտէն ելնէ , եւ այն ժամանակ
մի մտնաք ըսել իրեն թէ ընելիք յայտնու թիւն-
ները դադանի պահէ մինչեւ որ կարենայ խեղճ
տիրուհիս անձամբ տեսնել . . . : — Ո՞ւր է հի-
մա այդ ազնիւ օրիորդը : — Չեմ գիտեր . խելքը
թռուցած ժամանակ զինքն ուր տարած ըլլալ-
նին չկրցի իմանալ . վերջապէս , վաղը , սպա-
սեցէք ինձ : — Այո՛ , վաղը , ըսաւ Մայէօ :

Ընթերցողը չէ մոռցած անշուշտ որ Սիմօն
մարաջախտին աղջիկները Սէնթ—Մարիի վան-
քին մէջ փակուած էին , ուր Մայէօ պիտի եր-
թար Յլօրինի հետ , եւ թէ այս վանքը Տոք-
թոր Պալէնիէի դարմանատան մօտն էր , ուր
կը գտնուէր այս միջոցին Ատրիէն ար Քարտօ-
վիլ օրիորդը :



ԳԼՈՒԽ Բ.

ՍԷՆԹ—ԲԷՐԵԷԻ ԻԻ ՄԱՅՐԱՊԵՏԸ

Սէնթ—Մարիի վանքը , ուր Սիմօն մարա-
ջախտին աղջիկները տարուած էին , հին եւ մեծ
ապարանք մ'էր , որուն ընդարձակ պարտէ-
ղը Օփիթալի ծառուղիին վրայ կը նայէր , որ

Փարիսի ամենէն ամայի կողմերէն մէկն էր՝ մա-
սաւանդ այն ժամանակները :

Հետեւեալ անոցքը փետրուար 12 ին կանոց-
նէր, այն անհրաժեշտ պայմանաժամին առջի-
օրը, ուր Ռէնըրօնեան տոհմին անդամները,
այն է թափառական հրէին քրոջը վերջին թո-
ռուքը՝ Սէն—Պրանսուա փողոցը դումարուած
պիտի գանուէին :

Սէնթ—Մարիի վանքը կատարեալ կանո-
նաւորութեամբ կը կառավարուէր : Չերագոյն
անօրէն ժողով մը՝ որ կը բաղկանար խօսքի տէր
եկեղեցականներէ՝ որոց նախագահն էր հայր
Տ'Էկրիների, եւ ջերմեռանդ կիներէ՝ որոց գլուխ
էր Սէն—Տիդիէ իշխանուհին, ջաճախ դումարուե-
լով, արդէն դարձանալի կերպով բարդաւաճելու
վրայ եղող հաստատութեան գաղտնի եւ հզօր
աղղեցութիւնն առաւել եւս ընդարձակեալ եւ
ապահովելու միջոցներ կը խորհէր : Սէնթ—Մա-
րիի վանքը խիստ հանճարեղ կարգադրութիւն-
ներով եւ ամենաբարակ ու խորունկ հաշիւնե-
րով հիմնուած էր : Մեծամեծ հրիտակներ ձեռք
բերելով բազմաթիւ ճոխ կալուածոց եւ ուրիշ
հաստատութեանց տէր եղած էր, որոց թիւն
օր քան զօր կաւելնար :

Արօնական միաբանութիւնը պատրուակ
մ'էր . բայց անգրալեռնեան կուսակցութեան
ամենէն մոլեռանդ անդամոց միջնորդութեամբ
գաւառաց մէջ բազմաթիւ կողմնակիցներ ու-
նենալով, հարուստ օժիտ ունեցող բազմաթիւ

որք աղջիկներ բերել կուտային , վանքին մէջ
հաստատուն եւ խառակրօն կրթութիւն մը
տալու համար , որ դարուս ղեղծումներու
վրն ապականեալ նորաձեւ վարժարաններուն
մէջ ստացուած սնտախի դաստիարակութենէն
խիտ նախամեծար է կրտէին : Այրի կամ ինք-
նաղլուխ կանանց ալ Սէնթ—Մարիի ուխտն
ապահով ապաստան մը կրնծայէր աշխարհի բա-
րոյական վտանգներուն ու փորձութեանց դէմ :
Ղերջապէս այս խաղաղ մենաստանին մէջ ա-
պաստանողները պաշտելի անդորրութիւն մը կը
վայելէին , իրենց հոգւոյն փրկութիւնը հեշտա-
բար ձեռք կը բերէին եւ գորովազին խնամօք
շրջապատեալ էին : Ասոնցմէ դատ , Սէնթ—Բէր-
բէթիւ մայրապետը կամ վանամայրը՝ յանձն
առած էր նաեւ՝ յանուն ուխտին՝ այն ամեն բա-
րեպաշտուհի կանանց համար որք իրենց տունը
դարուս ապականութենէն պահպանելու կը փա-
վաքէին՝ առանձին մնացած կամ պառուած-
ներուն ընկերակից օրիորդ մը , կամ առանին
ծառայութեան համար սպասուհիներ եւ կամ
աւուրչէքով գործաւորուհիներ գտնել ու դրը-
կել , այնպիսի անձինք , որոց ջերմեռանդ բա-
րոյականութիւնն ուխտէն երաշխաւորուած պի-
տի ըլլար :

Այսպիսի հաստատութիւն մը յիրաւի ամեն
մատամբ համակրութեան եւ քաջակերութեան
արժանի կերեւէր . բայց քիչ մ'ետքը պիտի տես-
նուի որ սրբութեան ու ողորմագործութեան

երևույթներուն ներքեւ ամեն կերպ դարանա-
գործութեանց ընդարձակ եւ վտանգաւոր ցանց
մը ծածկուած էր :

Վանքին մեծաւորուհի Սէնթ-Քէրբէթիւ
մայրապետը յաղթահասակ կին մ'էր գրեթէ
քառասուն տարեկան , հաստ չուխայէ թխորակ
դգեատ մը հագած եւ մէջքէն երկայն վարդա-
րան մը կախած էր . գլուխը սեւ քօղով ծած-
կուած ճերմակ գտակ մը դրած էր , որուն կը-
դակակալն իր նիհար ու դժգոյն երեսը սեղմելով
կը պարփակէր . դեղնած փղոսկրի գունով ճակա-
տը բազմաթիւ խորունկ ու խոտորնակի խորշոմ-
ներով ծածկուած էր . սրանկիւն քիթը գիշա-
կեր թռչնոց կային պէս քիչ մը կորացած էր .
աչքերը սեւ ուշիմ ու սրատես էին . դէմքը
միանգամայն հանճարեղ սրաղ եւ կտրուկ էր :

Ուխտին նիւթական շահերն հասկընալու
եւ կառավարելու մասին ամենէն վարպետ եւ
խորամանկ գործակատարները չէին կրնար հաս-
նիլ Սէնթ-Քէրբէթիւ մայրապետին : Նրբոր կա-
նայք գործ կառավարելու հանճարն ունենան ,
իրենց խորատես նրբամտութեամբը , անխոնջ
յարատեւութեամբը , խոհական կեղծաւորու-
թեամբն եւ մանաւանդ իրենց բնական եղող
մտքի արագ եւ ուղիղ տեսութեամբ դարմանա-
լի արդիւնք ձեռք կը բերեն : Սէնթ-Քէրբէթիւ
մայրապետին համար , որ գօրաւոր գլխու տէր
կին մ'էր , ուխտին ընդարձակ հաշիւները տղու
խաղ մ'էին , ոչ ոք անոր չափ յաջողակ էր կոա-

բաժնի դնով կաշուածներ գնելու եւ անոնց ար-
ժէքը բարձրացընելէ ետեւ շահով վաճառելու
գործողութեանց մէջ : Արժէթղթոց գիներուն ,
փոխանակութեանց եւ զանազան բաժնորդա-
կան ձեռնարկութեանց բաժիններուն ընթացիկ
արժէքն ալ խիստ աղէկ գիտէր : Բարեւէր ան-
ձերէ հանապազ ուխտին նուիրուած գումար-
ները շահեցընելու համար երբէք սխալ գործո-
ղութիւն մը պատուիրած չէր իր գործակատար-
ներուն : Վանքին մէջ ծայրագոյն բարեկարգու-
թիւն կանոնապահութիւն եւ մանաւանդ խը-
նայողութիւն հաստատած էր . իր ջանից գըլ-
խաւոր նպատակն էր հարստացընել՝ չէ թէ
ինքզինք՝ ալ իր կառավարած միաբանութիւնը .
վասն զի ընկերակցութեան հողին՝ երբոր հա-
ւաքական ինքնասիրութեան նպատակաւ ա-
ռաջնորդուի , առանձին մարդոց թերութիւն-
ներն ու մոլութիւնները կունենայ :

Ուստի , ինչպէս որ փառամուլ մարդ մ' իշ-
խանութիւնը կը սիրէ իշխանութիւն վարելու
համար , եւ սգահն ալ ստակը կը սիրէ հարուստ
ըլլալու համար , նոյնպէս միաբանական ուխտ
մ' ալ իշխանութիւնն ու ստակը կը սիրէ
Բայց առաւել անշարժ կաշուածներ ստանալու
մասին կրօնական միաբանութիւնները մէկ անձի
պէս կը գործեն : Անշարժ ստացուածքն անոնց
ամենէն սիրելի երազն է , հաստատուն գաղա-
փարն է , արդիւնաւէտ մենամոլութիւնն է . ի-
րենց ամենէն անկեղծ գորովագին եւ ջերմ

բաղձանօքն այս բանին հետամուտ են : Նորա-
ծին աղքատիկ միաբանութեան մը ձեռք բերած
առաջին անշարժ կալուածն անշարժ սիրե-
լի է իրեն՝ որչափ նոր հարսի մ'իր փեսայէն
ընդունած հարսանեկան ընծայն , դեռահաս
պատանուոյ մը առաջին անգամ ձիարշաւի մէջ
յաղթական եղող նժոյգը , բանաստեղծի մ'առա-
ջին յաջողութիւնը , տարիաակէր աղջկան մ'ստա-
ցած առաջին լահոռի շալը . որովհետեւ այս
նիւթամալ դարուս մէջ անշարժ կալուած մ'ու-
նեցող միաբանութիւնն արժէք կամ վարկ մը
կ'ստանայ այս տեսակ մը կրօնական պօրսային
մէջ , եւ պարզամիտ անձանց առջեւ ալ առա-
ւել համարում կուենենայ . վասն զի հողուոց փրը-
կութեան համար կազմուած այս ամեն բաժա-
նորդական ընկերակցութիւնները՝ որք յետոյ
մեծագումար հարստութիւն կը դիզեն , 'ի սկըզ-
բան աղքատութիւնն իրենց ընկերակցութեան
դրամագլուխ դնելով եւ ընկերին ողորմածու-
թիւնն ալ իբրեւ երաշխաւորութիւն ու հա-
ւանականութիւն հաշուելով կը հիմնուին միշտ :
Ասկէց դիւրին է մակարերել թէ որչափ եռան-
դուն ու հակառակադէմ մրցում մ'ունին արանց
եւ կանանց միաբանութիւններն իրենց անշարժ
կալուածները հրապարակաւ եւ պարծանօք համ-
բելու համար , եւ թէ հարուստ միաբանութիւն
մ'ինչ անպատում բերկրութեամբ իր տուներուն
ազարակներուն եւ արժեթղթոց հաշուեցուցա-
կին ներքեւ ընկճելու կաշխատի ուրիշ նուազ

հարատութիւնս ունեցող միաբանութիւնները :
Նախանձութիւնն ու շարասէր մախանքը՝ վա-
նական պարապորդ կեանքէն առաւել եւս գրը-
գրռուելով՝ ՚ի հարկէ այս տեսակ բաղդատու-
թիւններ կը ծնանին : Յւսակայն քրիստոնէու-
թեան երկնաւոր եւ պաշտելի խմատին , Աւե-
տարանի ճշմարիտ հոգւոյն , էապէս եւ կրօնա-
պէս հասարակային հոգւոյն՝ բոլորովին հակա-
ռակ է այս անյագութիւնը ընչաքաղցութիւնը , ամեն
հնարաւոր միջոցներով հարատութիւնս դիպելու
դաժան տենչը • վտանգաւոր տենչ , որ չկրնար
հասարակաց կարծեաց առջեւ արդարանայ
քանի մը ջնջին ողորմածութեան գործերով , ո-
րոց մէջ ալ դարձեալ անողոք խարութիւնս ու
աններողութիւնս կը տիրէ :

Մէնթ—Բէրբէթիւ մայրապետը խիստ պարզ
բայց միանգամայն եւ խիստ վայելուչ կերպով
կահաւորուած սենեակի մը մէջ տեղը գլանա-
ւոր սեղանի մը մ'առջեւ նստած էր • պատուա-
կան կրակ մը կը վառէր մարմարեայ վառարա-
նին մէջ , եւ կակուղ գորգ մը տախտակամածը
ծածկած էր : Մեծաւորուհին՝ որուն ձեռքը կը
յանձնուէին ամեն օր թէ՛ կրօնաւորուհի քոյ-
րերուն եւ թէ՛ կրթութեան կամ հոգւոյ փրկու-
թեան համար թոշակաւ հոն դրուած աղջ-
կանց կամ կանանց ուղղուած նամակները , ըստ
իւր իրաւանց քոյրերուն նամակները բացեր էր •
միւսներուն ալ կնիքները ձարտարութեամբ
լուծեր էր՝ այն կարծեցեալ իրաւանց համեմատ

դոր իրենս վերադրած էր անոնցմէ ծածուկ, բայց
միշտ այն սիրելի աղջկանց հոգւոյն փրկու-
թեան շահուն համար, եւ քիչ մ'ալ անոնց
թղթակցութեանց պարունակութեանը տեղ-
եակ ըլլալու դիտմամբ. վասն զի մայրապետ
մեծաւորուհին սարաք դրած էր իր վրայ նա-
եւ վանքէն դրուած բոլոր նամակներն ալ թղթ-
թատարին յանձնուելէ առաջ կարդալ ու անոնց
պարունակութիւնը հասկընալ: Այս բարեպաշ-
տական անմեղ հաւատաքնութեան նշանը դիւ-
բաւ անհեռ կըլլար, որովհետեւ սուրբ եւ գո-
րովագութ մայրապետը տեսակ տեսակ մանր ու
աղւորիկ պողպատէ գործիքներ ունէր, որոցմէ
ամանք՝ որ խիստ սուր էին՝ նամակաց կնքոյն
բոլորի թուղթը բարակ մը կը կտրէին. յետոյ
նամակը բանալով կարդալէ եւ նորէն պատ-
եանին մէջ դնելէ ետեւ, ուրիշ կըոր ու գե-
ղեցիկ գործիք մը կառնուր, թեթեւ մը կը տաք-
ցընէր եւ կնքամոմին շուրջը կը պտտցընէր, որ
հալելով ու քիչ մը ծաւալելով առջի կտրուած-
քը կը ծածկէր. վերջապէս արդարութեան ու
հաւասարութեան գովելի զգացմամբ՝ բարի մայ-
րապետն իր դինարանին մէջ փոքրիկ շոգելոյզ
գործիք մ'ալ ունէր խիստ ճարտարաշէն, որուն
խոնաւ եւ լուծիչ շոգիին կը բռնէր այն նա-
մակները՝ որք պարզ նշխարակով կնքուած էին
համեստաբար, եւ այնպէս անոնց ալ կնիքը
թաւնալով դիւրութեամբ եւ առանց բնաւ
պատուելու կը բացուէին:

Այսպէս եթէ նամակագիրներն առանց կասկած մ'ունենալու անզգուշութիւն մը գործած ըլլային իրենց նամակներուն մէջ, մեծաւորուհին համառօտ կամ ընդարձակ ծանօթութիւններ կը քաղէր անոնց մէջէն :

Այս կարեւոր հետազօտութեանց միջոցին՝ երկու անգամ սենեկին նդափակ գուռը մեղմով զարնուեցաւ : Սէնթ—Բէրբէթիւ մայրապետն իսկոյն գրասեղանին գլանը գործիքներուն դիւարանին վրայ իջեցընելով, ոտքի վրայ ելաւ եւ ծանր ու լուրջ դէմքով գուռը բանալու գնաց : Աշխատաւոր քոյր մ'եկեր էր իմաց տալու թէ Սէն—Տիգիէ իշխանուհի տիկինը դահլիճին մէջ կ'սպասէր, եւ թէ Ֆլօրին օրիորդը՝ խեղանդամ եւ գծուծ կերպարանքով աղջկան մը հետ իշխանուհիէն քիչ մ'ետքը եկեր փոքր գաւթին գուռը կ'սպասէր :

« Նախ իշխանուհին ներս մտցուցէք, ըսաւ Սէնթ—Բէրբէթիւ մայրապետը, եւ շողովական քաղաքավարութեամբ թիկնաթոռ մ'առաւ վառարանին մօտը դրաւ : Սէն—Տիգիէ տիկինը ներս մտաւ : Թէ եւ նորատի կանանց պէս ինքզինք պճնազարդելու փոյթ չունէր, բայց եւ այնպէս ճաշակով եւ վայելչապէս հագուած էր. սեւ թաւիչէ գեղեցիկ փեղոյր մը դրած էր գլուխը, կապոյտ լահոռ շալ մ'առած վրան, եւ սեւ անգուէ չրջաղղեստ մը հագեր էր՝ թեւ նոցներուն պէս կղնաքիտի մորթով զարդարուած :

Ինչ նոր բարեբաղդութիւն կը բերէ ինձ

արդեօք այսօր ալ ձեր այցելութեան պատի-
ւը, սիրելի դուստր իմ, ըսաւ մեծաւորու-
քուհին շնորհալից կերպով մը : — Ամենակարե-
ւոր յանձնարարութիւն մը, սիրելի մայր իմ,
վասն զի մեծ շտապի մէջ եմ, նորին գերա-
պատուութեան տունը զիս կ'սպասեն, եւ դժ-
բաղդարար քանի մը վայրկեան միայն կրնամ
ձեզ հետ անցունել : Գալուս պատճառք դարձ-
եալ երկու որբերուն դործն է, որուն վրայ ե-
րէկ երկարօրէն խօսակցեցանք : — Անոնք ձեր
վափաքին համեմատ իրարմէ դատուած են . . .
եւ այս բաժանումն այն աստիճան սաստիկ հար-
ուած մ'եղաւ անոնց . . . որ այս առաւօտ տաք-
թոր Պալէնիէին մարդ զրկելով բերել տուի :
Ծանր սրտաբեկութեան հետ միացած տենդ
մը դտաւ անոնց վրայ, եւ դարմանալին այս է որ
երկու քոյր ալ մի եւ նոյն հիւանդութեան նը-
շաններն ունէին . . . : Այս երկու դժբաղդ
արարածները նորէն հարցաքննեցի . . . եւ սար-
սափեցայ . . . շուարեցայ . . . հեթանոս են
եղեր : — Ահա այդ պատճառաւ է որ ձեր ձեռքը
յանձնել հարկ եղաւ . . . : Բայց դանք հիմակ-
ուան այցելութեանս : Սիրելի մայր իմ, իմացանք
որ այս աղջիկները Գաղղիա բերող գօրականը՝ որ
քանի մ'օր հեռացած կը կարծուէր, յանկարծ
վերադարձեր եկեր է եւ հիմա Փարիզ է : Թէ եւ
տարիքն առած ծեր մ'է, բայց վերջին աստիճան
անվեհեր, կարովի եւ յանդուգն մարդ մ'է : Ն[ժ]է
աղջկանց հոս ըլլալն իմանայ . . . որ բարեբաղ-

զաքար անհնարին է, իր ամբարիշտ ազդեցու-
թեանէն ազատած ըլլալնուն վրայ կատարելով
ամեն բան կարող է ընելու: Ուստի այս օ-
րէն սկսեալ, սիրելի մայր իմ, հսկողութիւնը
կրկնապատկեցէք . . . որպէս զի գիշերանց
մարդ չկրնայ մտնել հոս . . . : Այս թաղն ան-
մարդաբնակ է . . . : — Անհող եղիք, սիրելի
գուսար իմ . . . մեր վանքը բաւական աղէկ
կը պահպանուի, մեր գոնապանն ու պարտիզ-
պանները լաւ դիմեալ են եւ ամեն գիշեր Օթի-
թալի ծառուղիին կողմը պտըտելով աչքէ կան-
ցունեն. պատերը բարձր են եւ դիւրամատոյց
կողմերն ալ սրածայր մանր երկաթներով պա-
տած են . . . : Բայց եւ այնպէս շնորհակալ
եմ, սիրելի գուսար իմ, որ այդ ազդարարու-
թիւնն ինձ ըրիք. զգուշութիւնները կը կրկնա-
պատկենք: — Մանաւանդ այս գիշեր, սիրելի
մայր իմ: — Ինչո՞ւ համար: — Ասան զի եթէ
այն դժոխային դօրականը փորձ մ'ընելու յան-
դըղնի, այս գիշեր կընէ . . . : — Ինչէն զի-
տէք, սիրելի գուսար իմ: — Մեր առած տեղե-
կութիւններէն այնպէս կը հասկցուի . . . պա-
տասխանեց իշխանուհին թեթեւ շփոթութեամբ
մը՝ զոր մեծաւորուհին նշմարեց, բայց իր նըր-
բամիտ եւ խորամանկ զգուշաւորութեամբը
չնշմարել ձեւացուց. միայն թէ կասկածեց որ
իրմէ շատ բաներ գաղտնի կը պահէին: — Ու-
րեմն այս գիշեր զգուշութիւնները կը կրկն-
ապատկենք, պատասխանեց Սէնթ—Բէրբե-

Թիւ մայրապետը : Բայց որովհետեւ , սիրելի
դուստր իմ , ձեզ տեսնելու բերկրութիւնն ու-
նիմ , կուզեմ այս առթիւ երկու խօսք ընել ձեզ
այն ամուսնութեան խնդրոյն վրայ : — Խօսինք ,
սիրելի մայր իմ , ըսաւ իշխանուհին , վասն զի
շատ կարեւոր խնդիր մ'է այն : Պ. Պրիզիլի ե-
րիտասարդ սեպուհն այս յեղափոխական ամբա-
բըշտութեան դարուս մէջ ջերմեռանդ կրօնա-
սիրութեամբ վառուած անձ մ'է , իր ամեն կրօ-
նական պարտականութիւններն հրապարակաւ
կը կատարէ : Այս անձը մեծ ծառայութիւններ
կրնայ ընել մեզ : Խորհրդարանին մէջ խօսքը
բաւական մտիկ կընեն , յարձակող եւ գրգռիչ
ճարտարախօսութիւն մ'ունի , եւ չեմ տեսած
մէկը որ ասկէ աւելի իր կարծեաց անպատ-
կառ դարձուած ք մ'եւ իր համոզման ալ ժպիրհ
ընթացք մը տայ : Իր հաշիւներն ուղիղ են .
վասն զի սուրբ բաներու վրայ այնպէս գոռող
եւ խիզախ կերպով խօսին անտարբեր անձանց
հետաքրքրութիւնը կը խթէ ու կարծնցընէ :
Քարեքաղղաբար պարագաներն հիմա այնպէս
բերած են , որ առանց ամենափոքր վատնդի
կրնայ խիստ յանդուգն թշնամանքներ ընել
մեր թշնամեաց , որով բնականաբար իր նա-
հատակի եռանդը կաւելնայ : Երկար չընեմ ,
մեր մարդն է , եւ փոխադարձաբար մենք ալ
այս ամուսնութեան գործը յաջողեցընելու ենք :
Գիտէք , սիրելի մայր իմ , որ Սէնթ—Մարիի
ուխտին հարիւր հազար ֆրանք խոստացած

է, զոր Պօսրիքուր օրիորդին հարստութիւնը
ձեռքն անցուցած օրը պիտի տայ: — Ես բնաւ
կասկած չունիմ որ Պ. տը Պրիզվիլ խիստ բա-
րի դիտաւորութիւններ ունի ուխտիս նկատ-
մամբ, որ ամեն բարեպաշտ անձանց համակ-
րութեանն արժանի է, պատասխանեց մեծա-
ւորուհին խորհրդապահ կերպով մը, բայց օ-
րիորդին կողմէն այնչափ դժուարութիւն ելնե-
լը չէի յուսար: — Ի՞նչ կըսէք: — Այս աղջի-
կը, որ մինչեւ ցարդ հլութեան, երկչոտու-
թեան, խոնարհութեան, մէկ խօսքով տխմա-
րութեան կատարեալ տիպար մը կարծած էի
. . . փոխանակ այս ամուսնական առաջար-
կութեան վրայ սքանչանալով հրճուելու, ինչ-
պէս որ կը յուսայի . . . ժամանակ կը խնդրէ
խորհելու: — Յաւալի բան է այդ: — Անդգա-
յական ընդդիմութիւն մը կընէ ինձ:

'Ի զուր խստութեամբ կը խօսիմ իրեն եւ կը-
սեմ թէ ինքը աղգական եւ բարեկամ չունենա-
լով եւ բացարձակապէս իմ խնամոցս յանձնուած
ըլլալով, պէտք է որ ամեն բան իմ աչօքս տես-
նէ, իմ ականջօքս լսէ, եւ թէ երբոր ես այս
ամուսնութիւնն ամեն մասամբ իրեն յարմար կը
համարիմ, պէտք է որ առանց որ եւ դիտո-
ղութեան կամ խորհրդածութեան ընդունի:
— Անտարակոյս . . . ատկէց աւելի իմաստուն
խօսք չըլլար: — Կը պատասխանէ ինձ թէ խօսք
տալէ առաջ կուզէ Պ. տը Պրիզվիլը տեսնել
եւ բնաւորութիւնը հասկընալ . . . : — Յիմա-

քի պատասխան . . . քանի որ դուք անոր լաւ
մարդ ըլլալուն կը վկայէք եւ այս ամուսնու-
թիւնն ալ պատշաճ կը դատիք : — Մնաց որ այս
առաւօտ իմացուցի Պօտրիքուր օրիորդին որ
մինչեւ հիմա քաղցր եւ համոզական կերպով
վարուեցայ իր հետ , բայց եթէ տակաւին ընդ-
դիմանայ , պիտի ստիպուիմ իր յամառութեան
յաղթելու համար՝ ակամայ եւ իր իսկ օգտին հա-
մար խստութիւն քանեցընել , ընկերներէն բաժ-
նել , խցիկի մէջ փակել եւ մարդու երես բնաւ
չցուցընել , մինչեւ որ յանձն առնու վերջապէս
. . . երջանիկ ըլլալ եւ յարգի մարդու մը հետ
ամուսնանալ : — Եւ այդ սպառնալիքները , սիր-
ելի մայր իմ . . . : — Կը յուսամ որ յաջող
արդիւնք պիտի ունենան . . . : Իր դաւառին
մէջ հին դպրոցական ընկերներէն աղջկան մը
հետ թղթակցութիւն ունէր՝ արդիւնցի , վասն
դի վտանգաւոր երեւցաւ ինձ : Ուստի հիմա
բոլորովին իմ աղդեցութեանս ներքեւ է . . .
եւ կը յուսամ որ մեր նպատակներուն կը հաս-
նինք : Բայց կը տեսնէք ահա , սիրելի դուստր
իմ , որ առանց նեղութեան , առանց՝ դժուա-
րութեանց բարի գործ մը գլուխ հանել անհնար
է : — Ուրեմն անտարակոյս եմ որ Պ . տը Պրիդ-
վիլ իր առջի խստումը բաւական համարիր ,
եւ ես կերաշխաւորեմ անոր համար որ եթէ Պօտ-
րիքուր օրիորդին հետ ամուսնանայ . . . : — Գի-
տէք , սիրելի դուստր իմ , ըսաւ վանամայրն
իշխանուհոյն խօսքը կտրելով , որ եթէ ինձ

համար ըլլար՝ չէի ընդունիր . բայց ուխտիս տա-
լը՝ Աստուծոյ տալ է , եւ չեմ կրնար Պ. ար Պը-
րիզվիլի ընելիք բարեգործութեանց գումարն
աւելցընելու արգելք ըլլալ . ասկէց դատ գըլ-
խունուս ձախողութիւն մ'ալ եկած է այս օ-
րերս — Ի՞նչ ձախողութիւն , սիրելի
մայր իմ , — Սաքռէ-քէօրի (Սուրբ սիրտ) միա-
բանութիւնը մեր գնել ուղած խիստ յարմար
կալուածի մը գինը աւելցնելով ինք գնելու
կաշխատի Ստուգիւ՛ աշխարհի անձինք
կան որ յադենայ չեն գիտեր : Այս գործին
վրայ անցեալ օր ծանր խօսքեր ըրի Սաքռէ
— Գէօրի մեծաւորուհիին : — Այո՛ , ըրեր էք ,
ինք պատմեց ինձ եւ յանցանքը տնտեսին վրայ
ձգեց , ըսաւ Սէն—Տիդիէ տիկինը : — Ա՛ , հետը
կը տեսնուի՞ք ուրեմն , սիրելի գուսար իմ , հար-
ցուց մեծաւորուհիին զարմանալով : — Մօնսին-
եօրին տունը տեսայ գինքը » պատասխանեց
Սէն—Տիդիէ տիկինը թեթեւ վարանամաբ մը՝
զոր Սէնթ—Բէքթէթիւ վանահայրը չնչմարել
ձեւացուց , եւ յաբեց . « Չեմ գիտեր թէ ին-
չո՛ւ համար մեր վանքը Սաքռէ—Գէօրի միա-
բանութեան այս աստիճան նախանձը կը շար-
ժէ . գէշ զրոյց չմնաց որ չտարածեն մեր ուխ-
տին վրայ : Տեսակ մ'անձինք կան՝ որք իրենց
դրացւոյն յաջողութիւնը բնաւ չեն քաշեր :
— Հոգ մի ընէք , սիրելի մայր իմ , ըսաւ իշ-
խանուհին հաշտարար կերպով . կը յուսանք որ
Պ. ար Պրիզվիլի նուիրելիք հրիտակը կարող կը-

նէ ձեզ Սաքռէ—Քէօրի աւելցուցած գինը
գոցելու . ուստի այս ամուսնութիւնը կրկնա-
պատիկ օգտակար պիտի ըլլայ . . . վասն զի
մեծ հարստութիւն պիտի անցունէ մեզ անձ-
նութիւնը եղող անձի մը ձեռքը , որ ինչպէս յար-
մար երեւի . . . այնպէս կը գործածէ . . .
Հարիւր հազար ֆրանք տարեկան եկամուտով
մեր ջերմեռանդ պաշտպանին գիրքը եռապա-
տիկ կարեւորութիւն կ'ստանայ : Աերջապէս
մեր ուխտին արժանի ջատագով մը կունե-
նանք , եւ ալ կարօտ չենք ըլլար Պ. Տիւմու-
լէնի պէս մարդոց պաշտպանութեանը : — Բայց
անոր ալ գրուածոց մէջ շատ կրակ եւ հրմ-
տութիւն կայ , ըսաւ վանահայրը , կարծեմ թէ
դարուս ապականութեան դէմ ցամամբ բոր-
բոքեալ Սուրբ Բերնարտոս մ'է : — Աւանդ , սիր-
ելի մայր իմ , եթէ գիտնայիք ինչ տարօրի-
նակ Սուրբ Բերնարտոս մ'է այդ Պ. Տիւմուլէ-
նը . . . բայց չեմ ուզեր ձեր ականջն աղտե-
ղել : Այսչափ միայն կըսեմ ձեզ որ այդ տեսակ
պաշտպաններն ամենէն սուրբ դատերը վտան-
գի մէջ կը ձգեն . . . : Մնաք բարով , սիրելի
մայր իմ . . . այս գիշեր զգուշութիւններն ա-
ւելցընելը չձողնաք . . . զօրականին վերադար-
ձըն անհանգստութիւն կուտայ մեզ . . . — Ան-
հօգ եղիք , սիրելի դուստր իմ . . . ան , քիչ մը
նայ որ պիտի մոռնայի . . . Տլօրին օրիորդն
աղաչեց ինձ շնորհ մը խնդրել ձեզնէ . այ-
սինքն ձեր քով ծառայութեան մտնել . . . գի-

տէք արդէն թէ ձեր դժբաղդ եղբօրաղջկան
վրայ հսկելու պաշտօնին մէջ որչափ հաւատար-
մութիւն ցուցուց ձեզ . . . կարծեմ թէ զինքն
այսպէս վարձաարելով բոլորովին կրնաք ձեզ
յարել, եւ ես ալ շատ շնորհակալ կըլլամ ձեզ ա-
նոր կողմէն : — Յլօրինի վրայ ձեր ամենափոքր
համակրութիւնը բաւական է իր խնդիրը կա-
տարելու, սիրելի մայր իմ . . . զինքը քովս
կառնում . . . եւ հիմա անշուշտ առաջուան
կարծածէս աւելի օգտակար կրնայ ըլլալ ինձ :
— Արկին շնորհակալ եմ ձեր ազնուասրտութե-
նէն, սիրելի դուստր իմ : Ար յուսամ որ քիչ օ-
րէն դարձեալ տեսնուինք . . . : Աւղանդ ժա-
մը երկու քին երկար խորհրդակցութիւն մ'ու-
նինք Նորին գերապատուութեան եւ Մօնսին-
եօրի հետ . . . շնորհաք : — Ոչ, սիրելի մայր իմ,
ժամը երկու քին կուգամ . . . : Բայց զգուշու-
թիւնները կրկնապատկեցէք այս դիշեր, որ-
պէս զի ճշլլայ թէ մեծ դայթակութիւն մը պա-
տահի : Ծ

Իշխանուհին յարգանօք մեծաւորուհւոյն
ձեռքը համբուրելէ ետեւ դուրս ելաւ սենեա-
կին մեծ դռնէն՝ որ մեծ սանդուղին առջեւն
հանող դահլիճի մը մէջ կը բացուէր :

Քանի մը վայրկեան ետքը Յլօրին ներս մը-
տաւ կողմնական դռնէ մը : Մեծաւորուհին նըս-
տած էր : Յլօրին երկիւղած խոնարհութեամբ
անոր մօտեցաւ :

« Մէն — Տիդիէ իշխանուհի տիկինը դէմդ

չելան, հարցուց Սէնթ-Բէրրէթիւ մայրապետը .
— Ո՛չ, մայր իմ, ես պարտիզին վրայ նայող նեղ
արահին մէջ կ'սպասէի : — Իշխանուհին այս օրէն
ձեզ իր քով սպասաւորութեան կանու, ըսաւ
մեծաւորուհին :

Ֆլորին տխուր դարմացման շարժում մ'ը-
րաւ ու ըսաւ . « Զի՞ս . . . մայր իմ . . . բայց . . .
— Ես քու կողմանէդ խնդրեցի իրմէ . . . եւ դուն
ալ պիտի ընդունիս, պատասխանեց մեծաւո-
րուհին հրամայաբար : — Սակայն . . . մայր իմ
. . . աղաչեր էի ձեզ որ չի . . . — Ըսի քեզ
թէ պիտի ընդունիս, ըսաւ մեծաւորուհին այն-
պիսի կտրուկ եւ իշխանական կերպով մը, որ
Ֆլորին աչուքները խոնարհեցընելով, « կընդու-
նիմ » ըսաւ ցած ձայնիւ : — Յանուն Պ. Ռօտէ-
նի կուտամ քեզ այս հրամանը : — Մտքէս ան-
ցաւ . . . մայր իմ, պատասխանեց Ֆլորին տըխ-
րութեամբ . եւ ի՞նչ պայմաններով կը մանեմ
. . . իշխանուհւոյն քով : — Նոյն պայմաննե-
րով որ իր եղբօրազնկան քով մտած էիր : »

Ֆլորին վեր ցատկեց ու ըսաւ . « Ըսել է որ
ստէպ ստէպ դադանի լուր պիտի տամ իշխա-
նուհւոյն վրայ : — Պիտի դիտես, միտքդ պա-
հես ու ճշգիւ անդեկութիւն տաս . . . : Այո՛,
մայր իմ . . . — Գլխաւորապէս ուշադրութիւն
պիտի ընես երբոր Սաքոէ-Քէօրի վանամայրն
այցելութեան դայ իշխանուհւոյն : Ինչ որ խօ-
սին՝ մտիկ պիտի ընես ու գրի առնուս . . .
որպէս զի իշխանուհին վնասակար ազդեցու-

Թիւններէ պահպանելու հող տարուի : — Ար կա-
տարեմ , մայր իմ : Պիտի ջանաս նաեւ իմա-
նալ թէ ինչ պատճառաւ երկու դեռահասակ
որք աղջիկներ հոս բերուեցան եւ ամենախիստ
պատուէրներով մեզ յանձնուեցան իշխանուհւ-
ւոյն խորհրդական Առիւփօս տիկնոջ ձեռք : — Ա. յի ,
մայր իմ : — Ա. յս հետազննութիւնը պէտք չէ որ
արդելք ըլլայ քեզ դիտելու արժանի երեւցած
բաները մտքիդ մէջ դրոշմելու : Վաղը՝ ուրիշ
նիւթի մը վրայ յատուկ հրահանգներ պիտի
տամ քեզ : — Բաւական է , մայր իմ : — Եթէ
գոհացուցիչ կերպով վարուիս , եւ իմ ըսած
հրահանգներս հաւատարմութեամբ կատարես ,
իշխանուհւոյն քովէն հանուելով նոր ամուսնաց-
եալ դեռահաս կնոջ մը քով վերատեսուչ պիտի
դրուիս , որով խիստ շահաւէտ եւ տեւական
վիճակ մը կունենաս . . . միշտ նոյն սրայման-
ներով : Հիմա դուն այնպէս պիտի ցուցնես ,
որպէս թէ ինձ աղաչելով Աէն — Տիդիէ տիկնոջ
քով կը մտնես : — Ա. յո , մայր իմ . . . չեմ մոռ-
նար : — Ա. յն հետդ եկող խեղանդամ աղջիկն
ով է : Խեղճ արարած մը որ ապրուստ չունի .
բայց շատ խելացի է եւ իր վիճակէն շատ վեր
կրթութիւն ունի . կտաւեղէն կարող գործա-
ւորուհի մ'է , բայց բանելու գործ չունենալով
յետին չքաւորութեան մէջ ինկած է : Ա. յս ա-
ռաւօտ դինքը հոս բերելու դացած ժամանակս
իր վրայ պէտք եղած տեղեկութիւններն ստա-
ցայ , որք խիստ լաւ են : — Խեղանդամ եւ տը-

դեղ է միանդամայն : — Գէմքը վայելուչ է ,
բայց սաստիկ է : »

Վանամայրը դոհութիւն մ'ըզաց իմանալ
լով որ իրեն բերուած անձը տձեւ կերպարա-
նօք քաղրաբարոյ մէկն էր . ուստի վայրկեան
մը խորհելէ ետեւ աւելցուց .

« Խելացի ալ է , այնպէս չէ : — Շատ խե-
լացի : — Բնաւ աշրուստի միջոց չունի , այնպէս
չէ : — Յետին խեղճութեան մէջ է : Բարեպանչա-
է : — Կրօնական պարտականութեանց մէկ քա-
նին չկատարեր : — Հոգ չէ , ըսաւ մտքէն վա-
նամայրը , խելացի ըլլալը բաւական է . յետոյ
բարձրաձայն ըսաւ . « Այր կարելու յաջողակ
ըլլալը դիտեմ : — Ար կարծեմ , մայր իմ : »

Վանամայրը ոտքի վրայ ելաւ , դարակի
մը քով դնաց , եւ տեսրակ մ'առնելով մէջը
բան մը փնտռելու պէս ուշադրութեամբ աչքէ
անցունելէ ետեւ՝ տեղը դնելով ըսաւ . « Ներս-
բեր այդ ազջիկը եւ դուն դնա հանդերձա-
տունը դիս սպասէ :

« Խեղանդամ . . . հանձարեղ . . . եւ յա-
ջողակ դորձաւոր , ըսաւ մեծաւորուհին ինքն-
իրեն խորհելով . . . ամենեւին կասկած չտար . . .
տեսնենք նայինք : »

Վայրկեան մ'ետքը Ֆլօրին Մայէօի հետ
ներս մտաւ եւ դայն մեծաւորուհեոյն ներկայա-
ցրնելէ ետեւ՝ կամացուկ մը դուրս ելաւ : Աե-
ռահասակ դորձաւորուհին խռոված դող ելած
ու շփոթած էր . վասն զի Ֆլօրինի բացակայու-

Թեան ժամանակ այնպիսի գիւտ մ'ըրեր էր, որ
դժուարահաւատալի կերեւէր իրեն :

Սէնթ—Մարիի մեծաւորուհւոյն հետ մինակ
մնացած ժամանակ՝ Մայէօ տարտամ երկիւղ
մ'ըզաց :



ԳԼՈՒԽ Գ.

ՓՈՐՁՈՒԹԻՒՆ

Մայէօի խռովելուն ու դող ելնելուն պատ-
ճառն այս էր : Ֆլորին՝ մեծաւորուհւոյն քով
գացած ժամանակ՝ Մայէօն առաջին դատիկոնին
մէջ նախասենեակի ձեւով նստարանաւոր նեղ
սրահի մը մէջ թողուցեր էր : Մայէօ մինակ մը-
նալով պատուհանի մը քով գացեր էր, որ վան-
քին պարտիզին վրայ կը նայէր : Պարտիզին այս
կողմը կիսավիուլ պատ մը կար, որուն մէկ ծայրը
վանդակաձեւ տախտակներով գոցուած էր : Այն
պատը՝ որուն ծայրը նոր շինուիլ սկսած մա-
տուռի մը կցեալ էր, մօտակայ տան մը պար-
տէզը վանքին պարտէզէն կը բաժնէր :

Մայէօ յանկարծ ազջիկ մը տեսեր էր այն
մօտակայ տան վարի յարկին պատուհաններէն
մէկուն մէջ որ երկաթէ վանդակասիւններով
գոցուած էր, եւ վրան ալ խորանաձեւ քիւի
պէս բան մ'ունէր : Սղջիկը վանքին յարկերէն

մէկուն աչքը անկած՝ ձեռքը նշաններ կրնէր ,
որք միանգամայն սիրալիր եւ քաջալերական
էին : Մայէօ իր կեցած պատուհանին ետեւէն
չկրնալով այն նշաններուն որո՞ւ ուղղեալ ըլլալը
տեսնել , աղջկան չքնաղ գեղեցկութիւնը , ե-
րեսին պայծառ գոյնը , սեւ ու փայլուն աչքե-
րը եւ շրթունքներուն քաղցր ու սիրազորով
ժպիտը կը դիտէր սքանչանալով : Աերեւի թէ
աղջկան մունջ՝ բայց շնորհալից եւ աղդու խօ-
սակցութեան պատասխան տրուեցաւ . վասն զի
նազելի շարժմամբ մը ձախ ձեռքը սրտին վրայ
դնելով աջովը նշան մ'ըրաւ , որ կարծես ըսել
կուզէր թէ իր սիրտը դէպ այն կողմը կերթար՝
ուսկից աչուրները չէր դատէր :

Նոյն միջոցին արեւոտական մէկ աղօտ ճառա-
գայթն աղջկան մազերուն վրայ դարնելով ,
անոր քաղաքէ դէմքը՝ որ գրեթէ պատուհա-
նին վանդակամատերուն փակած էր , կարծես
թէ յանկարծ լուսաւորեցաւ թուխ ոսկեգոյն
մազերուն ակնախափող փաղփիւնէն : Այս գե-
ղասքանչ դէմքը Մայէօ տեսնելուն պէս՝ Ատրիէն
տը Քարաօլիլ օրիորդը միտքը գալով ականայ
սարսուռ մ'ըգաց , եւ անսխալ դատմամբ մակա-
բերեց որ Ակրիքօլի պաշտպանուհին էր տե-
սածը :

Մայէօ այն հրաշագեղ օրիորդն այս տխուր
յիմարանոցին մէջ տեսնելով , եւ քանի մ'օր
առաջ իր շքեղադարդ փոքրիկ պալատին մէջ
Ակրիքօլի ըրած ազնիւ ընդունելութիւնը յի-

Չեղով սիրտը ճակեցաւ : Խեղճ գործաւորուհի
աղջիկն ստուգիւ Ատրիէն օրիորդը խենթեցած
կը կարծէր . . . բայց առաւել ուշադրութեամբ
դիտելով կը թուէր իրեն որ անոր դմայլելի
դէմքին վրայ խելք ու շնորհք կը փայլէին միշտ :
Յանկարծ Քարտովիլ օրիորդը նշանական շար-
ժում մ'ըրաւ , մատը բերնին վրայ դրաւ , եւ
երկու համբոյր դրկելով դէպ 'ի նայած կողմը՝
մէկէն աներեւոյթ եղաւ : Մայէօ Ակրիքօլին
առ Ատրիէն օրիորդն ընելիք կարեւոր յայտնու-
թեանց վրայ խորհելով դառնապէս կը ցաւէր
որ օրիորդին քով հասնելու միջոց մը հնարք
մը չկար . վասն զի կը կարծէր որ եթէ օրիոր-
դը խելքը թաւցեր էր , գոնէ այն միջոցին
դգաստ էր : Գործաւորուհի աղջիկն այս խոր-
հրդածութեանց մէջ ընկղմեալ էր՝ երբոր Յլօ-
րին վանքին կրօնաւորուհեաց մէկուն հետ անոր
քով դարձաւ : Ուստի Մայէօ՝ ըրած գիւտին վրայ
բնաւ խօսք մը չընելով՝ մեծաւորուհւոյն ներ-
կայանալու գնաց :

Մեծաւորուհին արագ եւ խորազնին նայ-
ուածքով մը գործաւորուհւոյն դէմքը դիտելով ,
այն աստիճան երկչոտ քաղցր եւ պարկեշտ
երեւցաւ իրեն , որ Յլօրինի տաւած տեղե-
կութեանց ստուգութեանը լիովին հաւա-
տաց .

« Միբելի գուստը իմ , ըսաւ Սէնթ—Տէր-
բէթիւ վանամայրը սիրալիւ ձայնիւ , Յլօրին
ըսաւ ինձ թէ խիտ նեղ վիճակի մէջ էք . . .

բանելու գործ բնաւ չունիք եղեր . . . ճշմաւ
րիտ է : — Աւանդ , տիկին , այնպէս է : — Ձիս
մայր կոչէ , սիրելի գուտար իմ , այս անուա-
նակոչութիւնն առաւել քաղցր է . . . եւ այս
տանը կանոնն ալ այնպէս կը պահանջէ . . . :
Աարծեմ պէտք չունիմ ձեզ հարցընելու թէ ի՞նչ
սկզբանց տէր էք : — Նս միշտ ձեռացս վաստա-
կովն ասրած եմ պարկեշտաբար , մայր իմ ,
պատասխանելոյ Մայէօ՝ ծանր եւ միանգամայն
համեատ պարզութեամբ : — Ար հաւատամ , սի-
րելի գուտար իմ , եւ հաւատարու ալ իրաւացի
պատճառներ ունիմ . . . : Փառք տուէք Աս-
տուծոյ որ ձեզ շատ փորձութիւններէ պահ-
պաներ է . բայց կուզեմ իմանալ թէ ձեր գոր-
ծին մէջ յաջողակ էք : — Ձեռքէս եկածին չափ
աղէկ կը բանիմ . գործ տուողները միշտ գոհ
եղած են ինձմէ . . . եթէ դուք ալ գործ մը
տարու ըլլաք՝ կրնաք տեսնել ու դատել : — Ձեր
խօսքը բաւական է ինձ , սիրելի գուտար իմ . . .
դուք աւուրչէքով երթալ աշխատիլն աւելի
կ'ընարէք այնպէս չէ : — Տլօրին օրիորդն ըսաւ
ինձ , մայր իմ , թէ տանս մէջ բանելու գործ
դանել անյուսալի էր : — Առ այժմ չկայ , գուտար
իմ , բայց եթէ ժամանակէ մ'ետեւ առիթ ներ-
կայանայ . . . կը խորհիմ : Իսկ հիմա ձեզ հա-
մար կրցածս այս է . յարգելի պառաւ տիկին
մ'աւուրչէքով կար կարող աղջիկ մը խնդրած է
ինձմէ . երբոր իմ ձեռօքս իրեն ներկայանաք ,
ձեզ կընդունի : Մեր ուխտը ձեզ պատշաճ կեր-

պով կը հագուեցընէ , եւ ձեր աւուրչէքներէն
իր ծախքը քիչ քիչ վար կը դնէ , վասն զի հա-
շիւը մեզ հետ պիտի տեսնէք : Աւուրչէքնիդ
երկու ֆրանք է . . . կը բաւէ ձեզ : — Ա՛հ ,
մայր իմ . . . յուսացածէս շատ աւելի է : — Աշ-
խատութիւննիդ ալ առաւօտեան ժամ իննէն
մինչեւ իրիկուան վեցը պիտի տեսէ . . . որով
քանի մը ժամ ալ ձեզ կը մնայ որ ուղածուդ
պէս կրնաք անցունել : Այս պայմանը բաւա-
կան թեթեւ չէ : — Ա՛հ , շատ թեթեւ , մայր
իմ . . . : — Ամեն բանէ առաջ պէտք է իմա-
ցընեմ ձեզ թէ ուխտս որով քով աշխատու-
թեան պիտի դնէ ձեզ . . . : Տիկին Պրէմօն ա-
նունով այրի կնոջ մը քով պիտի մտնէք , որ
ջերմեռանդ բարեպաշտութեամբ վառեալ անձ
մ'է . . . : Ար յուսամ որ անոր տանը մէջ բա-
րի օրինակներ միայն պիտի տեսնէք . . . իսկ
եթէ հակառակը տեսնէք , պէտք է որ դաք ինձ
իմացընէք : — Այդ ինչպէս կրնայ ըլլալ , մայր
իմ , ըսաւ Մայէօ դարմանալով : — Մտիկ ըրէք
որ ըսեմ , սիրելի դուստր իմ , ըսաւ Սէնթ-Բէր-
րէթիւ մայրապետն եւս քան զեւս քաղցրացը-
նելով իր ձայնը . Սէնթ — Մարիի ուխտը սուրբ
եւ կրկին հալատակ ունի . . . կրնաք հասկը-
նալ , որ ինչպէս մեր պարտքն է՝ ընտանիքի մը
քով դրած անձերնուս բարի վարուցը վրայ
պէտք եղած ամեն երաշխաւորութիւնները տալ
անոնց տէրերուն , այնպէս ալ պարտք է մեզ
տէրերուն բարոյականութեան մասին պէտք է-

դած երաշխաւորութիւններն անոնց քով դը-
րած անձերնուս ստալ : — Ատկէց աւելի ար-
դար եւ իմաստուն նախատեսութիւն չկրնար
ըլլալ , մայր իմ , ըսաւ Մայէօ : — Այնպէս չէ ,
սիրելի դուստր իմ , վասն զի ինչպէս որ գէշ
վարուց տէր տգասուհի մը ցաւալի շփոթու-
թիւններ կրնայ հանել պատուաւոր տան մը մէջ
• • • այնպէս ալ բարոյականէ զուրկ տէր մը
կամ սիրուհի մը կրնան վտանգաւոր ազդեցու-
թիւն մ'ունենալ իրենց ծառայող կամ տուներ-
նուն մէջ աշխատելու դայող անձանց վրայ • • • :
Արդ , մեր ուխտն ամեն աստօջինի տէրերու եւ
ծառայներու փոխադարձ երաշխաւորութիւն ըն-
ծայելու համար հաստատուած է • • • : — Ա՛հ ,
տիկին , ըսաւ Մայէօ պարզմտութեամբ , այդ
բանը մտածողներն ամենուն օրհնութեանն ար-
ժանի են • • • : — Եւ օրհնութիւններն ալ պա-
կաս չեն , սիրելի դուստր իմ , վասն զի ուխտս
իր խոտմունքն հաւատարմութեամբ կը կատա-
րէ : Արդ , երբոր՝ օրինակի համար՝ ձեզ պէս
արժանաւոր դործաւորուհի մը անստգիւտ ճան-
չուած անձանց քով դրուելէ ետեւ՝ իր տէրե-
րուն կամ սովորաբար այն տունը յաճախող ան-
ձանց վրայ բարոյական անկանոնութիւն մը կամ
անկրօնութեան միտում մը նշմարէ՝ որ իր հա-
մեստութիւնը վիրաւորէ կամ իր կրօնական
սկզբանց հակառակ թուի , իսկոյն կուգայ եւ
խորհրդաբար տեղն 'ի տեղը մեզ կիմացընէ ի-
րեն գայթակղութիւն կամ կասկած պատճառող

և զեւրոթիւնները . . . ասկէց աւելի արդար
բան չկրնար ըլլալ . . . այնպէս չէ : — Այո՛ ,
մայր իմ . . . պատասխանեց Մայէօ վարանեւ
լով , վասն զի այս նախազգուշութիւնները դար-
մանալի կը թուէին իրեն : — Այն ժամանակ ,
չարունակեց մեծաւորուհին , եթէ գործը ծանր
երեւի մեզ , կը պատուիրենք մեր պաշտպա-
նութիւնը վայելող անձին՝ որ առաւել եւս ու-
շադրութեամբ դիտէ , որպէս զի ըրած կասկա-
ծին իրաւացի ըլլալուն լաւ համոզուի : Ան ալ
նորէն տեսածն ու խմացածը գաղտնաբար մեզ
կը հաղորդէ , եւ եթէ մեր առջի երկիւղներն
հաստատուին , մեր բարեպաշտական խնամոց
հաւատարիմ կենալով իսկոյն մեր պաշտպան-
եալն այն անպատշաճ տունէն կը հանենք . . . :
Բայց որովհետեւ մեր պաշտպանած կամ խնա-
մարկած անձերէն շատերը՝ թէպէտեւ առաքինի
ու անմեզ են , իրենց հոգւոյն մնաս բերող բա-
ները զանազանեւ չափ լուսաւոր միտք չունին ,
իրենց օգտին համար անօրինած ենք որ ամեն
ութ օրն անգամ մը կամ անձամբ եւ կամ գրով
մեզ յայտնեն , ինչպէս որ աղջիկներն իրենց մօ-
րը կը յայտնեն , ինչ որ եղեր ու անցեր է այն
չաքթուն իրենց ծառայած տան մէջ . այն ժա-
մանակ մենք ալ զանոնք հոն թողուլ պէտք է
թէ ոչ՝ կը խորհինք ու կորոչենք : Արդէն հար-
իւրի չափ անձինք ունինք , որք այս պայման-
ներով բաղմաթիւ ընտանեաց մէջ գրուած են՝
իբրեւ տիկնանց ընկերակից օրիորդ , իբրեւ խա-

նութիւնսն զոր ծակալուսնի, իբրև սպասուսնի
կամ աւուրչէքով կար կարող, եւ անոնց ամե-
նուն օղտին համար այս ընթացքը բուն ինքու
վրայ օր քան զօր աւելի գոհ կըլլանք . . . : Ը-
սաններա կը հասկընաք, այնպէս չէ, սիրելի աղ-
ջիկա : — Այո, . . . մայր իմ . . . ըսաւ Մայէօ
եւս քան զեւս շէտիւ լուր . վասն զի սրտին ուղ-
ղութեամբն ու նորամտութեամբը լաւ կը հասկը-
նար որ տէրանց եւ ծառայից բարոյականութեան
վրայ դրուած այս տեսակ մը փոխադարձ ապա-
հովութիւնը խորհրդական եւ առանին լրատու-
թեան մը կը նմանէր, ընդարձակ կերպով կատ-
մուած եւ ուխտին թեւարկած անձերէն առանց
գիտութեան գործադրուած . վասն զի դժուա-
րին էր անկէց աւելի վարպետութեամբ անոնց
աչքէն ծածկել մասնութիւն ընելու սովորու-
թիւնը, որուն առանց իսկ կասկածելու կը
վարժուէին :

— Այս մանր պարագաները ձեզ հասկըցընե-
լուս պատճառն այս է որ, սիրելի աղջիկա, Ը-
սաւ Սէնթ—Բէրրէթիւ վանամայրը Մայէօի լը-
սութիւնը հաւանութեան հշան կարծելով, չի
կարծէք թէ ակամայ կը պարտաւորիք կենալ
այնպիսի տան մը մէջ՝ ուր ձեր ակնկալութեան
հակառակ սուրբ եւ բարեպաշտական օրինակ-
ներ չէք գտներ միշտ . . . : Պրէմօն արկնաջ
տունը, ուր ձեզ գնել կուզեմ, բոլորովին Աս-
տուծոյ նուիրեալ տուն մ'է . . . Միայն այս-
չափ լաւ եմ, թէ եւ չեմ ուզեր հաւատալ, որ

Պրէմօն տիկնոջ աղջիկը՝ Նօզի տիկնոջ՝ որ քիչ
մը ժամանակէ՛ ՚ի վեր մօրը հետ նստելու եկած
է, բաղձացուածին չափ անատիւտ վարք չու-
նի, իր կրօնական պարտականութիւնները ճշ-
գիւ չկատարեր, եւ իր ամուսնոյն բացակայու-
թեան ժամանակ, որ հինա Ամերիկա է, Պ. Հար-
տի անունով հարուստ գործարանատէրի մ'ան-
գուլ այցելութիւնը կրնառնի դժբաղդարար: »

Մայէօ՛ Ակրիքօլի վարպետին անունը լսե-
լուն պէս՝ զարմացման շարժում մ'ըրաւ եւ թե-
թեւ մը կարմրեցաւ:

Մեծաւորուհին անոր այս շարժումն ու
կարմրիլը բնականաբար անոր ամչկուտ դիւրագ-
դածութեան սպացոյց մը կարծելով աւելցուց .
« Այս բաները ձեզ լսելու պարտաւորեցայ, սի-
րելի աղջիկս, որպէս զի դդոցչ կենաք: Պարտա-
ւորեցայ նաեւ յիշել ականջս հասած գրոյցները՝
որք բոլորովին սխալ կերելին ինձ. վասն զի
Պրէմօն տիկնոջ աղջիկը միշտ բարի օրինակներ
տեսած է, դորս չկրնար երբէք մոռնալ . . . :
Մնաց որ դուք առաւօտէն մինչեւ իրիկուն տա-
նը մէջ գտնուելով, ամենէն աղէկ կրնաք հաս-
կրնալ թէ՛ այս լսած գրոյցներս հիմնաւոր են թէ՛
սուտ. եթէ ձախողարար հիմնաւոր գտնէք,
այն ժամանակ, սիրելի աղջիկս, հոս կուգաք
եւ ձեզ հաւատարի երեւցող ամեն պարագանե-
րն ինձ կը յայտնէք խորհրդարար, եւ եթէ
ես ալ ձեզ համակարծիք ըլլամ, իսկոյն այն
տունէն կը հանեմ ձեզ որովհետեւ մօրը սրբու-

Թիւնը չկրնար փոխարինել աղջկան վարուց ձեզ
ընծայած ողբալի՝ օրինակները . . . վասն զի այն
օրէն որ դուք ուխտիս մէջ կը մտնէք, ձեր հոգ-
ւոյն փրկութեան եւ պատասխանատու եմ. եւ
որ առաւելն է, եթէ ձեր խղճին դիւրադրա-
ծութեանն ստիպեալ Պրէմօն տիկնոջ քովէն ել-
նէք եւ ժամանակ մ' առանց պաշտօնի մնաք,
ուխտս՝ երբոր ձեր վարքէն ու ջանքէն գոհ ե-
ղած ըլլայ՝ օրը Ֆրանք մը կուտայ ձեզ մինչեւ
որ ուրիշ տեղ մը դնէ . . . : Ահա կը տեսնէք,
սիրելի աղջիկս, որ մեր գիրկն իյնողը վաս-
չրներ . . . : Աւրեմն որոշուեցաւ որ վաղանդ
Պրէմօն տիկնոջ տունը մտնէք : »

Մայէօ տագնապալից վիճակի մը մէջ կը
գտնուէր . մերթ կը տեսնէր որ իր առաջին կառ-
կածները կը հաստատուէին, եւ իր վեհերոտու-
թեան հակառակ՝ սրտին մէջ զայրոյթ մը կ'զգար
խորհելով որ իր յետին չքաւորութիւնը գիտ-
նալնուհի համար կը կարծէին թէ պարարտ ա-
ւուրչէքի մը շնորհիւ կրնար ինքզինք վաճառել
եւ լրտեսութիւն յանձն առնուլ . մերթ ալ՝ իր
բնական փափկասրտութեամբը չէր ուզեր հաւ-
տալ որ մեծաւորուհիին տարիքն ու վիճակն ու-
նեցող կին մը խոնարհի այնպիսի վատ առաջար-
կութիւն մ'ընելու, որ թէ՛ ընողին եւ թէ՛ ըն-
դունողին նախատինք է . ուստի իր առաջին
կասկածները մեղադրելով կրտէր ինքն իրեն թէ
չըլլայ որ մեծաւորուհիին զինքը գործածելէ ա-
ռաջ փորձել հասկընալ ուղէ թէ արդեօք իր վի-

ճակին համեմատութեամբ պայծառ խոստամունք
մը մերժելու չափ սլատուոյ զգացում եւ ուղղու-
թիւն ունի: Մայէօ բնականաբար բարիին հաւա-
տալու հակամէտ ըլլալով, այս վերջին կարծեաց
վրայ հաստատուեցաւ եւ կրսէր ինքնիրեն որ
եթէ սխալած ալ ըլլայ, մեծաւորութիւն համար
ամենէն հուազ վիրաւորիչ եղանակն էր իր ա-
նարժան առաջարկութիւնները մերժելու: Այն-
պիսի շարժմամբ մը՝ որ խրոխտ չէր՝ բայց իր
արժանապատուութեան զգացումը կը յայտնէր,
գործաւորութիւն աղջիկը վեր առաւ դուխը՝ որ
մինչեւ այն ժամանակ խոնարհաբար վար կախեր
էր, մեծաւորութեան երեսը հայեցաւ որպէս զի
իւր խօսքերուն անկեղծութիւնը կարենայ իւր
գէմքէն հասկընալ, եւ այս անգամ « Մայր իմ »
ըսելը մոռնալով խռովեալ ձայնիւ մ'ըսաւ .
« Ա՛հ, տիկին . . . զիս այդ կերպով փորձել
ուղեղնուդ համար չեմ կրնար ձեզ մեղադրել . . .
կը տեսնէք որ թշուառ աղջիկ մ'եմ, եւ ձեր
վստահութեանն արժանի ըլլալու բան մ'ըրած
չեմ . բայց հաւատացէք որ ինչ աստիճան ալ աղ-
քատ ըլլամ, երբէք չեմ խոնարհիր այդպիսի
արհամարհելի գործ մ'ընելու, զոր անշուշտ
պարտաւորուած էք առաջարկել ինձ, որպէս
զի չընդունելէս հասկընաք ձեր պաշտպանու-
թեանն արժանի ըլլալս: Այ, ոչ, տիկին, ինչ
վարձք ալ որ արուի ինձ՝ երբէք չեմ կրնար
մատնութիւն ընել: »

Մայէօ այս վերջին խօսքերն այն աստիճան

սրտանց ըսաւ որ դէմքը թեթեւ մը կարմրեցաւ :
 Մեծաւորուհին իր խորագէտ ու շմութեամբ
 բըն ու փորձառու թեամբը հասկըցաւ Մայէօի
 խօսքերուն անկեղծութիւնը , ուստի ուրախ ըլ-
 լալով որ աղջիկն իր առաջարկութիւնը սխալ
 հասկըցեր էր , սիրելիք ժպիտ մը ցոյց տուաւ
 եւ թեւերն անոր երկնցընելով ըսաւ . « Շատ
 աղէկ , սիրելիք աղջիկս , շատ աղէկ . . . եկ
 համբուրեմ քեզ . . . » — Մայր իմ , ձեր այդ-
 չափ բարեւորութեան առջեւ ամօթով եմ : — Այ՛,
 վասն զի ձեր խօսքերն ուղղութեամբ լի են . . .
 միայն թէ անտարակոյս եղիք որ միտքս ձեզ
 փորձել չէր . . . մեր պաշտպանած անձանց
 վիճակին բարոյական օղակն համար իրենցմէ
 խնդրած որդիական վատահու թիւննիս ընաւ նը-
 մանութիւն չունի մասնութեան . . . բայց կան
 այնպիսի անձինք , սիրելիք աղջիկս , եւ ինչպէս
 կը տեսնեմ դուք ալ անոնցմէ էք , որք որոշ
 պիտի ընէք եւ բաւական կիրթ խելք ունենալով
 մեր խրատներուն կարօտ չեն եւ կրնան ինքնին
 գտնել ինչ որ իրենց հոգւոյն փրկութեան վնաս
 կրնայ բերել . . . ուստի ես պատասխանա-
 տուութիւնը բոլորովին ձեզ թողլով ինչ որ
 դուք կամաւ ինձ իմացընել արժան դատիք ,
 անկէց աւելի գաղանի տեղեկութիւն չեմ ու-
 զեր ձեզմէ :
 — Ա՛հ , ախի՛հն , այս սրչափ բարեւորու-
 թիւն է » ըսաւ խեղճ Մայէօ՝ չգիտնալով վա-
 նական մտաց հաղարաւոր հնարագիտութիւն

ներն ու սրբապատգամներն , եւ վաստակ
հաշիւներ կարծելով որ կրնար պատուաւոր
կերպով արժանաւոր թոշակ մ'ստանալ :

— Ըրածս բարեկրօնութիւնն չէ՛ արդարեւ
թիւն է , ըսաւ Սէնթ—Բէրրէթիւ վանամայրը ,
որուն արտասանութիւնն հետզհետէ գորովալիբ
եղանակ մը կ'առնուր . ձեզ պէս սուրբ աղջկան
մը վրայ որչափ վաստակութիւն ու գորով ունեւ
նանք՝ կարծէ . վասն զի՛ եթէ կարելի է այս
պէս ըսել՝ դուք ձեր աղքատութեամբն առաւ
ւել եւս մաքրուած էք , որովհետեւ Տիրոջն օրէնս
քը հաւատարմութեամբ պահած էք :

— Մայր իմ . . .

— Աերջին հարցում մ'ընեմ ձեզ , սիրելի
աղջիկս . առիտը քանի՛ անգամ սուրբ սեղանին
կը մերձենաք :

— Տիկին , պատասխանեց Մայէօ , առաջին
հաղորդութենէս 'ի վեր մերձեցած չեմ , այսինքն
ուրիշ տարիէ 'ի վեր : Ամեն օր դիչեր յերեկ աշ-
խատելով հաղիւ օրական ապրուստս կրնամ ձայ-
րել , ուստի պարտաւ ժամանակ չունիմ որ . . .

— Ի՞նչ կըսէք , գոչեց մեծաւորուհին Մայ-
յէօի խօսքը կարելով եւ ցաւաղին հիացմամբ
ձեռքերն իրենց կցելով . կարելի բան է , կրօնա-
կան պարտականութիւննիդ ստէպ չկատարել . . .

— Աւանդ , տիկին . . . ըսի ձեզ թէ ժամանակ
հասկ չեմ կրնար գտնել » պատասխանեց Մայէօ
ապշեալ աչօք Սէնթ—Բէրրէթիւ վանամայրին
երեսը նայելով :

Պահ մը լուռ կենալէ ետեւ՝ վանամայրն ըսաւ անոր տխրութեամբ . « Կը տեսնէք , սիրելի աղջիկս , որչափ վշտացայ . . . արդէն ըսի ձեզ թէ մեք ինչպէս որ մեր թեւարկած անձինքը բարեպաշտ ընտանեաց քով միայն կը դնենք , նոյնպէս անոնք ալ մեզնէ բարեպաշտ եւ կրօնապահ անձինք կը խնդրեն , եւ այս բանը մեր ուխտին անհրաժեշտ պայմաններէն մէկն է . . . : Ուստի , ցաւօք սրտի կիմաղընեմ ձեզ թէ անհրնար է ինձ գործածել ձեզ՝ ինչպէս որ կը յուսայի . . . : Սակայն եթէ այսուհետեւ այդ կրօնական աններելի անհողութենէն հրաժարիք . . . այն ժամանակ կը նայինք . . . :

— Տիկին , ըսաւ Մայէօ սիրտն ելնելով , վասն զի երջանիկ յոյս մը կորսնցընելու կը հարկադրէր , ձեզ այսչափ երկար ժամանակ փութ տեղն դրադեցընելու համար . . . ներում կը խնդրեմ :

— Առաւել ես կը ցաւիմ , սիրելի աղջիկս , որ չկրցայ ձեզ ուխտիս պաշտպանութեան ներքեւ առնուլ . . . բայց բոլորովին ալ չեմ յուսահատիր . . . վասն զի կը փափաքիմ որ ձեզ պէս կարեկցութեան արժանի անձ մը կարող ըլլայ որ մը իւր բարեպաշտութեամբը կրօնասէր անձանց մշտատեւ պաշտպանութիւնը վայելելու . . . : Նրթաք բարով , սիրելի աղջիկս . . . երթաք խաղաղութեամբ , եւ Աստուած ողորմի ձեզ , մինչեւ որ բոլորովին իրեն գատնաք . . . : »

Այս ըսելով մեծաւորուհին ոտքի վրայ ելաւ եւ Մայէօն մինչեւ դուռն առաջնորդեց՝ միշտ ամենաքաղցր եւ մայրական ձեւերով, յետոյ երբոր Մայէօ դռնէն դուրս կելնէր՝ ըսաւ անոր. «Այս նեղ ու երկար սրահին ծայրը գացէք, քանի մ'ոտք վար իջէք, աջ կողմի երկրորդ դուռը դարկէք, այն է հանդերձարանը, հոն Ֆլօրինը կը գանէք . . . որ ձեզ դուրս հանելու կառաջնորդէ . . . երթաք բարով, սիրելի աղջիկըս . . . »

Մայէօ մեծաւորուհեոյն քովէն դուրս ելնելուն պէս, արտառաքը՝ որ մինչեւ այն ժամանակ դասեր էր աղբիւրի պէս հոսել սկսաւ, եւ չհամարձակելով այնպէս լալով հանդերձարանն երթալ եւ Ֆլօրինի ու անշուշտ հոն դուրս մարուած քանի մը կրօնաւորուհեաց դէմ ելնել, վայրկեան մը նեղ սրահին սլառուհաններէն մէկուն առջեւ կեցաւ, որպէս զի արտառաքով ողողեալ աչքերը սրբէ :

Հոնկէց մեքենայաբար դիմացի տանը պատուհանին նայելով՝ ուր պահ մ'առաջ Ատրիէն տը Քարտօլիլ օրիորդը ճանչել կարծեր էր, յանկարծ տեսաւ որ նոյն օրիորդը դռնէ մը դուրս ելաւ եւ շտապով դէպ 'ի վանդակաձեւ տախտակորմը դնաց, որ վանքին եւ տանը պարտէզներն իրարմէ կը զատէր :

Նոյն միջոցին ասլշելով տեսաւ որ երկու քոյրերէն մէկը՝ որոց Տրանսօազի տունէն աներեւոյթ ըլլալուն վրայ Տակօպէս յուսահա-

տուժեան մէջ ինկած էր, Մօզ Սիմօն օրիորդը՝
դժգոյն գողահար ու սրտաբեկ՝ վախն 'ի վախը
տախտակորմին քով գնաց, որով Քարտօվիլ օ-
րիորդէն դատուած էր: Խեղճ որբը կը վախնար
որ չըլլայ թէ մէկը զինքը տեսնէ:



ԳԼՈՒԽ Դ.

ՄԱՅԷՕ ԵՒ ՔԱՐՏՕՎԻԼ ՕՐԻՈՐԴ

Մայէօ՝ գող ելած ապշած եւ ուշադիր՝
վանքին պատուհաններուն մէկէն գլուխը դուրս
հանած Քարտօվիլ օրիորդին եւ Ռօզ Սիմօնի
շարժումները կը դիտէր, զորս չէր յուսար եր-
բէք հոն մէկտեղած տեսնել:

Որբը՝ Տոքթոր Պալէնիէի տունը վանքին
պարտէզէն բաժնող վանդակաձեւ տախտակոր-
մին քով երթալով քանի մը խօսք ըսաւ Սա-
րիէնի, որուն գէմքին վրայ յանկարծ դարմա-
նաց բարկութեան եւ գթութեան նշաններ
տեսնուեցան: Այն միջոցին կրօնաւորուհի մը
երեւցաւ, որ ասդին անդին կը նայէր խուճա-
պաւ մէկը փնտռելու պէս. յետոյ Ռօզը տես-
նելով որ վախէն սասանած տախտակորմին
կը փակչէր, իսկոյն թեւէն բռնեց, խօսիւ յան-
դիմանելու կերպով ծուռ ծուռ երեսը նայեցաւ,
եւ թէպէտ կերեւէր որ Քարտօվիլ օրիորդն ալ

քանի մը ծանր խօսք զրուցեց այն կնոջ , բայց
նա մտիկ չընելով քաշեց տարաւ խեղճ որբը ,
որ երկու երեք անդամ լալով Ատրիէնի դար-
ձաւ նայեցաւ : Ատրիէն ալ նշանական շար-
ժումներով իր սրտակցութիւնն անոր յայանելէ
ետեւ՝ մէկէն ետ դարձաւ որպէս թէ իր լացը
ծածկել ուզելով :

Այս սրտաշարժ անցքին ժամանակ Մայէօի
դանուած նեղ սրահն առաջին դատիկոնին մէջ ըլ-
լալով , գործաւորուհի աղջիկը մտածեց դեանա-
յարկն իջնել , եւ անկից պարտէզը մտնելով երթալ
այն ոսկեգոյն մազերով դեղեցիկ աղջկան հետ խօ-
սիլ եւ ստուգել թէ Քարտօվիլ օրինորդն էր . եւ
եթէ տեսնէ որ խելքը գլուխն է , իմացընել թէ
Ակրիքօլ խիստ կարեւոր տեղեկութիւններ ու-
նէր իրեն հաղորդելիք , բայց չէր դիտեր թէ ի՞նչ-
պէս կրնար հաղորդել :

Օրն իրիկուն կըլլար , եւ արեւը մարը մըտ-
նելու վրայ էր : Մայէօ վախնալով որ չըլլայ թէ
Յլօրին սպասելով ձանձրանայ , մտքէն անցածը
չուտով կատարելու փութաց : Թեթեւաքայլ ըն-
թացքով եւ ժամանակ ժամանակ ալ սրտատան-
ջութենէն ականջ դնելով՝ նեղ սրահին ծայրը գը-
նաց , հոն երեք չորս ոտք փոքրիկ սանդուղէ մը
վար իջնելով՝ հանդերձարանին առջեւ հասաւ .
յետոյ ոլորապտոյտ նեղ սանդուղք մը տեսաւ որ
դեանայարկը կիջեցընէր : Գործաւորուհի աղ-
ջիկը ձայներ լսելով՝ աճապարեց վար իջաւ եւ
բակին վրայ նեղ ու երկար անցքի մը մէջ գըտ-

նուեցաւ , ուսկէց մեծաւորուհւոյն վերապահեալ
ասկապիեղկ դուռ մը պարտէզին մէկ կողմը
կը հանէր : Հոն ծառուղի մը կար՝ որ մէկ կողմ-
մէն բարձր տօսախներու ցանկով մը պատած
ըլլալով կրնար զինքն աչքէ ծածկել . ուստի
ծառուղիին մէջ սպրդելով վանդակաձեւ տախ-
տակորմին քով հասաւ , եւ քանի մը քայլ ան-
դին Քարտօվիլ օրիորդը տեսաւ գեղջուկ նըս-
տարանի մը վրայ նստած եւ արմուկովը յենա-
րանին կրթընած :

Ատրիէնի անյողդողդ բնաւորութիւնը վայր-
կեան մը սարսեր էր տօքթոր Պալէնիէի յիմարա-
տունը տարուած սոսկալի գիշերը կրած յողնու-
թեանէն տաղնապէն վախէն եւ յուսահատութե-
անէն : Տօքթորը վերջապէս իւր սատանայական
խորամանկութեամբն օրիորդին ճնշեալ ու տկա-
րացեալ վիճակէն օգուտ քաղելով , կարող եղեր
էր վայրկեան մը զայն իր վրայ կասկածեցընել :
Բայց ամենէն դժնդակ եւ բուռն տաղնապններու
բռնաբար յաջորդող հանդարտութիւնը , արդա-
րախոհ եւ սուր մտաց խորհրդածութիւնը՝ շատ
չանցած փարատեցին Ատրիէնի երկիւղը՝ զոր
տօքթոր Պալէնիէ վայրկեան մը կրցեր էր անոր
ազդել , այնպէս որ ալ մտքէն անգամ չանցուց
թէ դիտուն տօքթորն այս բանը սխալմամբ ը-
րած ըլլայ . ընդհակառակն , բացայայտ կերպով
տեսաւ որ այս մարդուն բռնած ընթացքը նող-
կալի կեղծաւորութեան եւ հազուագիւտ յան-
դըղնութեան ընթացք մ'էր՝ հազուագիւտ ճար-

պիկութեան մը հետ աջակցեալ : Չերջապէս ուշ
հասկըցաւ որ Պ. Պալէնիէ կոյր գործիք մ'եղած
էր Սէն—Տիդիէ տիկնոջ ձեռքը : Ալ այնուհե-
տեւ խոր լռութիւն պահեց եւ ծանր հանդար-
տութեան մը մէջ ամփոփուեցաւ . ամենեւին
գանգատ մը՝ յանդիմանութիւն մը շհանեց բեր-
նէն . . . եւ սպասեց . . . :

Սակայն , որչափ որ տանը մէջ պտրտելու եւ
ուղածն ընելու բաւական ազատութիւն տրուած
էր իրեն (դուրսի հետ հաղորդակցութիւնը միշտ
արգիլուելով) , բայց եւ այնպէս Ատրիէնի ներ-
կայ վիճակը խիստ եւ անտանելի էր , մանաւանդ
իրեն համար՝ որ ներդաշնակաւոր գեղեցկութիւն-
ներէ շրջապատեալ ըլլալու սիրահար էր : Ասոր
հետ մէկտեղ կ'զգար որ այս վիճակը չէր կրնար
երկար տեւել : Օրինաց արամադրութեանն ու
հսկողութեանը քաջածանօթ չէր , բայց պարզ
արամախոհութեամբ կը հասկընար , որ խելագա-
րութեան քիչ շատ հաւանելի երեւոյթներով
ճարտարապէս պաշտպանուած սակաւօրեայ ար-
գելափակութիւն մը բոլորովին անհնար բան մը
չէր , եւ կրնար թերեւս անպատուհաս 'ի գործ
գրուիլ , բայց սահմանէ մ'անդին չէր կրնար անց-
նիլ . վասն զի վերջապէս անկարելի էր որ իր
աստիճանն ունեցող աղջիկ մը մէկէն 'ի մէկ աշ-
խարհի մէջէն անյայտ ըլլար եւ ժամանակէ մ'ե-
տեւ չիմացուէր , եւ իր յանկարծական խելագա-
րութեան լուրը փութաջան քննութեանց եւ խու-
ղարկութեանց առիթ չըլլար : Ուղիղ կամ սխալ ,

այս համազումը բաւական եղեր էր Ատրիէնի բը-
նաւորութիւնը կազդուելու եւ սոխորական աշ-
խոյժն ու քաջասրտութիւնը նորոգելու :

Սակայն մերթ ընդ մերթ ալ 'ի զուր կը
հարցընէր ինքնիրեն թէ ինչ էր այս արդելա-
փակութեան պատճառը : Սէն—Տիգրիէ տիկնոջ
բնաւորութիւնը լաւ ճանչելով կը խորհէր թէ
առանց կարեւոր նպատակ մ'աւնենալու եւ մի-
այն վաղանցիկ խոշտանգանք մ'իրեն պատ-
ճառելու համար չէր կրնար ընել այս բանը :
Ատրիէնի այս մտածմունքը սխալ չէր . Տէկ-
րինեի արբան եւ Սէն—Տիգրիէ իշխանուհին հա-
մոզուած էին որ Ատրիէն՝ թէպէտ չգիտնալ
կը ձեւացընէր, բայց բաւական տեղեկութիւն
ունէր ժառանգութեան դործին, եւ գիտէր որ
փետրվար 13 ին անպատճառ Սէն—Պրանսուա
փողոցը պէտք էր գտնուիլ, եւ թէ իր իրա-
ւունքը պաշտպանելու մտադիր էր : Ուստի Ատ-
րիէնն իբրեւ խելակորոյս արդելափակ ընելով
մահացու հարուած մը կուտային անոր ապագա-
յին : Բայց՝ փութանք ըսելու՝ որ այս վերջին
զգուշութիւնն աւելորդ էր, որովհետեւ Ատրի-
էն՝ թէպէտ քիչ մը ծանօթ էր այս ընտանեկան
գաղանկաց՝ զոր իրմէ ծածկել ուղեր էին եւ իմա-
ցած կը կարծէին, բայց քանի մը պահուած կամ
կորսուած թուղթեր ձեռքը չգտնուելուն պատ-
ճառաւ դործին խորը թափանցած չէր : Աեր-
ջապէս Քարտուիլ օրիորդի թշնամեաց այս նող-
կալի վարմունքին շարժառիթն ինչ որ ալ ըլ-

լար, վերջին ծայր պոփոքնք եւ զայրոյթ պատ-
ճառած էր օրիորդին : Արդարեւ Ատրիէնի աղ-
նիւ սիրան ատելութիւնն չէր տածեր եւ վրէժ-
խնդրութենէ կը դարչէր . բայց Սէն—Տիգրիէ
տիկնոջ, Տէկրինիեի արքային եւ տաքթոր Պա-
լէնիէի ձեռքէն կրած այս դառն վիշտը մտա-
ծելով կառաջադրէր՝ ոչ թէ վրէժ խնդրել, այլ
ամեն հնարաւոր միջոց 'ի գործ դնելով պայծառ
հատուցում պահանջել : Եթէ հտային, այն ժա-
մանակ պիտի ետեւնուն իյնար, անդուլ անդա-
դար մաքառէր անոնց այնչափ նենգութեանց,
կեղծաւորութեանց եւ անդթութեանց դէմ,
որպէս զի իրեն ըրած չարութիւննին ուրիշ խեղճ
անձանց ալ չընեն, այնպիսի անձանց՝ որք իրեն
պէս մաքառելու եւ ինքզինքնին պաշտպանե-
լու կարող չեն :

Ատրիէն՝ Անտարակոյս Ռօզ Սիմօն օրիոր-
դին հետ ըրած տեսակցութեան ցաւալի տրաւա-
ւորութենէն զգածեալ՝ գեղջկական հասարա-
նին նեցուկներէն մէկուն կրթըներ էր սրտաբեկ,
եւ ձախ ձեռօքն աչուրները ծածկեր էր . փե-
ղոյրը քովը դրեր էր, եւ գլուխը դէպ առջեւ
մէկ կողմ ծաած ըլլալով՝ սսկերանդ մաղե-
րուն երկայն գանգուրներն իր թարմ եւ փայ-
լուն այտերուն վրայ կը ծածանէին : Այս հնոր-
հալից ու անձնալիք դրից մէջ մէջքին դմայ-
լելի եւ շքեղ ձեւը խիստ վայելչապէս կը նը-
կարուէր իր գեղականանչ մետաքսեայ դիպա-
կէ շրջազգեստին ներքեւ . վարդադոյն սընդո-

յէ հանգուցով կապուած լայն օձիքն եւ շապկին
գեղեցկահիւս ասղնենկար թեզանիքը թող չէին
տար որ շրջադգեատին կարուկ գոյնն իր կա-
րապանման պարանոցին եւ երկնագոյն բարակ
երակներով աննշմարելապէս նկարագրեալ Ռա-
փայէլեան ձեռքերուն հիասքանչ սպիտակու-
թեան հետ խորթ կերպով միանայ, մինչդեռ իր
բարձր եւ բարեձեւ ոլոքներուն վրայ սեւ սըն-
դոյէ փոքրիկ կոշիկներուն բարակ կապերն ի-
րարու մէջ անցած էին. վասն զի Տոքթոր Պալէ-
նիէ թոյլ տուեր էր որ իր սովորական ճաշակին
համեմատ հագուի. եւ ինչպէս արդէն ալ ըսած
ենք, Ատրիէնի համար վայելչապէս հագուիլ
կապուիլը չէ թէ պչրասիրական սովորութիւն
մ'էր, այլ պարտաւորութիւն մ'առ իւր անձն,
զոր Աստուած այնչափ գեղեցկութեամբ դար-
դարել ուզեր էր.

Մայէօ՝ ծաղկահասակ օրիորդը տեսածին պէս
անոր զմայլելի ձեւին ու հագուստին վրայ սքան-
չացաւ՝ առանց իր տձեւութիւնն ու հագած զըն-
ցոտիները դառնութեամբ միտքը բերելու, եւ
հանճարեղ տրամախոհութեամբ մ'ըսաւ ինքնի-
րեն թէ անհնար էր որ խենթ մ'այս'աստիճան խել-
քով ու շնորհքով հագուի. ուստի դարմանքով
եւ սրտայուզութեամբ լցուած՝ կամացուկ մը
տախտակորմին մօտեցաւ, խորհելով միանգամայն
որ ասրաբաղդ աղջիկը թերեւս ստուգիւ խենթ
էր. բայց այն օրը խելօք ժամանակն էր : Այս
խորհրդածութեամբ Մայէօ նախ հասկընալ ու-

դեց թէ սառուգիւ Ատրիէն օրիորդն էր : Աւստի
երկչոտ՝ բայց լսուելու չափ ամուր ձայնով մ'եւ
սիրան ալ ուժգին բարախելով ըսաւ . « Օրիորդ
Քարտօւի՛ն :

— Ո՞վ կը կանչէ դիս » ըսաւ Ատրիէն : Յե-
տոյ մէկէն գլուխը վեր առնլով եւ Մայէօն տես-
նելով չկրցաւ ինքզինք բռնել , եւ դարմացման
ու գրեթէ պակուցման թեթեւ ճիչ մ'արձակեց :

Արդարեւ այս խեղճ , դալկադէմ , խեղան-
գամ եւ թշուառագլեաւ արարածը մէկէն 'ի
մէկ այն վայելչատէր եւ գեղատարի օրիորդին
աչքին երեւնալով տեսակ մը զգուանք եւ
սոսկում ազդեց անոր , եւ այս կրկին զգա-
ցումն անոր դէմքին վրայ տեսնուեցաւ : Մա-
յէօ չնչմարեց իր ազգած տղաւորութիւնը . ան-
չարժ , աչուրները անկած եւ ձեռուրները խո-
րին սքանչացմամբ մ'իրար կցած՝ Ատրիէնի հը-
րաշատիպ գեղեցկութիւնը կը նկատէր , զոր
պահ մ'առաջ պատուհանին վանդակներուն ե-
տեւէն կէս մը միայն կրցեր էր նշմարել . Ակրի-
քօլ շատ գովեստներ խօսեր էր իր պաշտպան-
ուհւոյն հրապուրիչ գեղեցկութեան վրայ , բայց
Մայէօ իր աչքով տեսածն անոնցմէ հազարա-
պատիկ գերադանց կը դանէր . այնպէս որ իր
բանաստեղծական գաղտնի ներշնչմանց մէջ ան-
գամ այսպիսի չքնաղ կատարելութիւն մ'երբէք
երեւակայած չէր : Զարմանալի յարմաւորու-
թեամբ մը՝ գերազոյն գեղեցկութեան տեսիլն
երկնային հիացման մը մէջ կը ձգէր այս երկու

դեռածաւ եւ իրարու անաման աղջիկները , որք
երկու ծայրագոյն տիպարներ էին ազնուութեան
եւ դեղոյ , հարստութեան եւ աղքատութեան :

Այս ակամայ մեծարանքն Ատրիէնի մատու-
ցանելէ ետեւ՝ Մայէօ շարժում մը ըրաւ դէպ
'ի վանդակածեւ տախտակորմը :

« Ի՞նչ կուզէք , գոչեց Քարտովիլ օրիորդը
ուտքի վրայ ելնելով այնպիսի արհամարհոտ կեր-
պիւ մը դոր Մայէօ նշմարեց . ուստի աչուր-
ները խոնարհեցրնելով՝ ամենաքաղցր ձայնիւ
մ'ըսաւ : Ներեցէք , օրիորդ , այսպէս ձեր առ-
ջեւ ելնելուս , բայց վայրկեանները թանկագին
են . ես . . . Ակրիքօլի կողմէն կուգամ . . . : »

Այս խօսքն ըսած ժամանակ Մայէօ սրտա-
տանջութեամբ աչքը վեր վերցուց վախնալով
որ չըլլայ թէ Քարտովիլ օրիորդը երկաթագործ
երիտասարդին անունը մտացած ըլլայ . բայց մեծ
եղաւ դարմանքն եւ ուրախութիւնը երբ տե-
սաւ որ Ատրիէն՝ Ակրիքօլի անունը լսելուն պէս՝
կարծեա թէ սոսկումը փարատեցաւ , եւ տախ-
տակորմին մօտենալով՝ բարեկամական հետա-
քրքրութեամբ Մայէօի նայեցաւ :

« Պ. Ակրիքօլ Պօտուէնի կողմէն կուգաք ,
ըսաւ անոր . դուք ո՞վ էք : — Ակրիքօլի հոգե-
քոյրն եմ , օրիորդ , անոր տունը բնակեալ խեղճ
գործաւորուհի մը : »

Ատրիէն կարծեա թէ յիշոգութիւնն ամփո-
փելով բոլորովին սիրտ առաւ , եւ վայրկեան
մը լռութենէ ետեւ քաղցր ժպիտով մ'ըսաւ .

Գուք էիք ուրեմն Պ. Ակրիքօլի խրատ տուողը որ
երաչխաւորութեան համար ինձ գիտէ, այնպէս
չէ: — Ի՞նչպէս միտքերնիդ մնացեր է, օրի-
որդ . . . : — Ես աղնիւ ու վեհանձն գործերը
չեմ մտնար երբէք: Պ. Ակրիքօլ խանդաղա-
տանօք պատմեց ինձ ձեր իրեն համար ունե-
ցած անձնութիւնը . . . կը յիշեմ. եւ այս-
պիսի պարզ բան մը դիւրաւ չմտցուիր . . .
բայց ինչ բան ունիք այդ վանքին մէջ: — Ըսին
ինձ թէ կարելի է որ հոս գործ կը դանեն ինձ,
վասնի որ այս միջոցիս անգործ մնացած եմ:
Գժբաղդաբար մեծաւորուհին չուզեր այս բա-
րիքն ընել ինձ: — Եւ ինչպէս կրցաք զիս ճան-
չել: — Ձեր չքնաղ գեղեցկութենէն, օրիորդ,
գոր Ակրիքօլ նկարագրեր էր ինձ: — Այս մա-
տաւանդ ասկէց չճանչեցիք զիս, ըսաւ Ատրի-
էն, եւ ժպտելով իր վարդագոյն մատանց ծայ-
րովն օսկեգոյն մազերուն երկար եւ մետաք-
սանման խոպոպեաց մէկուն ծայրը բռնեց: — Ակ-
րիքօլի համար ներողամիտ պէտք է ըլլաք, օ-
րիորդ, ըսաւ Մայէօ կէս ժպտաով մը՝ որ խիստ
քիչ անգամ իր շրթանց վրայ կը փայլէր. Ակ-
րիքօլ բանաստեղծ ըլլալով, իր պաշտպանուհ-
ւոյն պատկերն ակնածական դմայլմամբ մ'ի՛նձ
նկարագրած ժամանակ՝ անոր հազուադիւտ կա-
տարելութիւններէն եւ ոչ մէկը մոռցեր էր:
— Եւ ո՞վ թելադրեց ձեզ որ հոս գաք եւ հետս
խօսիք: — Եթէ կարելի ըլլայ՝ ձեզ ծառայու-
թիւն մ'ընելու յոյսը, օրիորդ . . . : Գուք

անհատի մարդասիրութեամբ ընդունեցիք իմ
եղբայրագիրս , որ անոր երախտագիտութեանը
ես ալ բաժանորդ ըլլալու համարձակեցայ :
— Համարձակեցէք , համարձակեցէք , սիրելի
աղջիկս , ըսաւ Ատրիէն աննկարագրելի շնոր-
հօք , իմ վարձատրութիւնս կրկնապատիկ պի-
տի ըլլայ . թէ եւ մինչեւ ցարդ յօժարութենէ
աւելի բան մը չկրցայ ընել ձեր պատուական
եղբայրագրին : »

Այս խօսքերն իրարու ըսած ժամանակնին՝
Ատրիէն եւ Մայէօ՝ եւս քան զեւս զարմաց-
մամբ իրարու երես նայեր էին : Նախ Մայէօ
չէր կրնար հասկընալ թէ ինչպէս կարելի էր որ
խենթ համարուած կին մը՝ Ատրիէնի պէս խե-
լացի եւ շնորհալից խօսքեր ընէ . յետոյ կը զար-
մանար ինքն ալ թէ ինչպէս ազատ մտքով կամ
մանաւանդ յաջողութեամբ կրցեր էր պատաս-
խանել Քարտօվիլ օրիորդին , չգիտնալով որ
այս աղնիւ աղջիկը վսեմախոհ եւ բարի սրտե-
րու յատուկ եղած անգին ձիրքն ունէր , այն
է՝ համակրութեամբ իրեն մօտեցողներուն ար-
ժէքը բարձրացընել :

Քարտօվիլ օրիորդն ալ իւր կողմանէ մե-
ծապէս կը զարմանար եւ կը խանդաղատէր տես-
նելով այս ստորին կարգէ եւ մութացկի գրք-
լեակներ հաղած աղջկան այսչափ բարեկիրթ
կերպով խօսիչն եւ քաջայարմար պատասխան-
ներ տալը : Քանի որ Մայէօի երեսը կը գի-
տէր , 'ի սկզբան գգացած անախորժ ապաւորու-

Թիւնը հաճոյականի կը փոխուէր : Աանանց բը-
նական եղող արագ եւ նրբազնին դիտողու-
թեամբ, Ատրիէն՝ Մայէօի սեւ շղարչէ գծուծ
գտակին ներքեւ խարտեաց ու փայլուն գեղե-
ցիկ մաղերը կը նշմարէր, նմանապէս կը տես-
նէր որ անոր սպիտակ երկայն ու նիհար ձեռքերը՝
թէ եւ պատառատուն շրջազգեստի մը թեղա-
նիքէն դուրս կելնէին՝ վերջին աստիճան մա-
քուր էին . այս ալ ապացոյց մ'էր որ գործա-
ւորուհի աղջիկն իր մարմնական խնամօքը մաք-
րասիրութեամբն եւ անձնական պատուոյն պահ-
պանութեամբը գոնէ կը մաքրուէր սոսկալի չքա-
ւորութեան դէմ : Ա երջապէս Ատրիէն՝ այս գոր-
ծաւորուհի աղջկան դժգոյն եւ մեղամաղձատ
դէմքին գծագրութեան մէջ, կապոյտ աչքե-
րուն հանձարեղ քաղցր եւ երկչոտ հայեցուա-
ծոց մէջ, սրտաշարժ եւ տխուր գեղեցկութիւն
մը, համեստ արժանապատուութիւն մը կը գրա-
նէր, որք անոր տձեւ խեղութիւնը կը մոռցը-
նէին :

Ատրիէն մարմնական գեղեցկութեան սիրա-
հար էր, բայց միանգամայն վսեմախոհ մտաց
ազնիւ հոգւոյ եւ զգայուն սրտի տէր ըլլալով՝ գի-
տէր նաեւ ճանչել ու յարգել բարոյական գեղեց-
կութիւնը՝ որ շատ անգամ խոնարհ եւ վշտա-
կիր դէմքերու վրայ կը փայլի : Միայն թէ այս
ճանաչումը բոլորովին նոր էր Քարտօվիլ օրի-
որդին համար . վասն զի մինչեւ այն ժամանակ
իր բարձրաստիճան վիճակին եւ գեղաշուք սո-

վորութեանց պատճառաւ ստորին կարգի մար-
դոցմէ հետի կեցած էր :
Վայրկեան մը լռութենէ ետեւ , ուր մե-
ծատոհմ դեղուհին եւ թշուառ դործաւորուհին
առաւելագոյն զարմանօք իրար զններ էին ,
Ստրիէն ըսաւ Մայէօի . « Երկուքիս ալ զար-
մացման պատճառը կարծեմ դիւրին է գուշա-
կել . եթէ ինձ համար ըսեր էին ձեզ թէ խեն-
թեցեր եմ , անշուշտ կը զարմանաք տեսնելով
որ խենթի պէս չեմ խօսիր : Ես ալ , աւելցուց
Քարտօվիլ օրիորդն ակնածալից կարեկցութեան
ձայնով մը , կը տեսնեմ որ ձեր բարեկիրթ խօս-
քերն ու ձեւերը սրտակտուր հակապատկեր մը
կնծայեն ձեր գանուած վիճակին հետ : ուստի իմ
զարմանքս ձերինէն աւելի է անշուշտ : — Ա՛հ ,
օրիորդ , դոչեց Մայէօ այնպիսի անկեղծ եւ խո-
րին ուրախութեամբ մը որ աչքն արտառքով լըց-
ուեցաւ . ճշմարիտ է ուրեմն . . . դիտ խարեր էին .
ուստի երբոր քիչ մ'առաջ ձեր սքանչելի դե-
ղեցկութիւնն ու բարեարտութիւնը տեսայ եւ
ձեր քաղցր ձայնը լսեցի , չէի կրնար հաւատալ
որ այնպիսի աղէտ մ'եկած ըլլայ ձեր գլխուն :
Բայց , աւանդ , օրիորդ , ինչպէս կարելի որ դուք
այս տեղ գանուիք : — Խեղճ աղջիկ , ըսաւ Ստ-
րիէն այս պատուական արարածին ցոյց տուած
գորովէն սիրտը շարժելով , ինչպէս կարելի է
որ դուք ալ այդչափ ազնիւ սիրտ եւ նշանա-
ւոր խելք ունենալով այդ անտիճան տարարացող
վիճակի մէջ կը գանուիք : Բայց քաջաչելուե՛

ցէք, ես միշտ հոս չեմ մնար . . . ըսել կուզեմ
թէ քիչ ժամանակէն դուք ալ ես ալ մեզ վայ-
լած գիրքը վերստին ձեռք կը բերենք : Հաւա-
տացէք ինձ, երբէք չպիտի մոռնամ որ դուք
ձեր հացը ձարելու միակ միջոցն եղող աշխա-
տութենէ գուրկ մնացած ժամանակնիդ՝ ձեր
մեծատապնայ հողը մէկդի դնելով ինձ օգ-
տակար ծառայութիւն մ'ընելու համար քովս
դալ մտաբերեցիք : Յիրաւի դուք ինձ շատ օգ-
տակար կրնաք ըլլալ, եւ շատ ուրախ եմ այս
բանիս համար, վասն զի երախտապարտ պիտի
ըլլամ ձեզ : Պիտի տեսնէք որ ինչպէս չափա-
զանց կերպով պիտի դործածեմ իմ շնորհակա-
լութիւնս, ըսաւ Ատրիէն դմայլելի ժպտով մը :
Բայց, յարեց, իմ վրայ խորհելէ առաջ՝ ուրիշ-
ներուն վրայ խորհինք . ձեր եղբայրագիրք դեռ
բանսն է : — Այս ժամուս, օրինորդ, անշուշտ
եղած պիտի ըլլայ բանսէն՝ իր բարեկամներուն
մէկուն առատածեռնութեան շնորհիւ . երէկ
հայրը կարող եղաւ երաշխաւորութեան ստակը
աանելու, եւ խօսք տրուեր էր իրեն որ այսօր
կարձակուի : Բայց Ակրիքօլ բանսէն դրեր էր ինձ
թէ ամենակարեւոր բաներ ունի ձեզ յայտնե-
լիք : — Ի՞նձ : — Այո, օրինորդ . . . կը յուսամ
որ Ակրիքօլ այսօր ազատ ըլլայ . ինչպէս եւ
ինչ միջոցաւ կրնայ արդեօք այն դադանիքները
ձեզ հաղորդել : — Արեւոր դադանիքներ ունի
ինձ յայտնելիք, կրկնեց Քարտօլի օրինորդ
խոկուն գէմքով . ի դուր միտքս կը յոգնեցը-

նեւ թէ ինչ կրնայ ըլլալ այդ գաղտնիքը . բայց
քանի որ ես այս տան մէջ փակուած եմ առանց
դուրսի հետ հաղորդակցութեան , Պ. Ակրիքօլ
չկրնար ոչ ուղղակի եւ ոչ անուղղակի յարա-
բերութիւն մ' ունենալ ինձ հետ . ուստի պէտք
է որ իմ հոսկէց դուրս ելնելու սպասէ : Բայց
ասով չլիննար . այս վանքին մէջ ալ երկու խեղճ
աղջկուհի կան որք ինձմէ շատ աւելի գթալի
են , պէտք է զանոնք ալ ազատել . . . Սիսօն
մարտաշխատին աղջիկները բռնաբար արդիւում
են հոս : — Անուննին ալ գիտէք , օրիորդ : — Պ.
Ակրիքօլ անոնց Փարիզ հասնիլն ինձ իմացու-
ցած ժամանակ ըսեր էր թէ տասնուհինգ տա-
րեկան են , եւ զարմանալի կերպիւ իրարու կը
համանին : Ուստի երբոր երէկուան առջի օրն իմ
սովորական չրջագացութիւնս կրնէի , երկու ար-
տասուածութեամբ փոքրիկ երեաներ տեսայ որ ժա-
մանակ ժամանակ կեւնէին իրենց բնակած խը-
ջիկներուն պատուհանին կը փակչէին . մէկը
գեանայարկը դրում էր , միւսն առաջին դասի-
կոնը : Գաղտնի նախազգացութիւն մ' ըսաւ ինձ
թէ ասոնք Պ. Ակրիքօլի յիշած որբերն են , որք
արդէն իմ համակրութիւնս դրաւած էին , վա-
ղի իմ ազգականս են : — Անոնք , օրիորդ , ձեր
ազգականն են : — Անշուշտ : Եւ որովհետեւ ու-
րիշ բան չէի կրնար ընել , ջանացեր էի ակնար-
կութեամբ հասկցնել թէ իրենց վիճակին վրայ
շատ կը ցաւ իմ : Խեղճերուն թափած արտասուքը,
գեղեցիկ դէմքերուն այլայլութիւնը բաւական

կիմացլնէին ինձ որ վանքին մէջ բանտարկեալ
էին, ինչպէս որ ես ալ այս տանս մէջ բան-
տարկուած եմ: — Ա՛հ, հիմա կը հասկընամ,
օրիորդ . . . Նըւայ թէ ձեր ընտանեաց թշուա-
մութեանը դո՛հ . . . — Ինչ որ ալ ըլլայ իմ
վիճակս, այս երկու տղայք ինձմէ աւելի գթա-
լի են, եւ իրենց յուսահատութիւնը երկիւղա-
լի է: Ամեն բանէ աւելի՝ մէկմէկէ բաժնուելնին
դիրենք կը յուսահատեցնէ. քիչ մ'առաջ ասոնց-
մէ մէկուն ինձ ըսած քանի մը խօսքէն կը հասկը-
նամ որ իրենք ալ ինձ պէս վատ մեքենայու-
թեան մը սպանդ եղած են: Բայց ձեր բարե-
կամութեան շնորհիւ կարելի է դանձնք ազա-
տել: Քանի որ այս տանս մէջ եմ, ինչպէս ար-
դէն ըսի ձեզ, անկարելի եղաւ ինձ դուրսի հետ
հաղորդակցութիւն մ'ունենայ: Քույս ոչ թուղթ
թողուցին, ոչ գրիչ, ուստի անհնար է գիր գը-
րել: Հիմա, եթէ ուշադրութեամբ մտիկ ընէք
ըսելիքս, կրնանք այս նողկալի հալածանաց
դէմ մաքառիլ: — Ա՛հ, խօսեցէք, օրիորդ,
խօսեցէք: — Այդ որբերը Գաղղիա բերող զօ-
րականը՝ Պ. Ակրիքօլի հայրը՝ հոն է: — Այո,
օրիորդ, ա՛հ, եթէ դիմնայիք ի՞նչ աստիճան
յուսահատեցաւ ու կատաղեցաւ երբոր տուն դար-
նալուն աղջիկներն հոն հղտաւ, զորս մայրեր-
նին մեռած ժամանակն իրեն յանձնած էր:
— Պէտք է մանաւանդ զգուշանալ որ բուն մի-
ջոցներու բնաւ հզիսէ. ապա թէ ոչ՝ ամեն
յոյս կը կորնչի: Առէք այս մասնին, եւ մա-

տէն մասնի մը հանեց Ատրիէն , անոր տուէք
. . . անմիջապէս երթայ . . . բայց ըսելիք ա-
նուէնա եւ անոր միտքերնիդ պահելու վաստի-
էք : — Այդ մասին անհոգ եղիք , օրինորդ , Ակ-
րիքօլ ձեր անուէնը մէկ անգամ միայն ըսաւ ինձ
եւ չմոռցայ , սիրան ալ յիշողութիւն ունի :
— Ար տեսնեմ , սիրելի աղջիկս . . . ուրեմն
միտքերնիդ պահեցէք Մօնպոօն կոմսին անուէնը :
— Մօնպոօն կոմս . . . չեմ մտնար : — Իմ վաղե-
մի բարեկամներէս մէկն է ան . կը բնակի Աան-
տօմի հրապարակը թիւ 7 : — Աանտօմի հրա-
պարակը թիւ 7 . այդ հասցէն ալ միտքս կը պա-
հեմ : — Պ . Ակրիքօլի հայրն այս իրիկուն անոր
թող երթայ . եթէ հոն չէ , թող սպասէ մին-
չեւ որ դայ : Այն ժամանակ իմ կողմէս հետը
տեսնուիլ թող ուզէ , եւ կասկածի առիթ չտա-
լու համար նախ այս մասնին անոր զրկէ ծա-
ռաներուն ձեռօք : Երբոր կոմսին քովը ելնէ ,
ամեն բան թող հասկըցնէ . աղջիկներուն տու-
նէն վերնալը , անոնց արգելափակ եղած վան-
քին ուր ըլլալը , եւ աւելորնէ թէ ես ալ իբ-
րեւ խենթ տոքթոր Պալէնիէի դարմանատունը
փակուած եմ . . . : Զչմարտութիւնն այնպի-
սի լեզու մ' ունի որ Պ . Մօնպոօն կը հասկընայ :
Շատ փորձառու եւ հանճարեղ մարդ մ' է եւ
մեծ ազդեցութիւն ունի : Իսկոյն հարկ եղած
Չանքը կընէ , եւ անտարակոյս եմ որ վաղը
կամ միւս օր այս խեղճ որբերն ու ես ազատու-
թիւն կը դանկնք : Բայց վայրկեանները թան-

կազին են , չըլլայ թէ մարդ վրայ գայ ու մեզ տեսնէ : Շուտ ըրէ , սիրելի աղջիկս : »

Յետոյ . Ատրիէն մ'ակնելու ժամանակ Մայէօն ըսաւ այնպիսի սրտաշարժ ժպիտով մ'եւ գորովալից ձայնիւ , որ գործաւորուհի աղջիկը չէր կրնար անկեղծութեանը վրայ երկմտիլ :

« Պ . Ակրիքօյ ըսաւ ինձ որ սրտի կողմանէ ձեզնէ վար չեմ մնար . . . : Հիմա կը հասկընամ թէ այս խօսքը սրչափ պատուաւոր եւ շողոքորթիչ էր ինձ համար . . . : Կաղաչեմ . . . ձեռքըդ ինձ տուր շուտով . . . » աւելցուց Քարտօվիլ օրիորդն աչուրները լցուելով . յետոյ իր դմայլելի ձեռքը տախտակօրմին բաց միջոցներէն ասդին անցունելով Մայէօնի երկնցուց : Աղնուատնձ գեղուհւոյն խօսքերն ու շարժումներն անչափ սիրալիր ու մտերմական էին , որ գործաւորուհին՝ առանց կեղծ ամշկոտութեան՝ իր խեղճ նիհար ձեռքն Ատրիէնի հրաշագեղ ձեռքին մէջ դրաւ գողալով . . . : Այն ժամանակ Քարտօվիլ օրիորդը երկիւղած յարգանօք Մայէօն ձեռքն իր շրթունքին տարաւ ըսելով . « Որովհետեւ չեմ կրնար իբրեւ քոյր համբուրել ձեզ՝ որ զիս կաղատէք . . . դոնէ աշխատութեամբ փառաւորեալ այս աղնիւ ձեռքը համբուրեմ : »

Յանկարծ ոտնաձայն լսուեցաւ տոքթոր Պալէնիէի պարտիզին մէջ : Ատրիէն իսկոյն շտակուեցաւ ու դալարախիտ ծառերուն մէջ աներեւոյթ եղաւ՝ ըսելով Մայէօն . « Քաջալերուեցէք . . . յիշեցէք . . . եւ յուսացէք : »

Այս ամենն այնչափ շուտով կատարուեցաւ, որ Մայէօ ապշեցաւ մնաց. արտառքը բայց այս անգամ ամենաքաղցր արտառք մը՝ յորդաբար հոսել սկսաւ իր դժգոյն այտերն 'ի դար: Ատրիէն—Քարտովիլի պէս օրիորդ մը զինքը քոյր կոչէ, իր ձեռքը պագնէ եւ սրտով իրեն նմանիլը պարծանք համարի, իրեն՝ որ թշուառութեան ամենախոր անդունդին մէջ տառապող խեղճ արարած մ'էր, Աւետարանի խօսքին պէս եղբայրական հաւասարութեան երկնային զգացում մը ցոյց տալ էր: Այնպիսի խօսքեր եւ տպաւորութիւններ կան՝ որք տարեւոր վիշտերն ու չարչարանքները մոռցընել կուտան գեղեցիկ սրտերու, եւ կարծես թէ արագանշոյլ փայլակի մը պէս՝ իրենց սեփական մեծութիւնն իրենց կերեւցընեն: Այսպէս եղաւ Մայէօի ալ. աղնիւ խօսքերու շնորհիւ վայրկեան մ'իր արժէքն հասկըցաւ. . . . Եւ թէ պէտ այս զգացումը խիստ արագ եւ անճառելի եղաւ, գործաւորուհի աղջիկը ձեռքն իրար կցելով՝ ջերմեռանդ շնորհակալութեամբ աչքը դէպ 'ի երկինք վերցուց. վառն դի թէ եւ ստէպ խոստովանութեան չէր երթար, բայց եւ այնպէս ոչ ոք իրեն չափ այս խորին եւ անկեղծ ապէս կրօնական զգացումով լցուած էր, զգացում մը՝ որ նոյն համեմատութիւնն ունի չոր ցամաք բարեպաշտութեան հետ՝ ինչ որ աստեղադարդ երկնից անհուն ընդարձակութիւնը եկեղեցւոյ մը ձեղունին հետ

Քարաօվիլ օրիորդէն բաժնուելէ հինգ վայր-
կեանս ետքը, Մայէօ պարտէղէն անտեսարար
ներս դառնալով վանքին առաջին դասիկոնն
ելաւ, եւ կամացուկ մը հանդերձարանին դու-
ռը բախեց: Արօնաւորուհի քոյր մը դուռը բա-
ցաւ:

« Ճլօրին օրիորդը՝ որ զիս բերաւ՝ հոս չէ՛,
քոյր իմ, հարցուց Մայէօ: — Ձեզ երկար ժա-
մանակ սպասելէ ետեւ՝ դնաց: Անշուշտ մեր մե-
ծաւորուհի մայրապետ տիկնոջ քովէն կուղաք,
այնպէս չէ: — Այո՛, քոյր իմ, պատասխանեց
գործաւորուհին աչուքները խոնարհեցընելով.
կը բարեհաճի՞ք ըսել ինձ՝ ուրկէ՞ դուրս պիտի
ելնեմ. — Եկէք հետս . . . »

Մայէօ կրօնաւորուհեոյն ետեւէն դնաց՝ ա-
մեն քայլափոխին դողալով որ չըլլայ թէ մեծա-
ւորուհին զինքը տեսնէ, վասն զի իրաւամբ պի-
տի դարմանար ու հարցընէր թէ ինչ պատճառաւ
այնչափ երկար ժամանակ վանքին մէջ մնացեր
էր: Վերջապէս վանքին առաջին դուռը գոց-
ուեցաւ Մայէօի ետեւէն: Իսկոյն ընդարձակ
դաւիթն անցնելով՝ երբոր դռնասպանի օթեակին
կը մօտենար որպէս զի դուրսի դրան բացուիլը
խնդրէ, խռպոտ ձայն մը լսեց որ կըսէր.

« Աերեւի, ծերուհի Ժէրոմա, որ այս գիշեր
հսկողութիւնը կրկնապատկել պէտք պիտի ըլ-
լայ . . . Ես՝ երկու գնտակ աւելի պիտի դը-
նեմ հրացանիս մէջ. մեծաւորուհի տիկինն հրա-
ման ըրաւ ինձ որ փոխանակ մէկի՝ երկու ան-

գամ պտոյտ ընենք այս գիշեր . . . : — Ես
հրացանի պէտք չունիմ, Նիքօլան, ըսաւ միւս
ձայնը . ծայրը մեղեխաւոր սուր դերանդի մ'ուն-
նիմ, որ պարտիզպանի համար գէշ գէնք չէ : »

Մայէօ այս խօսքերէն ակամայ երկիւղ մ'ըզ-
դալով դռնապանին օթեակին մօտեցաւ եւ խընդ-
րեց որ դուռը բանայ :

« Ուսկի՞ց կուգաք այդպէս, ըսաւ դռնա-
պանը կէս մը դուրս ելնելով իր օթեակէն, ձեռ-
քը երկհարուածեան հրացան մը բռնած, զոր
լցընելու կ'ըբաղէր, եւ կասկածոտ նայուած քով
մը գործաւորուհին զննելով : — Մեծաւորուհի
տիկնոջ քովէն կուգամ, պատասխանեց Մայէօ
երկչոտու թեամբ : — Ստոյգ կը խօսիք, ըսաւ
Նիքօլան դաժանու թեամբ . կասկածելի մէկը
կերելիք ինձ . բայց ինչ եւ իցէ, դուրս չուե-
ցէք չուտով : »

Մեծ դրան փոքր փեղկը բացուելով Մայէօ
դուրս ելաւ : Հազիւ փողոցին մէջ քանի մը քայլ
առեր էր, մեծ դարմանքով Ռասպա-ժօան տե-
սաւ որ գէպ իրեն կը վազէր, ետեւէն ալ Տակօ-
պէռ արտորնօք կուգար : Մայէօ զօրակամը դի-
մաւորելու վրայ էր, յանկարծ ուժով ու հնչուն
ձայն մը լսեց որ « է՛, բարի Մայէօս » կը դո-
չէր . աղջիկն ետին դառնալով տեսաւ որ Տակօ-
պէռի եկած ճանքուն զխմացի կողմէն Ակրիքօլ
վազելով կուգար :



ԳԼՈՒԽ Ե.

ՀԱՆԴԻՊՄՈՒՆՔ

Մայէօ՝ վանքին դռնէն քանի մը քայլ ան-
 դին Տակօպէան ու Ակրիքօլ տեսնելուն պէս ասպ-
 շեցաւ մնաց : Զօրականը դեռ չէր տեսներ դոր-
 ծաւորուհին, եւ շտապով կուգար Ռապա-ժօա-
 յի ետեւէն, որ թէ եւ նինարցած, ոսկրները տըն-
 կուած, մազերը ցցուած եւ ցեխոտած էր, ու-
 րախուժեմէն կ'եփէր, եւ Մայէօն դգուելէ ետեւ
 նորէն տիրոջը քով դառնալով՝ մերթ ընդ մերթ
 իր ուշիմ գլուխն անոր կը դարձընէր :

« Այո՛, այո՛, կը հասկընամ, խեղճ ծերուկս,
 կըսէր զօրականն յուզեալ սրտիւ, դուն ինձմէ
 աւելի հաւատարիմ ես, վայրկեան մը չթողու-
 ցիր իմ սիրելի տղայքս, ետեւնուն դացիր . . .
 դիչեր ցերեկ՝ առանց բան մ'ուտելու՝ անոնց
 տարուած տան դուռը սպասեցիր, եւ վերջա-
 պէս նայելով որ դուրս չեն ելներ, վաղեցիր
 տուն եկար որ դիտ դանես . . . : Այո՛, երբոր ես
 մոլեգնեալ խենթի մը պէս կը յուսահատէի, իմ
 ընելիքս դու կընէիր . . . անոնց կեցած տեղը
 կը գտնէիր . . . : Ասիկա ասպացոյց մը չէ՞ որ
 անասունները մարդոցմէ լաւ են : Ալ տարա-
 կոյս չմնաց . . . : Վերջապէս պիտի տեսնեմ
 զանոնք . . . : Երբ կը մտածեմ որ վաղը փետր-
 վարի 13 է, եւ եթէ դու չըլլայիր, ծերունի
 Ռապա-ժօաս . . . ամեն յոյս ոչնչացած էր . . . »

քանի կը մտածեմ, սարսափ կուգայ վրաս . . . :
Բայց դեռ չհասանք . . . այս ի՛նչ ամայի թաղ
է . գիշերն ալ կը մտնենայ :

Տակօպէս քալած ժամանակ այս բանախօ-
սութիւնը կընէր Ռասպա—Ճօայի, եւ աչքը չէր
զատէր իր քաջ եւ հաւատարիմ շունէն՝ որ իր
առջեւն ինկած էր : Յանկարծ տեսնելով որ կեն-
դանին նորէն ցատկըտելով իրմէ կը բաժնուէր,
աչքը վեր առաւ ու տեսաւ որ Ռասպա—Ճօա
իրմէ քանի մը քայլ հեռու վերստին կը քծնէր
Մայէօի եւ Ակրիքօլի, որք վանքին դրան մօտ
կրարու քով հասեր էին :

Մայէօ՛ . . . գոչեցին հայրն ու որդին եր-
բոր տեսան դեռահասակ գործաւորուհին որ ի-
րենց կը մօտենար՝ խորին զարմացմամբ երեսնին
նայելով : — Աւետիա կուտամ ձեզ, Պ. Տակօ-
պէս, ըսաւ աննկարագրելի ուրախութեամբ,
Ռօզ եւ Պլանչ գտնուեցան . . . : Յետոյ երկա-
թագործ երխտասարդին դառնալով, քեզ ալ
աւետիա կուտամ, Ակրիքօլ . Քարտօվիլ օրի-
որդը խենթ չէ . . . հիմա տեսայ դինքը . . . :
— Խենթ չէ մի՛, օրհնեալ է Ստուած, ըսաւ
երխտասարդը : — Տղայքը, գոչեց Տակօպէս
Մայէօի ձեռքն իր ձեռքին մէջ առնելով, որք
սրտին վրդովելէն կը դողային : Տեսա՞ք զիրենք .
— Այո՛, հիմա . . . խիտտ ախուր . . . խիտտ
վշտահար . . . բայց չկրցի հետերնին խօսիլ :
— Ա՛հ, ըսաւ Տակօպէս՝ այս լուրը լսելուն վրայ
չունչը բռնուածի պէս կանգ առնելով եւ երկու

ձեռքը կուրծքին տանելով, երբէք չէի կարծեր
որ իմ ծեր սիրտս այսքան ուժգին բարակէ :
Եւ սակայն . . . ապրի շունս . անոր աչալքը
թեան շնորհիւ այսպէս ըլլալիքը գրեթէ կը յու-
սայի . . . : Բայց ինչ եւ իցէ . . . կարծեա թէ
ուրախութենէս աչքերս կը շլանան . . . : — Քաջ
եւ բարի հայր իմ . . . կը տեսնես , այսօր բա-
րենչան օր մ'եղաւ մեզ համար , ըսաւ Ակրիքօլ
Մայէօի նայելով : — Եկ համբուրեմ քեզ , ազնիւ
եւ սիրելի աղջիկս , ըսաւ զօրականը՝ սրտազին
խանդաղատանօք իր թեւերուն մէջ սեղմելով
գործաւորուհի աղջիկը . յետոյ անզուսպ անհամ-
բերութեամբ մ'աւելցուց . — Օ՛ն , երթանք
շուտով տղայքն առնունք : — Ա՛հ , բարի Մայէ-
օս , ըսաւ Ակրիքօլ յուզեալ ձայնիւ , հօրս սրբ-
տին անգորբութեան եւ թերեւս իսկ կենացը
պատճառ եղար . . . : Քարտօվիլ օրիորդին
խենթեցած չըլլալն ալ ինչէ՛ն դիտեա : — Անակրն-
կալ դիպուածով մը . . . : Դու ալ ինչպէս ե-
ղաւ որ հոս կը գտնուի : — Բապա—Ժօա կե-
ցաւ ու կը հաչէ , գոչեց Տակօպէս , ուրախու-
թեամբ քայլերը փութացրնելով :

Արդարեւ՝ շունը տիրոջը պէս անհամբեր
ըլլալով որբերը տեսնելու , բայց անոնց գտնը-
ուած տեղւոյն անկէ աւելի ծանօթ ըլլալով ,
գացեր վանքին դրան առջեւ կեցեր , հաչելով
Տակօպէսի ուշադրութիւնը կը հրաւիրէր :

Զօրականը հասկըցաւ եւ մատովը վանքը
ցուցրնելով ըսաւ Մայէօի . « Տղայքը հոս են »

այնպէս չէ : — Այո՛ , Պ . Տակօպէս : — Տարակոյս
չունէի այսպէս ըլլալուն . . . ուշիմ շունս . . .
այո՛ , անասունները մարդոցմէ աղէկ են , բայց
'ի քեզնէ , բարի աղջիկս , որ մարդոցմէ ալ ա-
նասուններէն ալ աղէկ ես : Աերջապէս խեղճ
որքերս հիմա պիտի տեսնեմ ու առնում :

Այս խօսքն ըսելով ծերունի դորականը վա-
զել սկսաւ որպէս զի շուտով Ռապա—ժօայի
քով հասնի :

« Ակրիքօլ , գօչեց Մայէօ , հօրդ թող մի
տար որ դուռը բաղխէ . . . գործը գէշ կըլլայ : »

Երիտասարդն իսկոյն վաղեց հօրը քով հա-
սաւ երբոր ծերունին դուռը բաղխելու վրայ էր :

« Հայր իմ , դուռը մի դարներ , գօչեց Տա-
կօպէսի ձեռքը բռնելով : — Ի՞նչ կը դրուցես
. . . դուն ալ . . . : — Մայէօ կրտէ որ դուռը
դարնելով գործը վտանգի մէջ կիջնայ : — Ինչ-
պէս . . . — Աեցի որ հասկըցրնէ քեզ : »

Աերջապէս շատ չանցաւ Մայէօ ալ քո-
վերնին հասնելով ըսաւ դորականին . « Պ . Տակօ-
պէս , այս դրան առջեւ չկենանք , վասն զի
կրնայ ըլլալ որ բանան ու մեզ տեսնելով կաս-
կածի երթան . ուստի քիչ մը քաշենք պատին
երկայնութեամբը եւ . . . : — Ասակածի կեր-
թան . . . ըսաւ վաղեմի դորականը դարմանա-
լով եւ առանց դրան առջեւէն հեռանալու . ի՞նչ
կասկած է այդ : — Աաղաչեմ , հոտ մի կենաք ,
ըսաւ Մայէօ այն ատիճան թախանձանօք , որ
Ակրիքօլ ալ անոր հետ միարանելով ըսաւ հօրը .

« Հայր իմ . . . որովհետև Մայէօ այսպէս կը-
սէ , 'ի հարկէ պատճառ մ'ունի , մտիկ ընենք . . . :
Օրիթալի ծառուղին ասկէց երկու քայլ անդին է .
հոն շատ մարդ հանցնիր . կրնանք անկասկած
խօսակցիլ : — Սատանան տանի դիւ կթէ բան մը
կը հասկընամ ձեր այդ ըսածէն , դոչեց Տակօպէն
առանց դրան քովէն մեկնելու : Տղայքը հոս են ,
պիտի առնու մ տանիմ . . . այս ամենը տանն
վայրկենի դործ է : — Ար սխալիք , Պ. Տակօպէն ,
ըսաւ Մայէօ , ձեր կարծածէն աւելի դժուար
է . . . : Բայց եկէք . . . եկէք . . . կը լսէք . . .
բակին մէջ կը խօսակցին :

Յիրաւի բաւական ամուր ձայներ լսուեցան
բակէն : « Այկ . . . եկ , հայր իմ . . . : ըսաւ Ակրի-
քօլ գրեթէ հօրը թեւէն քաշելով :

Ռապա-Ժօա՝ այս վարանմանց վրայ դար-
մացածի պէս երկու երեք անգամ հաչեց առանց
տեղէն շարժելու , եւ կարծես թէ կը բողոքէր
այս նուաստացուցիչ նահանջման դէմ . բայց
Տակօպէն դինքը կանչածին պէս՝ վաղեց քո-
վերնին գնաց : Ժամն իրիկուան հինգն էր եւ
սաստիկ հով կար . երկինքը մոխրագոյն եւ անձ-
րեւոտ թանձր ամպերով պատած էր : Ինչպէս
արդէն ըսինք , Օրիթալի ծառուղին՝ որ վանքին
պարտիղին մէկ քովէն կանցնէր , գրեթէ ամայի
էր . ուստի Տակօպէն Ակրիքօլ եւ Մայէօ հոն
երթալով կրցան առանձնակի խորհուրդ ընել :

Զօրականն այս դանդաղումներէն զգացած
բուռն անհամբերութիւնը չէր կրնար ծածկել :

ուստի հազիւ փողոցին անկիւնը դարձեր էին ,
ըսաւ Մայէօի . « Օ՛ն , աղջիկա , ըտէք նայիմ . . .
համբերելու ժամանակ չունիմ , ոտքիս տակը
կրակ կը վառի : — Սիմօն մարտշախտին աղջ-
կանց փակուած տունը վանք է . . . Պ. Տակօ-
պէն . — Վանք մի , գոչեց զօրականը . հիմա
հասկըցայ գործը . . . յետոյ աւելցուց . ու-
րիշ բան մը կան . վանք ըլլայ , ինչ կուզէ թող
ըլլայ , կերթամ տղայքը կառնում . մէկ անգա-
մը սովորութիւն չէ : Բայց , Պ. Տակօպէն , տը-
ղայքը հոն առանց իրենց կամաց՝ առանց ձեր
կամաց փակուած են . ուստի զանոնք չեն տար
ձեզ : — Չեն տար մի . հիմա կը տեսնենք
Եւ սկսաւ գէպ 'ի վանքին դուռն երթալ : — Հայր-
իմ , ըսաւ Ակրիքօլ զայն բռնելով , վայրկեան
մը համբերեցէք եւ Մայէօն մտիկ ըրէք :

Ի՞նչ պիտի մտիկ ընեմ . . . տղայքը հոս
են . . . ինձմէ երկու քայլ հեռու . . . գիտեմ
. . . եւ հիմա քաղցրութեամբ կամ բռնի չառ-
նում զանոնք . յիրաւի նորանչան բան է . թող
տուէք զիս . . . — Պ. Տակօպէն , կաղաչեմ ,
մտիկ ըրէք զիս , ըսաւ Մայէօ Տակօպէնի միւս
ձեռքը բռնելով . այդ խեղճ օրիորդները դիւ-
րութեամբ առնելու միջոց մը կայ . Քարտօլիլ
օրիորդն ըսաւ ինձ թէ բռնութիւն գործածելով
աւելի գէշ կըլլայ : — Եթէ ուրիշ դիւրին միջոց
կայ , աւելի աղէկ . . . շուտ ըրէք . . . ըսէք
նայիմ ինչ է : — Ահաւասիկ մասնի մը՝ որ Քար-
տօլիլ օրիորդը

— Այդ Քարտովիլ օրիորդն ո՞վ է : — Հայր
իմ , այն աղնուստիրտ դեռահասակ անձն է՝ որ
ինձ երաշխաւոր ըլլալ կուզէր , եւ որուն կա-
րելոր տեղեկութիւններու ունիմ տալիք . . . :
— Լաւ , լաւ , ըսաւ Տակօպէս , ետքը կը խօ-
սինք այդ բանին վրայ . . . ըսէք նայիմ , բա-
րի Մայէօ , ինչ պիտի ընենք այդ մատնին :
Պիտի առնուք , շուտով Վանսօմի հրապարակը
թիւ 7 տունը երթաք ու Մօնպոօն կոմսը գրա-
նէք , որ կերելի թէ խիստ դօրաւոր անձ մ'է
եւ Քարտովիլ օրիորդին բարեկամ . այս մատ-
նին օրիորդին կողմանէ երթալնուղ ապացոյց մը
պիտի ըլլայ : Պիտի ըսէք անոր թէ օրիորդն իբ-
րեւ խելագար փակուած է այս վանքին մօտ
դարմանատան մը մէջ , եւ վանքին մէջ ալ Սի-
մօն մարաջախտին աղջիկներն արգիլափակ ե-
ղած են : — Լաւ . . . այնքէհետեւ . . . : — Այն
ժամանակ Մօնպոօն կոմսը բարձրաստիճան ան-
ձանց դիմելով Քարտովիլ օրիորդին եւ Սիմօն
մարաջախտին աղջկանց ազատութեան համար
պէտք եղածը պիտի ընէ , եւ թերեւս . . . վաղը
կամ միւս օր . . . : — Վաղը կամ միւս օր մի՞ ,
գոչեց Տակօպէս , թերեւս մի՞ . . . բայց ինձ
անօր , հիմա պէտք են . . . վաղուրնէ ետքը ,
եւ այն ալ թերեւս . . . ստակ մը չընէր . . .
ամեն բան լմնցած կըլլայ . . . : Շնորհակալ եմ ,
բարի Մայէօս . պահեցէք այդ մատնին . . . եւ
առաւել կը սիրեմ իմ գործս իմ ձեռօքս կատա-
րել . . . : Սպասէ դիտ հոս , տղայ : — Հայր

իմ, ինչ պիտի ընես, գոչեց Ակրիքօլ նորէն
զօրականը բռնելով. այս սուներ վանք է, լա-
մասած է: — Գուն գեռ համբակ ես, տղան, ես
վանքերու հետ գործ տեսնելու ճանքան աղէկ
գիտեմ. Սպանիոյ մէջ հարիւր անգամ փորձն ը-
րած եմ . . . ըլլալիքն այս է . . . դուռը կը
զարնեմ. աշխատաւոր քոյր մը կը բանայ եւ
ինձ կը հարցընէ թէ ինչ կուզեմ. ես պատաս-
խան չեմ տար. ան ալ գիտ ներս թող տալ չու-
զեր. մտիկ չեմ ըներ, կանցնիմ. վանքին մէջ
հասածիս պէս՝ կ'սկսիմ ամեն կողմը պարտիլ եւ
ամենայն զօրութեամբ աղայքը կանչել: — Բայց
Պ. Տակօպէս, կրօնաւորութիւնէրը, ըսաւ Մայէօ
Չանալով միշտ որ թող չտայ: — Կրօնաւորու-
հիներն ալ բռնէն հալածուած կաշաղակներու
պէս ճիշ բառնալով ետեւէս կիցնան. ասիկա
գիտեմ: Սէվիլի մէջ ես այս կերպով անատա-
լուդ աղջիկ մ'աղատեցի զոր սուտ բարեպաշ-
տութիւններն հոն բռնութեամբ արգիլափակ ըրած
էին: Ար թողում որ ուղածնուն չափ ճչեն. ես
վանքին ամեն կողմը կը պարտիմ Ռօդ եւ Պլանչ
կանչելով . . . : Անոնք կը լսեն իմ ճայնս, պա-
տասխան կուտան. եթէ խուցերու մէջ փակ-
ուած են, ձեռքիս ինչ որ հանդիպի՝ անով դռ-
ները կը կոտրուեմ: — Բայց, Պ. Տակօպէս, կը-
րօնաւորութիւնէրը: — Կրօնաւորութիւնէրը չեն
կրնար իրենց ճիշտով գիտ արգելուլ դռները կո-
տրածէ եւ աղայքը թեւերուս մէջ առնլով դուրս
ելնելէ. եթէ դուրսի դուռը փակած ըլլան,

այն ալ կը կոտորուեմ . . . ուստի , յաւելցուց
Տակօպէս Մայէօի ձեռքէն ինքդինք ազատելով ,
դիս հոս սպասեցէք , տասն վայրկեանէն կը դառ-
նամ . . . : Գուէն ալ դնա շուտով կառք մը բեր ,
տղան : »

Ակրիքօլ՝ Տակօպէսէն աւելի հանդարտա-
միտ եւ պատժական օրինաց տրամադրութիւն-
ներու անկէ աւելի տեղեակ ըլլալով , վաղեմի
գորականին ընելիք տարօրինակ դործողութեան
հաւանական հետեւանքներէն դարհուրեցաւ .
ուստի վրան իյնալով գոչեց . « Աղաչեմ , հայր
իմ , խօսք մ'ալ ըսեմ . . . : — Ի՞նչ պիտի ըսես ,
շուտ ըսէ : — Եթէ բռնութեամբ վանքը մանել
ուզես , ամեն բան կը կորսնցընես : — Ինչէն :
— Նախ , ըսաւ Մայէօ , վանքին մէջ մարդիկ կան
. . . քիչ մ'առաջ դուրս ելած ժամանակս տեսայ
որ դռնապանն իր հրացանը կը լցընէր . պարտիզ-
պանն ալ սուր գերանդիի մը եւ դիչերն ալ
պատյա ընելու խօսք կընէր . . . : — Ար ծիծա-
ղիմ դռնապանի մը հրացանին եւ պարտիզպանի
մը գերանդիին վրայ : — Այդպէս թող ըլլայ ,
հայր իմ , բայց կաղաչեմ , վայրկեան մ'ալ մը-
տիկ ըրէ դիս : Գուռը պիտի բախես , այնպէս
չէ . պիտի բացուի եւ դռնապանը պիտի հար-
ցընէ քեզ թէ ինչ կուզես . . . — Մեծաւորու-
հւոյն հետ խօսելիք ունիմ կըսեմ ու ներս կը
մտնեմ : — Բայց , Պ . Տակօպէս , ըսաւ Մայէօ ,
բազմ անցնելէ ետեւ երկրորդ դուռ մը կայ՝
վոքրիկ միջափեղկով մը . հոն միանձնուհի մը

կուգայ նայելու թէ օվ է դանդակն հնչեցընա-
ղը , եւ մինչեւ որ դացողին այցելութեան նը-
պատակը չիմանայ՝ դուռը չբանար : Կը պա-
տասխանեմ թէ մեծաւորութիւն պիտի տեսնեմ :

—Ս,յն ժամանակ , որովհետեւ վանքին ծա-
նօթներէն չէք , կերթան մեծաւորութեան կի-
մացընեն : —Շատ աղէկ , յետոյ : —Մեծաւո-
րութիւն կուգայ : —Յետոյ . . . : —Կը հարցընէ
ձեզ թէ ինչ կուգէք , Պ. Տակօպէն : —Ի՞նչ պի-
տի ուզեմ . . . տղայքս . . . : —Վայրկեան
մ'ալ համբերեցէք , հայր իմ . . . : —Տարակոյս
չկայ որ վանքին մէջ ձեռք առնուած զգուշու-
թիւններուն նայելով աղջիկները հոն պիտի պա-
հեն ու չտան : —Ստոր ես ալ տարակոյս չու-
նիմ . . . եւ անշուշտ այդ նպատակաւ էր որ
խեղձ կնոջս գլուխը դարձուցին . . . : —Ս,յն
ժամանակ մեծաւորութիւն պատասխան պիտի տայ
թէ ձեր ըսածը չհասկընար , եւ թէ Սիմօնեան
օրիորդները վանքը չեն : —Ես ալ կըսեմ անոր
թէ վանքն են , եւ անա Մայէօ ու Ռապա-ժօս
կը վկայեն : —Մեծաւորութիւն ալ կը պատա-
խանէ թէ ձեզ չճանչեր եւ ձեզ հետ դորձ մը
չունի . . . եւ միջափեղկը կը դոցէ կերթայ :
—Ս,յն ժամանակ ես ալ դուռը կը կոտրեմ . . .
անա կը տեսնես որ դորձը միշտ հոն պիտի հաս-
նի . . . ուրեմն թող տուէք զիս . . . թող տը-
ւէք եւ մի կատղեցընէք . . . : —Բայց դու-
ռը կոտրած ժամանակդ , ըսաւ Ս.կրիքօլ , դըռ-
նապանն ալ կը վաղէ ոստիկանութեան գինուոր

կանչելու . կուգան եւ քեզ կը բռնեն բանտը կը
տանին . — Եւ ձեր խեղճ տղայքն ի՞նչ կըլլան
այն ժամանակ , Պ . Տակօպէս , ըսաւ Մայէօ :
Ակրիքօլի հայրն իր որդւոյն եւ Մայէօի ը-
րած դիտողութեանց ուղղութիւնը կը հասկը-
նար , բայց միւս կողմանէ կը խորհէր որ աղջիկ-
ներն անպատճառ հետեւեալ օրէն առաջ ազատ
պէտք էին ըլլալ . Այս երկու վտանգաւոր եւ հա-
կառակ պարագաներուն մէջ Տակօպէս իր կացու-
թեան անողոքելի ճախողութենէն ընկճեալ՝ եր-
կու ձեռքը բոցակէզ ճակտին տարաւ եւ նուա-
զածի պէս քարէ նստարանի մը վրայ իյնալով
նստաւ :

Ակրիքօլ եւ Մայէօ՝ այս անխօս յուսահա-
տութեան վրայ սիրտերնին յուզուելով՝ տխրու-
թեամբ իրարու երես նայեցան : Երիտասարդը
ծերունի դօրականին քով նստաւ ու ըսաւ անոր .
& Բայց , հայր իմ , մի յուսահատիր . . . Մայէօի
ըսածին ուշ դիր . . . Բարտօլիլ օրիորդին այս
մատնիտին եթէ այն դօրաւոր մարդուն երթաք ,
օրիորդները վաղը կրնան ազատիլ . ենթադ-
րենք թէ վաղը չկրնայ ըլլալ , միւս օրուան բնաւ
տարակոյս չկայ . . . — Հիմա դիտ պիտի խեն-
թեցընէք , գոչեց Տակօպէս նստարանին վրայէն
վեր ցատկելով եւ այն աստիճան վայրագ եւ
յուսահատ կերպիւ Ակրիքօլի ու Մայէօի նայե-
լով , որ ասոնք դարմացմամբ եւ երկիւղիւ ետ
քաշուեցան : — Ներեցէք զաւկներս , ըսաւ Տա-
կօպէս երկար լռութենէ մ'ետեւ ինքզինքին

դալով, իրարու հետ շկրնայ համաձայնելնու
համար քարկանալու իրաւունք չունիմ . . . :
Ձեր ըսածն ուղիղ է . . . եւ սակայն ես ալ ի-
րաւունք ունիմ այսպէս խօսելու . . . : Մտիկ
ըրէք զիս . . . դուն պարկեշտ մարդ մ'ես,
Ակրիքօ՛ւ . դուն ալ պարկեշտ աղջիկ մ'ես,
Մայէօ . ինչ որ հիմա պիտի ըսեմ՝ ձեզ համար
է միայն, ուրիշ մարդ չպիտի իմանայ . . . : Այս
տղայքը ես Սիպերիոյ խորէն բերած եմ, դի-
տէք ինչու համար . . . անոր համար որ վաղ
առաւօտ Մէն—Ֆրանսոս փողոցը դանուին . . . :
Նթէ չգտնուին, իրենց մօրը մահուան կէտին
ինձ յանձնած աւանդին դաւաճանու թիւն ըրած
պիտի ըլլամ . . . : — Մէն—Ֆրանսոս փողոց
թիւ 3, այնպէս չէ գոչեց, Ակրիքօւ հօրը խօս-
քըն ընդմիջելով : — Այո . . . ինչէն դիտես
այդ թիւը, ըսաւ Տակօպէս, — Այդ թուահա-
մարը պղնձէ միտալի վրայ դրոշմեալ չէ : — Այո . . .
ըսաւ Տակօպէս դարմանքն աւելնալով . բայց
նով ըսաւ քեզ : — Հայր իմ, համբերէ վայրկեան
մը եւ թող տուր որ քիչ մը խորհիմ, ըսաւ Ակ-
րիքօւ, հիմա կ'սկսիմ հասկընալ . . . այո . . .
դուն ալ, բարի Մայէօս, ըսիր ինձ թէ Քար-
տովիլ օրիորդը խենթեցած չէ . . . : — Այո,
դինքն ակամայ այս տան մէջ գոցած են եւ թող
չեն տար որ մէկու մը հետ հաղորդակցի . ըսաւ
ինձ թէ կը կարծէր որ նողկալի մեքենայու թեան
մը դոհ եղած է թէ ինքը եւ թէ Սիմօնեան օրի-
որդները : — Այ բնաւ տարակոյս չմնաց, գոչեց

երիտասարդը . հիմա խնդիրը պարզեցաւ . Քար-
տովիլ օրիորդն ալ Միսօնեան օրիորդներուն պէս
մի եւ նոյն պատճառաւ պարտաւորեալ է վաղը
Սէն—Պրանսօս փողոցը գտնուելու . . . եւ
թերեւս չգիտէ : — Ինչպէս : — Խօսք մ'ալ ը-
սեմ , բարձր Մայէօս . Քարտովիլ օրիորդն ըսմե-
քեզ թէ վաղն անպատճառ հարկ է որ ազատ
ըլլայ : — Այ . . . վասն զի այս մատնին Մօնպ-
ռօն կոմսին տանելու համար ինձ տուած ժա-
մանակ ըսաւ . « Անոր շնորհիւ վաղը կամ միւս
օր ես եւ Միսօն մարաջախտին աղջիկները կըր-
նանք ազատ ըլլալ . . . : » — Բայց բացատրէ
ինձ նայիմ այդ բանը , ըսաւ Տակօպէս անհամ-
բերութեամբ իր որդւոյն : — Երբոր պահ մ'ա-
ռաջ զիս քանտէն հանելու եկար , ըսաւ երի-
տասարդը , ըթի քեզ թէ նուիրական պարտա-
կանութիւն մ'ունիմ կատարելիք , եւ թէ կու-
գամ տունը քեզ կը գտնեմ . . . : — Այո . . .
եւ ես ալ իմ կողմէս գացի նոր ջանքեր ընե-
լու , որոց վրայ քիչ մ'ետքը կը խօսիմ : — Բան-
տէն ելնելուս պէս Պապիլոն փողոցի փոքր
ասպարանքը վաղեցի չգիտնալով որ Քարտովիլ
օրիորդը խենթեցեր է կամ խենթի տեղ դրուեր
է : Սպասաւոր մը դուռը բացաւ ու ըսաւ ինձ
թէ օրիորդը մէկէն 'ի մէկ խելքը կորսնցուց . . . :
Աւելորդ է ըսել , հայր իմ , թէ կարծես յան-
կարծակիի եկայ հոն . . . հարցուցի թէ ո՞ւր
էր , եւ պատասխան տուին ինձ թէ չէին գի-
տեր . հարցուցի թէ անոր աղգակա՞ններէն մէ-

կուէն հետ կրնամ խօսիլ : Յւ որովհետեւ իմ դոր-
ծաւորի կերպարանքս մեծ վատահուծիւն չէր
ազդեր , պատասխանեցին ինձ թէ ազգական-
ներէն մարդ չկար հոն . . . : Միրտս կը մոր-
մոքէր : Յետոյ միտքս բան մ'եկաւ եւ ըսի ես
ինձ . եթէ Օրիորդը խենթեցեր է , իր բժիշկն
անշուշտ դիտէ ուր տարուած ըլլալը , եւ եթէ
խօսք հասկընալու վիճակի մէջ է , դիտքովը
կը տանի . ապա թէ ոչ , եթէ ազգականներն
ալ չտեսնեմ , բժիշկին կը խօսիմ . վասն զի շատ
անգամ բժիշկը բարեկամ մ'է . . . : Ուստի
հարցուցի սպասաւորին թէ կրնայ Քարտովիլ օ-
րիորդը դարմանող բժշկին ով ըլլալն ինձ իմա-
ցընել : Առանց դժուարութեան անոր հասցէն
տուին ինձ . Պ. Տոքթոր Պալէնիէ , Քարան փո-
ղոց թիւ 12 : Իսկոյն հոն վազեցի եւ տեսայ որ
դուրս ելեր էր . բայց տանը մարդիկն ըսին ինձ
թէ ժամը հինգին միջոցներն անտարակոյս իր
դարմանատունը կրնամ գտնել դինքը : Դար-
մանատունն այս վանքին մօտ է . . . եւ ահա
այս պատճառաւ հոս իրարու հանդիպեցանք :
— Բայց միտալը . . . միտալը , ըսաւ Տակօպէտ
անհամբերութեամբ , ուր տեսար : — Այդ մի-
տալին եւ ուրիշ բաներու վրայ՝ որ Մայէօի դը-
րած եմ , կարեւոր տեղեկութիւններ կուզէի
տալ Քարտովիլ օրիորդին . . . : — Ի՞նչ տե-
ղեկութիւն : — Աեցիր որ ըսեմ , հայր իմ : Ձեր
դուրս դացած օրը Օրիորդին դացեր էի աղա-
չելու որ ինձ համար երաշխաւորութիւն մը տայ .

դացած ժամանակս ետեւէս կը գիտեն եղեր •
օրիորդն այս բանն իր սպասուհիներուն մէկէն
իմանալով , զիս ձեռք չտալու համար իր ապա-
րանին մէջ ծածուկ տեղ մը պահել տուաւ զիս •
այն տեղը փոքրիկ կամարայարկ խուց մ'էր
որ ծխնելոյզի պէս երկայն խողովակէ մը լոյս
կառնուր • քանի մը վայրկեան ետքը աչքս
վարժուելով շուրջս նայիլ սկսայ • որմերը տախ-
տակապատ էին • մուտքը երկաթէ շրջանակի
մը մէջէ ճարտարարուեստ հակակշիռներու եւ
զսպանակներու միջոցաւ վերէն վար սահող թա-
կարթ ածու փեղկ մ'էր • իմ արհեստիս վերաբեր-
եալ բան մ'ըլլալուն , թէ եւ սիրտս տատամ-
սութեան մէջ էր , զսպանակները հետաքրք-
րութեամբ զննեցի եւ անոնց խաղը հասկըցայ •
բայց պղնձէ կոճակ մը կար որուն դործածու-
թիւնը չկրցայ գտնել • 'ի դուր ինձ կը քաշէի •
աջ ու ձախ դարձունել կուղէի , բնաւ չէր շար-
ժեր • ըսի մտօքս թէ այս կոճակին մեքենականու-
թիւնն անշուշտ ուրիշ կերպ ըլլալու է • ուստի
խորհեցայ , որ փոխանակ ինձ քաշելու՝ ուժով
մը հրեմ • իսկոյն թեթեւ ճռինչ մը լսեցի եւ
յանկարծ թաքուստին մտիցը վրայէն երկու
քառակուսի ռանաչափ տարածութեամբ փեղկ
մը տախտակորմին մէջէն վար իջաւ դրասեղա-
նի մը տախտակին պէս :

Այս փեղկը տուփի ձեւով շինուած էր • եւ
որովհետեւ զսպանակը շատ ուժով հրեր էի ,
փեղկը ցնցուելով պղնձի միտալ մը վար ինկաւ

չղթայով հանդերձ : — Եւ անոր վրայ Սէն — Ֆրանսուա փողոցին հասցէն տեսար , այնպէս չէ , դռնեց Տակօպէռ : — Այն , հայր իմ , եւ այն միտային հետ կնքեալ թուղթի ծրար մը վար ինկաւ . . . դեռնէն վերցուցած ժամանակս տեսայ որ վրան խոշոր գրերով այսպէս գրուած էր . « Քարտովիլ օրիորդին համար : Այս թուղթերն » իրեն տրուածին պէս պէտք է որ բանայ եւ » պարունակութիւնը հասկընայ : » Այս խօսքերուն վրայ ալ Ռ . եւ Ք . սկզբնատառերը տեսայ նշանագիծով մը եւ հետն ալ այս թուականը . Փարիզ 12 նոյեմբեր 1830 : Միւս կողմը դարձուցի եւ վրայի երկու կնիքներուն վրայ ալ նոյն Ռ . եւ Ք . սկզբնատառերը տեսայ թագով մը : — Կնիքները քակուած էին , հարցուց Մայէօ : — Ամենեւին : — Ուրեմն տարակոյս չկայ թէ Քարտովիլ օրիորդն այդ թուղթերէն տեղեկութիւն չունի , ըսաւ գործաւորուն հին : — Ես ալ այդպէս մտածեցի , որովհետեւ պատուիրուած էր իրեն որ անմիջապէս բանայ , եւ այս պատուէրէն 'ի վեր երկու տարիի մօտ անցած է , դեռ կնիքներն անտխեղծ կը կենան : — Յայտնի բան է , ըսաւ Տակօպէռ . եւ ի՞նչ ըրիր այն ժամանակ : — Ամենն ալ նորէն իրենց ծածուկ տեղը դրի առաջագրելով որ Քարտովիլ օրիորդին իմացընեմ . բայց Քանի մը վայրկեան ետքը պահուրտած տեղս դանկով ներս մտան , դիւս բռնեցին տարին , եւ մէկ մ'ալ չկրցայ Քարտովիլ օրիորդը տեսնել . միայն թէ իր ըս-

պասուհիներէն մէկուն քանի մը տարտամ խօս-
քեր ըսի այս դիւտիս վրայ, յուսալով որ տիրու-
հւոյն միտքը կրնան արթնցընել: Վերջապէս գիւ-
ղբելու առիթ գտնելուս պէս, բարի Մայէօս,
գրով աղաչեցի քեզ որ երթաս Քարտօվիլ օրիոր-
դը գտնես . . . — Բայց այդ տեսած միտալդ,
ըսաւ Տակօպէս, Սիւօն դօրապետին աղջկանց
ունեցածին յար եւ նմանն է եղեր. ի՞նչպէս կըր-
նայ ըլլալ: — Ատոր զարմանալ պէտք չէ, հայր
խմ . . . հիմա կը յիշեմ որ Քարտօվիլ օրիորդն
ըսաւ ինձ թէ որբերուն աղգականն է: — Ի՞նչ կը-
սէք, այդ օրիորդը Ռօզի եւ Պլանչի աղգականն
է: — Այո, անտարակոյս, յաւելցուց Մայէօ,
ինձ ալ պահ մ'առաջ ըսաւ: — Ուրեմն, հիմա կը
հասկընան թէ ինչու համար տղայքն այսօր իսկ
ձեռք անցունել կուզեմ, ըսաւ Տակօպէս անձ-
կութեամբ որդւոյն երեսը նայելով:

Ար հասկընան, որ օր մը միայն յապաղելն ա-
մեն բան կը կորանցընէ, ինչպէս որ խեղճ մայ-
րերնին մեռած ժամանակ ինձ ըսաւ: Ար հաս-
կընան վերջապէս որ ես չեմ կրնար Բեբե-՝ Էլլե
խօսքով գոհ ըլլալ, երբոր այս տղայոց հետ
Սիպերիոյ խորերէն հոս եկած եմ որպէս դի վա-
ղը Սէն—Պրանսօսա փողոցը տանիմ . . . : Ար
հասկընան վերջապէս որ տղայքն այսօր անպատ-
ճառ ձեռքս պիտի անցունեմ, թէ եւ վանքը կը-
րակի տալս անգամ հարկ կըլլայ: — Բայց, հայր
խմ, նորէն կըսեմ քեզ թէ բռնութիւնը . . . :
— Բայց, հիմա զիս կրակը պիտի խօթէք. գի-

տես ի՞նչ պատասխան տուաւ ինձ այս առաւօտ
ոստիկանութեան տեսուչը՝ երբոր գացի քու
խեղճ մօրդ խոստովանահօրը դէմ դանդատս նո-
րագեցի : «Քանի որ ապացոյց մը չկայ , բան մը
չենք կրնար ընել» ըսաւ : — Քայց հիմա ապա-
ցոյցներ կան , հայր իմ , կամ գոնէ աղջկանց ուր
ըլլալը գիտենք . . . : Այս ստուգութիւնը մեծ ուժ
է մեզ . . . : Անհոգ եղիր , Օրէնքն աշխարհի
բոլոր վանամայրերէն զօրաւոր է : — Եւ Մօնպ-
ռօն կոմսը՝ որուն երթալու կադաչէ ձեզ Քարտ-
տովիլ օրիորդը , ըսաւ Մայէօ , զօրաւոր մարդ
մը չէ : Ար հասկըցընէք անոր թէ ի՞նչ պատճա-
ռաւ հարկ է որ այս իրիկուն անպատճառ աղա-
տին թէ Միսօնեան օրիորդներն եւ թէ Քարտո-
վիլ օրիորդը , որ նոյնպէս մեծ շահ ունի վաղն
աղառ ըլլալու . . . : Այն ժամանակ անշուշտ
Մօնպռօն կոմսն ալ դատաստանական տեսու-
թեան գործողութիւնները կը փութացընէ , եւ
այս իրիկուն աղայքը ձեզ կը յանձնուին : — Մա-
յէօ իրաւունք ունի , հայր իմ . . . դնա շուտով
կոմսին , ես ալ կը վազեմ ոստիկանութեան տես-
չին խնայընելու թէ աղջկանց ուր փակուած
ըլլալն յայտնի եղաւ : Դու ալ , բարի Մայէօս ,
տուն դարձիր ու մեզ սպասէ , այնպէս չէ , հայր
իմ . . . տունը մեզ գտիր : »

Տակօպէս մտախօս կեցեր էր . յանկարծ ը-
սաւ Ակրիքօլի . «Շատ ազէկ . . . քու խորհրդ-
դիդ հետեւ իմ . . . : Քայց ենթադրէ որ ոստի-
կանութեան տեսուչն ըսէ քեզ թէ «վաղուր-

նէ առաջ բան մը չենք կրնար ընել . ենթադրէ
որ Մօնապօն կոմսն ալ նոյն պատասխանը տայ
ինձ . . . կը կարծես որ ես մինչեւ վաղ առա-
ւօտ ձեռքս ծոցս դրած սպասեմ : — Հայր իմ . . .
— Բաւական է . . . յարեց զօրականը կարուկ
ձայնիւ , կը հասկընամ . . . Գուն , աղան , ու-
տիկանութեան տեսչին դնա . . . : Գուն ալ ,
բարի Մայէօ , դնա տուն մեզ սպասէ . ես կոմ-
սին երթամ . . . : Տուէք նայիմ մատնին : Հաս-
ցէն : — Վանասօմի հրապարակ թիւ 7 , կոմս
Մօնապօն . չմոռնաք ըսելու թէ Քարտօվիլ օ-
րիորդին կողմէն կերթաք , ըսաւ Մայէօ : — Չեմ
մոռնար , յիշողութիւնս տեղն է , ըսաւ զօրակա-
նը . կոմսը տեսնելէս ետեւ անմիջապէս Պրիզ-
Միշ փողոցը պիտի դամ ու ձեզ հոն դանեմ :
— Այո , հայր իմ , քաջայոյս եղիր . . . : Պիտի
տեսնես որ օրէնքը կը պաշտպանէ պարկեշտ
մարդիկը : — Աւելի աղէկ , ըսաւ զօրականը ,
միան դի եթէ այդպէս չըլլայ , պարկեշտ մար-
դիկն ալ ինքզինքնին իրենք պաշտպանելու կը
հարկադրին . . . : Ուրեմն քիչ ժամանակէն
Պրիզ-Միշ փողոցն ենք : »

Երբոր Տակօպէռ Ակրիքօլ եւ Մայէօ իրար-
մէ բաժնուեցան , մութը բոլորովին կոխած էր :



Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mirrored and difficult to decipher due to its orientation and fading.

17-11

№ 6004